Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐ

123



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

С. А. АВАКЯН

РАЗЫСКАНИЯ ПО ЭПИГРАФИКЕ

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ЕРЕВАН—1986

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ

2339

ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐ

ՀԱՅԿ ՍՍՀ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т Востоковед. АН Арм. ССР

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1986

ԳՄԴ 63.2
Ա 770

Խ մ բ ա գ ի ր՝ Գ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Դ ր ա խ ո ս՝ ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի կովկասագիտության և բյուզանդագիտության բաժին

Ավագյան, Ս. Ա.
Ա 770 Վիմագրական պրպտումներ/խմբ.՝ Գ. Մ. Մուրադյան. — Եր.: Երևանի համալս. հրատ., 1986.— 248 էջ:

Վերնախորագր.՝ Երևանի պետ. համալս.:

Գիրքը ամփոփում է հեղինակի այն աշխատությունները, որոնք լույս են տեսել գիտական պարբերականներում ու ժողովածուներում և հրատարակված մենագրությունների մաս չեն կազմել: Թեմատիկ ու ժամանակագրական ամբողջությունն ներկայացնող սույն ժողովածուն վիմական բնագրերի ճշգրիտ ու հմուտ վերծանությամբ արծարծում է միջնադարյան Հայաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային պատմության բազմաթիվ կնճռոտ խնդիրներ:

Ա $\frac{4602010000-30}{704(02)-86}$ 47—85 ԳՄԴ 63.2+63.3(2Հ)

АВАКЯН СУРЕН АРТЕМЬЕВИЧ
РАЗЫСКАНИЯ ПО ЭПИГРАФИКЕ
(На армянском языке)
Издательство Ереванского университета
ЕРЕВАН—1986

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 1986

ԱԿԱՆԱՎՈՐ ՎԻՄԱԳՐԱԳԵՏՆ ՈՒ ԼԵԶՎԱԲԱՆԸ

Սուրեն Արտեմի Ավագյանը (1918—1983) հայ վիմագրության խոշոր մասնագետներից էր, բանասեր-գրաբարագետ:

Ծնվել է Կարմիրի շրջանի Վերին Ճամբարակ գյուղում: 1936-ին ավարտել է Դիլիջանի մանկավարժական տեխնիկումը, 37-ին ընդունվել Երևանի համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1941 թ. օգոստոսին մեկնել է բանակ, սովորել հրամանատարական ուսումնարանում և Հայրենական պատերազմին մասնակցել որպես սպա: 1952-ից Վարդենիսի շրջանում աշխատել է իբրև ուսուցիչ, 1956-ից շարունակել է ուսումը համալսարանում, 57-ին ավարտել է և աշխատանքի անցել ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում ու զբաղվել հայ վիմագրության ուսումնասիրությամբ: 1970 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1971-ին աշխատանքի է ընդունվել Երևանի համալսարանի հայոց լեզվի ամբիոնում: Դասավանդել է գրաբար, ժամանակակից հայոց լեզու, հայ վիմագրագիտություն: Ս. Ավագյանը այցելել է Հայկ. ՍՍՀ գրեթե բոլոր պատմական հուշարձանները, կազմել դրանց նկարագրությունները, ընդօրինակել շատ արձանագրություններ, համեմատել, ճշգրտել նախկինում ընդօրինակվածները:

Հայ վիմագրագիտության ասպարեզում Ս. Ավագյանի տարիներ շարունակ կատարած հետազոտական աշխատանքի արդյունքը եղան մի քանի մենագրություններ ու մի շարք հոդվածներ: Ամենից առաջ նշելի է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի կողմից հրատարակվող «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի ստեղծմանը Ս. Ավագյանի ցուցաբերած մասնակցությունը: 1977 թ. լույս տեսած 6-րդ պրակը, որ նվիրված է Իջևանի արձանագրություններին, մեծ մասամբ կազմել է Ս. Ավագյանը (հեղինակակից՝ Հռ. Ջանփոլադյան): Պրակում տեղ գտած 365 արձանագրությունների մեկնությունները ու բացատրությունները (բոլորի հեղինակն է Ս. Ավագյանը) իրենց հարուստ բովանդակությամբ, ճշտում-

ների քանակով և հավաստիությամբ լավագույններից են այդ բնույթի աշխատությունների շարքում:

Արձանագրությունների վերծանությանը և բանասիրական ուսումնասիրությանը զուգահեռ՝ Ս. Ավագյանը կատարել է նաև դրանց լեզվաբանական քննությունը, որի արդյունքը հրապարակել է երկու մենագրությունների մեջ: Առաջինն է «Վիմական արձանագրությունների հնչյունաբանությունը» (Ե., 1973), որը և գիտնականի թեկնածուական ատենախոսությունն է: Նրանում առաջին անգամ հայոց միջնադարյան արձանագրությունների լեզուն ուսումնասիրված է հնչյունաբանական տեսանկյունից, և հայտնաբերված են մի շարք օրինաչափություններ, որոնք մինչև այդ լեզվաբանությանը հայտնի չէին:

Երկրորդը «Վիմական արձանագրությունների բառաքննություն» մենագրությունն է (Ե., 1978), որի մեջ հետազոտության նյութ են դարձել վիմական արձանագրություններում եղած այնպիսի բառեր, հարկային ու այլ բնույթի անվանումներ, անձնանուններ, տեղանուններ, որոնք ավանդված չեն մատենագրական աղբյուրներում: Ս. Ավագյանը վերծանել, լեզվաբանորեն ստուգաբանել և իմաստաբանական մեկնություն է տվել այդ բառային միավորներին և կամ ճշգրտել է նախկինում արված վերծանություններն ու ստուգաբանությունները: Այս և նախորդ աշխատությունը արժեքավոր են ամենից առաջ հայոց լեզվի պատմության մութ մնացած մի շարք խորշերի լուսաբանման, հատկապես միջին գրական հայերենի ու միջնադարյան հայոց խոսակցական լեզվի որոշ առանձնահատկություններ երևան հանելու տեսակետից: Իսկ մասնավորապես բառաքննումները լուրջ հետաքրքրություն ունեն նաև միջնադարյան Հայաստանի հասարակական ներքին կյանքի, տնտեսական-հարկային իրավիճակի, ինչպես և ժողովրդի նիստուկացի շատ հարցեր պարզելու համար: Ս. Ավագյանի թե՛ վերծանությունները և թե՛ լեզվաբանական վերլուծություններն ու մեկնաբանությունները գիտականորեն ծանրակշիռ են, համոզիչ, իսկ հաճախ դրանցում գտնում ենք գիտնականի սրամիտ հայտնագործությունները:

Ս. Ավագյանը իր մասնագիտության բերումով սերտորեն կապված էր Մաշտոցի անվան Մատենադարանի հետ: Նա Լ. Խաչիկյանի հետ ուսումնասիրություն գրեց XVI դարի ականավոր հայ լեզվաբան Հովհաննես Քռնեցու «Յաղագս քերականին» աշխատության մասին, որը հրատարակվեց 1977 թ. միջնադարյան այդ երկի հետ իբրև նրա ներածություն: Ս. Ավագյանը մի քանի տարի շարունակ մանրակրիտ աշխատանք է կատարել Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի՝ Մատենադարանի հրատարակած (1983) քննական բնագիրը խմբագրելու ուղղությամբ:

Այժմ հրապարակվող հոդվածները 1967—1982 թթ. լույս են տեսել տարբեր պարբերականների էջերում և, ահա, ի մի հավաքված՝ լրացնում, ամբողջացնում են Ս. Ավագյանի գիտական դիմագիծը, որի գլխավոր հատկանիշներն են՝ մասնագիտական բարձր մակարդակը, գիտական ծայրաստիճան բարեխղճությունը, հետևողական ճշգրտասիրությունը:

Հայ վիմագրագիտության բնագավառում Ս. Ավագյանը բացառիկ դեմք էր, նրա կորուստը մեծապես զգալի եղավ այդ ասպարեզում: Նա շարունակեց և նկատելիորեն առաջ մղեց այն գործը, որի երախտավորներն էին Ն. Մառը, Հ. Օրբելին, Կ. Ղաֆադարյանը, Ս. Բարխուդարյանը և ուրիշներ: Իսկ արձանագրությունների զուտ լեզվաբանական ուսումնասիրությունների ոլորտում Ս. Ավագյանի կատարածը եզակի է հայ բանասիրության մեջ: Նրա մի շարք քննություններ, հայտնագործումներ այսօր դասական արժեք ունեն:

Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեսրոպատառ հայերեն բնագրեր սկսել են փորագրել գրերի գյուտից մի քանի տասնամյակ անց, 5-րդ դարի կեսերին։ Մեզ հասած հնագույն վիմական արձանագրություններն իրենց բովանդակությամբ հիմնականում շինարարական են։ Դրանք սովորաբար փորագրվում էին շինությունների արտաքին ճակատներին առավել աչքի ընկնող հատվածներում, հատկապես շքամուտքերի բարավորներին կամ լուսամուտների պսակների վրա, երբեմն էլ մեկ տողանոց խոշոր գրերով երեք կողմից գոտևորում էին տաճարները։ Կառուցողական արձանագրություններում կարճառոտ տեղեկություններ են տրվում ճարտարապետական հուշարձանների կառուցման կամ նորոգման ժամանակի, հովանավորի կամ նպաստավորի, քաղաքական անցուդարձերի, երբեմն նաև շինության վարպետ-ճարտարապետի մասին։

Գիտությանը հայտնի առաջին շինարարական վիմագիրը, որ նաև հայերեն ամենահին տառաձևեր ունեցող բնագիրն է, Տեկորի տաճարի շինության արձանագիրն է՝ փորագրված տաճարի մուտքի շրջանակի վրա։ Այստեղ նշված է, որ տաճարը կառուցել, ավելի ստույգ, վերակառուցել կամ գմբեթավորել է Սահակ Կամսարական իշխանը Հայոց Հովհան Մանդակունի կաթողիկոսի օրոք, այսինքն 478—490 թթ.։

Հետագա դարերում, հայ դասական ճարտարվեստի ծաղկման շրջանում հոգևոր ու աշխարհիկ գրեթե բոլոր շենքերի որմերին փորագրում են կառուցողական արձանագրություններ, որոնք կարևոր նշանակություն են ստանում ճարտարապետական ձևերի ու հորինվածքների ժամանակագրությունը պարզելու առումով։ Մեզ հասած վիմական բնագրի շնորհիվ դարերի մշուշից ի հայտ են եկել 7-րդ դարի հայ ճարտարվեստի ակնառու ստեղծագործություններ Բագավանի, Բագարանի, Ալամանի, Մրենի, Արուճի, Թալինի և այլ տաճարների շինության ստույգ ժամանակները, կառուցողները, իսկ Բագավանի տաճարի նաև ճարտարապետը՝ Իսրայել Գոռաղճեցին։

Արաբական տիրապետության ծանր ժամանակներում հայ ճարտարապետության զարգացման բնականոն ընթացքը խաթարվում է, և այդ դարերում նշանակալից կոթողներ գրեթե չեն կառուցվում։ Ճարտարվեստի նոր վերելքը արդյունք էր հայ պետականության վերականգնման, տնտեսական աշխուժության, քաղաքների բարգավաճման։ 10—14-րդ դարերում Հայաստանի տարբեր գավառներում կառուցվում են բազմաթիվ տաճարներ ու վանական համալիրներ, գրատներ, սեղանատներ, պալատական շենքեր, հյուրանոց-խանապարներ, կարավանատներ, կամուրջներ, որոնց մի զգալի մասը օժտված է շինարարական վկայագրերով։ Այս շրջանի կառուցողական վիմագրերը ավելի ընդարձակ են, առավել մանրամասն են ներկայացնում շինության հանգամանքները, հաճախ տեղեկություններ են տալիս վանքերին նվիրված կալվածքների մասին, որոնցով այդ բնագրերը նաև նվիրատվական բնույթ են ստանում։ Իբրև օրինակ կարելի է հիշել անեցի մեծատուն Տիգրան Հոնենցի ծավալուն արձանագիրը իր կառուցած եկեղեցու պատին, կամ Անիի Մայր տաճարի վկայագիրը, որ Հայոց Կատրանիդե թագուհին փորագրել է տվել 1010 թ.՝ այդ հոյաշեն կառույցն ավարտելուց հետո։ Այսպես նաև Վահրամ Պահլավունու 1029 թ. ընդարձակ արձանագիրն իր կառուցած Մարմաշենի տաճարի պատին։

Այս շրջանի մի քանի հուշարձանների կառուցման մասին արձանագրությունները փորագրված են ոչ թե նրանց որմերին, այլ կից կանգնեցված հատուկ կոթողների խաչակալների ճակատներին։ Նման վկայագրեր ունեն Մակարավանքի, Դեղձուտի վանքի, Սանահնի, Խծկոնքի գլխավոր եկեղեցիները։ Հաղբատավանքի նշանավոր գավիթը, գրատունը և սրահը կառուցող վանահայր Հովհաննեսը այդ մասին արձանագրել է Փոքր գավթում իր իսկ կանգնեցրած Ամենափրկիչ կոչվող գեղաքանդակ խաչարձանի թիկունքին։ Շինարարական վիմագրերում կան այնպիսիները, որոնք պատմում են ոչ թե շենքերի կառուցման, այլ խողովակներով ջուր բերելու, ոռոգման առուներ անցկացնելու, աղբյուրներ կամ միլ կանգնեցնելու մասին։ Դրանցից հնագույնը հայկական թվական ունեցող առաջին արձանագիրն է, փորագրված Թալինի մեծ տաճարի մույթին 783 թ., որ հաղորդում է Քարկապունի աղբյուրները Թալին բերելու մասին։ Նորատուսի «Հայախաչ» խաչքարի 1226 թ. բնագրում հայտնվում է, որ գյուղի տանուտերը (դեմեթար) առու է անցկացրել Գավառագետից դեպի դաշտերը, կառուցել ջրատարի ամբարներ։ Անիի երկու բնագրերում հաղորդվում է քաղաքում միլ կանգնեցնելու մասին, որ մասնագետների կարծիքով աղբյուրի շենք է նշանակում։

Ըստ ժամանակագրության հայկական վիմագրերի հաջորդ տեսակը հիշատակագրությունն է՝ պատմական կարևոր դեպքերը, ռազմական հաջողությունները, բնական այլևայլ աղետները ժողովուրդների հիշողության մեջ հավերժացնելու, շինվածքների ավարտը հիշատակելու և, վերջապես, կյանքից հեռացած անհատների հիշատակն անմահացնելու նպատակով հորինված արձանագրությունները։ Այս կարգի բնագրերից հնագույնները Դվինի պեղումներով հայտնաբերված 6-րդ դարի և Զովունիի տապանագրերն են, կամ Երուսաղեմի հայկական հին եկեղեցու հատակի խճանկար և շրջանակավորված հիշատակագիրը, որ մասնագետները թվագրում են 7-րդ դարով։ Հետագա դարերում հիշատագրության պահանջը հայ արվեստում առաջ բերեց կոթողային հուշարձանների առանձին տեսակ՝ հայկական խաչքարեր կամ որմնափակ խաչարձաններ, որոնց զգալի մասը քանդակագործական արվեստի անկրկնելի ստեղծագործություններ լինելուց բացի, նաև ակնառու արժեք են ներկայացնում իրենց բնագրերի բովանդակության և հնագրական կատարելության տեսակետից։ Մեզ հասած հնագույն հիշատակագիր կոթողը Վարդենիսի շրջանի Մեծ Մազրայի խաչքարն է, որ կանգնեցրել է Սյունիքի և Աղվանքի իշխան Գրիգոր Ատրներսեհյանը 881 թ.։

Պատմական նշանակալից իրադարձություններ հավերժացնող արձանագրերից արժան է նշել Կոշի խաչարձանի պատվանդանին 1195 թ. փորագրվածը, որտեղ Պետրոս Ականատեսը հայտնում է Հայոց երկիրը ամիրսպասալար Զաքարեայի կողմից սելջուկներից ազատագրելու մասին, որ դրանից 20 տարի առաջ իր հուգու ակամբ տեսել էր երազում։ Սելջուկներից Ամբերդի ամրոցը 1200 թ. գրավելու մասին է պատմում նույն ամիրսպասալար Զաքարեայի արձանագրությունը՝ այդ առիթով կանգնեցված խաչքարի ճակատին։ Ուշագրավ է Դեղիկի որդի Մխիթարի արձանագիրը Ազիզբեկովի շրջ. Մարտիրոս գյուղի կենտրոնում կանգնած խաչարձանի երեսին, որտեղ հեղինակը հաղորդում է Պռոշյան իշխանների հրամանով, այսինքն նրանց թույլտվությամբ 1283 թ. գյուղը հիմնադրելու մասին։ Դեբետ գետի վրա 1295 թ. կառուցված Սանահնի կամուրջի շինության արձանագիրը փորագրված է խելի մոտ կանգնեցված խաչքարի թիկունքին, այստեղ Զաքարեան իշխանների քույր, վաղամեռիկ Աբաս թագավորի կին Վանենին հայտնում է, որ կամուրջը կառուցել և խաչքարը կանգնեցրել է Աբասի հիշատակին։

Բնական աղետների մասին է պատմում հենց Կոշի խաչքարի բնագիրը, որտեղ Պետրոս Ականատեսը հայտնում է 1177 թ. տեղի ունեցած խավարման և երկրաշարժի մասին։ Իջևանի շրջանի Առաքելոց հնավայրում Բեսում քահանան խաչքար է կանգնեցրել, որի հիշատակագրում նկարագրում է 1262 թ. երկրաշարժը։ Նշանավոր մանրանկարիչ-քանդակագործ Մոմիկը Արենիում թողած հիշատակագրում հայտնում է, որ 1321 թ. շարժ եղև, այսինքն երկրաշարժ։

Հիշատակագրություն ունեցող խաչարձանները հնարավորություն են տալիս ոչ միայն որոշելու, թե ում հիշատակին են կանգնեցվել դրանք, այլ հաճախ նաև թե ովքեր են կերտել հայ արվեստի այդ անգուգական գլուխգործոցները։ Գիտենք, որ դեռևս Գրիգոր Տուտեորդու կենդանության օրոք նրա հիշատակին նվիրված խաչարձանը 1184 թ. կերտել է կազմող Մխիթարը։ Այսօր շատերին հայտնի է, որ Նոր Գետիկի վանքում կերտված նրբահյուս խաչքարերի հեղինակը Պաւղոս կազմողն է։ Վայոց ձորի վանքերում Մոմիկի ստեղծած ասեղնագործ նրբության խաչքարերը հիշեցնում են նրա մանրանկարները։ Հայտնի է նաև, որ Կեչառիսի վանքում ապրած ու ստեղծագործած Վեցիկ վարպետն այնքան նշանավոր և հարգված է եղել, որ նրա հիշատակին կանգնեցվել է պատվանդանավոր հոյակերտ խաչարձան։

Չնայած երկրի խառնուկ վիճակին, ժողովրդի ընչազրկությանն ու կեղեքումներին, ուշ միջնադարում ևս խաչարձաններն իբրև փոքր ծավալի և մեծ ծախս չպահանջող գերեզմանական կոթողներ շարունակել են լայն կիրառություն ունենալ, թեև իրենց կատարման արվեստով զգալապես զիջում են 10—14-րդ դարի դասական դարձած օրինակներին։ Ուշ շրջանի խաչքարերը մեծ մասամբ անարձանագիր են, իսկ եղած համառոտ հիշատակություններն էլ վերաբերում են ննջեցյալների բարեխոսությանը։ Այս առումով առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Հին Ջուղայի գերեզմանոցի մի քանի հազար խաչարձաններ, որոնք իրենց ոճական ու հորինվածքային հատկություններով, կերտման հնարանքներով ուրույն տեղ են գրավում հայկական խաչքարային արվեստում։ Այստեղ ևս հիշատակությունները խիստ համառոտ են և նպատակ ունեն սոսկ մատնանշելու ննջեցյալներին կամ խաչքարերը կերտողներին։

Պատմական Հայաստանի տարածքում և գաղթօջախներում պահպանված վիմագրերում զգալի թիվ են կազմում հասարակական-տնտեսական, իրավական բնույթի արձանագրությունները։ Դրանք փորագրվել են Բագրատունի թագավորների ու թագուհիների, տեղական իշխանական տների ներկայացուցիչների, նաև հոգևոր բարձրաստիճան հայրերի հրամանով և իրենցից ներկայացնում են զանազան արտոնագրեր, հրամանագրեր, օրինականացումներ կամ պայմանագրեր, կոնդակներ, որոնցով իշխողները կարգավորում էին հողատիրական ու ջրաօգտագործման իրավունքները, գյուղերի և հոգևոր կենտրոնների սահմանային կամ

ինքնության վճիռը, սահմանում կամ զեղչում էին բնակչության հարկերը, տուրքերը, պարտույթները, եկեղեցական պտղին և այլ հասները։ Միջին դարերի հայ պատմիչների երկերում այսպիսի տեղեկություններ սակավ են հանդիպում, մեզ չեն հասել արքունական, իշխանական կամ կաթողիկոսական դիվանների գրությունները, ուստի վիմագրերում ավանդված այս կարգի վավերագրերը անփոխարինելի աղբյուրներ են երկրի ներքին կյանքի, ժողովրդի սոցիալ-տնտեսական իրավիճակի, հարկային-պարհակային համակարգերի ուսումնասիրության համար։ Բավական է ասել, որ 10—14-րդ դարերում վկայված շուրջ 80 տեսակի հարկերից ու կոռերից 72-ը գիտությանը հայտնի է վիմագրերից։

Հասարակական-տնտեսական բնույթի արտոնագրերից հնագույնը Արուճի տաճարի 867 թ. արձանագիրն է, որով Գրիգոր իշխանը Սմբատ Բագրատունու հրամանով կարգավորում է Արուճ և Կոշ գյուղերի վեճը՝ վասն ջրոյ, վեճը վճռվում է ըստ հին կարգի՝ ջուրը մեկ ու կես օր տրվելու է Կոշին, մեկ օր՝ Արուճին։ Հայոց Խոսրովանույշ թագուհին 10-րդ դարի կեսերին մի քանի հրամանագրեր է թողել Տեկորում, Թալինում մի շարք բնահարկեր թեթևացնելու մասին։ Հայտնի է, որ եկեղեցական հիմնական հասի՝ պտղի չափերը որոշվել էին դեռևս 5-րդ դարում՝ Սահակ Պարթև կաթողիկոսի կանոններով, բայց ահա Բագրատունյաց Հայաստանի նշանավոր գործիչ Վահրամ Պահլավունին 1026 թ., ավարտելով Անբերդի տաճարի շինությունը՝ նրա մուտքի վրա փորագրում է մի հրամանագիր, որով սահմանում է նոր հաստատված եպիսկոպոսական աթոռի չորս թեմերից հավաքվելիք պտղին՝ ցորեն, բամբակ, գինի, կտավատ։

Բազմատեսակ ծանր հարկերից ու պարտույթներից ընչազրկված բնակչությունը հաճախ ի վիճակի չէր լինում վճարելու պարտքերը, և այդ պատճառով օտար տիրակալները, նրանց հարկահաններն ու հարկերի կապալառուները ստիպված էին լինում բարերարության անվան տակ զիջելու կամ նվազեցնելու հարկերը։ 1050 թ. այդպիսի արտոնագիր է փորագրվել Անիի մայր տաճարի պատին, որով մայրաքաղաքի բյուզանդական կառավարիչները ողորմություն են անում կամ սիրաշահում բնակիչներին, նրանց ազատելով գութանի, սայլի, կամի, փոստային փոխադրամիջոցի կոռերից, ինչպես նաև թեթևացնելով շուկայում վաճառվող ապրանքների համար սահմանված բաժ հարկերը։ Ավանի հին տաճարի 1285—1287 թթ. արտոնագրերից իմանում ենք, որ աթաբեկ Խութլուբուղան և Վրաց արքա Դավիթը Ավանի քաղկեդոնական

բնակիչներին ազատել են այգիների շարիատ բնատուրքից, ինչպես նաև ջուլհակների հորակտավի համար առնվող հատուկ հարկից։

Այս առումով ուշագրավ է Բջնիի 1325 թ. հրամանագիրը, որով տեղական իշխան Զաքարեան, հաշվի առնելով գյուղացիների ծանր դրությունը, թողնում է (ազատում) զամեն հարկ—բոլոր հարկերը, հականե-հանվանե թվարկելով դրանք՝ **ամիրահարկ, հետռենհակ, կովայհամար, կալաքազար, սայլի սպիտակ, ջրապատի մահկանս**։

Անիի մոնղոլական շրջանի մի շարք արտոնագրերում քաղաքի պատրոններ Զաքարյան իշխանները կամ նրանց տեղական պաշտոնյաները՝ **տաղմտչի, հսկիչ, կապալավոր, ձեռնավոր** զիջում են **բաժ, տամղա, անասունների գլխահարկ, դռնագիր, ջրաղացի դահյակ** տուրքերը։ Սրանցից առավել բնորոշը Աղբուղա Զաքարյանի 1301 թ. արձանագրությունն է, որտեղ իշխանը թողնելով **եզան հազրը, կովի համրելու, ոչխարի մակաղատեղի հարկերը**, միաժամանակ շեշտում է, որ այդ անում է անեցիների ծանր վիճակը նկատի ունենալով՝ «տեսայ զքաղաքս աղքատացեալ և խիստ ի վեր մնացեալ, զի շատ հարկ էր ի վերա դրած»։

Հոգևոր առաջնորդները վիմագիր կոնդակներում կանոնավորում են եկեղեցական կյանքի առօրյան, ձեռնադրության կարգի խախտումները, լուծում դավանաբանական վեճերն ու անհամաձայնությունները։ Քանի որ միջնադարում եկեղեցին էր իրականացնում աշխարհիկ ու հոգևոր դատավարությունը, ուստի հաճախ հարկ է լինում լրացնել կամ փոփոխել դատաստանագրքերի որոշ իրավունքներ։ Անիի Առաքելոց եկեղեցու պատին փորագրված էին իրավական բնույթի մի քանի հրամանագրեր։ Դրանցից 1267 թ. բնագրով Անիի հոգևոր պետ Գրիգոր արքեպիսկոպոսը որոշում է ամուսնալուծությունից հետո կողմերի միջև ունեցվածքը բաժանելու կարգը, ըստ որի ունեցվածքի միայն մեկ քառորդն է հատկացնում մեղավորին, երեք քառորդ մնում է տուժող կողմին, այսինքն՝ բաց թողնվողին։ Միայն արձանագրում Անիի տեր Սարգիսը կարգ է սահմանում պսակի թույլտվությունը հարսի հարազատներից վերցնելու և փեսայի հարազատների վրա դնելու մասին, քանի որ մինչև այդ «հարսն առնում զհրամանն և շատ խեղճ և անպատեհ բան լիներ»։

Նվիրատվական արձանագրությունները, նվիրագրերը երևան են գալիս մյուս տեսակի բնագրերից ավելի ուշ, միայն 10-րդ դարի կեսերին։ Յուրահատուկ պայմանագրեր են կնքված նվիրատուների և վանական կենտրոնների միջև, որոնցով առաջինները իրենց հայրենիք գանձաշեն

ունեցվածքը տալիս են վանքերին՝ փոխարենը նրանցից համապատասխան քանակի պատարագաժամեր ստանալու պայմանով։

Գործարքը սրբագործվում է եկեղեցիների պատերին թողնված արձանագրով։ Նվիրագրի վիմագրումը պայմանավորված է օտար նվաճողների ավարառությունների ու կողոպուտների հետևանքով առաջացած անհաստատ վիճակով, սեփականության անապահովությամբ, ինչպես նաև անդրշիրիմյան կյանքի ու հոգու փրկության մասին քրիստոնեական դոգմաների ազդեցությամբ։ Վանքերը, եկեղեցիներն ու նրանց սպասավորները հաճախ ապահարկության արտոնություն ունեին, նրանց ունեցվածքն ավելի ապահով էր սելջուկների ու մոնղոլների հափշտակություններից։ Այդ պատճառով էլ աշխարհիկ իշխանավորներն ու մեծատունները երկրի խառնակ ժամանակներում գերադասում էին իրենց ստացվածքը նվիրել վանքին, քան թողնել ընչաքաղց ասպատակողների կողոպուտին։ Նվիրատվության առարկաները բազմազան են ու տարբեր արժողության, նայած ինչ հարստության տեր է նվիրատուն։ Առավել մեծագույն ունեցվածքները գյուղերն էին՝ իրենց բնակչությամբ ու սահմաններով, որոնք նրանց տերերը՝ Բագրատունի, Կյուրիկյան, Արծրունի թագավորները, Խաչենի ու Վայոց ձորի իշխանները տալիս կամ ամրացնում էին վանքերին՝ հատուկ հրամանագրով հավերժացնելով այդ ակտը։ Գյուղեր նվիրելու ամենահին հիշատակությունը Սևանի Առաքելոց եկեղեցու 874 թ. արձանագրությունն է, որտեղ եկեղեցին կառուցող Սյունիքի Մարիամ իշխանուհին և իր հայր Աշոտ իշխանը վանքին վախմ են տալիս Վարսեր, Գոմաձոր, Ցամաքաբերդ, Բերդք, Ոսնեացտափ գյուղերը, որոնցից մի քանիսը նույն անունով դեռևս գոյատևում են։ Ավելի ուշ, 910 թ. արձանագրով Վայոց ձորի Քարկոփի վանքում Աշոտ իշխանը նվիրում է Արաստամուխ գյուղը։ Սյունիքի ականավոր պատմիչ և հոգևոր տեր Ստ. Օրբելյանը 1298 թ. Նորավանքում վիմագրում է այն մասին, որ իր սեփական Ջվա, Աբասաշեն և Սուրբ Սահակ գյուղերը նվիրում է վանքին։

Միջնադարի հազարավոր մեծ ու փոքր նվիրագրերում վկայված են բազմաթիվ այլ արժեքներ՝ հողամաս, այգի՝ հաճախ նորատունկ (որ վիմագրերում նոր անուններով է հայտնի՝ նորք, մատարկ, մատաղիս) եկամտաբեր հաստատություններ կամ նրանց եկամուտը մասամբ, ջրաղաց, ձիթհանք կամ ասարհոց, հյուրատուն, կախանապատ, վնդով, տուն, սենյակ, կամ կուղպակ, ընտանի կենդանիներ՝ ձի, եզ, կով, գոմէշ, ջորի, ոչխար, եկեղեցական թանկարժեք սպասներ ու հանդերձանք՝ շուրջառ, ուրար, սկիհ, բուրվառ, վարագոյր, ջահ, գրակալ, զանգ, ձեռագիր մատյաններ, տարբեր դրամներ և այլն։

Մի շարք նվիրագրերում վանքերին ընծայվող արժեքների թվում հիշատակվում են նաև մարդիկ, շինականները, կամ հատուկ, միայն վիմագրերում վկայված տերմիններով՝ շինականատուն, լմնածուխ, ողջատուն։ Հայտնի է, որ ժամանակի պատմիչների երկերում շինականների ճորտային վիճակի մասին որոշակի տվյալներ չկան, և այդ պատճառով արձանագրություններում պահպանված այս կարգի հիշատակություններ կարևոր արժեք ունեն ճորտատիրական իրավունքի ուսումնասիրության համար։ Նվիրագրերում մարդկանց նվիրումը սովորաբար ձևակերպվում է հատուկ նշելով շինականի անձնանունը. օրինակ, Սանահնի վանքում ունենք տուաք զՄուսէս՝ Մարգարէին որդին, Բագնայրում (1262 թ.)՝ տվի Բ շինական զՄեհերեան ու զԽաչատուր, կամ ընդհանուր ձևով ցույց տալով ճորտ շինականների քանակը։ Այսպես, Խծկոնքի 1211 թ. բնագրում փորագրված է Ետու շինական մի, Հաղբատում (1243 թ.)՝ հաստատեցի Գ շինական: Բացի այս դեպքերից, նվիրագրերում տվյալներ կան վանքերին ոչ թե առանձին շինականներ, այլ նրանց՝ ամբողջ ընտանիքներ նվիրելու մասին։ Այս իրողությունը նվիրագրության մեջ արտահայտվում է կամ տվյալ ընտանիքի հավաքական անվամբ՝ Սանահնի վանքում՝ զԳոբռոնոնք շինական, այսինքն նվիրվել է Գոբռոնոնք ընտանիքը։ Ավելի որոշակի շինականի ընտանիք նվիրելու մասին փորագրված է Դադի վանքի 1224 թ. նվիրագրում. «տուի ի Դադի գերեզման Դ տուն շինական»: Շինականատուն տերմինը գյուղացու տուն, տանիք իմաստով փորագրված է Կեչառիսի և Դադի վանքի պատերին։

Այսպիսով, նվիրատվական բնագրերը լինելով սեփականության օգտագործումը կարգավորող վկայագիր, միաժամանակ կարևոր արժեք են ներկայացնում վկայված ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական իրավական վիճակը ուսումնասիրելու համար։

ԱՆԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ*

Անիի Կաթողիկե եկեղեցու կամ Մայր տաճարի այս արձանագրությունը փորագրված է հարավային ճակատի արևմտյան անկյունում, և չնայած հազարամյա հնությանը, մեզ է հասել բացառիկ անեղծ վիճակով։ Բնագիրը բազմիցս վերծանվել ու գիտականորեն հրատարակվել է, նրա հիմնական բովանդակությունը լիովին բացահայտված է, նրանում մութ կամ անորոշ կետեր չկան, եթե չհաշվենք տարեթվերի առեղծվածը։ Արձանագրության վավերականության նկատմամբ միակ երկմտանքը հայտնել է Ն. Մառը՝ Անիի 1912 թ. պեղումներով հայտնաբերված շինարարական բարձրաքանդակի մեկնաբանության առիթով։ Գիտնականի կարծիքով Կատրանիդե թագուհու 1000 թ. կառուցած տաճարը մեզ է հասել ոչ նախնական տեսքով, այլ ԺԲ—ԺԳ դդ. կատարված զգալի նորոգումներից հետո, որոնց ընթացքում սկզբնական շինարարական արձանագրությունը ստիպված են եղել նորից փորագրել պատի վերաշարված սրբատաշ մակերեսին։ Ահա նրա եզրակացությունը. «Տաճարը 1000 թ. կառուցվելու մասին հարավային պատին փորագրված արձանագրությունը, դատելով նրա հնագրական առանձնահատկություններից, XII—XIII դարերի պատճեն է. բացի դրանից, նրանում վկայված է վրացական տարեթիվ, որը դժվար համատեղելի է հայ թագավորների ժամանակաշրջանի Անիի համար»[1]։ Մառը չի նշում, թե բնագրի հնագրական ինչ հատկություններ են հիմք տվել այն XII—XIII դդ. պատճեն համարելու, ուստի և նրա նախօրինակ լինելու նկատմամբ անվստահության հիմնական կռվանը մնում է կարծեցյալ վրացական տարեթվի առկայությունը, որ գիտնականի կարծիքով անհարիր է Բագրատունիների ժամանակների Անիին և սպասելի ավելի ուշ ժամանակներում, Զաքարյանների իշխանության տարիներին։

Անիի Կաթողիկեի կառուցողական արձանագրում վկայված տարեթվերը, ի թիվս և վրացական համարվածը, ցայժմ ստույգ չեն վերծանվել ու մեկնաբանվել, և այդ պատճառով տաճարի կառուցման և բնագրի փորագրման ժամանակի մասին հայտնվել են հակասական տեսակետներ։

Սույն հաղորդման նպատակը Մայր տաճարի արձանագրում փորագրված տարեթվերի վերծանության ճշգրտումն է, որով հնարավոր կլինի որոշել տաճարի կառուցման ստույգ ժամանակը։

Ինչպես ակներև է բնագրի հստակ լուսանկարից, այն թվագրված է վեց տարեթվերով, որոնցից առաջին երեք համաժամանակյա թվականները առաջին տողի վրա են, մնացած երեքը՝ վերջին երեք տողերում։ Փորձենք պարզել, թե ինչ տարեթվեր են կարդացվում իրականում քարի վրա, և ինչպես պետք է վերծանել դրանք (Նկ. 1)։

1. Առաջին տարեթիվը հստակ կարդացվում է. Ի:Ն:Ծ:Թ **հայոց**, *որ բոլոր հետազոտողները աներկբա վերծանել են ստույգ՝* **ՆԾ թուին հայոց**, *այսինքն 1001 թ. (450+551)։ Միայն Ա. Աբրահամյանը առաջարկում է տարեթիվը ընկալել ոչ թե* **ՆԾ թուին**, *այլ* **ՆԾԹ**—*1010 թ., այսինքն Թ գիրը դիտել իբրև 9 թիվ և հաշվել տարեթվի մեջ*[2]*։ Այս մեկնությունն անընդունելի է, քանի որ հենց հաջորդ տարեթվում էս նույն Թ գիրը, նույնպիսի իրադրության մեջ կիրառված է իբրև* **թուին**, **թուականին** *բառերի նախահունչ գիր՝* **ՄԺԹԹ հոռոմոց**. *ակնհայտ է, որ այստեղ Թ-ն չէր կարող նշանակել 9 թիվ, այլ միայն՝* **թուին, թուականին:**

2. Երկրորդ թվականն անջատված է առաջինից խաչանշանով, և մասնագետները պարզ կարդացել են **:Մ:Ժ:Թ:Թ հոռոմոց:** *Ա. Աբրահամյանը այստեղ փորագրողի սխալ դիտելով, տվյալ տառաշարքը սրբագրում է* **ՄԻԹ թուին հոռոմոց**, *այսինքն առանց որևէ հիմքի Ժ (1) գիրը ուղղում է Ի-ի (20)*[3]*։ Բուն ՄԺԹ տարեթիվը Ն. Ակինյանը համարում է վրացական թվական և վերծանում՝ 999—1000 (219+781)*[4]*։ Ն. Մառը ևս, ինչպես տեսանք,* **ՄԺԹ հոռոմոց**-*ը վրացական քրոնիկոն է համարում և այդ հիմամբ արձանագրության արտագրումը դնում Զաքարյան-*

* *«Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, № 11։*

1 **Н. Марр**, Ани, Л.-М., 1934, էջ 121:

2 **Ա. Աբրահամյան**, *Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 129,* **նույնի՝** *Ժամանակագրական ճշտումներ («Հանդես ամսօրյա, 1976, էջ 158—161)։*

3 *Նույն տեղում։*

4 **Ն. Ակինյան**, *Անիի Մայր եկեղեցվո և միջնաբերդի եկեղեցվո արձանագրությունները մասին («Հանդես ամսօրյա», 1932, էջ 539—541)։*

2339
ՀՍՍՀ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА



Նկ. 1

ների շրջանում[5]։ Ա. Մանուչարյանը հատուկ վերլուծելով ամբողջ բնագիրը, ՄԺԹԹ ճոռոմոց տարեթիվը անհայտ պատճառով դուրս է թողել քննությունից[6]։



Գծ. 1

[5] Н. Марр, Ани, էջ 121։

[6] Ա. Մանուչարյան, *Քննություն Հայաստանի IV—XI դարերի շինարարական վկայագրերի*, Երևան, 1977, էջ 207—209։

Գտնում ենք, որ անհիմն է հռոմոց տարեթիվն անվերապահորեն վրացական համարելը։ Հռոմին, Հռոմին շրջանին, Հռոմոց անվանումներով հայ մատենագրության մեջ, հատկապես ձեռագրերի հիշատակարաններում ու մանր ժամանակագրություններում, սովորաբար նկատի է առնվում բուն հռոմեական (նաև հունական)՝ Հռոմի հիմնադրման հետ կապված (753 թ. մ. թ.ա.) տոմարական տարեթիվը։ Վրացական թվականը կամ քրոնիկոնը հենց այդպես էլ վկայված է առավելապես ուշ միջնադարի աղբյուրներում։ Ըստ երևույթին, հռոմոց տարեթիվը վրացական է համարված այն պատճառով, որ վերջինս և հռոմեականը նույն հիմունքով են կազմվում, և քրիստոնեականի նկատմամբ նույն 779/780 տարվա տարբերությունն ունեն։ Այսպիսով, ՄԺԹ թուին հռոմոց հարկ է վերծանել՝ 219 թուին հռոմոց=219+780=999, որին գումարելով ավելցիր 2 տարին՝ կունենանք 1001 թ., այսինքն՝ համապատասխան հայկական ՆԾ թվականին։

3. Առաջին տողի վերջում նույն մեծության տառաձևերով փորագրված են երեք փակագրեր (գծ. 2), որոնց վերծանությունն ու մեկնաբանությունը ցայժմ պարզված չեն։ Բնագիրն ընդօրինակողները, այդ թվում նաև Անիի վիմագրերի ամբողջական ժողովածուի հրատարակող Հ. Օրբելին, այս փակագրերը զետեղել են նույնությամբ, առանց վերծանելու[7]։ Միայն Կ. Բասմաջյանը դրանք կարդացել է ԲԵՆԻԱՄԻՆ ԳՐԷ (ԲԵՆԻ, ԱՄԻՆ, ԳՐԷ), և դրանցում փորագրողի հիշատակագրություն է տեսնում, մանավանդ որ բնագրի վերջին տողում էլ վկայված է գրեթե նույնանուն գրիչը՝ գրեցաւ յիշատակարանս ի ձեռն իմ Բենէ։ Ա. Մանուչարյանի կարծիքով՝ «կցագրերը պետք է կարդալ ԲԵՆԷ ԱՄԷՆ ԳՐԷ», սակայն այս ընթերցումը չի հիմնավորված, և բնավ պարզ չեն վերականգնված բառերի իմաստն ու շարահյուսական կապը[8]։

Փակագրերի այս ընթերցման դեմ հիմնավոր առարկում է Ն. Ակինյանը՝ Կ. Բասմաջյանի գրքի մասին գրախոսականում. «Շատ միամիտ ըլլալու է կարծելու համար թե փորագրողին կամքին է թողնված պաշտոնական արձանագրության մը մեջ երկիցս յուր անունն անմահացնել»[9]։ Արդարև, դժվար է պատկերացնել, որ Հայոց թագուհի Կատրանիդեի շինարարական արձանագրության հենց սկզբում փորագրողին թույլատրր-

[7] «Դիվան հայ վիմագրության», պր. Ա, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 35։

[8] K. Basmadjian, Les inscriptions arméniennes d' Ani, de Bagnair et de Marmachen, Paris, 1931, № 8, 9, Ա. Մանուչարյան, նշվ. աշխ., էջ 208։

[9] Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 540։

վել է թողնելու իր երկրորդ հիշատակագիրը, այն էլ փակագրերով։ Ճիշտ է, Անիի կառուցողական առավել ընդարձակ և գեղագիր վիմագրերում քանիցս հիշատակված են փորագրող գրիչների անուններ՝ Անանէ գրիչ, Սիմէոն, Իւրակէզ գրիչ, Պտուղ գրիչ և այլն[10], սակայն այս կարգի հիշատակությունները փորագրված են բնագրերի վերջում, նրանցից անջատ և սովորական գրչությամբ, առանց փակագրերի կիրառության։

Ն. Ակինյանն առաջինը լինելով, փակագրերը համարել է ոչ թե անձնանվան սղագրություն, այլ արաբական կամ հիջրայի տարեթիվը, որ դավանաբանական նկատառումով փորագրվել է դժվար վերծանելի, բարդ տառակցումներով, բայց հայերեն տառաձևերով։ Նրա ընթերցմամբ առաջին կցագիրը պարունակում է ՑՂ գրերը աջից ձախ գրությամբ, երկրորդը՝ ԱՄԻ բառը, երրորդը՝ ՀԱԳԱՐԱՑԻՈՑ, ըստ այդմ ամբողջ փակագիրը հարկ է վերծանել՝ ՑՂ ԱՄԻ ՀԱԳԱՐԱՑԻՈՑ, այսինքն՝ հիջրայի 390 թ., որ համապատասխանում է արդի 999—1000 թ.[11]։ Ն. Ակինյանի այս վերծանությունն այնքան էլ համոզիչ չէ, քանի որ առաջին կցագրում Ց, Ղ գրեր չեն նշմարվում ոչ աջից ձախ, ոչ էլ հակառակ ընթերցումով, իսկ վերջին փակագրում էլ անհնար է ՀԱԳԱՐԱՑԻՈՑ բառը տեսնել։

Նորերս Մայր տաճարի սույն արձանագրության տարեթվերին առանձին հոդվածով անդրադարձավ Ա. Աբրահամյանը։ Փակագրերը վերծանելու առթիվ նա համամիտ է Ն. Ակինյանին, որ նրանցում արտահայտված է արաբական հիջրայի թվական, սակայն առաջարկում է կցագրերի այլ վերծանություն, ըստ այդմ առաջին կցագիրը կարդում է ոչ թե ՑՂ, այլ ՆԲ (402), երկրորդը ԱՄԻՆ և երրորդը՝ ՀԱԳԱՐԱՑԻՈՑ-ի փոխարեն ԳԷԲՐ (ԳԱԲՐ), որ, ըստ հեղինակի, պարսկերեն բառ է և նշանակում է անհաւատ, հեթանոս[12]։ Այսպիսով, հեղինակն ամբողջ փակագիրը վերծանում է ՆԲ ԱՄԻՆ ԳԷԲՐ (անհավատների թվականի ՆԲ-ին (402), որ արդի թվականով կլինի 1010/1011 թ.։ Ավելի հավանական համարելով արձանագրության երկրորդ և երրորդ կցագրերի՝ Ա. Աբրահամյանի բացումը՝ ԱՄԻՆ ԳԷԲՐ, գտնում ենք, որ բուն հիջրայի թվա-

[10] «Դիվան հայ վիմագրության», պր. Ա, էջ 4, 23, 24, 27, 63։

[11] Ն. Ակինյան, նշվ. աշխ.։

[12] Ա. Աբրահամյան, Ժամանակագրական ճշտումներ, էջ 158։

կանն արտահայտող առաջին կցագրի ընթերցումն այնքան էլ համոզիչ չէ։ Արդարև, այդ կցագրում կարելի է վերականգնել Ն, Ե, Բ գրերը, եթե անտեսենք կցագրված տառամայրին ձախից միացված թեք ստեղնը, որի ընթերցումը դժվար է որոշել։ Մյուս կողմից, հնարավոր է նաև, որ այս կցագրում առանձին գրերը փորագրված լինեն ոչ թե սովորական, այլ արաբական, այսինքն աջից ձախ գրությամբ, ինչպես մտածել է Ն. Ակինյանը։

Անիի Մայր տաճարի արձանագրում արաբական թվագրումը միանգամայն սպասելի է, եթե, մանավանդ, նկատի առնենք Հաղբատի վանքում Սմբատ Բ-ի բարձրաքանդակի գրեթե նույն ժամանակների արաբերեն արձանագիրը, որ վերջերս հավաստի վերծանվեց՝ ՇԱՀԱՆՇԱՀ ԱՆԻԻ ԹԱԳԱՒՈՐ[13]։ Այսպիսով, հավանական համարելով արձանագրության փակագրերի մասին Ն. Ակինյանի կռահումը, ըստ որի նրանում արտահայտված է արաբական հիջրայի թվականը, երկրորդ և երրորդ կցագրերի վերականգնումն ավելի համոզիչ է Ա. Աբրահամյանի ընթերցմամբ՝ ԱՄԻՆ ԳԷԲՐ, բուն տարեթիվը՝ առաջին կցագիրը մնում է անորոշ և կարոտ նոր քննության։

4. Բնագրի վերջին տողերում փորագրված տարեթվերից առաջինը արարչության Ալեքսանդրյան թվականն է՝ Ի ՎԵՑ :Ռ:Ն:Լ:ԵԻ:Գ:ԱՄԱՑՆ ԱԴԱՄԱ, այսինքն՝ 6433 տարի Ադամից հետո, որ համապատասխանում է արդի 1010/11 թ. (6433—5422/23)։ Բոլոր ուսումնասիրողները համերաշխ են այս վերականգնմանը, բացի Ա. Մանուչարյանից, որի կարծիքով 6433-ից պետք է հանել ոչ թե 5422/23, այլ 5425 և ստանալ 1008 թ.[14]։ Սակայն արարչության թվականը հռոմեական հաշվով է, ոչ հայկական, ուստի և արդի թվականը ստանալու համար նրանից պետք է դուրս գալ միայն 5422/23։

5. Հաջորդ տարեթիվը ձևակերպված է՝ :Ռ:ԵԻ:ԲԺ: ԱՄԻ ՄԱՐՄՆԱՆԱԼՈ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԲԱՆԻ, որի տակ հասկացվում է Քրիստոսի ծննդյան թվականը։ Բնագրի Ռ եւ ԲԺ գրերի ընթերցումը տարակարծությունների տեղիք է տվել, որովհետև քարի վրա Ե գրին կցագրված է Բ-ի թեքվող ստեղն, որի համար էլ կցագիրն ընկալվել է ԲԵ (-ԲԵԻ), իսկ ամբողջ տառաշարքը՝ ՌԲ եւ ԲԺ, այսինքն՝ 1000+2+12=1014, կամ՝ 1000+2+20=1022[15]։ Իրականում այդպիսի տարակարծիքն ան-

[13] Ա. Տեր-Ղևոնդյան, *Հաղբատի արաբերեն արձանագրությունը և Բագրատունի թագավորների տիտղոսները* (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1979, № 1, էջ 74)։

[14] Ա. Մանուչարյան, նշվ. աշխ., էջ 208։

[15] Նույն տեղում, էջ 208։

հիմն է, քանի որ տառակցում չկա ոչ այստեղ, ոչ էլ ամբողջ արձանագրության մեջ (բացի վերջին թվագրում Մ Ա գրերի կցումից). կա փորագրողի շատ սովորական վրիպում. Ռ-ից հետո փոխանակ փորագրելու ԵԻ շաղկապը, փորագրել է հաջորդ Բ-ն, և նկատելով սխալը՝ Բ-ն դարձրել է Ե(ւ)։ Ուրեմն Ռ եւ ԲԺ թվագիրը պետք է վերծանել 1000+12=1012 թ., որից հանելով ավելադիր երկու տարին՝ ունենում ենք 1010 թ., այսինքն համապատասխան նախորդ կետում նշված տարեթվին։

6. Վերջին տարեթիվը կարդացվում է ՁԸԺԱ ԱՄԻ ՀԱՒԱՏԱԼՈ Ի ՔՐԻՍՏՈՍ ՀԱՅՈՑ, որը հայերի քրիստոնեական դարձի թվականն է։ Պարզ երևացող ՁԸԺԱ թվագիրը ընդօրինակողները տարբեր ձևով են վերծանել, նայած թե ինչ թվական են ցանկացել վերականգնել։ Դեռ Ղ. Ալիշանը, առանց հիմնավորման, այն կարդացել է ՁԱԺ=711, Ն. Ակինյանը՝ Ձ եւ ԺԱ=711, նույնը կրկնել է Ա. Աբրահամյանը։ Ա. Մանուչարյանը այս թվագիրը վերծանել է ըստ Հ. Օրբելու՝ ՁԸԺ=718, այսինքն՝ անտեսել է քարի վրա պարզ երևացող Ժ-ին հաջորդող Ա գիրը և ամբողջ թվականը վերականգնել 1019 թ. (718+301)[16]։

Ինչպես երևում է բնագրի հստակ լուսանկարից, թվագիրը ՁԸԺԱ է, ուրեմն մյուս ընթերցումներն անիրական են և կարող են դիտվել միայն իբրև փորագրողի սխալի հետևանք։ Բայց ինչպե՞ս վերծանել ՁԸԺԱ թվականը, չէ որ այստեղ միավոր արտահայտող տառերը երկուսն են՝ Ը (8), Ա (1), որ անհարիր է հայկական թվակարգին։ Հասկանալի է, որ երկուսից մեկը սխալ է փորագրվել, ավելորդ է։ Հնարավոր է, որ տվյալ թվագրում Ը-ն թվային արժեք չի արտահայտել, այլ եղել է հարյուրավորի՝ Ձ-ի (700) հնչական կազմում, ինչպես արդի արտասանությամբ է՝ ՉԸ, ԳԸ, ԴԸ, ՁԸ և այլն։ Այսպես թե այնպես, ճշգրտելով վերջին տարեթվի ընթերցումը՝ ՁԸԺԱ, նրա վերծանությունը համարում ենք ՁԺԱ=711, ինչպես կռահել էին նախորդ ուսումնասիրողները՝ Ղ. Ալիշանը, Կ. Բասմաջյանը, Ն. Ակինյանը, Ա. Աբրահամյանը։ Ըստ այդմ, ՁԺԱ ԱՄԻ ՀԱՒԱՏԱԼՈ Ի ՔՐԻՍՏՈՍ ՀԱՅՈՑ տարեթիվը կլինի՝ 711+301=1012, որից հանելով ավելադիր 2-ը, կստանանք նույն՝ 1010 թ.։

Սույն թվականի ընթերցումը տալով ըստ Հ. Օրբելու՝ առանց ստուգելու բնագրի լուսանկարի վրա՝ ՁԸԺ=718, և տարեթիվը վերականգնելով 1019 թ. (718+301), Ա. Մանուչարյանը այն համարում է Մայր տաճարի շինարարական վկայագրի միայն վերջին հատվածի՝ Սարգիս կաթողիկոսի անունից գրված հատուցման բանաձևի թվականը, քանի

[16] Նույն տեղում, էջ 208—209։

որ հեղինակի կարծիքով ամբողջ բնագիրը կազմված է երեք մասից, որոնք փորագրվել են տարբեր ժամանակներում՝ տասնմեկ տարվա ընթացքում (1008, 1014, 1019), և նրանում վկայված տարեթվերը իրար հետ չեն առնչվում, համաժամանակյա չեն[17]։

Սույն հաղորդման սահմաններում հնարավորություն չունենալով քննելու ու մի ձևով չհիմնավորված այս վարկածը, հարկ ենք համարում նշել, որ արձանագրությունը տարբեր ժամանակներում փորագրելու տեսակետը ոչ հնագրորեն, ոչ բովանդակության վերլուծությամբ, ոչ էլ իրական տարեթվերով չի արդարացվում, և հենց բնագրի լուսանկարը լավագույնս հերքում է այդպիսի վարկածի հավանականությունը։

Այսպիսով, վերևում շարադրված նկատառումների հիմամբ, Մայր տաճարի կառուցողական արձանագրության տարեթվերը վերծանվում են.

I Առաջին տողում՝

Ա. Ի:Ն:Ծ թուին հայոց=450+551=1001 թ.

Բ. Մ:Ժ:Թ: թուին հռոմոց=219+780=999+2=1001 թ.

Գ. Արաբական հիջրայի թվականն արտահայտող փակագրեր— (ՙ) ամին գէր.=(ՙ)

II Վերջին երեք տողերում՝

Դ. Ի վեց :Ռ:Ն:Լ:Եւ:Գ: ամացն Ադամա=644—5422/23 =1010/11 թ.

Ե. Ի : Ռ : Եւ : ԲԺ : ամի մարմնանալո աստուածային բանի= =1000+12=1012, հանած ավելորդ 2 տարին=1010 թ.

Զ. :Չ:Ը:Ժ:Ա ամի հաւատալո ի Քրիստոս հայոց= 711+301=1012, հանած ավելորդ 2 տարին=1010 թ.։

Ինչպես ակնհայտ է, արձանագրում վկայված են երկու խումբ համաժամանակյա տարեթվեր՝ առաջին տողում 1001 թ., վերջին տողերում՝ 1010/1011 թ., հասկանալի է, որ սրանք միաժամանակ չեն կարող վերաբերել տաճարի կառուցումն սկսվելուն կամ ավարտին։ Այդ դեպքում ի՞նչ տարեթվեր են դրանք։ Դեռ Ղ. Ալիշանը իր ձեռքի տակ եղած ոչ նույնական վերծանության հիմամբ առաջին թվականը՝ 1001 թ. համարել է բուն տաճարի շինության ավարտի ժամանակը, իսկ երկրորդը, որ նրա կարծիքով 1012 է՝ մնացած շինվածքներինը՝ յետ մետասան ամաց և

[17] Նույն տեղում, էջ 209։

յայնմ միջոցի բուի ամենայն սարօք բովանդակեալ շինուածոյն[18]: Պատմությունից, նաև սույն արձանագրությունից գիտենք, որ Մայր տաճարը հիմնադրեալ էր մեծին Սմբատայ (Սմբատ Տիեզերակալ—977—990), մահվանից ոչ շատ առաջ՝ 988—989 թ., եւ Կատրամիտէ թագուհի աւարտեաց զկաթողիկէն սուրբ, զոր ոչ կարաց կատարել Սմբատ թագաւորն[19]։ Պատմիչները գրեթե նույն ձևով ներկայացնելով տաճարի շինության հանգամանքներն ու հովանավորներին, չեն տալիս նրա հիմնադրման կամ ավարտի ստույգ ժամանակը. միայն Սամուել Անեցին շինության ավարտը դնում է 1011 թ. «ՌԺԱ (1011)։ Կաթուղիկէն սխրատեսիլ՝ զոր հիմնադրեաց Սմբատ յիւրում քաղաքին յԱնի, աստանօր գլխաւորեցաւ հրամանաւ և արդեամբք Կատրամիդեայ թագուհւոյ, որ էր կին Գագկա Շահնշահի՝ եղբօր Սմբատայ»[20]։

Հավանաբար, պատմիչը տաճարի ավարտի մասին այս տեղեկությունը քաղել է Կատրանիդեի արձանագրությունից, որ ավելի հավաստի է դարձնում վերջին տարեթվերի մեր առաջարկած վերծանությունը։ Կասկածից վեր է, որ Կատրանիդե թագուհին Սմբատ Տիեզերակալի հիմնադրած տաճարի շինարարական աշխատանքները վերսկսել է 1001 թ. և ավարտել տասը տարի անց՝ 1010 թ.: Այդպիսի հոյակերտ, հսկայածավալ շենքի կառուցումը տասը տարվա ընթացքում միանգամայն բնական ու սովորական է այդ դարերի նման կառույցների համար։ Գրեթե նույնպիսի ընթացք է ունեցել նաև Մարմաշենի հուշարձանախմբի կառուցապատումը, որ, ըստ շինարարական արձանագրության, Վահրամ Պահլավունին սկսել է ՆԼԷ—988 թ., նույն Սմբատ թագավորի վերջին տարիներին է ավարտել ՆՀԸ—1029 թ.[21]։ Մյուս կողմից, քննվող արձանագրության տարեթվերի այդպիսի մեկնությունից ակնհայտ է դառնում, որ Կատրանիդեի կառուցած Մայր տաճարը և նույն Անիում Գագիկ թագավորի կառուցած զվարթնոցատիպ եկեղեցին նույն տարիներին և միաժամանակ չեն ավարտել, ինչպես ընդունված է մասնագիտական գրականության մեջ, այլ Մայր տաճարի շինությունն սկսվել է Գագկաշեն եկեղեցին ավարտելուց հետո, ըստ որում Ասողիկը վերջինիս ավարտը համարում է՝ «յամին Ռ մարմնանալոյ տեառն մերոյ», այսինքն հայկական ՆԽԷ—998 թ. (1000—2)։ Ավելի որոշակի զվարթնոցատիպ տաճարի ավարտի նույն ժամանակն է նշում նաև Գանձակեցին, հավանա-

[18] Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1861, էջ 70։

[19] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 88—89։

[20] «Սամուէլի քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 104—105։

[21] И. Орбели, Избранные труды, М., 1963, էջ 442:

բար տեղեկությունը քաղելով Ասողիկից. «Սա (Գագիկ Ա Թագավորը— Մ. Ա.) շինեաց զսուրբ Գրիգորն գերահռչակ ի վերայ Ծաղկոցաձորոյն՝ զաղափար առեալ զհոյակապ սուրբ Գրիգորն, զոր շինեաց հայրապետն Ներսէս, և կատարեցաւ ի հազար ամի մարմնանալոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և ի ՆԽԷ թուականին հայոց»[22]։

Ա. Աբրահամյանը Մայր տաճարի արձանագրության բոլոր վեց տարեթվերը համաժամանակյա համարելով՝ վերծանում է 1010/11 թ. և տաճարի ավարտը դնում այդ թվականին։ Ա. Մանուչարյանը, ընդհակառակը, տարեթվերը համաժամանակյա չհամարելով՝ բնագրի փորագրումը վերագրում է տարբեր ժամանակների և տաճարի կառուցումը դնում 1001 թ., գտնելով, որ բնագիրը փորագրվել է շենքն ավարտելուց տարիներ անց՝ 1008 թ.։ Ավելի ընդունելի է Ն. Ակինյանի կարծիքը, ըստ որի առկա են երկու խումբ համաժամանակյա տարեթվեր՝ առաջին տողում. 999—1001 թթ. և բնագրի վերջում՝ 1009/10 թ., ըստ այդմ առաջին թվականը Սմբատ Թագավորի հիմնադրած տաճարի շինությունը վերսկսվելու տարեթիվն է, երկրորդը՝ շինությունը ավարտելու։

«ՏԱՆՈՒՏՐՈՒԹԻՒՆ» ՏԵՐՄԻՆԸ ԱՆԻԻ XI ԴԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Այս տերմինը յորժամ առին զտանուտրութիւնս կապակցության մեջ վկայված է Անիի բյուզանդական կատեպան Բագրատ մագիստրոսի ընդարձակ արտոնագրում, որը փորագրվել է Մայր տաճարի արևմտյան

[22] Գանձակեցի, էջ 8—89։ «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 87։ Չնայած Գագիկ Ա-ի կառուցած զվարթնոցատիպ ս. Գրիգոր տաճարի շինության ժամանակի մասին պատմիչների հաղորդած հավաստի տեղեկություններին, մասնագիտական գրականության մեջ նրա ավարտը տարբեր ժամանակների է վերագրվել։ Տաճարը հայտնաբերող և պեղող Ն. Մառը անորոշ է թողնում նրա ժամանակի հարցը։ Անիի պեղումների մասնակից Հ. Օրբելին տաճարի շինության տևողության ժամանակ է նշում՝ 14 տարի (1001—1015)։ Վ. Հարությունյանը Գագկաշենը թվագրում է Գագիկ Թագավորի տարիներով՝ 1021—1020 թթ.։ Ա. Մանուչարյանը Գանձակեցու հաղորդած ՆԽԷ—998 թվականը վերագրում է Անիի Մայր տաճարին և այդ պատճառով Գագկաշեն ս. Գրիգորի ավարտը թվագրում ըստ Ասողիկի՝ «յամին Ռ (1000) մարմնանալոյ տեառն մերոյ», այսինքն 1000 թ., մինչդեռ վերջինից հարկ էր հանել ավելորդ երկու տարին և այդ դեպքում կստեղծվեր հուշարձանի կառուցման՝ Գանձակեցու նշած իրական թվականը՝ ՆԽԷ—998 (Н. Марр, Ани, էջ 66, И. Орбели, Избранные труды, էջ 121, Վ. Հարությունյան, Անի քաղաքը, էջ 59, Ս. Մանուչարյան, Քննություն..., էջ 209—210)։

*«Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2։

պատին 1058—1060 թթ. և հաղորդում է քաղաքի բնակիչների հարկերն ու պարտույթները նվազեցնելու կամ իսպառ վերացնելու մասին։ Արձանագրությունը դեռևս անցյալ դարի կեսերին առաջին անգամ ընդօրինակվել է և ավելի ուշ հրատարակվել է Ն. Սարգիսյանի տեղագրական երկում[1], այնուհետև բնագիրը ֆրանսերեն թարգմանությամբ և մանրամասն վերլուծականով Աբիխի էստամպաժի վրայից վերծանել և հրատարակել է Մ. Բրոսեն[2]։ Հետագա տասնամյակներում կատեպան Բագրատի արտոնագիրը առավել կամ պակաս հարազատությամբ հրատարակել են Ս. Ջալալյանցը, Ղ. Ալիշանը, Մ. Գևորգյանցը, Կ. Բասմաջյանը և ուրիշներ։ Բնագրի գիտական-քննական առավել սպառիչ հրատարակությունը մանրամասն ծանոթագրություններով և արձանագրության լուսանկարով 1921 թ. իրականացրել է Վ. Բենեշևիչը՝ Անիի բյուզանդական շրջանի (1045—1064 թթ.) արձանագրություններին նվիրված հատուկ ուսումնասիրության մեջ, որը 1913 թ. Անիի հնագիտական արշավախմբի կազմում հեղինակի կատարած հետազոտությունների արգասիքն էր[3]։ Նույն բնագիրը Անիի մյուս արձանագրությունների հետ ժամանակին, քաղաքի պեղումների ընթացքում, ընդօրինակել և վերծանել էր նաև Հ. Օրբելին, սակայն, դեպքերի բերումով, դեռևս 1920 թ. տպագրության պատրաստ ժողովածուն հրապարակ եկավ միայն վերջերս[4]։ Ահա կատեպան Բագրատի քննվող բնագիրը ըստ Վ. Բենեշևիչի և Հ. Օրբելու՝ բացառիկ նույնական ընդօրինակության.

ԱՆՈՒԱՄԲ տն ԱՄԵՆԱԿԱԼԻ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ սբ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԿՈՍՏԱՆԴԵԱ ԴՈՒԿԻ, ԿԱՄ ԵՂԵՒ ԻՄ ԲԱԳՐՏԱ ՄԱԳԻՍՏՌՈՍԻՍ ԵՒ ԱՐԵՒԵԼԻՑ ԿԱՏԱՊԱՆԻՍ ՎԽԿԱՅՈՅՍ ԱՌՆԵԼ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ ԱՆԻՈ. ՅՈՐԺԱՄ ԱՌԻՆ ԶՏԱՆՈՒՏՐՈՒԹԻՒՆՍ ՄԽԻԹԱՐ ԻՊԱՏՈՍՆ ԿՐՏԻՆ ՈՐԴԻՆ ԵՒ ԳՐԵԳՈՐ ԼԱՊԱՍՏԱԿԱ ՈՐԴԻՆ ՍՊԱ-

[1] Տե՛ս Ն. Սարգիսյան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 120։

[2] Տե՛ս M. Brosset, Rapports sur un voyage archéologique dans la Georgie et dans l'Arménie, Pet., 1849, էջ 95։

[3] В. Н. Бенешевич, Три Анийские надписи..., Петербург, 1921. Մեջ է բերում կատեպան Բագրատի արձանագրության մատենագիտությունը։ Բացի դրանից տե՛ս նաև Մ. Գևորգյանց, Համառոտ տեղագրություն հնությանց մեծին Շիրակա և մայրաքաղաքին Անւոյ, Ալեքսանդրապոլ, 1903, էջ 35. K. Basmadjian, Les inscriptions Arméniennes d' Ani, de Bagnair et de Marmachen, Paris, 1931, № 23.

[4] Հ. Օրբելի, Դիվան հայ վիմագրության, պր. I, Երևան, 1966, էջ 47։

ԹԱՐ ԿԱՆԿԻՏԱՍՆ, ԵՒ ՍԱՐԳԻՍ ԱՐՏԱԽԱԶԱ ՈՐԴԻՆ ՍՊԱԹԱՐ ԿԱՆԿԻՏԱՍՆ ԵՒ ԱԶԱՏԵՑԻՆ ԶՎԵՑԿԷ ԿՈՌ ԵՒ ԶՄԱՅԼԻ, ԵՒ ԶԿԱՄԻՆ, ԵՒ ԶԱՆԳԱՐԻՈՆ։ ԵՒ ԿԱՏԱՊԱՆ ՌՎ ԵՒ ԼԻՆԻ ՏԱ ՍԵՐՄ :Ո: ՄՈԴ ԵՒ ԾԱԽՔ ԶԸՆԾԵԼՈՅՆ, ԶԱՅԼՆ ՏԱՆՈՒՏԷՐՔՆ ԱՌՆԵՆ ԻՒՐԵԱՆՑ ՏԱՄԲ, ՈՐ ՉՀԱՍՆԻ Ի ՅԱՆԻ ՈՉԻՆՉ ՈՅԺ։ ԵՒ ԳԻՆԵԻՈՐ ԱՆԵՑԻ ԵԹԷ ՍԱՅԼՈՎ ԵԹԷ ԳՐԱՍՏՈՎ ԲԱԺՆ ԱԶԱՏ Է։ ԵՒ ԱՆԵՑԻ, ՈՐ ԻՒՐԵՆՆ ՄՈՐԹԵԼԻՔ ԳՆԷ, ԲԱԺՆ ԱԶԱՏ Է, ԵՒ ՇԱԼԱԿԱԻՈՐ ԱՆԵՑԻ ԲԱՄԲԷՆՅԱՎ ԲԱԺԻՆ ԿԷՍՆ ԱԶԱՏ Է, ԵՒ Ի ԿԱՊՃԻՆ ՏԱԻՆ ԴԱՀԵԿԱՆԻՆ :Զ: ԴՐԱՄ, ԱՅՍ ՏԱՆ :Դ:, :Բ: ԱԶԱՏ Է: ԵՒ ՄԸՍԱԳՈՐԾԻ ԵԹԷ ՊԱԽՐԷԻ ԼԻՆԻ ԳԼՈՒԽ, ԵԹԷ ՈՉԽԱՐԻ՝ ԿԷՍՆ ՏԱ, ԿԷՍՆ ԱԶԱՏ Է, ԵՒ Ի ՆՍՏՈ ԻՆԿԱՐԼԷՆ :Ո: ԴՐԱՄՆ ԱԶԱՏ Է։

Այս արձանագիրը, ինչպես և Մայր տաճարի նույն պատին նման տառաձևերով փորագրված Ահարոն մագիստրոսի արձանագրությունը, միանգամայն անաղարտ է պահպանվել և նրա ընդօրինակությունը բոլոր ուսումնասիրողների մոտ էլ, աննշան տարբերություններով, նույնական է իրականի հետ, ստուգվում է լուսանկարով, ըստ այդմ զգալի տարընթերցումներ չի տալիս։ Չնայած դրան, այս կարևոր բնագրի վերծանության և մեկնաբանության առկա վիճակը դժվար է գոհացուցիչ համարել, քանի որ նրանում հիշատակված մի շարք տերմիններ, հասկացություններ կամ պարզապես անստույգ տառաշարքեր մինչև օրս էլ շարունակում են մնալ անբացատրելի կամ վիճելի, չնայած տառաձևերի ընթերցումների հավաստիությանը և հետազոտողների ջանքերին[5]։ Բագրատ մագիստրոսի վիմագիրը մեր բազմահազար արձանագրությունների թվում այն եզակիներից է, որ արժանացել է գիտական ստուգելի ընդօրինակության ու ըստ ամենայնի հանգամանալի վերլուծության, և, այսուհանդերձ, բնագրի ավելի ուշադիր քննությունը նոր մեկնությունների և ըմբռնումների հնարավորություններ է բացում այնտեղ, որտեղ առկա բացատրությունները թվում էին միանգամայն անառարկելի ու սպառիչ։

Այս տեսակետից չի կարելի արդարացի չհամարել Վ. Բենեշևիչի այն համոզումը, որ «Բագրատի արձանագրությունը Հին Հայաստանի իրավունքի և տնտեսության պատմաբանների համար երկար ժամանակ ծառայել է ոչ թե իբրև լույսի աղբյուր՝ անհայտ երևույթները լուսաբանելու համար, այլ իբրև քննախույզ ուսումնասիրության առարկա, որ խոստանում է առատ արդյունքներով հատուցել թափված աշխատանքը...»[6]։

Վերջերս քննվող արձանագրության մեջ հիշատակված տանուտրութիւն բառի ստուգաբանությամբ և ամբողջ բնագրի մեկնությամբ ընդարձակ հոդվածով հանդես եկավ նաև պատմաբան, բյուզանդագետ Հր. Բարթիկյանը։ Այստեղ հեղինակը բյուզանդական աղբյուրների և Անիի մյուս արձանագրությունների վերլուծությամբ աշխատում է ցույց տալ, որ բնագրի առին զտանուտրութիւնս կապակցությունը նախորդ ուսումնասիրողների կողմից ստույգ չի բացատրվել՝ ստանձնեցին տանուտէրութիւն («получили танутерство, приняли управление городом»), քանի որ, նրա կարծիքով, տանուտրութիւն բառը տվյալ իրադրության մեջ պետք է դիտել ոչ թե իբրև բառաբարդություն՝ կազմված տուն և տէրութիւն բաղադրիչներից (տանուտէրութիւն>տանուտրութիւն), ինչպես կարող է թվալ առաջին հայացքից և հասկացվել է մինչ այդ, այլ այնպիսի բարդություն, որ բաղադրվում է տուն և տրութիւն բառերից, ըստ որում վերջինս ծագում է տալ բայի տուր(ք) արմատաձևից և -ութիւն ածանցից, իսկ ամբողջ բարդությունը նշանակում է՝ տան տրութիւն. տան տուրք, այսինքն՝ տնահարկ: Տանուտրութիւն բառի այսպիսի ստուգաբանությունից հեղինակն այն եզրակացությանն է հանգում, թե Բագրատ Վխկացու քննվող արտոնագրում բառը արտահայտում է ոչ թե Անի քաղաքի կառավարման վարչական մարմնի՝ տանուտէրության նշանակություն, այլ տների պետական հարկի՝ տանուտրության իմաստ, որն, այսպիսով, իր բովանդակությամբ նույնանում է Ահարոն մագիստրոսի արձանագրությամբ ընդամենը 4 տարի դրանից առաջ (1055—1056 թթ.) վերացված պախտ տանց-ի կամ տնահարկի, այսինքն՝ բյուզանդական էնիկիոն-ի հետ[7]։ Տանուտրութիւն բառի այսպիսի ստուգաբանությամբ հեղինակը ստիպված է եղել տարբեր իմաստներ տեսնել այս տերմինի և բնագրի շարունակության մեջ հիշատակված տանուտէրքն բառերի մեջ, որի հետևանքով կատեսյան Բագրատի ամբողջ արձանագրության բովանդակությունը ներկայացվել է նախորդ մեկնաբանությունների համեմատ իրականից ակնհայտորեն ավելի հեռացած և աղավաղված։

---

[5] Բնագրի անհասկանալի տառաշարքերից նշենք են 7-րդ տողում. եւ շալակաւոր անեցի բամբենցավ բաժին կէսն ազատ է..., վերջին տողում. եւ ի նստո ինկարլէն :Ռ: դրամն ազատ է: Սրանցից բամբենցավ տառաշարքը մի քանի ընդօրինակողներ (Գևորգյանց, Բասմաջյան) ենթադրաբար վերականգնել են ամէն ցաղ (բաժին կէսն ազատ է), որ ավելի հավանական է թվում։

[6] В. Бенешевич, նշվ. աշխ., էջ 24։

[7] Р. Бартикян, «Эникион» в Византии и столице арм. Багратидов Ани в эпоху византийского владычества (1045—1064 гг.), «Պատմա-բանասիրական հանդես» (ՊԲՀ), 1968, № 2, էջ 126։ Հոդվածի ֆրանսերեն թարգմանությունը վերջերս լույս տեսավ Փարիզի „Revue des études Arméniennes" հանդեսի 1969 թ. VI հատորում, էջ 283—298։

Հարկ է նշել, որ Հր. Բարթիկյանի այս մեկնաբանությունը չի բխում կատեպան Բագրատի արձանագրության ինչ-որ նոր, մինչ այդ անծանոթ և ավելի սպառիչ վերծանությունից կամ տանուտրութիւն բառի ակներև ու համոզիչ ստուգաբանությունից, այլ ավելի շուտ հիմնված է այն կանխակալ համոզման վրա, ըստ որի Բագրատ Վխկացին Բյուզանդիայի արևելյան թեմի կառավարիչ նշանակվելուց առաջ կայսրին խոստացել էր ավելի լավ բավարարել Անիի և մերձակայքի պահանջը, ինչպես նաև զորքի կարիքները հոգալ զուտ տեղական միջոցների հաշվին, առանց կենտրոնական գանձարանի օգնությանը դիմելու։ Բյուզանդական աղբյուրների այս տվյալներից դատելով, պետք էր սպասել, որ կատեպան Բագրատը, անցնելով Անիի կառավարման գլուխ, կսկսեր ամեն ինչ անել խոստացած տեղական միջոցներն ավելացնելու ուղղությամբ և այդ նպատակով թերևս վերականգներ դրանից չորս տարի առաջ Թեոդորա կայսրուհու «գիր ազատությամբ» վերացված պախտ տանց, թաստակ, ինչպես նաև գիտ հարկերը, որոնք Բյուզանդիայի պետական եկամուտների զգալի մասն էին կազմում, գուցե և այլ՝ լրացուցիչ հարկեր և տուրքեր սահմաներ՝ բնակչությունից գանձելու համար։

Կատեպան Բագրատի՝ Անիում թողած այս միակ արձանագրությունից այդպիսի քայլեր է ակնկալում և Հր. Բարթիկյանը, մանավանդ որ թե՛ բյուզանդական և թե՛ հայկական աղբյուրները անսքող հակակրանքով են արտահայտվում Բագրատ Վխկացու այդ տարիների գործունեության մասին՝ նրան համարելով Անիի կործանման հիմնական պատճառներից մեկը։ Սակայն այլ են մատենագրական վկայությունները Բագրատի մասին և այլ՝ իրական վավերագիրը՝ կատեպանի անեղծ արձանագրությունը, որ պետք է ընթերցել և վերծանել այնպես, ինչպես հասել է մեզ։ Իսկ այդպես կարդալով բնագիրը, կարելի է համոզվել, որ նրանում ոչինչ չի ասված անեցիների հարկերը կամ պարհակները ինչ-որ չափով ավելացնելու կամ տեղական միջոցները ավելի մեծ քանակով հավաքելու մասին։ Ճիշտ հակառակը, այստեղ ևս, ինչպես և մագիստրոս Ահարոնի արձանագրության մեջ, խոսքը միայն քաղաքի բնակիչների հարկերն ու պարհակները կրճատելու կամ իսպառ վերացնելու մասին է։ Հր. Բարթիկյանը իր հոդվածում մեջ է բերում Բագրատի արտոնագրի միայն առաջին մասը, որտեղ հիշվում է վեցկիի, սայլի, կամի կոռերից և անգարիոն պարհակից անեցիներին ազատելու մասին։ Արտոնագրի շարունակության մեջ, բացի դրանից, սահմանվում է նաև, որ բաժ հարկից լիովին ազատվում են՝ գինեւոր անեցին (գինեվաճառ) և իրեն մորթելիք գնող անեցին, բաժի կեսից ազատվում են՝ շալակաւոր անեցին և մսագործ անեցին, մի կապիճի բաժը 6 դրամից իջեցվում է 4-ի և

այլն։ Նույնիսկ բնագրի վերջին նախադասությունը, որ մինչև օրս բոլոր հետազոտողների մոտ անվերծանելի տառաշարք է մնացել (...եւ ի նըստոին կարլէն. կամ եւ ի նստո ինկարլէն), նույնպես հաղորդում է բնակիչներին ինչ-որ հարկից ինչ-որ չափով ազատելու մասին (...:Ո: դրամն ազատ է)։ Սակայն այս թվարկումով չեն վերջանում անեցիներին շնորհված արտոնությունները. պարզվում է, որ դրանից բացի, կատապան ով եւ լինի պարտավոր է Անիի բյուզանդական վարչության և զորակազմի մատակարարման նպատակով անեցիների կատարած ցանքսերի համար տրամադրել 600 մոդ սերմացու, ինչպես և հատուցել արտերը հնձելու ծախսերը (...ծախք զընծելոյն), որպեսզի միայն մնացած աշխատանքները կատարեն Անիի տանուտէրքն իւրեանց տամբ, և այսպիսով քաղաքին նեղություն, դժվարություն չհասնի (...որ չհասնի ի յԱնի ոչինչ ոյժ...)[8]։

Կատեպանների համար սահմանվող այս պարտավորությունը կարող է տարակույս առաջացնել և անհավանական թվալ. արդարև, ինչպե՞ս կարող է կատեպան Բագրատը, միանձնյա կարգով, իրեն հաջորդող կատեպանների համար էլ որոշել սերմացու տրամադրելու և հնձելու ծախսերը հոգալու պարտավորություն։ Բնագրի այս սահմանումն այնքան անհավանական է թվացել ուսումնասիրողների համար, որ նրանցից ոմանք հակված են եղել տարբեր իմաստներ տեսնել նույն այս արձանագրության մեջ հիշատակված երկու կատեպանների մեջ՝ «Բագրատ մագիստրոսիս եւ արեւելից կատապանիս..., և կատապան ով եւ լինի, տա սերմ :Ո: մոդ...»։ Վ. Բենեշևիչն, օրինակ, հնարավոր է համարում երկրորդ կատապան-ի մեջ տեսնել ոչ թե բյուզանդական պաշտոնյա, թեմի կառավարիչ, այլ պարզ. kedban բառը, նախապես՝ տան, գյուղի պահապան, հետևաբար նաև՝ այգիների պահապան, այգեպան նշանակությամբ, որ կատէպան, կատապան գրությամբ և վերջին իմաստով հիշատակված է Հավուց թառի և Վաղուհասի (Արցախ) արձանագրություններում. «Ես՝ Գրիգոր կատէպանս էտու :Խ: դհի սբ ուխտս և սպասաւորքս գրէցին. Բ. ժամ, եռուզիմ արկած այգին ի Ճաքի իր կատապանովն»[9]։ Մեզ հավանական է թվում մտածել, որ կատեպան Բագրատը տվյալ դեպքում այս արտոնագիրը կամ համենայն դեպս նրա այն

[8] Տե՛ս Հ. Օրբէլի, Դիվան, էջ 37։ В. Бенешевич, նշվ. աշխ., էջ 22—23։

[9] Տե՛ս В. Бенешевич, նշվ. աշխ., էջ 27։ Գ. Հովսեփյան, Հավուց թառի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, Երուսաղեմ, 1937, էջ 17։ Վաղուհասի վկայությունը առնում ենք Ս. Բարխուդարյանի «Արցախի արձանագրությունները» անտիպ ժողովածուից։ Կատապան ձևը առաջանում է կատեպան, կատէպան-ից եղրային ա-երի առնմանությամբ։ Բառիս միակ ստուգաբանությունը տալիս է Հ. Հյու-

մասը, որ վերաբերում է կատեպանների պարտավորություններին, հրապարակում է ոչ թե իր անունից, այլ Բյուզանդիայի կայսեր՝ «սուրբ եւ ինքնակալ թագաւոր» Կոստանդին Դուկի ողորմութեամբ կամ նրա բարեհաճությամբ։ Ճիշտ է, այստեղ որոշակի չի նշված, որ հիշյալ արտոնությունները տրվում են կայսեր անունից կամ նրա «գիր ազատությամբ», ինչպես այդ տեսնում ենք մագիստրոս Ահարոնի արձանագրության մեջ (բերի ոսկի մատանեաւ գիր ազատութեան...), սակայն արտոնագրի ամբողջ տոնից և շարադրանքից երևում է, որ նոր կատեպան դարձած Բագրատը այդ բարեփոխությունները կատարում է կայսեր կամ արքունիքի իմացությամբ, եթե ոչ նրանց անունից։ Արձանագրության հիմնական մասը, որտեղ հիշատակվում են անեցիներին շնորհված արտոնությունները և կատեպանների պարտավորությունները, շարադրված է անորոշ ձևով, որից չի հասկացվում, թե ո՞վ է տալիս այդ շնորհները կամ ո՞վ է բնագրի հեղինակը։ Նախադասության առաջին մասի արտաքին կառուցվածքից կարելի է մակաբերել, թե նրա հեղինակը բյուզանդական երեք պաշտոնյաներն են՝ Մխիթար իպատոսը, Գրիգոր և Սարգիս սպաթար-կանդիդատները, որոնք, հիրավի, «յորժամ առին զտանուտրութիւնս... եւ ազատեցին զվեցկէ կոռ եւ զայլի եւ զկամին եւ զանգարիոն...», բայց միայն այսքանը, շարունակության մեջ թվարկված արտոնությունները և մանավանդ կատեպանների պարտավորությունների սահմանումը հազիվ թե հնարավոր լինի վերագրել հիշյալ պաշտոնյաներին, որոնք, անտարակույս, անկախ իրենց պաշտոնի բնույթից, բոլոր դեպքերում սոսկ ստորադասվում են կատեպան Բագրատին։ Հր. Բարթիկյանը անվերապահորեն պնդում է, թե զինվորականները բյուզանդական հարկահաններ են (հմմտ. մոնղոլական շրջանի տաղմաչի, ձեռնաւոր, շահնա պաշտոնները), որոնցից յուրաքանչյուրը հավաքում էր Անիի պատմականորեն գոյացած երեք շրջաններից կամ թաղամասերից մեկի

բշմանը՝ Armenische Grammatik, Leipzig, 1897, էջ 355։ Ըստ այդմ, կատէպան ծագում է հուն. κατεπανα —քաղաքապետ, գլխավոր արմատից, որն իր հերթին փոխառված է լատ. Catipaneus—գլխավոր ձևից։ ԺԹ դարի հիշյալ վիմագրերում և արդի մի քանի բարբառներում կատէպան ստացել է այգեպան, այգու պահապան նշանակություն (Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, Թիֆլիս, 1889, էջ 109։ «Բառգիրք Արարատյան բարբառի», Տփղիս, 1903, էջ 58)։ Առկա տվյալներով դժվար է որոշել, թե ինչպես է առաջանում այս իմաստային անցումը։ Վ. Բենեշևիչի փորձերը կատէպան-այգեպան համարելու պարս. ked-տուն, գյուղ և ban-պահող արմատներից կազմված բարդություն՝ kedban (հմմտ. kedivar, kedguda)—գյուղապետ, նաև այգեպան նշանակությամբ համոզիչ արդյունքների չեն հասցնում և առայժմ կատեպան-այգեպան մնում է կարոտ նոր քննությունների (տե՛ս նաև Н. Марр, Физиолог, СПб., 1904, էջ 76)։

հարկերը։ Եվ որովհետև Հր. Բարթիկյանը մագիստրոս Ահարոնի արտոնագրում հարկահանների մասին նման ցուցում չի նկատում, ստիպված է լինում եզրակացնել, թե այդ ժամանակ հարկահավաքների ինստիտուտը չկար, և հարկերը մուծվում էին անմիջականորեն պետությանը և միայն դրանից ընդամենը 4 տարի անց, Բագրատի արձանագրության մեջ արդեն նույն հարկերը մուծվում են միջնորդաբար՝ հարկահան պաշտոնյաների միջոցով[10]։ Այստեղից, ըստ հեղինակի, ստացվում է, որ չորս տարվա ընթացքում՝ 1056—1060 թթ., այսինքն՝ Ահարոնի վիմագրից մինչև Բագրատինը, Բյուզանդիայի պետական հարկահավաքման կարգի մեջ տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները՝ Ա. Անիում տների պետական հարկը՝ պախտ տանց-ը կամ բյուզանդական էնիկիոն, վերանվանվել է տանուտրութիւն։ Բ. Առաջացել է հարկահանների ինստիտուտը, որ առաջ չկար, քանի որ հարկերը անմիջականորեն, առանց միջնորդ պաշտոնյաների, մուծվում էին պետական գանձարանը։ Հեղինակը չի անդրադառնում տեղի ունեցած փոփոխությունների պատճառաբանությանը և նրանց առաջացումը մեզ թվում է չհիմնավորված և քիչ հավանական։ Նախ, Անիում բյուզանդական հարկահավաք պաշտոնյաների մասին։ Հր. Բարթիկյանը Ահարոնի արձանագրության այն հատվածից, որով հազորդվում է Ծիրանեծին թագուհու կողմից ամենամյա ութ լիտր տների պախտն ու թասակը վերացնելու մասին, այն եզրակացությունն է հանգում, թե արտոնագիրը փորագրելու ժամանակ Անիում բյուզանդական հարկահաններ չկային և այդ պատճառով քաղաքը պետական հարկի սահմանված գումարը վճարում էր անմիջականորեն արքունական գանձարանին։ Մեզ թվում է, Ահարոնի արձանագրությունը այս հետևության համար որոշակի հիմքեր չի տալիս և նրանում քաղաքի բնակչության վճարելիք հարկերի տարեկան գումարի սոսկ ցուցումը (չափ ութից լտերց) շատ հեռհեռուկ կռվան է նման եզրակացության համար։ Չէ որ բազմաթիվ այլ օրինակներից հայտնի է, որ նախապես որոշվում էր տվյալ քաղաքի կամ թեմի վճարելիք պետական հարկերի գումարը, անկախ այն պարագայից, թե ինչպես են գանձվում դրանք՝ հարկահանների միջոցով, թե անմիջականորեն։ Մյուս կողմից, Ահարոնի արձանագրության մեջ հենց որոշ ակնարկներ կան Անիում հարկահավաքի կամ քաղաքի վարչության այլ պաշտոնյաների գոյության մասին, դրանք են՝ ի խնդրո իշխանաւորացս կապակցությունը, որին ընդառաջելով խափանվում է զգիտ Երկուց

[10] Р. Бартикян, նշվ. աշխ., էջ 127։

լուերց հարկի գանձումը, ինչպես նաև մուքասիր-ի հիշատակությունը, որ երկու դեպքում էլ հիշյալ պաշտոնյաներին են մատնանշում։

Տանուտրութիւն-ը բյուզանդական տիրապետության շրջանում Անիի քաղաքային վարչության մարմին համարելը Հր. Բարթիկյանը առարկելի է համարում երկու պատճառով. Ա. Ժամանակաշրջանի աղբյուրներում ցուցումներ չկան **տանուտերության** ինստիտուտի՝ իբրև միջնադարյան քաղաքների կառավարման մարմնի, առավել ևս նույն Անիում այդպիսի մի քանի մարմինների (**առին զտանուտրութիւնս**) գոյության մասին։ Բ. **Զտանուտրութիւն** բառի տառաձևերի հնագրական բնութագիրը և նրա ձևաբանական, բառակազմական կերպարը չեն համապատասխանում առաջարկվող ստուգաբանությանը կամ նրա կազմությանը **տուն** և **տէ-րութիւն>տրութիւն** բաղադրիչներից։ Այսպես ստուգաբանելու դեպքում հեղինակը անբացատրելի է համարում հապավման նշանի (պատիվ) բացակայությունը **տանուտրութիւն** բառի **տր** (<**տէր**) հապավման վրա (բանավոր), ինչպես և **առին զտանուտրութիւնս** կապակցությունը, որ անհարիր է գտնում ժամանակաշրջանի պատմական իրադրությանը, քանի որ այդ դեպքում ստացվում է, որ Անիում կային մի քանի **տա-նուտրություններ** (**զտանուտրութիւնս**=հոգնակի, հայցական), որոնք «ցանկացողը կարող էր ստանալ կամ վերցնել իր վրա» (**առին զտա-նուտրութիւնս**)[11]։

Արդարև, **տանուտրութիւն** տերմինը, իբրև միջնադարյան քաղաքի վարչակառավարչական մարմին, չի հանդիպում ժամանակի մատենա-գրական աղբյուրներում, և այդ ինստիտուտի գոյությունը Անիում, հա-մենայն դեպս բյուզանդական տիրապետության 20-ամյակում (1045—1064 թթ.), չի կարելի անվերապահորեն հաստատված համարել։ Սա-կայն պատմագրությանը շատ քիչ բան է հայտնի Անիի և ընդհանրապես միջնադարյան քաղաքների վարչակառավարչական կազմակերպություն-ների և ինքնավարության մասին։ Անիի վիմական արձանագրություն-ներում քանիցս հիշատակված քաղաքի **իրիցանին** (=եղ. **երեց**), որ Ն. Մառը և Հ. Օրբելին հակված էին քաղաքի վարչական մարմին համա-րելու[12], վերաբերում է սոսկ մոնղոլական տիրապետության ժամանա-կաշրջանին (վկայված՝ ՉԺԸ (1269 թ.), ՉԻՓ (1280 թ.), ՉԼԸ (1289 թ.) ընագրերում[13]) և, ինչպես պարզվել է նորագույն ուսումնասիրություն-ներից, չի արտահայտում քաղաքի «**ավագների խորհրդի**» կամ «**ծերք**

---

[11] Նույն տեղում, էջ 125—126։

[12] Н. Марр, Ани, М.—Л., 1934, էջ 127։ Հ. Օրբելի, Դիվան, պր. 1, էջ III։

[13] Հ. Օրբելի, Դիվան, պր. 1, էջ 22, 23, 24։

քաղաքին» իմաստը, ինչպես կարծվում էր, ուստի և ոչ մի չափով չի ընդլայնում մեր պատկերացումները Անիի կառավարման մարմինների մասին[14]։ Բայց որ Անիի նման խոշոր մի քաղաքում բացի բյուզանդա-կան **կատեպանից** (որ ի դեպ ոչ միայն քաղաքի, այլև **Արևելքի** կատե-պան էր, այսինքն՝ **բեմի, մարզի, կատեպանության կառավարիչը** կամ **կուսակալը**) գոյություն են ունեցել նրան ստորադասված վարչական տե-ղական այլ մարմիններ ևս, մեզ թվում է ամեն կասկածից վեր։ Հենց Անիի այս վարչական մարմինները չե՞ն ակնարկում, արդյոք, մագիս-տրոս Ահարոնի արձանագրության **ի խնդրո իշխանաւորաց** բառերը, որ ի տարբերություն Բենեշևիչի, Հ. Բարթիկյանը իրավամբ թարգմա-նում է ոչ թե подвластный («а так-же по просьбе **подвластных**»), այլ՝ властелин, вельможа («по просьбе **вельмож**»): Հարց է առա-ջանում, այդ ի՞նչ **իշխանավորներ** էին Անիում, որոնց միջնորդությամբ Ահարոն մագիստրոսը խափանում է **զգիտ** (հարկը)՝ **երկուց լուերց** չա-փով։ Ստույգ դժվար է ասել, թե ինչ է հասկացվել **իշխանաւորաց** բառի տակ, բայց որ խոսքը Անիի կառավարող կամ հարկահավաք պաշտոն-յաներին է վերաբերում, դժվար է կասկածել։ Մյուս կողմից, հենց Հր. Բարթիկյանը, վկայակոչելով Հ. Օրբելու «Անիի ուղեցույցը», գտնում է, որ Անին պատմականորեն երեք շրջանի կամ թաղամասի էր բաժանված և որ կատեպան Բագրատի արձանագրության մեջ հիշատակված երեք զինվորականներից յուրաքանչյուրը պարտավորություն ուներ գանձելու այդ շրջաններից մեկի հարկերը[15]։ Այսպիսով, **առին զտանուտրութիւնս** կապակցությունը Հր. Բարթիկյանին հիմք է տվել բյուզանդական հիշ-յալ զինվորականներին հարկահավաք պաշտոնյաներ համարել, մինչ-դեռ ավելի հետևողական լինելու դեպքում կարելի էր կռահել, որ այդ անվան տակ հասկացվել են Անի քաղաքի երեք թաղամասերի **վարչա-կան մարմինները**, որոնք ստորադասվում էին քաղաքի և թեմի գերա-գույն կառավարչին՝ **կատեպանին**: Հր. Բարթիկյանի մեկնությունից չի հասկացվում, թե ինչու Անիի երեք թաղամասերը կամ պատմականորեն առաջացած շրջանները կարող էին ունենալ երեք **հարկահավաքներ**, բայց ոչ նույնքան **վարչական մարմիններ** կամ **կառավարիչներ, իշխա-նավորներ**: **Տանուտրութիւն** բարդության **տուն>տան+տէրութիւն=տա-նուտրութիւն** ստուգաբանությունը մերժելով, Բարթիկյանն ստիպված է եղել այլ կերպ բացատրել նույն արձանագրության շարունակության մեջ

---

[14] Տե՛ս Բ. Առաքելյան, Քաղաքային վարչությունը և ինքնավարությունը միջնա-դարյան Հայաստանում, ՊԲՀ, 1961, № 3—4, էջ 58—60։

[15] В. Бенешевич, նշվ. աշխ., էջ 4։ Р. Бартикян, նշվ. աշխ., էջ 121։

հիշատակված տանուտէրքն բառը, որը կիրառված է այս կապակցության մեջ. Եւ կատապան ով եւ լինի, տա սերմ :Ո: մոդ եւ ծախք զհնձելոյն, զայլն տանուտէրքն առնեն իւրեանց տամբ, որ չհասնի ի յԱնի ոչինչ ոյժ...[16]: Վ. Բենեշևիչի մոտ այս հատվածը թարգմանված է. «И катепан, кто бы ни был, пусть даст семян 600 модов и расходы на посев, остальные танутеры пусть производят своим домом, чтобы не случилось с Ани никакой обиды»[17]: Այստեղ, տանուտէրքն Հր. Բարթիկյանը հասկանում է домовладелец=տնատէր, այս բառի անիական իմաստով՝ կուղպակի կամ արհեստանոցի տէր, այսինքն տուն անվերապահորեն ընկալում է ոչ թե ավանդական՝ ծուխ, երդ, ազգատոհմ, գերդաստան, այլ միայն՝ շենք, կառուցվածք, սենյակ, այս դեպքում՝ կուղպակ, արհեստանոց, տակառքի և այլն, և այս ամենն այն նպատակով, որպեսզի արդարանա տանուտրութիւն<տուն+տուր(ք)—ութիւն, կրպակի կամ արհեստանոցի հարկ բացատրությունը[18]:

Մինչդեռ վերը բերված հատվածի անկանխակալ վերլուծությունից կարելի է կռահել, որ այստեղ խոսքը տնատէրերի, կրպակի կամ արհեստանոցի տերերի մասին չէ, այլ կատապանին ստորադասված հենց այն երեք տանուտրությունների մասին, որոնց գլուխ են կանգնել Մխիթար իպատոսն ու Սարգիս և Գրիգոր սպաթարկանդիդատները: Հր. Բարթիկյանը չի տալիս արձանագրության այս երկրորդ մասի վերլուծությունը, որը ըստ էության հակասում է նրա մեկնությանը, և այդ պատճառով չի իմացվում. թե ինչպես է հասկանում այդ հատվածը կամ Բենեշևիչի թարգմանությունը: Մեզ թվում է, թե այդ թարգմանությունը, մեր նշած մի քանի աննշան անճշտություններով հանդերձ, միանգամայն նույնական է բնագրի հետ, ըստ այդմ, բնագրի այդ մասի վերլուծությունից պետք է հասկանալ հետևյալը. Անիի բյուզանդական կատեպան Բագրատ Վխկացու կարգադրությամբ քաղաքի նրան ստորադասված երեք տանուտէրէր անեցիներին ազատում են վեցկիի (=գութան, արոր), սայլի, կամի կոռերից և անգարիան կոչված փոստա-սուրհանդակային պարհակի պարտավորությունից: Ինքնին հասկանալի է, որ հիշյալ պարտույթները անեցիները պետք է կատարեին արքունի հո-

---

[16] Հ. Օրբելի, Դիվան, պր. 1, էջ 37:

[17] В. Бенешевич, նշվ. աշխ., էջ 23. զհնձելոյն բառը ստույգ չի թարգմանված, բնագրում պարզ փորագրված ծախք զհնձելոյն հարկ էր թարգմանել расходы на косьбу հնձելու ծախսերը: Տվյալ կապակցությամբ Կ. Բասմաջյանը հասկացել է ծախք ընծայելոյն (—ընծա, ընծայել), որ ավելի է հեռու իրականից (տե՛ս K. Basmadjian, նշվ. աշխ., № 23):

[18] Р. Бартикян, նշվ. աշխ., էջ 125—126:

ղատարածությունների վրա՝ Բյուզանդիայի արևելյան թեմի վարչական անձնակազմը և զորքը պարենամթերքով ապահովելու և մյուս կարիքները հոգալու համար: Սակայն Բագրատի արտոնագրում բյուզանդական պետական պարհակները իսպառ չեն վերացվում: Շարունակության մեջ նշվում է, որ կատեպանները պարտավորվում են բանակի և վարչակազմի մատակարարման նպատակով կատարվող ցանքսերի համար տրամադրել 600 մոդ սերմացու և հատուցել արտերը հնձելու ծախսերը, մնացած աշխատանքները (զայլն) միայն թողնելով, որպեսզի կռային կարգով կատարեն Անիի տանուտէրքն իւրեանց տամբ:

Հր. Բարթիկյանի մեկնաբանությունը՝ տանուտրութիւն=տան տուրք. տնահարկ, տանուտէրք=տան, կրպակի, արհեստանոցի տէր, ոչ մի չափով չի համապատասխանում ամբողջ արձանագրության և հատկապես նրա երկրորդ մասի բովանդակությանը (տանուտէրքն իւրեանց տամբ) և այսպիսով բնագիրը դառնում է անբացատրելի ու ավելի առեղծվածային):

Անիում բնակիչների և ավագանու նկատմամբ բյուզանդական վարչակազմի զիջողական և սիրաշահելու քաղաքականությունը քսանամյա տիրապետության ժամանակաշրջանում հանրահայտ իրողություն է և դիտված մի շարք ուսումնասիրողների կողմից: Այդ է հավաստում հենց Հր. Բարթիկյանը Ահարոն մագիստրոսի արձանագրության մասին գրած իր հոդվածում. «Բյուզանդիան, որ տիրացել էր Անիին ոչ թե անեցիների ցանկությամբ, այլ զենքի ու նենգության միջոցով, պարզ է, որ պետք է աշխատեր սիրաշահել մի կողմից քաղաքի բնակիչներին և մյուս կողմից՝ նրա իշխանավորներին, քաղաքի ավագանուն»[19]: Հեղինակն իրավամբ Բյուզանդիայի այս սիրաշահելու քաղաքականության արտահայտությունն է համարում մագիստրոս Ահարոնի արտոնագրի մեջ հիշատակված ինչպես քաղաքի ամրացման, բարեկարգման, ջրամատակարարման ուղղությամբ կատարված միջոցառումները, այնպես էլ բնակչությանը պախտ տանց, թաստակ, գյուտ հարկերից ազատելը:

Հարկերի ու պարհակների զիջման կամ թեթևացման նույն քաղաքականությունը ավելի լայն չափերով, հավանաբար, շարունակվել է նաև հետագայում և, ինչպես տեսանք, արձանագրված է կատեպան Բագրատի արձանագրության մեջ և այդ պատճառով անհամոզիչ է թվում հեղինակի վարկածն այն մասին, թե Բագրատի օրոք Բյուզանդիայի Անիում վարած քաղաքականության մեջ շրջադարձ է կատարվել դեպի

---

[19] Հր. Բարթիկյան, Ահարոն մագիստրոսի արձանագրության (1055—1056) մեջ հիշատակված հարկերի մասին, ՊԲՀ, 1959, № 4, էջ 172:

հարկերի ավելացում և ավելի անզիջում վերաբերմունք անեցիների նկատմամբ։ Համենայն դեպս, Բագրատի քննվող արձանագրությունը, ինչպես տեսանք, այդպիսի հետևության համար որևէ հիմք չի տալիս։

Այսպիսով, մեզ թվում է, որ քննվող հատվածում ընդհանուր գծերով երևում է Անիի վարչա-կառավարման սանդուղքը երկու աստիճաններով՝ կատեպան և տանուտէր, որոնց ենթարկված են քաղաքի բնակչության առանձին տները, եղերը կամ գերդաստանները, լինեն դրանք արհեստավորներ, վաճառականներ, թե երիցանի կամ երկրագործներ։ Մյուս կողմից, մեր օրինակում տանուտէր(ք)ն չի կարող նշանակել տնատեր, կրպակի կամ արհեստանոցի տեր նաև այն պատճառով, որ վկայված իրադրության մեջ կատեպանների պարտավորությունները սահմանվում են ոչ թե քաղաքի բնակչության այդ խավի համար (արհեստավորներ, առևտրականներ), այլ միայն և միայն քաղաքի կամ քաղաքամերձ այն բնակիչների օգտին, որոնց հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր, Անին և բյուզանդական անձնակազմը հացահատիկով և այլ մթերքներով բավարարելը։

Բացի դրանից, կոռերի վերացումը ևս հիմնականում վերաբերում էր ոչ թե Անիի արհեստավորներին կամ վաճառականներին, այլ միայն հողագործ բնակչությանը, քանի որ վերացվում էին վեցկիի (նախագութան, արօր)[20], սայլի, կամի կոռերը և անգարիոն պարհակը, որը նույնպես մարդու և անասունի հարկադիր աշխատանք էր բյուզանդական սուրհանդակային կամ փոստային ծառայության մեջ[21]։

---

[20] Բնագրի պարզ կարդացվող զվեցկէ կոռ կապակցությունը ստույգ չի մեկնաբանվել ուսումնասիրողների կողմից։ Վ. Բենեշևիչը վեցկէ կոռ թարգմանում է шестой кор, ըստ այդմ, վեցկէ հասկացել է վեցերորդ, որով իմաստը մնացել է անորոշ։ Կ. Բասմաջյանը նույն կապակցությունը ֆրանսերեն թարգմանել է six corvées, այսինքն վեցկէ փոխարինել է վեց թվականով և այսպիսով չի հասկացվում, թե ինչ կոռի մասին է խոսքը։ Վեցկի նշանակում է գութան, արօր (առաջանում է գրաբարի վեցեակ>վեցեկ>վեցկ+ի թվականից և նախապես նշանակել է վեց եզներով բանեցվող արօր, հետագայում՝ ընդհանրապես արօր, ըստ այդմ վեցկէ կոռը (=վեցկիի, վեցկու) արօրի, գութանի պարհակն է (տե՛ս В. Бенешевич, նշվ. աշխ., էջ 23։ K. Basmadjian, նշվ. աշխ., № 23)։

[21] Բառիս ստուգաբանությունը Բագրատի արձանագրության այս եզակի հիշատակության հիման տալիս է Հր. Աճառյանը (Արմատական բառարան, Ա, էջ 295), ըստ այդմ, այն ծագում է հուն. αγγαρίον — սուրհանդակի պարտադիր ծառայության իմաստից։ Նորագույն հետազոտություններից պարզվում է, որ բառս վկայված է նաև ավելի վաղ, դեռևս Ե դարի դասական մատենագրության մեջ. Կորյունի երկում եւ եղեալ յանճարոյն դիմոսական կապակցության մեջ յանճարոյն անստույգ բառը վերականգնվում է յանգարիայն (ἀγγαριον =պետական սուրհանդակ) և նշանակում է սուրհանդակների կամ փոստային փոխադրամիջոց, որը հետագայում ստացել է պետական սուրհանդակների և անգարիաների ծախսերը հոգալու պարտավորության, պարհակի, անվարձ աշխատանքի

Որ տանուտէրութիւնն ստանձնած բյուզանդական զինվորականները քաղաքի կառավարման պաշտոնյաներ են և ոչ թե հարկահաններ, կարելի է հաստատել մի կողմնակի դիտողությամբ ևս. արձանագրության սկզբում յորժամ առին զտանուտէրութիւնս բառերը և անձնանունները թվարկելուց հետո պարզ փորագրված է. եւ ազատեցին զվեցկէ կոռ եւ զսայլի եւ զկամին եւ զանգարիոն...։ Այս շարադրանքից ստացվում է, որ անեցիներին թվարկված կոռերից (ըստ Բարթիկյանի Բյուզանդիայում՝ литургия) ազատել են հիշյալ երեք պաշտոնյաները, թեև, ինչպես նշել ենք, նրանք այդ կարող էին անել միայն կատեպանի կամ բյուզանդական վարչակազմի համաձայնությամբ։

Իսկ հայ վիմագրական հուշարձանների բազմաթիվ այլ օրինակներից հանրահայտ իրողություն է, որ հարկատու բնակչությանը թե՛ Բագրատունիների ժամանակ, թե՛ Բյուզանդիայի տիրապետության տարիներին, և թե՛ հետագա դարերում կոռերից և պարհակներից կարող էին ազատել միայն հայ թագավորները, բարձրաստիճան կամ տեղական իշխանները, մի խոսքով՝ վարչական պաշտօնյաները և ոչ թե հարկահավաքները, որոնք իրավասու էին զիջել կամ նվազեցնել միայն կապալով վերցված հարկերն ու տուրքերը, բայց ոչ թէ կոռերը կամ պարհակները։ Բերենք երկու օրինակ մեր ասածը հաստատելու համար. հայ վիմագրության մեջ կոռը վերացնելու մասին առաջին արձանագիրը պատկանում է Գագիկ Ա թագավորին և փորագրված է Մրենի տաճարի պատին. Այս իմ հրամանք են Գագկա շահնշահի ազատեալ եմ զՄրենոյ զկոռն, որ ի Նախճեւանի էր զմարդոյ եւ զեզին...[22]։ Մյուս վկայությունն ավելի ուշ ժամանակների է, Զաքարյանների տիրապետության շրջանից և հանդիպում է Ջագավանքի տաճարի արձանագրություններից մեկում. այստեղ էլ Զաքարյանների վասալ տեղական մի քանի իշխաններ թողնում են զվանաց կոռն՝ զմարդո, եզին, իշո եւ զամենայն ցեղ կոռ[23]։ Շատ չեն կոռերը վերացնելու մասին այս կարգի հիշատակությունները վիմագրական հուշարձաններում, սակայն եղածներն էլ վկայում են, որ կոռերի և պարտույքների սահմանումը կամ վերացումը կատարվել է օտար կամ տեղական վարչական իշխանությունների կողմից և դուրս է եղել սովորական հարկահանների կամ հարկերի կապալառուների իրավասությունից։

Մյուս կողմից, հանրահայտ է նաև, որ միջնադարում առանձին ան-

իմաստ (տե՛ս Հ. Բերբերյան, Հայկականք, «Հանդէս ամսօրեայ», 1968, № 4—6, էջ 170—172)։

[22] Ն. Սարգիսյան, Տեղագրությունք... էջ 197։

[23] Հ. Շահխաթունյանց, Ստորագրություն... Բ, էջ 164։ Ալիշան, Այրարատ, էջ 292։

հատներ կապալով վերցնում էին միայն պետական **հարկերի** ու **տուրքերի** գանձումը. մեզ հայտնի չէ որևէ գրական աղբյուր կամ վիմական արձանագրություն, որտեղ հիշատակված լիներ **կոռերի** կամ **պարտույթների** կատարման **կապալառուական** կարգի մասին։ Պետական հարկերի գանձման կապալային եղանակը լայնորեն հայտնի էր Անիում մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում. Առաքելոց եկեղեցու մի քանի արձանագրերում հաղորդվում է հարկահավաք պաշտոնյաների՝ **տաղմաչիների** (այլ բնագրերում՝ **ձեռնաւորներ, շահնաներ**) կողմից զանազան հարկեր զիջելու կամ նվազեցնելու մասին[24]։ Հր. Բարթիկյանը հավաստում է, որ բյուզանդական աղբյուրների տվյալներից դատելով, հարկահավաքման այդ եղանակը գործել է նաև Բյուզանդիայում, ուրեմն և Անիում։ Կապալով վերցնելով տվյալ շրջանի բնակչությունից պետական հարկերի հավաքման իրավունքը, կապալառու-հարկահանները, ըստ Բարթիկյանի, բյուզ. **պակտիոնարիաները**, իրենց ցանկացած քանակով. ավելի ուռճացած չափերով էին գանձում հարկերը, ուստի և երբեմն, զանազան նպատակներով, առանց զգալի չափով տուժելու, կարող էին զիջել որոշ հարկեր[25]։ Սակայն բոլոր այս դեպքերում խոսքը **հարկերի** կամ **տուրքերի** մասին է և ոչ թե **կոռերի** կամ **պարհակների**, որոնց կապալով տալը աղբյուրներում չի վկայված և ըստ երևույթին անհավանական է։

Այստեղից ակներև է, որ քննվող արձանագրության մեջ **վեցկի, սայլի, կամի** կոռերից և **անգարիոնից** (որը նույնպես կոռի մի տեսակ էր) ազատող պաշտոնյաները չէին կարող **հարկահաններ** լինել, ինչպես կարծում էր Հր. Բարթիկյանը, այլ միայն քաղաքի կառավարման **վարչական մարմիններ**, որոնք իրավասու էին հսկել սահմանված **կոռերի** կատարմանը կամ վերադաս իշխանությունների կարգադրությամբ, իսպառ վերացնել դրանք։

Այժմ **տանուտրութիւն** բառը քննենք ձևաբանական, բառակազմական տեսանկյունից։ Բարդության երկրորդ եզրում **տրութիւն** բաղադրիչ ունեցող կազմություններ, որոնցում **տրութիւն**-ը արտահայտեր ոչ թե **տէր>տիրութիւն**, այլ **տալ>տուր>տրութիւն** արմատների իմաստը վկայված են ոչ միայն Ժ—ԺԳ դարերի մատենագրության մեջ, այլև ավելի վաղ, նույնիսկ դասական հայերենի գրական հուշարձաններում։ Ճիշտ է, այդ վկայությունները մեծ մասամբ անհարազատ են առաջին թարգմանիչների լեզվին և, ինչպես ցույց են տալիս բանասեր Ա. Վարդանյանի բնագրական պրպտումները, հետագա տարընթերցումների կամ կեղծ ստուգաբանությունների հետևանքով առաջացած ձևեր (հմմտ. **փառատրութիւն**, ենթադրաբար առաջացած **փառք** և **տուր>տրութիւն** բառերից, որի բնագրային սկզբնաձևն է **փառաւորութիւն**, ինչպես և **պատասխանատրութիւն**, բառի նախաձևը՝ **պատասխանատուութիւն** և այլն)[26], սակայն այդպիսի կազմությամբ մի շարք բառեր, այնուամենայնիվ, առաջացել և գործածություն են ունեցել միջնադարի գրականության մեջ, իրողություն, որ լավագույն ապացույց է հայերենում **տուր>տրութիւն** բաղադրիչի մասնակի արդյունավետության։ Այս կարգի բառերի շարքը պետք է դասել մատենագրության մեջ հիշատակված **վանատրեմ-վանատրութիւն, բարետրեմ-բարետրութիւն, հրամանատրեմ-հրամանատրութիւն, բացատրեմ-բացատրութիւն, վարձատրեմ-վարձատրութիւն** և այլն[27], որոնցից վերջինները, իմաստային որոշ փոփոխություններով, գործում են նաև արդի հայերենում։ Այստեղից հարց է առաջանում՝ հնարավո՞ր է արդյոք կատեպյան Բագրատի արձանագրության **տանուտրութիւն** բառը ևս համարել առաջացած նույն ճանապարհով, այսինքն՝ բաղադրված **տուն>տան** արմատից և **տրութիւն** (<**տուր, տալը**) ածանցավոր բառից, որը պետք է արտահայտեր որևէ առարկայի **տալը, տուչութիւնը** կամ **տրութիւնը**, տվյալ դեպքում **տնահարկի** իմաստը (հմմտ. **վարձատրութիւն= վարձ տալը**, հետևաբար, **բուն վարձը** և այլն)։ Պարզվում է, որ **տանուտրութիւն** կազմությունը **տուն>տան>տանու+տուր>տրութիւն** բաղադրիչներով, **տան տրութիւն**, այսինքն՝ **տան հարկ** իմաստով անհավանական է և անսպասելի ոչ միայն հին հայերենում, որտեղ, ինչպես տեսանք, **տրութիւն**-ով բարդությունները անհարազատ և նորամուտ գոյացումներ են նկատվում, այլև հետագա շրջաններում, երբ տարբեր ճանապարհներով առաջանում էին այդպիսի ձևեր։ Բանն այն է, որ հին հայերենի **տանուտէր** (>**տանուտիրութիւն**) բառը, չնայած իր ակներև թվացող կազմությանը՝ **տան տէր**, բառակազմական սպառիչ վերլուծության չի ենթարկվում՝ առաջին բաղադրիչի՝ **տան(ու)** ձևույթի՝ ընդունելի ստուգաբանություն չունենալու պատճառով։ Արդ, ինչպե՞ս տարրալուծել **տանու-ն տանուտէր** բառում։

Ուսումնասիրողները հանգամանորեն քննելով **տանուտէր, տանուտիրութիւն** հասկացության, իբրև սոցիալ-տնտեսական ինստիտուտի իմաստային առումները և նրանց փոփոխությունները պատմական զարգաց-

[24] Տե՛ս Հ. **Օրբելի**, Դիվան, պր. 1, էջ 22, 23, 24, 28, 30։

[25] Р. Бартикян,, նշվ. աշխ., էջ 127։

[26] Տե՛ս Գ. **Մենեվիշյան**, Արդի լեզվափիլոսությունը, Վիեննա, 1903, էջ 125—126, Ա. **Վարդանյան**, Բառաքննական դիտողություններ, Վիեննա, 1913, էջ 108։

[27] Ա. **Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 109։

կամ փոխվել ր-ի, որը գրության մեջ չի արտահայտվել (տէր>տըր>>տր>տրութիւն, տանուտէր>տանուտըրութիւն>տանուտրութիւն)։ Այդ է պատճառը, որ վերը առկոչած հայրենէտրութիւն բառը Դատաստանագրի ձեռագրական տարընթերցումներում վկայված է նաև՝ հայրենէտրութիւն, հայրենէտէրութիւն և հայրենատըրութիւն ձևերով։

Հիմք ընդունելով տանուտրութիւն բառի տուն>տան+տրութիւն=կուղպակի, արհեստանոցի տուրք իր այս մեկնությունը, Հր. Բարթիկյանը փորձում է պարզել նաև վաղ շրջանի մի քանի վիմական բնագրերում, ինչպես և Ահարոն մագիստրոսի 1055—1056 թթ. արձանագրի մեջ հիշատակված բաստակ հարկային տերմինի նշանակությունը։ Հայագիտական գրականության մեջ բաստակ բառի ստուգաբանությանը և այդ անունով տուրքի բովանդակության քննությանը միջամուխ են եղել շատերը, սակայն այդ ուղղությամբ տակավին գոհացուցիչ արդյունքներ չեն ստացվել և չկան քիչ թե շատ ընդունելի բացատրություններ։

Հր. Բարթիկյանը չի տալիս բաստակ բառի ստուգաբանությունը, այլ առաջ է քաշում մի նոր ենթադրություն, ըստ որի, այդ անունով հարկը կարելի է դիտել իբրև նույն պախտ տանց, բյուզանդական էնիկիոնի, այսինքն՝ տեռահարկի կամ իր տերմինով՝ տանուտրութիւն հարկի այլատեսակը, այն տարբերությամբ միայն, որ եթե պախտ տանց-ը գանձվել է Անի քաղաքի արհեստանոցների տերերից, ապա բաստակ-ը վճարել են կուղպակ-խանութների տերերը կամ վաճառականները[32]։ Հեղինակի այս ենթադրության համար հիմք է ծառայել սոսկ այն պարագան, որ բաստակ հարկի իրեն հայտնի բոլոր հինգ հիշատակություններն էլ պահպանվել են միայն Անիի կամ մերձակայքի արձանագրություններում (Տեկոր—1008—1014 թթ., Հոռոմոս—1013 թ., Երերույք—1038 թ., Ալաման— 1941 թ., Անի— 1055—56 թթ., Ահարոնի արձանագրություն)[33], ըստ որում վերջին անգամ միայն Անիում՝ պախտ տանց հարկի հետ, որ մտածել է տալիս, թե բաստակը ևս կարող էր տների պետական տուրք՝ տեռահարկ լինել, մանավանդ որ թվարկված արձանագրերում բաստակի վճարումից բնակչության ազատում են Բագրատունի թագավորները կամ Բյուզանդիայի կայսրուհին։ Որ բաստակը պետական հարկ է եղել, ընդունում են բոլոր պատմաբանները, բայց որ այդ հարկը տեռահարկի կամ պախտ տանց-ի մի տեսակն է, հազիվ թե հնարավոր լինի հաստատել եղած նյութերով, և այդ առթիվ

[32] Р. Бартикян, նշվ. աշխ., էջ 122—123, 167։

[33] Տե՛ս Ն. Սարգիսյան, Տեղագրություն..., էջ 206։ Ալիշան, Շիրակ, էջ 171, Հ. Օրբելի, Դիվան, պր. 1, էջ 38։

Հր. Բարթիկյանի մեջ բերած ապացույցները այնքան էլ համոզիչ չեն։

Բաստակ հարկային տերմինի ստուգաբանության կամ նրա բովանդակության մասին առկա նյութերով դժվար է ասել ավելին, քան ասված է մինչև այժմ։ Մենք բավարարվում ենք այդ հարկի նոր, 6-րդ հիշատակությամբ հայագիտության լայն շրջաններին անծանոթ մի արձանագրության մատնանշումով, որ մեր կարծիքով զգալի նպաստ կարող է լինել բաստակ-ի բովանդակության պարզաբանմանը և հիմնովին հերքում է Բարթիկյանի հիշյալ ենթադրությունը։ Բնագիրը փորագրված է Բյուրականի տաճարի հարավային պատին և չնայած պատկառելի հնությանը, հստակ կարդացվում է. ՆՂԳ (1044) թուականութեանս հայոց այս իմ գի[ր] է Զաքարէ իշխանաց իշխանի, որդոյ Վահրամա, որ ազգաւ Պախլաւ (Պահլաւ—Ս. Ա.), որ ետու զԲիւրականի զբաստակն Շահանշահի՝ իմ պատրոնին հոգոյն... հետևում է անեծքի ձևակերպումը[34]։

Ակներև է, որ այստեղ վկայված զԲիւրականի զբաստակն, որ տվել, այսինքն՝ բյուրականցիների փոխարեն Բագրատունիների պետությանը վճարել է իշխանաց իշխան Զաքարե Պահլավունին, չի կարող լինել ոչ արհեստանոցի տերերից գանձվող տեռահարկ և ոչ էլ կուղպակատերերից կամ վաճառականներից առնվող հարկ, քանի որ Բյուրականը շատ հեռու էր Անիից և այդպիսի հարկի գոյությունն այստեղ այնքան էլ հավանական չէ։

ՎԱՀՐԱՄ ՊԱՀԼԱՎՈՒՆՈՒ 1026 Թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԲԵՐԴՈՒՄ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊՏՂԻՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

Բագրատունյաց Հայաստանի պետական, հասարակական, մշակութային ականավոր գործիչ, աննկուն զորահրամանատար Վահրամ Պահլավունին XI դարի սկզբներին գրեթե միաժամանակ կառուցեց Անբերդի ու Մարմաշենի տաճարները՝ հայ դասական ճարտարվեստի այդ ականավոր կոթողները, սկիզբ դնելով հոգևոր և մշակութային այս կենտրոնների հետագա արգասավոր գործունեությանը։ Մարմաշենի հուշարձա-

[34] Միակ հրատարակությունը տե՛ս Ն. Տեր-Մինասյան, Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները, «Էջմիածին», 1961, 5-րդ, էջ 48։

* «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 1։

նախմբի շինության, նորոգումների իրողությունները, վանական կենտրոնի պատմական կյանքը բավականաչափ լուսաբանված են բանասիրության մեջ՝ մեծ մասամբ հիմնված շինվածքների որմերին փորագրված ընդարձակ արձանագրությունների տվյալների վրա։ Նույնը չի կարելի ասել Անբերդի տաճարի, հոգևոր-մշակութային հաստատության մասին։ Մասնագիտական գրականության մեջ սովորաբար գեղարվեստա-ճարտարապետական վերլուծության են ենթարկվում հուշարձանի կառուցողական ձևերը, որոշվում են այլ զուգահեռների հետ ունեցած նրա առնչությունները, փորձեր են կատարվում գտնելու նրա դիրքը հայ ճարտարապետության պատմության մեջ։ Նույնիսկ Անբերդի եկեղեցու և եպիսկոպոսական աթոռի հիմնադրման նպատակներն ու հանգամանքները, պահպանված վիմագրական հուշարձանները բավարար լուսաբանություն չեն ստացել, թեև ամրոցի պարսպապատերը, միջնաբերդի պալատական շինվածքներն ու այստեղ պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութերը այս կամ այն չափով նկարագրված ու արժեքավորված են։

Սույն հոդվածի նպատակը Վահրամ Պահլավունու ընդարձակ արձանագրության վերծանությունն ու մեկնաբանությունն է, որ մեր կարծիքով կնպաստի ոչ միայն վերևում առաջադրված հարցերի, այլ նաև միջին դարերում եպիսկոպոսական աթոռներին տրված հարկերի ու հասույթների պարզաբանմանը։

Շատ կողմերով ուշագրավ այս վավերագիրը փորագրվել է հուշարձանի կառուցումն ավարտելուց հետո՝ ՆՀԵ—1026 թ., տաճարի հյուսիսային մուտքի կիսաբոլոր ճակատակալի ներսի մակերեսին և, չնայած անեղծ պահպանությանը, ցայժմ նույնական ու սպառիչ վերծանության չի ենթարկվել։ Բնագրի ընդօրինակության ու վերծանության դժվարությունները կապված են առաջին հերթին նրա խիստ անսովոր, իշխանական հրամանագրի բովանդակությանն ու հեղինակի բարձր դիրքին ոչ մի չափով չհամապատասխանող տառաձևերով, որոնք, հակառակ սպասածի, ոչ թե այդ դարերին հատուկ երկաթագիր են, այլ անվարժ, անարվեստ, ոչ բավարար խորությամբ փորագրված շղագրի և ուշ շրջանի երկաթագրի խառնուրդ։ Մյուս կողմից քարի վրա տառաշարքերի հապավման պատիվ գծիկը կիրառված է երկիցս, միայն յաստուծոյ բառի գրության մեջ, մինչդեռ այլ բառեր ևս առանց որևէ հապավման համառոտագրված են, որ զգալի չափով դժվարացնում է դրանց վերականգնումը։ Կետեր և կրկնակետեր փորագրված են ոչ սովորական կիրառումով՝ թվանիշ գրերն առանձնացնելու համար, այլ երբեմն նաև իբրև բառերի տրոհման կամ հապավման նշաններ, նոր խո-

չընդոտներ հարուցելով բառանջատման ճանապարհին։ Մի քանի տառաձևեր զգալապես անսովոր, նույնիսկ ժամանակի շղագրին ոչ հատուկ փորագրում ունեն (պ, տ, յ, ց, ի, և), ուստի նրանց ընթերցումն ու անծանոթ տառակապակցությունները երկբայելի են։ Եվ, վերջապես, բնագրում վկայված են մի շարք անծանոթ տերմիններ, բառեր, քերականական ձևեր, որոնց ընթերցումն ու վերականգնումն այնքան էլ դյուրին չեն և տարակարծությունների տեղիք են տալիս։

Վահրամ Պահլավունու այս արձանագրությունը առաջին անգամ ընդօրինակվել, վերծանվել է 1922 թ. Անբերդի հուշարձանախումբը հետազոտող հնագիտական արշավախմբի անդամներ Գ. Հովսեփյանի և Ե. Տեր-Մինասյանի համատեղ ջանքերով։ Գ. Հովսեփյանի վերծանությունն առանց մեկնաբանության հրատարակվել է 1936 թ. Երուսաղեմում, իսկ Տեր-Մինասյանինը՝ 1961 թ. «Էջմիածին» հանդեսում[1]։ Հարկ է նշել, որ երկու դեպքում էլ արձանագրության վերծանությունն այնքան էլ նույնական չէ իրականի հետ, ունի մի քանի անորոշ ու մութ կետեր, որի պատճառով նրա բովանդակությունն այս հրապարակումներում ըստ էության չի բացահայտված (ասենք, անվանի հայագետներն այդպիսի նպատակ չեն էլ հետապնդել)։ 1930-ական թվականներին ակադ. Հ. Օրբելու գլխավորած Անբերդի հնագիտական երկրորդ արշավախմբի մասնակից, հայ վիմագրության հմուտ մասնագետ Ս. Բարխուդարյանը, իր ձեռքի տակ չունենալով Հովսեփյանի ու Տեր-Մինասյանի ընդօրինակությունները, նորից է վերծանել խնդրո առարկա արձանագրությունը, որը, սակայն, հրատարակվել է շատ ավելի ուշ՝ 1973 թ., այն էլ Ն. Տոկարսկու՝ Անբերդի ճարտարապետության ուսումնասիրությանը նվիրված գրքում։ Այստեղ Բարխուդարյանի վերծանությունը մեջ է բերված զգալի աղավաղումներով[2]։ Վերջերս Անբերդի 1026 թ. արձանագրության բնագիրը մասամբ, դարձյալ Ս. Բարխուդարյանի ընդօրինակության հիմամբ, հրատարակված է նաև մերօրյա արշավախմբի ղեկավար Ս. Հարությունյանի «Անբերդ» մենագրության մեջ, այստեղից էլ հնագետ Գր. Կարախանյանի հոդվածում[3]։

Մենք չենք տալիս բնագրի նախորդ հրապարակումներում տեղ գտած բոլոր այլընթերցումներն ու անիրական վերծանումները, քանի

---

1 «Սիոն», 1936, № 12, էջ 372—375։ «Էջմիածին», 1961, № 5, էջ 45—56։

2 **Н. Токарский**, По страницам истории армянской архитектуры, Ереван, 1973, էջ 43։

3 Ս. Հարությունյան, Անբերդ, 1977, Երևան, էջ 55։ Գ. Հ. Կարախանյան, Դսեղի միջնադարյան ձիթհանը և նրա շինարարական արձանագրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 4, էջ 252։

որ դրանք պարզորոշ ի հայտ կգան հրնթացս, մեր ընդօրինակությունն ու մեկնաբանությունը ներկայացնելիս, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ Պահլավունու կարևոր հրամանագիրն այս կամ այն նույնականությամբ վերծանող կամ արծարծող մասնագետները նրա բովանդակությանը, նրանում ամրագրված տերմինների վերականգնմանն ու մեկնությանը ոչ մի չափով չեն անդրադարձել, որի հետևանքով էլ բնագիրն իբրև պատմագիտական արժեքավոր վավերագիր, ցայժմ ըստ էության անհայտ է մնացել գիտական լայն շրջաններին և չի օգտագործվել հայագիտական հետազոտություններում։

Ստորև ներկայացնում ենք քննության ենթակա արձանագրության ընդօրինակությունն ու վերծանությունը՝ հիմնված տեղում և բնագրի պատճենումից մեր կատարած հետազոտության վրա (նկ. 1)։



Նկ. 1

Ընդօրինակություն

1. ԱՄԻՆ ՆՀԵ
2. ԵՍ ԻՇԽԱՆՍ ՎԱՐՀԱՄ Շ
3. ՆԵՑԻ ԶԿԱԹՈՂԻԿԵՍ ԱԹՈՌ
4. ՀԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՍԱՀՄԱՆ
5. ԵՑԻ ՊՏՈՒՂ ՆԻԳԻ ՏՈՒՆՆ .Բ. ԿԱՊԻՃ
6. ՑՐ. ՅԱՐԱԳԱԾՈՏՆԵ ՅԷԳԻՆ .Բ. ՓԱՍԳԻ
7. Ի ՔԱՂՔՈԴԱՇՏԻ ԲԱԲԱԿՆ .Ժ. ԼԻՏՐ ՅԷՐԷՑ
8. Ն .Ա. ԴՀ. ՅԻՒՐՈ ԵՒ Ի ԿՆՈՋԷ .Գ. ԴՀ. ՀՈՂԱԴՐ. ՁԵՌ
9. ՌՆԱԴՐԵԼԷ .Դ . ՅԱՆԲԵՐԴԻ ՊՏՈՒՂ Ի ՏՈՒՆՆ
10. .Դ. ԿԱՊԻՃ .ՑՐ. .Ա. ԿՏԱՒԱՀԱՏ ԱՅԼ ՏՒԱՔ Ջ
11. ՋԱՂԱՑՆ ՎԵՐԱ ԿԱՐՄՆՃԻՆ Ի ՊՍԱԿԻ .Գ.
12. ԴՀ . ՀՈՂԱԴՐ ԿՆՔԱԴՐ ՏՆԱՒՐՀՆԷ ԺՈՂՈՎ
13. ՈՒՐԴ ՈՐ ՈՉ ԿԱՏԱՐԷ ՊԱՏԺԵՑԻ ՅԱՅ
14. ԻՇԽԱՆ ՈՐ ՏԻՐԷՆ ՀԱԿԱՌ ԿԱ ԴԱՏԻ ՅԱՅ։

Վերծանություն

Ամին ՆՀԵ (1026), Ես՝ իշխանս Վարհամ շ[ի]նեցի զկաթողիկես աթոռ հարապետական և սահմանեցի պտուղ Նիգի՝ տունն .Բ. կապիճ ց[ո]ր[եան], յԱրագածոտնե յէգին .Բ. փասգի, ի Քաղքոդաշտի բաբակն .Ժ. լիտր։ Յէրէցն .Ա. դ[ա]հ[եկան] յիւրո և ի կնոջէ, .Գ. դ[ա]հ[եկան] հողադր[ամ]։ Ձեռնադրելէ .Դ.։ ՅԱնբերդի պտուղ ի տունն .Դ. կապիճ ց[ո]ր[եան], .Ա. կտաւահատ։ Այլ տուաք զջաղացն վերա կարմնճին։ Ի պսակի .Գ. դ[ա]հ[եկան], հողադր[ամ], կնքադր[ամ], տնաւրհնէ[ք]։ Ժողովուրդ, որ ոչ կատարէ, պատժե[ս]ցի յաստուծոյ։ Իշխան, որ տիրէն, հակառ կա, դատի յաստուծոյ։

Ինչպես ակներև է պահպանված տառաշարքերի սույն լիակատար վերծանությունից, բնագրի հիմնական բովանդակությունն Անբերդի նորահաստատ հայրապետական (իմա՛ եպիսկոպոսական) աթոռի օգտին վիճակների ծխերից հավաքվելիք հիմնական հարկի՝ պտղիի (պտուղ) ու այլ հասույթների որոշումն է, որ օրինականացնում է տաճարի կառուցող և աթոռը հիմնադրող իշխանաց իշխան Վահրամ Պահլավունին։

Բացի դրանից, բնագրի նախաբանում հաղորդվում է աթոռանիստ կաթողիկե եկեղեցին կառուցելու, այնտեղ եպիսկոպոսական նոր աթոռ հաստատելու (Ես՝ իշխանս Վարհամ շինեցի զկաթողիկես աթոռ հարապետական), ինչպես նաև աթոռին Արխաշան գետակի վրա կառուցված կամուրջից վերև գտնվող ջրաղացը հատկացնելու մասին (այլ տուաք զջաղացն վերա կարմնճին), որով և արձանագրությունը դառնում է եռաբնույթ՝ շինարարական, սահմանադրական, նվիրատվական:

Նախորդ վերծանողները բնագրի նվիրատվական նախադասությունը կա՛մ բոլորովին անտեսել են, կա՛մ հրատարակել աղավաղված, ըստ որում կարդացվել են միայն՝ զջաղացն վերա կարմնճին բառերը, իսկ դրանց նախորդող, 10-րդ տողավերջին փորագրված ստորոգյալը՝ այլ տուաք, չի վերականգնվել, որի հետևանքով նվիրագրի ամբողջ կապակցությունը, որն ըստ էության ընդմիջարկվել է աթոռի հասույթների թվարկման մեջ, մնացել է շարակցությունից դուրս և անհասկանալի։

4—746

Արձանագրության օրենսդրական հատվածում աթոռին տրվելիք պտղին կամ պտուղը արտահայտված է տվյալ գավառում արտադրվող հողագործության հիմնական բնամթերքով (Նիգում՝ **ցորեն**, Արագածոտնում՝ **գինի**, Քաղքոդաշտում՝ **բամբակ**, Անբերդում՝ **ցորեն, կտաւատ**), մինչդեռ եկեղեցական-ծիսական արարողությունների, հոգևոր սպասարկության դիմաց բնակչությունից առնվելիք հասերը սահմանվում են դրամական միավորներով՝ դահեկաններով։ Վերջիններն արձանագրության շարադրանքում հիշատակվում են երկու անգամ՝ նախ Քաղքոդաշտ թեմի պտղի չափը որոշելուց հետո՝ 7—8-րդ տողերում **յէրէցն .Ա. դահեկան յիւրո և ի կնոչէ, .Գ. դահեկան հողադրամ: Ձեռնադրելէ .Դ.**, ապա բնագրի վերջում, անեծքի բանաձևից առաջ, 11—12-րդ տողերում՝ **ի պսակի .Գ. դահեկան, հողադրամ, կնքադրամ, տնաւրհնէք:**

Առաջին հատվածում երկբայելի են՝ **յէրէցն .Ա. դահեկան յիւրո և ի կնոչէ** և հատկապես՝ **ձեռնադրելէ .Դ.** կապակցությունները։ Արդարև, ինչպե՞ս հասկանալ՝ **յէրէցն .Ա. դահեկան յիւրո և ի կնոչէ** նախադասությունը. երեցը կամ քահանան իր և կնոջ կողմից մեկ դահեկան է հատկացնելու ո՞ւմ, ինչի՞ համար։ Մյուս կողմից, ի՞նչ է նշանակում **ձեռնադրելէ .Դ. [դահեկան]**, որ անշուշտ, պետք է հասկանալ՝ **ձեռնադրելիս**, **ձեռնադրելու** ժամանակ Դ (4) դահեկան, բայց ո՞վ է տալու կամ ո՞ւմ այդ չորս դահեկանը և ինչի՞ դիմաց։ Հայկական վիմագրերում պահպանված այլ վկայություններից պարզվում է, որ **յէրէցն .Ա. դահեկան յիւրո և ի կնոչէ [տացի]** օրինականացումը պետք է հասկանալ այն իմաստով, որ Անբերդի եպիսկոպոսական աթոռին ենթակա թեմերի քահանաներից աթոռի օգտին որոշակի դրամական հասույթ է սահմանվում, այս դեպքում մեկ (Ա) դահեկան, բստ երևույթին նրանց ազատելով տվյալ հրամանագրով որոշված հիմնական հասույթի՝ **պտղի** վճարումներից։ Անիի Առաքելոց եկեղեցու XIII դարի երկու արձանագրություններում մայրաքաղաքի հոգևոր առաջնորդները վերացնում են **զճարկ քահանայից քաղաքացեաց** կամ **ազատեցաք զամենայն քաղաքիս զերիցակնոջ մուտք**[4]: Ուրեմն Անիի երեցները կամ քահանաները **պտղի** փոխարեն դրամական հարկ են վճարել եպիսկոպոսական աթոռին և տվյալ արտոնագրով նրանք ազատվում են այդ վճարումներից։

Ինչ վերաբերում է հաջորդ՝ **.Գ. դահեկան հողադրամ** կապակցությանը, ապա հավանական է մտածել, որ այստեղ 3 դահեկան հողադրամը կամ գերեզմանօրհնեքի վարձը սահմանվում է քահանաների,

⁴ «Դիվան հայ վիմագրության», պրակ Ա, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1963, էջ 17, 18։

նրանց հարազատների ննջեցյալների թաղումը սպասարկելու համար, ինչպես որ արձանագրության շարունակության մեջ նույն գումարի հողադրամը, որոշվում է նաև մյուս գավառների շարքային բնակիչների թաղման համար։

Ավելի անորոշ է բնագրի նույն հատվածի վերջին սահմանման՝ **ձեռնադրելէ .Դ.** [դեհական] իմաստը։ Ամբողջ կապակցությունից ակնհայտ է, որ այս հասույթը ևս նախորդ **.Ա. դահեկանի** և **.Գ. դահեկան հողադրամի** նման վերաբերում է Անբերդի աթոռին ենթակա քահանաներին, բստ այսմ կարելի է մակաբերել, որ նրանց ձեռնադրելիս (**ձեռնադրելէ** բայաձևը **ձեռնադրել** դերբայի բացառականն է, կազմված տեղական խոսվածքների օրինաչափություններով, հին գրական հայերենում օրինաչափ կլիներ՝ **ի ձեռնադրելոյ**) հատկացվել է չորս (դահեկան)։ Սակայն սույն սեղմ կապակցությունից այնքան էլ պարզ չէ, թե ո՞վ և ո՞ւմ է վճարելու այդ գումարը, ուստի մնում է նրա բովանդակությունը որոշել այլ աղբյուրների տվյալներով։ Խնդրի պարզաբանմանը զգալի նպաստ է բերում Աղվանքի Վաչագան Թագավորի կանոնական սահմանադրությունը՝ հաստատված Աղվենի նշանավոր ժողովում, որտեղ մեր հարցին առնչվող համապատասխան հոդվածը ձևակերպված է. «Քահանայ և սարկաւագ յորժամ ձեռնադրեն Դ դրամ քահանայքն և Բ սարկաւագին տացեն»[5]։

Այստեղից պարզվում է, որ գերադաս հոգևոր մարմինների կողմից եկեղեցու սպասավորներ ձեռնադրելիս տվյալ բնակավայրի համայնքը, հոտը ձեռնադրվողին պարտավոր է միանվագ տալ՝ բստ Աղվենի ժողովի օրինականացման չորս դրամ, իսկ բստ Անբերդի 1026 թ. հրամանագրի՝ չորս [դահեկան]։ Ինչպես նկատվում է, Անբերդի բնագրում **ձեռնադրելէ .Դ.**-ից հետո չի նշված, թե Դ-ն ինչ դրամական միավոր է արտահայտում, մենք ենթադրաբար վերականգնել ենք **դահեկան**, քանի որ ամբողջ արձանագրության մեջ մյուս դրամական միավորները միայն դահեկաններ են։ Սակայն հնարավոր է նաև, որ այստեղ չնշված միավորը լինի, **դրամ**, ինչպես Աղվենի ժողովի սահմանումներում է։ Բոլոր դեպքերում, թե՛ Վահրամ Պահլավունու հրամանագրում և թե՛ Վաչագան Թագավորի կանոնական սահմանադրության 2-րդ հոդվածում նույն կարգն է սահմանվում՝ ձեռնադրվող քահանային տվյալ համայնքի կողմից որոշակի դրամական հասույթ սահմանելու մասին։

Պահլավունու քննվող վավերագրի հիմնական բովանդակությունը,

⁵ «Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 98։

ինչպես ասվեց, նոր հաստատված եպիսկոպոսական աթոռին տրվելիք եկեղեցական հիմնական հասի՝ պտղի կամ տասանորդի սահմանումն է, որ օրենքի պարտավորեցնող ուժ է ստանում այդ հրամանագրով: Ահա Անբերդի աթոռին ենթակա չորս գավառների առանձին տներից հավաքվելիք պտղի՝ բնամթերքի չափերը. սահմանեցի պտուղ Նիգի տունն .Բ. կապին ցորեան, յԱրագածոտնէ յէգին .Բ. փասգի, ի Քաղքողաշտի բաքակն .Ժ. լիտր, յԱնբերդի պտուղ ի տունն .Դ. կապին ցորեան, .Ա. կտաւահատ:

Եկեղեցական պտուղ կամ պտղի հասույթը սահմանելու և նրա չափերը որոշելու մասին հայ մատենագրության մեջ առաջին անգամ հիշատակվում է Սահակ կաթողիկոսի «Գիր աւանդութեան յաղագս կարգի սպասաւորաց սրբոյ եկեղեցւոյ եւ պտղոցն ժողովրդականաց ընծայելոց ի տան աստուծոյ» հանրահայտ կանոններում: Այստեղ որոշվում, օրինականացվում են հավատացյալներից եկեղեցու սպասավորների օգտին հարկադրաբար գանձվելիք հասույթները, ըստ որում անասնապահության արդյունքները, տվյալ դեպքում մորթվող անասունների մասերը, թվարկվում են հականե անվանե, իսկ հողագործության բնամթերքները՝ մոտավոր ճշտությամբ, ամբողջ բերքի տասանորդի չափով, ըստ այսմ պտղի այս մասը նույնանում է տասանորդի հետ: Ահա ամբողջ պտղի կամ տասանորդի քանակը ըստ Սահակ կաթողիկոսի հիշյալ կանոնի. «Հասքըն ձեր եղիցին ի պատարագաց կաշի եւ աջոյ երիանդամ եւ ճրագու, դմակ եւ սիրտ եւ լերդաբոյթ եւ երիկամունքն ճարպովին ի կողից եւ ի խոտոցաց մասն. լեզուն եւ աջոյ ունկն, շրթունքն հոտոտելեօքն, աջոյ ակն եւ ամենայն խորհրդական մասունքն: Իսկ ի կալոյ եւ ի հնձանէ եւ յայլոց արմտեաց՝ տասանորդս հանցեն իւրաքանչիւր ոք ձեզ, յաղագս մաքրելոյ ամենայն արդեանցն եւ անճման ամենայնի պատճառ լինելոյ»[6]:

Ավանդաբար Գրիգոր Լուսավորչին վերագրվող (այսպէս կարգեցաւ ի սրբոյն Գրիգորէ[7]) պտուղ հարկի կամ եկեղեցական տասանորդի սույն օրինականացումը գրեթե անփոփոխ կիրառություն է ունեցել նաև հետագայում, որը և օրինական նորմի ուժ է ստացել Մխիթար Գոշի Դատաստանագրքի «Վասն պտղոց քահանայից ի ժողովրդոց» հատուկ հոդվածում. ձևակերպումը բառացի առնված է Ս. Գրքի համապատասխան հատվածից. «Եւ այս են իրաւունք քահանայիցն ի ժողովրդենէն, որք

[6] «Կանոնագիրք Հայոց», Բ, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1971, էջ 234—235:

[7] Նույն տեղում, էջ 236:

զենուցուն զենլիս եթէ արջառ իցէ և եթէ ոչխար տացէ քահանային զաջոյ երին, և զծնոտն և զխախացոցն: Եւ զպտուղս ցորենոյ, և զգինոյ, և զիւղոյ և զպտուղս կտրոցաց խաշանց քոց տացես նմա»[8]:

Եկեղեցական պտղի կամ տասանորդ հարկի չափերն ավելի որոշակի ներկայացված են Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում ավանդված մի այլ վավերագրում՝ Աղվենի ժողովի գրեթե նույն ժամանակներում հաստատած կանոնական սահմանադրության Դ հոդվածում, որն աներկբա հավաստում է պտղի կամ տասանորդ հարկի վիճակը բովանդակ հայ իրականության մեջ վկայված ժամանակաշրջանում, «Պտուղ ի ժողովրդոց երիցուն՝ կարգ այս լիցի. Թուանիկն Դ գրիւ ցորեան եւ Զ գրիւ գարի եւ ԺԶ փաս քաղցու. եւ որ տառապեալն իցէ՝ հացիդ զկէսն տացէ եւ գինի որչափ եւ կարող իցէ, իսկ որոյ վար եւ այգի չէ՝ մի առցեն: Եւ որ ոչխար է՝ ի տանէ ոչխար մի և Դ գզաթ բուրդ եւ մի պանիր. եւ որ ձիք ի տան իցեն՝ մի յովանակ եւ որ պախրէք իցեն՝ որթ մի»[9]:

Պտղի չափերը սահմանող հետագա դարերի վավերագրերից առավել նշանակալիցը Ստ. Օրբելյանի «Պատմության» վերջում զետեղված «Սիւնեաց երկոտասան գաւառաց հարկ եկեղեցւոյ» ընդարձակ հարկացուցակն է, որտեղ ըստ գավառների ներկայացված են Տաթևի վանքին հարկատու 680 գյուղերը՝ նրանց դիմաց նշանակված 5, 6, 7, 8, 10, 12, 15, 17, 18, 20, 24, 26, 30, 50 թվերով: Քանի որ եկեղեցական հիմնական հասը՝ պտղին արտացոլող այս հարկացուցակն առավել ժամանակամերձ է Վահրամ Պահլավունու քննության ենթակա հրամանագրի հետ և կարող է նպաստել նրանում արտացոլված պտղի վիճակը ստուգապես որոշելուն, հարկ ենք համարում ավելի հանգամանորեն ան-

[8] Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի, Երևան, 1975, էջ 345: Գիրք Աստուածաշունչք, Վենետիկ, 1860, էջ 172:

[9] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն, էջ 99, «Կանոնագիրք Հայոց», Բ, էջ 94: Պտղի մասին Աղվենի ժողովի այս սահմանումը գրեթե նույնությամբ վկայված է նաև «Կանոնք երրորդ Բարսղի Կեսարու հայրապետի» կանոնախմբի ԻԶ հոդվածում: Բարսեղի ՀԷ (77) հոդվածից բաղկացած սույն կանոնախումբը արտագրված է Մատենադարանի 1636 թ. ընդօրինակված № 3706 ձեռագրում (էջ 209—214) և ոչ մի չափով չի արտացոլվել վերջերս հրատարակված «Կանոնագիրք Հայոց» երկհատորյակում: Բարսեղի կանոնների № 3706 ձեռագրի գրիչը դրանց մասին ծանոթագրել է. «Նորին կանոնք Բարսղի Կեսարու հայրապետին արարեալ գլուխք ՀԷ, զոր ոչ կայր ի բուն օրինակին, յետոյ գտեալ այլում օրինակի և աստ եդաք ի կարգի» (էջ 209 ա): Պտղին որոշող հիշյալ աղբյուրների առնչությունների քննությունը դուրս է մեր նպատակներից և արժանի հատուկ ուսումնասիրության:

դրագառնալ նրա բովանդակությանը՝ մեջ բերելով միայն նոր դիտարկումները։

Պատմագիտական գրականության մեջ արդեն հավաստիորեն հաստատված է, որ՝ Ս. Օրբելյանի սույն հարկացուցակը կազմվել է X դարից ոչ ուշ, քանի որ նրանում Սյունիքի գյուղերը և նրանց սահմանները ներկայացված են այդ ժամանակների դրությամբ՝ ըստ իրեն սահմանին, բ. Տաթևի վանքին հարկատու 680 գյուղերի դիմաց նշանակված թվերը դրամական միավորներ են՝ դրամ-դահեկաններ։ Մինչև վերջերս ենթադրական այս իրողությունը առաջինը համոզիչ ապացուցեց պրոֆ. Ս. Հակոբյանը՝ Օրբելյանի երկի մի քանի ձեռագրերում նկատելով գյուղերի դիմաց նշանակված թվագրերի հետ նաև դահեկան, դրամ նշումներ՝ մի դեպքում «Նորիք գյուղ)՝ ԺԲ (12) դահեկան, մյուսում (Սուրբ Գևորգ գյուղ)՝ Բ դահեկան և Ը դրամ[10], մի բան, որ չէին դիտել Օրբելյանի «Պատմության» հրատարակիչները և հարկացուցակով զբաղվող գիտնականները։ Հիմք ընդունելով Նորիք և Ս. Գևորգ գյուղերի հարկաչափի դրամական արտահայտությունը, ինչպես նաև հարկացուցակի ուշ ժամանակների մի քանի ձեռագրերում նրան առդրված խորագիրը՝ «Սիւնեաց երկոտասան գաւառաց վանքի պտուղն, այսինքն Տաթեւու», Ս. Հակոբյանն այն համոզմանն է հանգում, որ «Տաթևի վանքին հարկատու բոլոր գյուղերը վանքին հարկերը վճարել են դրամ-դահեկաններով», «Հետևաբար, վանքին հարկատու գյուղերը Ստ. Օրբելյանի էպոխայում ինչպես արքունական, այնպես էլ վանական հարկերը վճարում էին դրամով»[11]։ Գրեթե նույն փաստարկներով այս տեսությունը հաստատում է Գ. Գրիգորյանը՝ Սյունիքի վանական կալվածատիրության մասին իր մենագրության մեջ. «Սյունյաց վանական տնտեսություններում, ինչպես նաև տասանորդի հավաքման պրակտիկայում X դարում գերազանցապես արտահայտվում էր դրամական ռենտան»[12]։

Ստ. Օրբելյանի երկում զետեղված հարկացուցակի և վկայված ժամանակաշրջանում Սյունիքում եկեղեցական պտղի կամ տասանորդ հասույթի չափերի ու գանձման եղանակների քննությունը առանձին հետազոտության նյութ է, որը դուրս է սույն հոդվածի սահմաններից։ Այստեղ Վահրամ Պահլավունու խնդրո առարկա հրամանագրի մեկնաբանության անհրաժեշտությամբ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառումներ, որ դիտել ենք հարցի ուսումնասիրության ընթացքում։

1. Հարկացուցակում գյուղերի դիմաց նշանակված թվերը դրամական միավորներ՝ դրամ-դահեկաններ արտահայտելը, ինչպես նաև «Սիւնեաց երկոտասան գաւառաց հարկ եկեղեցւոյ» և այս կարգի մյուս խորագրերը բավարար հիմքեր չեն տալիս անվերապահորեն հավաստելու, որ տվյալ ժամանակաշրջանում Տաթևի վանքին հարկատու գյուղերը եկեղեցական հիմնական հարկը՝ պտղին վճարել են առավելապես կամ միայն դրամով։ Վերևում մեջ բերված մատենագրական վկայություններում, նաև հետագա դարերի վավերագրերում պտղին կամ եկեղեցական տասանորդը ամենուրեք սահմանվում է անասնապահության ու հողագործության արդյունքների ձևով, և մեզ հայտնի չէ որևէ աղբյուր, որտեղ այդ հասույթը արտահայտվեր դրամով։ Այս իրողությունը լավագույնս հաստատում է Սյունիքում գործած, Գլաձորի համալսարանի ականավոր բաբունապետ Եսայի Նչեցու վկայությունը, որ անհասկանալի պատճառով դուրս է մնացել Օրբելյանի հարկացուցակով ու պտղի չափերով զբաղվող գիտնականների տեսադաշտից։ Եզեկիելի մարգարեության մեկնության մեջ Նչեցին բոլոր դեպքերում քահանաներին տրվելիք պտղին սահմանում է ելնելով հնուց ի վեր հայկական միջավայրում, նաև Սյունիքում կիրառվող կանոններից, Ս. Գրքի՝ աշխարհիկ իշխանավորներին տրվելիք հասույթի մասին ընդհանուր ու մշուշապատ օրինականացումները փոխարինելով տեղական, հավանաբար այդ ժամանակներում կենդանի ու գործող որոշումներով։ Ահա դրանցից մեկը. «Հատն, որք ի քահանայսն տան ի գրուէ ցորենոյն ի վեցէն զմին, ի քոռէն ի վեցէն զմին արդուն։ Ձեթ որ տան պտուղ քահանայիցն քսատ մի, որ լինի ի սափորէն ի տասնէն մինն»[13]։ Ակներև է, որ Նչեցին ներկայացնում է քահանաներին տրվելիք պտղին միայն բնամթերքով, համենայն դեպս ոչ մի ակնարկ չկա այդ հասույթը դրամով վճարելու մասին։

2. Քիչ հավանական է, որ միջին դարերի բնատնտեսության պայմաններում Սյունիքի բնակչությունը հնարավորություն ունենար եկեղեցական հարկերը, որ առկա տվյալներից, հատկապես պտղի մեջ մտնող բնամթերքների քանակից դատելով, բավականին պատկառելի են եղել (ամբողջ բերքի մոտ $^{1}/_{10}$), վճարել դրամ-դահեկաններով, այն էլ այն դեպքում, երբ նույն հարկատուները արքունի կամ իշխանական հարկերն ու տուրքերը պարտավորված էին վճարել միայն դրամով։ Իբրև

———

[10] Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, Ա, Երևան, 1957, էջ 390։

[11] Նույն տեղում, էջ 389—390։

[12] Գր. Գրիգորյան, Սյունիքի վանական կալվածատիրությունը IX—XIII դդ., Երևան, 1973, էջ 196։

[13] Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3120, էջ 199բ։

այդ շրջանում դրամական շրջանառության ընդարձակման փաստեր վկայակոչված միջնադարի նվիրատուների դրամական ընծաները վանքերին կամ մեծարժեք գնումները ոչ մի չափով չեն ծառայում այդ վարկածին, քանի որ բոլոր այդպիսի դեպքերում խոսքը վերաբերում է միայն ու միայն առանձին մեծատուն կամ ունևոր անհատներին, իսկ ամբողջ բնակչությունը, բնականաբար, այդպիսի դրամական նվերների կամ մեծագին գնումների, ուրեմն նաև պտղին դրամով վճարելու հնարավորությունից զուրկ էր։

Հավաստելով միջնադարյան Հայաստանում դրամական շրջանառության ընդարձակման իրողությունը, ինչպես նաև ավատական հասարակության զարգացման տարբեր աստիճաններում ռենտայի տարբեր ձևերի կիրառությունները, պրոֆ. Բ. Առաքելյանը իրավամբ նշում է, որ միջնադարում, այնուամենայնիվ, «գերակշռել է արդյունքներով ռենտան, որը դրամականի փոխվել էր առավելապես քաղաքներում, իսկ գյուղերում մնում էր տիրապետող»[14]։

3. Հարկացուցակում գյուղերի դիմաց նշանակված թվական միավորները՝ դրամ-դահեկանները չեն կարող ներկայացնել բնակչությունից հավաքվող ամբողջ պտղի-տասանորդը, քանի որ դրանք նույնիսկ վկայված ժամանակաշրջանի դրամի արժեքի պայմաններում շատ չնչին գումար են արտահայտում, և հազիվ թե Սյունիքի գյուղերն այդքան աննշան տասանորդ վճարեին Տաթևի վանքին։ Արդարև, հարկացուցակում արտացոլված 680 բնակավայրերը, ըստ նրանց դիմաց նշված թիվ-դահեկանների, հետևյալ պատկերն են ներկայացնում.

Թիվ-դահեկաններ	Գյուղերի թիվը	Թիվ-դահեկանների գումարը
5	5	25
6	155	930
7	54	378
8	93	744
10	130	1300
12	193	2316
15	26	390
17	2	34
20	16	320
2,8 դահ., 18, 24, 26, 30, 50 մեկական գյուղ՝		6 150 դահ. 8 դր.
Ընդամենը	680	6587 դահ. 8 դրամ

Այսպիսով, զանց առնելով նվազագույն և առավելագույն հարկաչափերը, ամբողջ հարկացուցակի դրամ-դահեկանների միջինը կարելի է համարել մոտ 10 դահեկան։ Եթե անգամ ընդունենք, որ այստեղ հիշատակված դրամական միավորները ոսկի դահեկաններ են, դարձյալ միջին մեծության հարկատու գյուղի վճարելիք 10 դահեկան պտղին շատ աննշան է այն արժեքների համեմատությամբ, որ վկայված են տվյալ ժամանակաշրջանում։ Ինչպես պարզել է Թ. Ավդալբեգյանը, միջին դարերում մեկ պատարագի միջին գինը կազմել է 20—25 դահեկան[15]։ Մի՞թե Տաթևի վանքին հարկատու միջին մեծության մի ամբողջ գյուղ եկեղեցական տասանորդ է վճարել միայն մեկ պատարագի կես գնի չափով։ Հենց Վահրամ Պահլավունու սույն հրամանագրով, որ ինչպես նշել ենք ժամանակամերձ է Օրբելյանի հարկացուցակին, ննջեցյալի հոգադրամը, այսինքն գերեզմանօրհնեքի գինը սահմանվում է 3 դահեկան, նույն գինն է որոշված նաև տնօրհնեքի, պսակի և կնունքի (կնքադրամ) հոգևոր սպասարկության համար։ Հասկանալի է, որ մի գյուղից հավաքվող պտղին իր արժեքով չէր կարող համապատասխանել 3—4 տնօրհնեքի, գերեզմանօրհնեքի կամ կնքադրամի։

4. Վերևում շարադրված նկատառումները առաջադրում են մի բնական հարց. եթե հարկացուցակի թվական միավորները՝ ոսկի դահեկանները չեն ներկայացնում եկեղեցական ամբողջ պտղին կամ տասանորդը, այդ դեպքում ի՞նչ են արտահայտում դրանք, կամ ո՞ր հարկն է արտացոլված ցուցակում։ Մեր համոզմամբ հարկացուցակի թվական միավոր-դահեկաններ պտղի կամ տասանորդ եկեղեցական հասի այն մասն են, որ հավատացյալ համայնքները պետք է վճարեին դրամով: Արդարև, վերը վկայակոչված Սահակ կաթողիկոսի «Գիր ասանդութեան» կանոններում առաջին անգամ սահմանվում են ոչ միայն բնամթերքով առնվելիք պտղին կամ տասանորդը, այլ նաև դրամական հասի որոշ գումար, որ բնամթերքի հետ պետք է վճարեին ծխերը։ Ահա Սահակի կանոնների այդ հատվածը. «Եւ հասք ի ձէնջ ի սեղան Տեառն եղիցի դրամ Ա յամենայն տանց ձերոց եւ նուիրեալքն ի ձէնջ»[16]։ Ուրեմն դեռ Գրիգոր Լուսավորչի սահմանած այս կանոններով (կարգեցաւ ի սրբոյն Գրիգորէ) պտղին կամ տասանորդը բաղկանում էր ինչպես անասնապահական ու հողագործության մթերքներից, այնպես էլ դրամական հասից, որը որոշված էր մեկ դրամ կամ արծաթ դահեկան յուրաքանչյուր տնից կամ ծխից։ Այսպիսով, Ստ. Օրբելյանի երկին կցված հարկացուցակի դրամական միավորները արտահայտում են պտղի միայն մի փոքր մասը՝ դրամականը. բնամթերքով հասը այդ ցուցակում չի արտացոլ-

[14] Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., Բ, Երևան, 1964, էջ 206։

[15] Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 324։
[16] «Կանոնագիրք Հայոց», Բ, էջ 235—236։

ված։ Դրան լավագույն ապացույց է նաև Հարկացուցակի՝ 1735 թ. ձեռագրում ավանդված խորագիրը, հատկապես նրա երկրորդ մասը, որը վրիպել է ուսումնասիրողների ուշադրությունից. «Մինեաց երկոտասան գաւառաց վանքի պտուղն, այսինքն Տաթեւու վեց հազար եօթն հարիւր ոսկի է։ Թող զհոգեբաժինն, և աթոռահակն, և այլն նոյնպէս»[17]։ Այս վերնագրից պարզվում է, որ՝ ա. Սյունիքի 12 գավառների Տաթևի վանքի պտուղը կազմում է 6700 ոսկի[18], այսինքն ոսկի դահեկան, որ այս շրջանում արծաթ դահեկանի կամ դրամի հետ ունեցել է 1:10 հարաբերություն[19], բ. Պտղի սույն ցուցակում արտացոլված է միայն եկեղեցական հարկի մի մասը, քանի որ 6700 դահեկան ընդհանուր գումարից դուրս են մնացել հոգեբաժին, աթոռահակ և այլ հասեր (թող զհոգեբաժինն. և աթոռահակն, և այլն նոյնպէս): Եթե հոգեբաժինն և այլն նոյնպէս-ը դեռ կարելի է հասկանալ եկեղեցական սպասարկության համար գանձվելիք հասույթի իմաստով (Պահլավունու հրամանագրում՝ ի պսակի, հողադրամ, կնքադրամ, տնօրհնէք), ապա աթոռահակ-ը ակնհայտորեն վերաբերում է եպիսկոպոսական աթոռին տրվող պտղին, որ բոլոր աղբյուրների տվյալներով, բոլոր ժամանակներում մասհանվում էր միայն բնամթերքով։

Անբերդի քննության ենթակա արձանագրությունը ևս ակներևաբար վկայում է, որ Ստ. Օրբելյանի հարկացուցակի ստեղծման ժամանակներում Վահրամ Պահլավունու նոր հիմնադրած եպիսկոպոսական աթոռի հիմնական հասը կամ պտղին արտահայտված էր միայն հողագործության բնամթերքով (ցորեն, գինի, բամբակ, կտավատ), մինչդեռ դրամական վճարումները իրագործվում էին եկեղեցական արարողությունների, հոգևոր ծառայությունների դիմաց։ Եթե պտղի գանձման այս կարգը գործում էր կենտրոնական Հայաստանում, դրամական շրջանառության ընդարձակման, վաճառաշահ քաղաքների, ավանների բարգավաճման, առևտրական բանուկ ճանապարհների, կարավանատների ու շուկաների գոյության պայմաններում, ապա միանգամայն ակներև է, որ փակ բնատնտեսությամբ զբաղվող, քիչ թե շատ նշանակալից քաղաքներ ու ավաններ չունեցող Սյունիքում հազիվ թե հնարավոր լիներ գյուղական բնակչությունից եկեղեցական հարկերը գանձել միայն դրամով։

Իշխանաց իշխան Վահրամ Պահլավունու 1026 թ. Անբերդի արձանագրության մեկնաբանության հետ կապված վերջին հարցը նորահաստատ եպիսկոպոսական թեմի օգտին աթոռին ենթակա տներից հավաքվելիք պտղի կամ տասանորդի քանակի որոշումն է, որ կարևոր նշանակություն ունի միջնադարյան Հայաստանի եկեղեցական հիմնական հարկի և այլ հասույթների վիճակը պարզելու առումով։ Արդ, երկրագործության արդյունքների ի՞նչ քանակություն են վճարելու աթոռին ենթակա չորս գավառների ծխերը ըստ Պահլավունու սույն հրամանագրի։ Պտղի չափերը ստույգ որոշելու համար անհրաժեշտ է պարզել այդ վավերագրերում վկայված չափակշռային մի քանի միավորների իրական մեծությունը տվյալ ժամանակաշրջանում, նրանց հարաբերությունները արդի համապատասխանությունների հետ։

1. Լիտր—Այս ծանրության միավորով հրամանագրում սահմանվում է Քաղքողաշտ (=Վաղարշապատ) վիճակի բամբակի պտղին՝ ի Քաղքողաշտի բաբակն .Ժ. լիտր: Վկայված ժամանակաշրջանի համար լիտրի կշռորդը որոշված է 320 կամ 408 գ., ավելի ուշ, սելջուկյան տիրապետության տարիներին լիտրը ունեցել է նաև 832 գ. կշռորդ, որի կիրառությունը քննվող վավերագրում բացառվում է։ Անբերդի արձանագրության մեջ, մեր համոզմամբ, խոսքը արաբական կամ իրաքյան լիտրի մասին է, որը լայն գործածություն է ունեցել խալիֆաթին ենթակա երկրներում և այժմյան կշռաչափով հավասար է եղել 408 գրամի, կամ մոտավորապես ռուսական ֆունտին[20]։ Այստեղից, ըստ Պահլավունու օրինականացման, Քաղքողաշտ գավառի յուրաքանչյուր տունը կամ ծուխը պարտավոր էր Արագածոտնի եպիսկոպոսական աթոռին իբրև պտղի կամ տասանորդ վճարել՝ 10(Ժ)×0,408=4,08 կգ բամբակ։

2. Կապիճ—Այս չափակշռային միավորը բազմաթիվ հիշատակություններ ունի միջնադարի հայ մատենագրական աղբյուրներում, առավելապես վիմական բնագրերում։ Հիմնական նշանակությունն է ըստ այդ վկայությունների՝ ընդեղենների չափ, որտեղից, հետևաբար նաև՝ տվյալ չափով արտահայտվող հարկ, տուրք, կամ՝ այդ չափով սերմացու բռնող հողատարածություն[21]:

Տերմինի հավանական ստուգաբանությունը տալիս են Հյուբշմանը և Աճառյանը, ըստ այդմ կապիճ ծագում է պհլ. kapič կամ պրս. kaviz արմատից, որի հետ նույնը պետք է համարել հնագույն ուրարտական սեպագրերում վկայված kapi—ընդեղենների անորոշ կշռորդով չափը[22]։

17 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3409, էջ 104։

18 Այսինքն մոտավորապես այնքան, որքան տալիս է Օրբելյանի հարկացուցակը՝ 6587 դահեկան 8 դրամ։

19 Թ. Ավդալբեգյան, նշվ. աշխ., էջ 312։

20 Հ. Մանանդյան, Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, Երևան, 1930, էջ 30—31։

21 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Բ, էջ 525։

22 Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи (УКН), М., 1960, էջ 399:

կապիճի կշռորդը միջնադարի աղբյուրներով որոշված է գրիվի կամ մոդի $^{1}/_{10}$, ըստ այդմ՝ $8{,}976:10=0{,}898$ կգ կամ՝ $9{,}872:10=0{,}987$ կգ, մի խոսքով մոտավորապես մեկ կգ[23]։ Սակայն կապիճի այս կշռորդը, որ դույզն համապատասխանում է ուրարտական սեպագրերի kapi-ի մեծությանը, քանի որ այստեղ հացահատիկի շտեմարանների տարողությունը որոշվում է կապիի մեծ թվերով՝ 10.000, 107.100, 18.400, 15.300 և այլն[24], ոչ մի ձևով չի կարող համաձայնել հայկական միջնադարյան աղբյուրների, հենց քննության առարկա հրամանագրի վկայությունների հետ։ Արդարև, Պահլավունու հրամանագրում Նիգ և Անբերդ գավառների պտղին սահմանվում է յուրաքանչյուր ծխից համապատասխանաբար՝ Բ (2) և Դ (4) կապիճ ցորեն, այսինքն՝ մոտ 2 կամ 4 կգ, որ աննտարակույս շատ աննշան քանակություն է, և ոչ մի դեպքում չի կարող ամբողջ ծխի հողագործական արդյունքների տասանորդին հավասարվել։ Կապիճի կշռաչափի և նրա վիմագրական վկայությունների քննությանը նվիրված հատուկ ուսումնասիրության մեջ վիմագրագետ Ս. Բարխուդարյանը նույնպես գտնում է, որ միջին դարերի վիմագրերում արտացոլված կապիճի կշռորդը չի կարող լինել գրիվի կամ մոդի $^{1}/_{10}$, սակայն գիտնականը իր ձեռքի տակ եղած տվյալներով դժվարանում է որոշել այդ կշռաչափի իրական մեծությունը վկայված ժամանակաշրջանում[25]։ Հայկական չափագիտության մասնագետ Ռ. Վարդանյանն իր անտիպ ուսումնասիրության մեջ պարզել է, որ միջնադարի աղբյուրներում տարբեր կիրառություններով վկայված կապիճ չափակշռային միավորը, որ համապատասխանել է օտար աղբյուրների փոքր կապիճին, ունեցել է ոչ միայն գրիվի $^{1}/_{10}$, այլ նաև գրիվին կամ մոդին հավասար կշռորդ, այսինքն համապատասխանել է արդի կշռաչափով 8,976 կգ կամ 9,872 կգ։ Ռ. Վարդանյանի որոշած կապիճի այս կշռորդները լրիվին համապատասխանում են հայկական վիմագրերում, նաև Անբերդի սույն հրամանագրում արտացոլված հիշատակություններին, ըստ այդմ կարելի է մակաբերել, որ տվյալ վավերագրով Նիգ գավառի պտղին սահմանվում է յուրաքանչյուր տնից՝ $2\times8{,}976=17{,}972$ կգ, կամ՝ $2\times9{,}872=19{,}744$ կգ ցորեն, Անբերդինը՝ $4\times8{,}976=35{,}97$ կգ կամ՝ $4\times9{,}872=39{,}888$ կգ ցորեն և 8,976 կգ կամ 9,872 կգ կտավատ։

3. Փաս հեղուկաչափի միավորը հայագիտությանը հայտնի է դեռ

[23] Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 90։

[24] Г. А. Меликишвили. УКН, №№ 135, 139, 162, 163.

[25] Ս. Բարխուդարյան, Մի քանի դիտողություններ Երևանի Կաթողիկե եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1947, № 5, էջ 77—78։

դասական մատենագրությունից։ Հնագույն վկայությունները պահպանվել են Մովսես Կաղանկատվացու և Անանիա Շիրակացու երկերում։ Հավանական է մտածել, որ վկայված ժամանակաշրջանում (X—XIII դդ.) փաս հեղուկաչափի միավորը հիմնականում կիրառվել է քաղցուի կամ գինու քանակը որոշելու համար, ուստի և փաս գինի ազատ կապակցությունը, գործածվելով, դարձել է կայուն՝ փասգինի, որից էլ վերջին վանկի սղումով փաս։ Եսայի Նչեցին ձեթի ծավալաչափի փաս տեղական միավորը հավասարեցնում է սափորի հետ և նրանց մեծությունը համարում 10 քսեստ։ Եվ քանի որ այլ աղբյուրներից հայտնի է քսեստի մոտավոր միջին կշռորդը՝ 0,532 կգ (տարբերականներ՝ 0,544, 0,589, 0,652 կգ), ուրեմն հայկական փասի կամ նրան հավասար սափորի կշռորդը կլինի՝ $0{,}532\times10=5{,}32$ կգ (կամ 5,44, 5,89, 6,52 կգ)։ Դառնալով Վահրամ Պահլավունու հրամանագրում փաս-ով արտահայտված արդյունքներին, կարելի է ստույգ որոշել Արագածոտն գավառի յուրաքանչյուր այգուց եպիսկոպոսական աթոռին իբրև պտղի տրվելիք գինու կամ քաղցուի քանակը՝ Բ (2) փասգի, փաս գինի—$2\times5{,}32$ կգ$=10{,}62$ կգ (կամ՝ 10,88, 11,78, 13,04 կգ)*։

Այսպիսով, Անբերդում Պահլավունու թողած 1026 թ. արձանագրությամբ սահմանված են նոր հաստատված եպիսկոպոսական աթոռի օգտին գանձվելիք պտղի կամ տասանորդի՝ հողագործության հետևյալ արդյունքները՝

1. Նիգ գավառի յուրաքանչյուր տնից կամ ծխից 2 կապիճ$\times8{,}976=17{,}952$ կգ կամ՝ $2\times9{,}872=19{,}744$ կգ ցորեն։
2. Արագածոտն գավառի յուրաքանչյուր այգուց 2 փաս$\times0{,}532=10{,}62$ կգ կամ՝ 10,88 կամ՝ 11,78 կգ գինի։
3. Քաղքոդաշտ (Վաղարշապատ) գավառի յուրաքանչյուր տնից 10 (Ժ) լիտր$\times0{,}408$ կգ$=4{,}08$ կգ բամբակ։
4. Անբերդ գավառի յուրաքանչյուր տնից 4 կապիճ$\times8{,}976=35{,}9$ կգ ցորեն և 1 կապիճ$=8{,}976$ կգ կտավատ։

Ինչպես ակներև է, Պահլավունու սույն օրինականացման մեջ արտահայտված են միայն եկեղեցական պտղի կամ տասանորդի հողագործության արդյունքները, պետք է կարծել, որ Անբերդի աթոռին ենթակա ծխերը վճարել են նաև պտղի՝ անասնապահության մթերքներով

* «Փաս, փասգի» տերմինի մասին ավելի մանրամասն տե՛ս Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 332—338։—Խմբ.։

հասույթը, որը սահմանված էր դեռ Սահակ կաթողիկոսի կանոններով, բայց չի արտացոլված քննության առարկա արձանագրության մեջ։

ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔԸ*

Հյուսիսային Հայաստանի Մահկանաբերդ գավառի հնագույն և ճարտարապետական հորինվածքով չափազանց ուշագրավ այս հուշարձանի մասին մատենագրական վկայություններ չեն պահպանվել։ Կայենո և Մահկանաբերդի, մյուս հարևան հոգևոր ու մշակութային կենտրոնների՝ Հաղբատի, Նոր Գետիկի, Դեղձուտի, Առաքելոց և Մակարա վանքերի վիմագրության և պատմագրական աշխատություններում ևս որևէ հիշատակություն չենք գտնում հուշարձանախմբի պատմական կյանքի մասին։

Նորագույն տեղագրական գրականության մեջ Մորո ձորո վանքին անդրադարձել է միայն Մ. Բարխուտարյանցը, որն իր աշխատության[1] մեջ մի քանի տողով համառոտակի նկարագրել է ս. Աստվածածին եկեղեցու տեղագրությունը, կառուցվածքը և պահպանության վիճակը այցելության ժամանակ, 19-րդ դարի երկրորդ կեսերին։ Բարխուտարյանցը ընդօրինակել և իր գրքում զետեղել է վանքի երեք վիմական արձանագրություն, որոնք, սակայն, արտագրված են էական բացթողումներով և աղավաղումներով։

Տարիներ առաջ հրատարակված Իջևանի շրջանի պատմական հուշարձանների «Ուղեցույց»-ում (կազմող՝ Հ. Եղիազարյան)[2] կես էջ է նվիրված Մորո ձորո վանքի ընդհանուր նկարագրին ու վիմագրությանը, որը, բնականաբար, շատ քիչ բան է ավելացնում եղած տեղեկություններին։ «Ուղեցույց»-ի հեղինակը իրավացիորեն ս. Աստվածածին եկեղեցին 7-րդ դարի գործ է համարում, միաժամանակ գտնելով, որ այդ հուշարձանը մեզ է ներկայանում ոչ թե իր նախնական անաղարտ ձևերով, այլ հետնադարյան հիմնովին վերակառուցումների նկատելի հետքերով։ Սակայն այս վարկածը «Ուղեցույց»-ում թեական է մնում, քանի որ հեղինակը, գրքույկի նպատակներից ելնելով, փորձ չի անում գոնե հուշարձանի ներկայումս պահպանված հնագույն կառուցողական հնարանքների համեմատական վերլուծությամբ հաստատելու դրանց 7-րդ դարին պատկանելը։

Ավելի մանրակրկիտ Մորո ձորո վանքի կառուցվածքը նկարագրված

---

* «Էջմիածին», 1967, № Գ—Ե։

1 Մ. Բարխուտարյանց, «Արցախ», Բաքու, 1895 թ., էջ 342։

2 Սովետական Հայաստանի պատմական հուշարձանները, Իջևանի շրջան («Ուղեցույց»), կազմող՝ Հ. Եղիազարյան, Երևան, 1947 թ., էջ 19։

է Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի 1938 թվականի հնագիտական արշավախմբի օրագրերում, որոնք հրատարակված չեն և պահվում են Կոմիտեի արխիվում։

Սակայն այստեղ ևս աչքաթող են արված և չեն ընդօրինակված հուշարձանի վիմական արձանագրությունները, որոնք լինելով նրա պատմության սկզբնաղբյուրները, շատ արժեքավոր տվյալներ են պարունակում ոչ միայն վանական կենտրոնի, այլև ամբողջ գավառի պատմության վերաբերյալ։ Ս. Աստվածածին եկեղեցին Կոմիտեի կողմից մանրամասն չափագրության է ենթարկվել 1953 թվականին, ճարտարապետներ Բ. Հ. Արզումանյանի և Շ. Ռ. Ազատյանի ջանքերով։

Մորո ձորո վանքի մասին այս տեսությունը կազմելիս օգտագործել ենք Կոմիտեի արխիվում պահպանվող վերոհիշյալ արշավախմբային և չափագրական նյութերը։

Իջևանի շրջանի այս և մի քանի այլ ճարտարապետական կոթողների մասին գիտական հանրամատչելի գրականության պակասը հեշտ է բացատրել. գտնվելով Հայաստանի կենտրոնական գավառներից հարյուրավոր կմ հեռավորության վրա և տեղավորված լինելով լեռնաշխարհի անմատչելի և ճանապարհազուրկ վայրերում՝ այդ հուշարձանները սակավ են այցելվում, ուստի և, բնականաբար, չեն արժանանում ուսումնասիրողների ուշադրությանը։ Մինչդեռ, այստեղ պահպանված մի շարք հուշարձաններ (Մակարավանք, Դեղձուտի, Կիրանց, Առաքելոց վանքերը և այլն) իրենց ճարտարապետական հետաքրքիր լուծումներով, հատկապես արտաքին հարդարանքի, մանրամասների ու քանդակազարդերի անխոցելի կատարելությամբ նոր, ուշագրավ երևույթ են ոչ միայն հյուսիսային Հայաստանի, այլև բովանդակ հայ մշակույթի պատմության մեջ։

Այդպիսի ուշագրավ հուշարձաններից է նաև Մորո ձորո ս. Աստվածածին վանքը, որի գոյությունը պատմական Հայաստանի այս հեռավոր ծայրագավառում մի անգամ ևս հաստատում է այն ճշմարտությունը, որ 7-րդ դարի հայ դասական ճարտարապետության նշմարները պետք է որոնել ոչ միայն հայոց նյութական մշակույթի բնօրրաններում՝ Այրարատյան դաշտավայրում, Շիրակ-Արագածոտնում, այլև երբեմն այս կենտրոններից շատ ու շատ հեռու ընկած ծայրամասերում. այդ են ապացուցում Թանահատի և Սյունիքի վանքերը՝ Սյունիքի Ծղուկ գավառում, Երիցավանքը՝ Արևելյան Բաղքում, և այլն։

Վանքի «Մորո ձորո Աստվածածին» անվանումը գալիս է նրա պատերին փորագրած վիմարձանագրություններից. ըստ որում վանքն այդպես է կոչվում միայն չորս բնագրերում (մեր հավաքածուի № № 2, 7,

8, 11), մնացած դեպքերում նրա մասին հիշատակվում է կամ Աստվածածին (№ № 1, 4, 5, 6, 9, 10) և կամ պարզապես եկեղեցի (№ 3) անուններով։ Մատենագրական աղբյուրներում կամ այլ հուշարձանների վիմագրության մեջ «Մորո ձոր» տեղանունն ավանդված չէ։ Անտարակույս է, որ նախապես Աստվածածին կոչվող վանքի **Մորո ձորո** հատկացուցիչը պետք է ծագեր այն ձորի կամ գյուղի տեղանունից, որոնց սահմաններում կառուցվել էր վանքը։

Սակայն Ծովքի բնակիչները գյուղի շրջակայքում «Մորո ձոր» անունով հանդամաս կամ այլ տեղանուն չեն հիշում. միայն վանքից մոտ 1 կմ դեպի հարավ-արևելք, ձորակի ձախ կողմում, «Խամերի սար» անտառամասի կենտրոնում մի ընդարձակ բացատ կա, որն ամբողջությամբ ծածկված է մորու թփիկներով և այդ պատճառով տեղացիների կողմից «Մորու թալա» է կոչվում։ Մորու և մոշի թփուտներ են աճում գյուղի մյուս դաշտամասերում ևս, և պատահական չէ, որ Ծովքը ամբողջ շրջանում հայտնի է այդ հատապտուղների առատությամբ։ Ուստի հավանական է ենթադրել, որ հնում Ծովքի ձորակը նույնպես ծածկված է եղել մորու թփերով և կոչվել է «Մորո ձոր», որից և տեղանունը անցել է նրա ձախ ափի հարթության վրա կառուցված ս. Աստվածածին վանքին։

Մորո ձորո ս. Աստվածածին վանքը տեղավորված է Իջևանի շրջանի Ծովք գյուղի արևմտյան թաղամասերում, ձորակի աջ ափի հարթակի վրա, շրջապատված դարավոր վիթխարի ընկուզենիներով։ Հուշարձանախմբի կառուցվածքներից ներկայումս կանգուն են միայն ս. Աստվածածին եկեղեցին և նրա շուրջը տարածվող պատմական գերեզմանոցի մի քանի քանդակազարդ խաչքարեր, ինչպես նաև ձորակի հակառակ ափին գտնվող առանձին խաչարձանների պատվանդաններ, որոնք թեև թվագրված հիշատակություններ չունեն, սակայն իրենց շինությամբ ու քանդակազարդերի ոճով անառարկելիորեն ժամանակամերձ են եկեղեցու վերակառուցմանը (12—13 դդ.)։

Վանքի օժանդակ տնտեսական շենքերի և միաբանության կացարանների ավերակները՝ քարակույտերի ու խանդակների ձևով երևում են եկեղեցուց դեպի հարավ և արևելք ոչ այնքան հեռու, իսկ դրանցից դեպի արևելք՝ Համզայի լեռնալանջին ու Կարմրաքար ժայռաբեկորից ներքև միջնադարում տեղավորված է եղել վանքապատկան գյուղը, որի մնացորդները դեռ պահպանվել են գյուղի այգիներում ու բանջարանոցներում, Ծովքի Ջուր գետակի երկու ափերին։

Առաջին հայացքից արտաքուստ հուշարձանը չափազանց անշուք տպավորություն է թողնում, քանի որ նրա երբեմնի սրբատաշ երեսա-

պատերը, ծածկի ձևավոր սալերն ու քիվերը վատ են պահպանվել, մեծ մասամբ խարխլվել, թափվել են՝ մերկացնելով եկեղեցու կմախքը, որը տեղ-տեղ վերանորոգված է անարվեստ եղանակով։ Այդ տպավորությունը, սակայն, անմիջապես հիացմունքի է փոխվում, հենց որ մտնում ես հարավային մուտքից ներս և դիտում շենքի անթերի ճարտարապետական ձևերը, մեծ վարպետությամբ կատարված մանրամասներն ու քանդակազարդերը։

Ս. Աստվածածին եկեղեցին փոքր չափերի (դրսից՝ 8,9×8,6 մ) գմբեթավոր գողարիկ շինություն է, արտաքուստ և ներքուստ խաչաձև հատակագծով, որի բոլոր խաչթևերը կիսաշրջանաձև են, բացի հարավային խաչթևից, որն արտաքուստ ուղղանկյուն է (նկ. 1)։ Եկեղեցու կիսակլոր պատերի արտաքին երեսապատման սրբատաշ քարերը ժամանակի ընթացքում պոկվել ընկել են, ուստի հետագայում ստիպված են եղել երեսապատերը վերաշարել մեծ մասամբ տարբեր գույնի կիսամշակված



Նկ. 1

քարերով, տեղ-տեղ օգտագործելով նաև պահպանված մշակված բեկորները։

Անվիճելի է, որ ամբողջ հուշարձանը նախապես շարված է եղել դորշագույն բազալտի սրբատաշ սալերով, որոնց առանձին հատվածները անաղարտ պահպանվել են ներսում, խաչթևերի կիսակլոր պատերի, թաղերի և կամարների վրա։ Սակայն սրբատաշ այդ շարվածքից ներկայումս շատ քիչ բան է մնացել, որովհետև 12—13-րդ դարերում կատարված վերանորոգումների հետևանքով հիմնովին փոխվել է ոչ միայն հուշարձանի արտաքին հարդարանքը, այլև նրա ճարտարապետական հորինվածքի որոշ հանգուցային տարրերը և առանձին մանրամասները։ Եկեղեցու ուշ շրջանի վերափոխություններն ու նորամուծությունները նրա սկզբնական ձևերից կարելի է տարբերել, եթե նկատի ունենանք, որ բոլոր հետնադարյան նորոգումները կատարվել են կա՛մ մուգ դեղնագույն սրբատաշ չեչաքարով, հար և նման Հաղարծնի Սեղա-

նատան և Մալայի Աստվածածին հուշարձանի շինաքարին (թմբուկի արտաքին երեսապատը) և կա՛մ սպիտակավուն մաքուր տաշված ավազաքարով (թմբուկի ներսի մակերեսը, թաղերը և աբսիդի կիսակլոր պատերը ներքուստ), որոնք հեշտությամբ զանազանվում են եկեղեցու գորշ բազալտի հնագույն շարվածքից։

Եկեղեցու կիսաշրջանաձև խաչթևերը վերևում իրար հետ միանում են խիստ շեշտված պայտաձև կամարներով, որոնք հենվում են խաչթևերի անկյուններում հազիվ գծագրվող ուղղանկյուն որմնամույթերի վրա։ Այդ կամարների վրա հանգչում է գմբեթի գլանաձև թմբուկը՝ չորս կողմերից բացվող լուսամուտներով, որոնք իրենց անհամեմատ մեծ չափերով (1,1×0,55 մ) հիշեցնում են վաղ շրջանի հայկական հուշարձանները։

Հնագույն կառուցողական ձևերի տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես թմբուկի հյուսիսային լուսամուտը, քանի որ մյուս երեքը խարխլվել են, քանդվել, իսկ նրանց պսակող շրջակալները չեն պահպանվել։ Հյուսիսային լուսամուտի բացվածքը վերևից ծածկված է երկարավուն ուղղանկյուն սրբատաշ քարով, որը 7-րդ դարի պսակներին հատուկ կամարաձևության փոխարեն՝ հարթ հորիզոնական է։ Սակայն լուսամուտի շրջակալի ավանդական ձևը պահպանելու ձգտումով այդ հորիզոնական քարի հարթ մակերեսին վերանորոգող վարպետը փորագրել է պայտաձև կամար՝ նախնական շրջանին բնորոշ քանդակազարդերով։ Այդ կամարաղեղից դեպի աջ, հարևան քարի վրա, անաղարտ պահպանվել է մեծ վարպետությամբ կատարված նռան բարձրաքանդակը, որն իր մեծությամբ և քանդակման նրբությամբ նույնպես բնորոշ է հայկական հնագույն կոթողներին (Զվարթնոց)։

Թմբուկի արևելյան մակերեսին ներքուստ քանդակված է Քրիստոսի խաչելության տեսարանը, իսկ սրանից փոքր-ինչ հարավ՝ մի թռչունի խորաքանդակը (հավանաբար աղավնի). սրանք երկուսն էլ ուրվագրծված են պարզ ու անպաճույճ գծերով, անարվեստ և, ըստ երևույթին, կատարվել են հապճեպորեն, եկեղեցու նորոգումների ժամանակ (Նկ. 3)։ Նույնը չի կարելի ասել խաչթևերի կամարների միացման անկյուններում տեղավորված առասպելական կենդանիների ու հուշկապարիկների բարձրաքանդակների մասին, որոնք ներկայիս եղծված ու այլափոխված վիճակով էլ բարձրարվեստ քանդակների նմուշներ են և իրենց համազորներն են գտնում վաղ շրջանի հուշարձաններում (Գնդեվանք)։

Հուշարձանի տանիքը անմխիթար դրության մեջ է. գմբեթի վեղարը ամբողջությամբ կործանված է, ծածկի սրբատաշ սալքարերը չեն պահպանվել ոչ միայն իրենց տեղերում, այլև եկեղեցու շրջակայքում։ Թափ-


Նկ. 2


Նկ. 3

վել ու անհայտացել են բոլոր քիվերը, պատերի ու թմբուկի վերին շարքերի որոշ հատվածները։ Քանդված է արևմտյան խաչթևի թաղը ամբողջությամբ, իսկ արևելյանի՝ մի զգալի մասը, որով և խաթարվել է աթաբեկ Իվանեի ընդարձակ շինարարական արձանագրությունը։

Եկեղեցու ներսը համեմատաբար քիչ է տուժել. նախնական սրբատաշ շարվածքը այստեղ պահպանվել է առավելապես բարձրում՝ խաչթևերի թաղերը, կամարները, բեմի վերևի բարդ ձևավոր գոտին, թմբուկի ներսի մակերեսի որոշ մասերը ներկայանում են սկզբնական տեսքով։ Ինչ մնում է խաչթևերի կիսաշրջանաձև պատերին, ապա դրանք ներքուստ և արտաքուստ մեծ մասամբ վերաշարված են անմշակ կամ կիսատաշ քարերով, իսկ տեղ-տեղ նաև սվաղված կրաշաղախով։

Եկեղեցու ցածրիկ բեմը կից է արևելյան խաչթևին, պահպանվել է բեմի ամբողջ երկայնքով ձգվող աստիճանների առաջին շարվածքը։

Հուշարձանի միակ դուռը բացվում է հարավային խաչթևից։ Թե ինչպիսին է եղել դռան բացվածքի արտաքին ձևավորումը հնում, դըժվար է ասել. պահպանված շրջակալը շարված է կիսամշակ մեծ քարերով, անարվեստ և, հավանաբար, հետագա վերանորոգումների արդյունք է, քանի որ ոչնչով չի հիշեցնում ոչ միայն հնագույն, այլև ուշ միջնադարի հայկական ավանդական շքամուտքերը։

Մորո ձորո վանքի պատկառելի հնության օգտին արտահայտվող ամենաբնորոշ զարդաքանդակն, անշուշտ, արևելյան աբսիդի թաղի հիմքով ձգվող և բարդ ձևավորում ունեցող կիսակլոր գոտին է, բաղկացած իրար հաջորդող չորս շարք զարդերից, որոնք բոլորն էլ առանձին-առանձին կամ տարբեր զուգորդումներով հանդիպում են հայ դասական ճարտարապետության 7-րդ դարի հուշարձաններում (Նկ. 2)։

Այդ ձևավոր գոտու բոլոր քարերը խարխլված և որոշ չափով տեղաշարժված են, սակայն ամբողջ շարվածքը և մանավանդ քանդակազարդերը, անտարակույս, պահպանվել են նախնական, անաղարտ վիճակում և մեզ են ներկայանում իբրև եկեղեցու հնագույն մանրամասներ։

Քննենք այդ ձևավոր գոտու քանդակազարդերի մոտիվները։

Գոտու վերևի առաջին շարքը իրենից ներկայացնում է փոքր թեքությամբ իրար հենված նշտարաձև քանդակազարդերի մի շարան, որ 7-րդ դարի կոթողների ձևավորման ամենատարածված մոտիվներից է և հաճախ է հանդիպում այդ շրջանի մի շարք հուշարձանների՝ հատկապես խոյակների և լուսամուտների պսակների վրա (Արուճ, Սիսիան, Թարգմանչաց վանք, Անիի Պալատական եկեղեցի և այլն)[3]։ Կատարման նրբությամբ և անխոցելի արվեստով ևս նշտարաձև զարդերի շարանը հիշեցնում է վերոհիշյալ շենքերի զարդաքանդակները և հաստատում նրանց ժամանակամերձ լինելը։ Միանգամայն ակներև է, որ նշտարաձև զարդերի շարանը գալիս է խորին հնությունից, և դժվար է այն հետին դարերում կատարված ընդօրինակություն համարել։

Քանդակազարդերի երկրորդ շարքը գոտու ամբողջ երկարությամբ ձգվող զուգավոր հարթ ակոսն է, որ կիսաշրջանի հասնող իր խորությամբ նույնպես հատուկ է նախնագույն շինվածքներին, քանի որ հետագա դարերի կառուցվածքների հարդարանքում զուգավոր ակոսները անհամեմատ պակաս խորություն ունեն և հանդես են գալիս մյուս զարդերի հետ միանգամայն այլ զուգակցումներով, քան այդ տեսնում ենք Մորո ձորո վանքում։ Միայն այս հարթ զուգավոր ակոսով և առանց այլ զարդերի են ձևավորված արևելյան աբսիդի երկու կողմերին տեղավորված որմասյուների խոյակները, որոնց վրա հենվում են նույն աբսիդի կամարի կրունկները։ Գոտու հաջորդ շարքը պարանահյուսի պտուտակաձև քանդակն է, որը թեև հանդիպում է վաղ շրջանի հուշարձաններում (Պտղնիի և Զվարթնոցի խոյակները, Թանահատի քիվը), սակայն 7-րդ դարի բնորոշ քանդակազարդերի մեջ չի մտնում և լայն տարածում է ստանում միայն հետագա դարերում։ Գոտու քանդակազարդերը ներքևից եզրափակում է թեք հարթության վրայով ձգվող ատամնաշարի քանդակը, որի ատամիկները դասավորված են մեկընդմեջ, շախմատային կարգով։ Քիվերի և պսակների ձևավորման անհրաժեշտ տարր հանդիսացող այս ատամնաշարը ևս մեզ հայտնի է հնագույն հուշարձաններից (Երերույք, Օձուն, Արամուս, Գայանե)[4]։

Մորո ձորո վանքի արտաքին հարդարանքի հնագույն մանրամասներից են նաև եկեղեցու կենտրոնական տարածության հարավ-արևելյան անկյան կամարաղեղների արանքում քանդակված արմավենիկների զարդերը, ինչպես նաև 12 ծաղկաթերթերից կազմված վարդյակը, որը անճանաչելիության աստիճան ոճավորված է։

Ինչպես երևում է ս. Աստվածածին եկեղեցու ճարտարապետական ձևերի այս համառոտ քննությունից, հուշարձանի կերպարի մեջ գիրկընդխառն հանդես են գալիս թե՛ պատկառելի հնության, մինչև 7-րդ դարը հասնող հանգույցներ ու մանրամասներ (խիստ ՝շեշտված պայտաձև կամարները, արևելյան աբսիդի քանդակազարդ գոտին, թմբուկի հյուսիսային լուսամուտի պսակը և այլն) և թե՛ ակնհայտորեն հետնադարյան վերափոխություններ ու նորամուծություններ (հարավային մուտքի շրջանակը, գմբեթի թմբուկն արտաքուստ և այլն), որոնք աչքի են զարնում առաջին իսկ հայացքից։

Դժվար է հաստատակամ պնդել, թե Մորո ձորո վանքը ժամանակակից է 7-րդ դարի այն հուշարձաններին, որոնց ճարտարվեստի մի քանի բնորոշ հատկանիշները գտնում ենք այստեղ։ Սակայն առավել դժվար է եկեղեցու շինությունը վերագրել 12-րդ դարավերջին, հիմք ընդունելով նրա պատերին փորագրված արձանագրությունները, որոնցում պարզ ընթերցվում են մի դեպքում՝ «...շինեցի զԱծածինս...» (սույն հավաքածուի № 10) և մյուսում՝ «...շինեաց Իւանէ զվանքս Մորո ձորոյ...» (№ 11), ըստ որում այս արձանագրությունները, ինչպես հայտնի է դառնում նրանց վերծանությունից, ժամանակակից են իրար, կամ նրանց հավանական ժամանակների տարբերությունը չի անցնում մեկ տասնամյակից, որի ընթացքում հազիվ թե երկու անգամ կառուցվեր նույն եկեղեցին։

Մեր կարծիքով, խոսքն այստեղ շենքը վերանորոգելու մասին է, որովհետև «շինել» բայը վիմագրական հուշարձաններում հաճախ հանդես է գալիս «նորոգել» կամ «վերականգնել» նշանակությամբ։

Կասկածից վեր է, որ Մորո ձորո վանքի ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է շատ ավելի վաղ, քան նրա պատերին պահպանված վիմարձանագրությունները, որոնք բոլորն էլ վերաբերում են հուշարձանի՝ վերակառուցումից հետո եկող շրջանին և ընդգրկում մոտ 60—70 տարվա ժամանակամիջոց (12-րդ դարի երկրորդ կեսից մինչև 13-րդ դարի առաջին տասնամյակները)։

Հավանական է ենթադրել, որ 7—8-րդ դարերում կառուցված վանքը ավերվել ու ամայացել է արաբական տիրապետության ժամանակաշրջանում և միայն հետագայում, 12-րդ դարի երկրորդ կեսերին, Մահկանաբերդի Արծրունիների և Զաքարյանների կողմից մի քանի անգամ հիմնովին վերանորոգվելով՝ դարձել է այս գավառի հնագույն ու նշանավոր հոգևոր կենտրոններից մեկը։

Որոշ հետազոտողներ Մահկանաբերդի Արծրունիների հնագույն կառուցվածքն այս շրջանում համարում են Մակարավանքի այսպես անվանված Հին եկեղեցին, որը հուշարձանախմբի հնագույն կառուցվածքն

[3] **Н. М. Токарский**, Архитектура Армении, Ереван, 1961 г., стр. 160.

[4] Նույն տեղում, էջ 155։

է, թեև շինության թվականը ստույգ որոշված չէ[5]։ Վերջերս հայտնաբերվեցին այս Հին եկեղեցու և Մակարավանքի Փոքր եկեղեցու արևելյան գլխավոր խորանների կիսակլոր պատերի երկու ընդարձակ արձանագրություններ, որոնք հավաստում են այս հուշարձանների կառուցման ժամանակամերձ լինելը (12-րդ դարի վերջերը), քանի որ նրանց երկուսի շինությունը նպաստավորողների մեջ հիշատակված է միևնույն Ականջ իշխանը[6]։ Իսկ ինչպես հայտնի է, Փոքր եկեղեցին, ըստ արևմտյան դռան ճակատակալի շինարարական արձանագրության, կառուցել է Մակարավանքի մեզ հայտնի առաջին առաջնորդ Յոհանէսը ՈԽԷ (1198) թվականին[7]։

Ինչպես նշել ենք, Մորո ձորո վանքի պատմության միակ վկաները նրա պատերի վրա փորագրված հիշատակագրություններն են, որոնք հասնում են մինչև 13-րդ դարի առաջին կեսերը, որից հետո վանքի հետագա կյանքի մասին տեղեկություններ չեն պահպանվել։ Պետք է ենթադրել, որ շուտով վրա հասած մոնղոլական ավերիչ արշավանքների և դաժան հարկահանության հետևանքով վանքը զրկվել է ձեռք բերած արտոնություններից, քայքայվել և, կորցնելով իր առաջնակարգ վիճակը Մահկանաբերդ գավառում, հետագա դարերում շարունակել է իր գոյությունը իբրև գյուղական սովորական եկեղեցի, որպիսին նրան տեսնում ենք 19-րդ դարավերջին։

Մորո ձորո վանքի փոխարեն հետագայում Ամիր Քրդի հետնորդների տիրապետության ժամանակաշրջանում կառուցվում են նոր հոգևոր ու մշակութային կենտրոններ և ընդարձակվում հները։ Այս տեսակետից առանձնապես բեղմնավոր են աթաբեկ ամիրսպասալար Սադուն Բ-ի և նրա որդի Խութլուբուղայի իշխանության տարիները (13-րդ դարի երկրորդ կեսերը), երբ ծավալվում է Մակարա, Առաքելոց, Կիրանց և ուրիշ վանական կոմպլեքսների ընդարձակման աշխատանքները և կառուցվում ու բարձր զարգացման է հասնում հռչակավոր Առաքելի հիմնադրած Դեղձնուտի վանքը[8]։

---

[5] Գ. Սարգսյան, Մակարավանք, «Էջմիածին», 1954 թ., № 3, էջ 19։

[6] Այդ նորահայտ վիմարձանագրությունների հրատարակությունը տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ VI, էջ 158, 195։—Խմբ.։

[7] Գ. Սարգսյան, Մակարավանք, «Էջմիածին», 1954 թ., № 5, էջ 52։

[8] Գ. Սարգսյան, Դեղձնուտի վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1953 թ., № 4, էջ 33—43։

Հոդվածի շարունակության մեջ տրված է Մորո ձորո վանքի 13 վիմարձանագրության վերծանությունն ու քննությունը։ Հետագայում այդ բնագրերն իրենց ծանոթագրություններով Ս. Ավագյանը զետեղել ու վերահրատարակել է «Դիվան հայ վիմագրության» VI պրակում (էջ 132—145)։—Խմբ.։

ԱԹԱԲԵԿ ԻՎԱՆԵԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔՈՒՄ*

Վրաց և հայոց պատմության նշանավոր գործիչներ ամիրսպասալար Զաքարիայի և նրա եղբայր աթաբեկ Իվանեի գործունեությունն արտացոլող բազմաթիվ վիմական հիշատակություններ են պահպանվել, որոնք փորագրված են պատմական Հայաստանի ամբողջ տերիտորիայում սփռված կանգուն կամ կիսավեր ճարտարապետական հուշարձանների որմերի վրա։

Այդ «քարեղեն մատյանները» անցյալ տասնամյակներում հիմնականում հայտնաբերվել, ընդօրինակվել ու առավել կամ պակաս հարազատությամբ հրապարակվել են և իբրև պատմագիտական սկզբնաղբյուրներ լայնորեն օգտագործվում են հայագիտական տարբեր բնույթի աշխատություններում։

Քննության առարկա արձանագրությունը առաջին անգամ է ներկայացվում բանասիրությանը և զգալի հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն Զաքարյանների տոհմի, այլև Մորո ձորո վանքի պատմության մի քանի հարցեր լուսաբանելու համար։

Ներկա արձանագրության, ինչպես և Մորո ձորո վանքի ամբողջ վիմագրության արժեքը մեծանում է նաև նրանով, որ հյուսիսային Հայաստանի Կայեն և Մահկանաբերդ գավառների հնագույն և նշանավոր այս հոգևոր կենտրոնի մասին մատենագրական աղբյուրներում և վիմագրական հուշարձաններում տեղեկություններ չեն պահպանվել, ուստի և հուշարձանի պատմական կյանքի միակ վկաները մնում են նրա պատերին փորագրված հիշատակարանները։

Վերծանվող արձանագրությունը փորագրված է եղել Մորո ձորո վանքի Աստվածածին եկեղեցու արևելյան խաչթևի կիսակլոր թաղի կենտրոնական մասում, յոթ սրբատաշ քարերի վրա, որոնք շարված են եղել բեմի քանդակազարդ գոտուց մեկ շարք վերև։ Ոչ հեռավոր անցյալում այդ խաչթևի խարխլման հետևանքով թաղի սրբատաշ քարերի մի զգալի մասը խախտվել, թափվել է ներքև, որով մեծապես խաթարվել է արձանագրությունը, քանի որ արձանագրված յոթ քարերից թաղի շարվածքում քիչ թե շատ անաղարտ վիճակով մնացել են միայն առաջին երեքը և վերջին յոթերորդը, իսկ միջամասի 4-րդ, 5-րդ և 6-րդ քարերը ընկել, անհետացել են։

---

* «Լրաբեր հասարակական գիտությունների», 1967, № 10։

Պահպանված չորս քարերի տառաշարքերով հնարավոր չէր գոնե մոտավոր ճշտությամբ վերականգնել ամբողջ բնագիրը, քանի որ այդ տառաշարքերից հազիվ բառանջատման են ենթարկվում վրաց թագավորի, Զաքարյան իշխանների անունները և հիմնականում անեծքի բանաձևին վերաբերող առանձին բառեր, որոնք միայն մասամբ են շարահյուսական կապակցության ենթարկվում, ուստի և քիչ են օգնում պակասող երեք քարերի բնագրերի վերականգնմանը և արձանագրության բովանդակության ամբողջացմանը։

Հուշարձանի նախորդ տեղագրողները, իհարկե, նկատել են այս արձանագրությունը, սակայն, վերականգնման դժվարությունները հաշվի առնելով, չեն զբաղվել նրա ընդօրինակմամբ կամ վերծանությամբ, այլ բավարարվել են բովանդակության մասին ընդհանուր, ենթադրական դիտողություններով, որոնց համար հավանաբար հիմք է ծառայել միայն առաջին երեք քարերի տառաշարքերի ընթերցումը[1]։

Հուշարձանների պահպանության կոմիտեի արշավախմբային նյութերից տեղեկանում ենք, որ 1938 թվականին, արշավախմբի այցելության ժամանակ արձանագրության յոթ քարերից պակասելիս է եղել միայն մեկը[2] (ինչպես հետագայում կտեսնենք՝ չորրորդը), սակայն, չնայած դրան, այդ նյութերում չենք գտնում բնագրի պահպանված հատվածների ընդօրինակությունը, կամ ամբողջ արձանագրության բովանդակության վերականգնման որևէ փորձ, թեև, դատելով հնագիտական արշավախմբի ծրագրից, վիմական արձանագրությունների հավաքումն ու վերծանությունը այդ ծրագրի անհրաժեշտ մասն են կազմել, ուստի և սպասելի էր դրանց գոնե մի մասի առկայությունը հուշարձանների նկարագրություններում։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրական ամենամյա արշավախմբի ջանքերով 1964 թ. մանրազնին կերպով ընդօրինակվեցին և համակողմանի նկարագրվեցին Մորո ձորո վանքի բոլոր մեծ ու փոքր արձանագրությունները, որոնք մինչև այդ մեծ մասամբ անհայտ էին գիտությանը և արժեքավոր բազմաթիվ տվյալներ են հաղորդում հոգևոր կենտրոնի և ամբողջ գավառի պատմության վերաբերյալ։

[1] Հ. Եղիազարյան, Իջևանի շրջանի պատմական հուշարձանները (Ուղեցույց), Երևան, 1947, էջ 19։

Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 342։

[2] «Վերանորոգման արձանագրության կենտրոնից մի քար ընկել է...»,—ասված է 1938 թ. Իջևանի շրջանի հնագիտական արշավախմբի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների օրագրերում։

Արշավախումբը Աստվածածին եկեղեցու ներսը թափված ձևավոր քարաբեկորների մեջ հայտնաբերեց նույն տառատեսակներով արձանագրված, ակնհայտորեն թաղի երեսպատման երկու սրբատաշ քարեր, որոնց պատկանելությունը հուշարձանի բնագրերից որևէ մեկին նախապես մնում էր անորոշ, քանի որ արևելյան խաչթևի թաղի վրա վեց տողանի արձանագրություններ չկային, որոնք տողերի քանակով համապատասխանեին հայտնաբերված քարերի տառաշարքերին։

Միայն հուշարձանի արևելյան թաղի բոլոր տառաշարքերի բառանջատումից և տնային մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո հայտնի դարձավ, որ նորագյուտ բեկորների տառաշարքերը մեկը մյուսի շարունակությունն են կազմում և այդ բեկորները քննարկվող արձանագրության պակասող հինգերորդ և վեցերորդ քարերն են։ Պարզվեց նաև, որ արձանագրությունը յոթ տողանի է և յոթերորդ տողը փորագրված է ոչ թե թաղի երկրորդ շարքի վրա, ինչպես նախորդ վեց տողերը, այլ՝ բեմի ձևավոր քիվից վերև, առաջին շարքի նույնպես յոթ քարերի վրա, ընդ որում այդ քարերը մնացել են իրենց տեղերում անխախտ և նրանց վրայի տառաձևերը ոչ մի չափով չեն տուժել։

Այսպիսով, վերծանվող արձանագրության յոթ քարերից ներկայումս պակասում է միայն մեկը՝ չորրորդը, ուստի ավելի են մեծանում այս կարևոր բնագրի վերականգնման հնարավորությունները, մանավանդ որ պահպանված հատվածների տառաձևերը անեղծ են մնացել, պարզ են և առանձին-առանձին ընթերցվում, վերծանվում են հավաստիորեն։ Իհարկե, չորրորդ քարի պակասը զգալի չափով խանգարում է բնագրի լիակատար վերծանությանը, քանի որ այդ քարի վրա մեր հաշվումներով փորագրված է եղել միջին թվով 9—10-ական գիր պարունակող վեց շարք, որոնց վերստեղծումը զգալի դժվարությունների հետ է կապված։ Բացի դրանից, թաղի շարվածքում պահպանված երրորդ քարի տողավերջի և վերջին քարի տողասկզբի մասերը նույնպես, մոտ 2—3 տառատեղ ջարդվել են, գրերը վնասվել, որի հետևանքով այդ տառաշարքերը դժվար են կապակցվում հարևան քարերի համապատասխան շարքերի հետ։

Արձանագրության ամբողջությունը վերականգնելու համար անհրաժեշտ էր նրա առանձին հատվածների պահպանված տառաշարքերը իրար մոտեցնել, հարադրել, կատարել նախնական հնարավոր բառանջատում, որը և հնարավորություն կտար վերստեղծել անհետացած՝ չորրորդ քարի բնագիրը, ինչպես նաև երրորդ, յոթերորդ քարերի եղծված գրերը և այսպիսով շարահյուսական կապ գտնել բնագրի տարբեր հատվածների միջև։

Արդ, ինչպես ենք վերականգնում պակասող չորրորդ քարի վեց տառաշարքերը։ Առաջին շարքում առաջին երեք քարերի բնագիրն ընդհատվում է **ի թվ[ին] հ[այոց] :ոկբ: թագաւորութե[ա]նն Գիւրգէ մեք ո[ր…** գրերով, իսկ շարունակության վրա, պակասող քարին հաջորդող հինգերորդ քարի նույն շարքում ընթերցվում է՝ **սալար Սարգսի աթ…**։ Ակնհայտ է, որ առաջին կապակցության մեջ **մեք** ենթակա-բացահայտյալին պետք է հետևեր նրա բացահայտիչը, այսինքն պակասող մասում փորագրված պետք է լիներ արձանագրության այս պարբերության հեղինակների՝ ամիրսպասալար Սարգսի որդիների անունները, որոնք հիշատակված են հաջորդ տողերում։ Ուստի չորրորդ քարի առաջին տողի բնագիրը կարելի է հավաստի կերպով վերականգնել՝… **մեք՝ ո[րդիք ամիրսպա]…**, որը հեշտությամբ կապակցվում է հաջորդ՝ հինգերորդ քարի նույն շարքի հետ՝ **ո[րդիք ամիրսպա]սալար Սարգսի աթ…**, իսկ շարունակությունը փորագրված է վեցերորդ և յոթերորդ քարերի վրա, որոնց տառաձևերը վերծանվում և կապակցվում են դյուրությամբ։

Երկրորդ շարքում առաջին հատվածի տառաշարքն ընդհատվում է՝ **…առաք զերկիրս Հայոց ի յանաւրէնաց և շինե…** կապակցությամբ, որի շարունակության ուղղությամբ, հինգերորդ քարի նույն շարքում ընթերցվում է՝ **…որ վաղուց հետէ աւ…**, հասկանալի է, որ պակասող քարի վրա պետք է լիներ շինել բայի անցյալ կատարյալ ժամանակի առաջին դեմքի ձևը, նույն նախադասության առաջին ստորոգյալի (**առաք**) հետևությամբ հոգնակի թվով, ուստի բնական է այդ տողում վերականգնել **շինեցաք** ստորոգյալը, և քանի որ այս ստորոգյալին հաջորդում է **որ վաղուց հետէ աւարել կայր** ստորադաս որոշիչ նախադասությունը, ուստի հեշտ է համոզվել, որ գլխավոր նախադասության մեջ պակասում է «շինեցաք» ստորոգյալի ուղիղ խնդիրը, այսինքն մնում է պարզել, թե ինչը շինեցաք, և որովհետև խոսքը Աստվածածին եկեղեցին շինելու մասին է, ուստի հավանական ենք համարում այդ հատվածում իբրև «շինեցաք» ստորոգյալի ուղիղ խնդիր վերականգնել՝ **զուխտս** կամ **զեկեղեցիս** բառերը, սակայն տվյալ իրադրության մեջ գրերի քանակով ավելի հարմար է **զուխտս**, քանի որ ինչպես պարզվում է չորրորդ քարի մեր վերականգնած տառաձևերի հաշվումից, այդ քարի յուրաքանչյուր տողում միջին հաշվով փորագրված են եղել 9—10 գրեր, որոնցից երեքը այս դեպքում վերաբերվում են «շինեցաք» բային, իբրև նրա երկրորդ եզրը (**ցաք**)։ Ի դեպ՝ Մորո ձորո վանքի վիմագրության մեջ ամենուրեք հուշարձանը հիշատակվում է «վանք» կամ «եկեղեցի» անուններով (**…առի զվանքս, ետու զվանքս հաւրն Յովանիսի, շինեցաք**

Իւանէ զվանքս Մորո ձորո և այլն)։ Այսպիսով, երկրորդ տողը մեր կարծիքով ունեցել է այս տառաշարքը՝ **առաք զերկիրս Հայոց ի յանաւրէնաց և շինե [ցաք զուխտս] որ վաղուց հետէ աւարե[ա]լ կայր**, իսկ շարունակությունը ըստ բնագրի՝ վեցերորդ և յոթերորդ քարերի վրա։ Բնագրում ստորոգյալը պարզ կարդացվում է՝ **աւարել կայր**, որտեղ անցյալ դերբայի (աւերեալ) ուղղագրության մեջ փորագրողը երկու սխալ է կատարել՝ **ա**, **ե** գրերի շփոթումը, որը հետևանք է ա հնչյունի առնմանության (աւարել փխ. աւերել) և եալ վերջավորության ա-գրի բացթողումը, հավանաբար, տեղական արտասանության ազդեցությամբ։

Երրորդ շարքի սկզբում 5—6 տառատեղ քայքայվել, եղծվել է և գրերը չեն ջոկվում. այստեղ պետք է փորագրված լիներ նոր, ինքնուրույն նախադասության սկիզբը, որովհետև նախորդ նախադասությունն ավարտված է և եղծված հատվածին նախորդում է «արդ» շաղկապը։ Զաքարյան եղբայրների՝ Հաղարծնի վանքում թողած նույն բովանդակության մի այլ արձանագրության հետևությամբ հավանական ենք գտնում այստեղ վերականգնել **յորժամ** մակբայը[3]։

Նույն շարքում բնագիրն ընդհատվում է **…սիրեաց զնա ա̅ծ և առ ինք տարաւ և զ…** գրերով. այստեղ միայնակ **զ** նախդիրը ոչինչ չէր կարող ասել, եթե օգնության չհասներ հինգերորդ քարի նույն տողի տառաշարքը, որը ընթերցվում է… **տմալի ես աթա…**, որտեղ **տմալի** բեկորը միայն և միայն «տրտմալի» բառի երկրորդ եզրը կարող է լինել, ուստի ուրիշ արձանագրությունների համանմանությամբ, այլև նկատի առնելով, որ վերականգնվող նախադասությունը հաջորդում է Զաքարիայի մահվան մասին հաղորդմանը՝ հավանական ենք համարում պակասող հատվածում վերականգնել՝ **սիրեաց զնա ա̅ծ և առ ինք տարաւ և զ[սուգ եթող տր] տմալի ես աթա.—**, իսկ շարունակությունը պահպանվել է վեցերորդ և յոթերորդ քարերի վրա և վերծանվում է նույն հրապարակման մեջ։

Չորրորդ տողի առաջին հատվածի տառաշարքն է՝**…վ[ա]ս[ն] յերկարկենդանութեան Աւագին և** շ…, շարունակության վրա, անտարակույս, պետք է վերականգնել **Շահնշահին** անունը, քանի որ հայկական արձանագրություններում սովորաբար արևշատության և երկարկենդանության մաղթանքներով Զաքարիայի և Իվանեի կենդանության օրոք հիշատակվում են նրանց դեռահաս որդիները՝ Շահնշահը և Ավագը։ Սակայն **Շահնշահին** անունը վերականգնելուց հետո նույն տողում ազատ է մնում ևս մի քանի տառատեղ, որից հետո, հինգերորդ քարի նույն

[3] Ս. Ջալալյանց, *Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան*, Տփխիս, 1842, էջ 131։

շարքում ունենք՝... ծ ի վերա սպասաւորաց... և հաղորդվում է կատարվելիք պատարագների մասին։ Նկատի ունենալով, որ վերականգնվող հատվածին հետևում է հատուցման բանաձևի նախադասությունը, այլև, հիմք ընդունելով հինգերորդ քարի բնագիրը, մենք հավանական ենք համարում պակասող մասի հետևյալ տառաշարքը՝ ...Աւագին և Շ[աճնշահին և եղի լու]ծ ի վերա սպասաւորաց...: Հաղբատավանքի, Հառիճավանքի և այլ հուշարձանների արձանագրություններից հայտնի է, որ Զաքարյան իշխանները իրենք էին սահմանում իրենց կատարած բարեգործությունների դիմաց տրվելիք պատարագաժամերը՝ այդ մասին լուծ դնելով վանքի սպասավորների վրա[4]։

Հինգերորդ տողում արձանագրությունն ընդհատվում է՝ ժամն իմ հարազատին կատարե... գրերով. այստեղ վերջնահանգ ն-ի (կամ լ-ի) վերականգնումով ամբողջանում է ստորոգյալը և նախադասությունը ղառնում ավարտուն, ուստի շարունակության վրա սպասելի էր կամ հաջորդ, նոր նախադասության սկիզբը և կամ նույն նախադասության մինքը պարզաբանող լրացումներից մեկը։ Խնդրի լուծմանն օգնում է հինգերորդ քարի նույն տողի տառաշարքը, որը պարզ կարդացվում է՝ ...առն Քի կատարի..., որտեղ քի՝ Քրիստոս անվան սեռական հոլովի հապավված ձևն է, իսկ առն՝ գալուստն բառի երկրորդ եզրը։ Ուրեմն պակասող քարի հինգերորդ տառաշարքը կարելի է վերականգնել՝ ...կատարե[ն, մինչև գալու]ստն Քի, որպիսի կապակցությունը շատ սովորական է հայկական վիմագրության մեջ և ցույց է տալիս, թե մինչև երբ պետք է կատարվեն նվիրատուներին խոստացած պատարագաժամերը։

Վերջին, խաթարված տառաշարքն ընդհատվում է՝ որ խափանել ջանա մեր ազգի մեղացն պարտա... գրերով. այստեղ եղծվել է անեծքի հանրահայտ ձևակերպման ստորոգյալը, որը հեշտ է վերականգնել՝ պարտա[կան է]: Անեծքի նախադասությունն այստեղ ավարտվում է և շարունակության վրա պետք է փորագրված լիներ նոր նախադասության սկիզբը, որը շարունակվում է հաջորդ հինգերորդ քարի վրա գեցաւ սր ածած... գրերով, որտեղ գեցաւ՝ կրավորական բայի անց. կատարյալ ժամանակի եզակի երրորդ դեմքի երկրորդ եզրն է։ Նույն բայի առաջին եզրը մեր կարծիքով պետք է վերականգնել նորո, որով ամբողջանում է ոչ միայն խաթարված բայը՝ նորոգեցաւ, այլև պակասող չորրորդ քարի վեցերորդ տառաշարքը՝ պարտա[կան է: Նորո]գեցաւ սր

4 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 168։ Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 161։

ածածին։ Նորոգեցաւ ստորոգյալի վերականգնման ճշտությունը հաստատվում է նաև արձանագրության երրորդ տողով, որտեղ Իվանեն արդեն հաղորդել է նույն եկեղեցու նորոգման մասին (...ետու նորոգել զսբ ածածին):

Այսպիսով, պահպանված վեց արձանագրված քարերի և պակասող չորրորդ քարի մեր վերականգնած տառաշարքերը դասավորելով այնպես, ինչպես նրանք տեղավորված են եղել թաղի շարվածքում մինչև նրա փլուզումը, ստանում ենք քննության ենթակա արձանագրության հետևյալ վերծանությունը.



Արձանագրության 5-րդ և 6-րդ քարերը

1. ԹՎ[ԻՆ] ։ՈԿԲ։ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵ[Ա]ՆՆ ԳԻԱՒՐԳԷ, ՄԵՔ՝ Ո[ՐԴԻՔ ԱՄԻՐՍՊԱ]ՍԱԼԱՐ ՍԱՐԳՍԻ՝ ԱԹԱ[ԲԱԿ] ԻՒԱՆԷ ԵՒ [ԱՄ]ԻՐՍՊԱՍԱԼԱՐ
2. ԶԱՔԱՐԷ ԱՌԱՔ ԶԵՐԿԻՐՍ ՀԱՅՈՑ Ի ՅԱՆԱՒՐԷՆԱՑ ԵՒ ՇԻՆԵ[ՑԱՔ ԶՈՒԽՏՍ], ՈՐ ՎԱՂՈՒՑ ՀԵՏԷ ԱՒԱՐԵ[Ա]Լ ԿԱՅՐ ԶԱՒՐ[ՈՒ]Թ[ԵԱՄԲՆ] ԱՅ։ ԱՐԴ
3. [ՅՈՐԺԱՄ] ՍԻՐԵԱՑ ԶՆԱ ԱԾ ԵՒ ԱՌ ԻՆՔ ՏԱՐԱՒ ԵՒ Զ[ՍՈՒԳ ԵԹՈՂ ՏՐ]ՏՄԱԼԻ, ԵՍ՝ ԱԹԱԲԱԿ ԻՒԱՆԷ ԵՏ[ՈՒ] ՆՈՐՈԳԵԼ ԶՍԲ
4. ԱԾԱԾԻՆՍ Վ[Ա]Ս[Ն] ՅԵՐԿԱՐԿԵՆԴԱՆՈՒԹԵ[ԱՆ] ԱՒԱԳԻՆ ԵՒ Շ[ԱՀՆՇԱՀԻՆ ԵՒ ԵԴԻ ԼՈՒ]Ծ Ի ՎԵՐԱ ՍՊԱՍԱՒՈՐԱՑ ՍՈՐԱ ԶԱՒ[ՈՒՐ] ՄԵԾԻ ԶԱՏԿԻՆ
5. Ա ԶՃՐԱԳԼՈՒՅԻՆ ԺԱՄՆ ԻՄ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿԱՏԱՐԵ[Ն, ՄԻՆՉԵՒ ԳԱԼՈՒ]ՍՏՆ ՔԻ։ ԿԱՏԱՐԻՉՔ ՀՐԱՄԱՆԱՑ [ՄԵ]ՐՈՑ ԱՒՐՀՆԵՍՑԻՆ
6. [ԵՒ] ՈՐ ԽԱՓԱՆԵԼ ՋԱՆԱ՝ ՄԵՐ ԱԶԳԻ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱ[ԿԱՆ Է։ ՆՈՐՈ]ԳԵՑԱՒ ՍԲ ԱԾԱԾԻՆՍ ՅԱՌԱՋՆ[Ո]ՐԴՈՒԹԵ[ԱՆ Հ]ԱՒՐ
7. ԵՒԱԳՐԻ ՀԵՋԻ ԵՒ ԽՈՆԱՐՀԻ ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻ ԶՆԱ ԱՌԱՋՆՈՐԴ ՅԱԶԳԷ ՅԱ[Զ]Գ ՄԻՆՉԵՒ ՅԱՒԻՏԵԱՆ։

Բնագիրը փորագրված է ՈԿԲ=1213 թ., վրաց Գեորգի Լաշա թագավորի գահակալության ժամանակ, հավանաբար ամիրսպասալար Զաքարիայի մահից (1212 թ.) անմիջապես հետո։ Այստեղ, ինչպես և Հաղարծնի վանքի հանրահայտ արձանագրության մեջ, ներածական մասը շարադրված է երկու եղբայրների անունից, սակայն ակնհայտ է, որ երկու դեպքում էլ նրանց հեղինակը կրտսեր եղբայրն է, աթաբեկ Իվանեն։ Բնագրի այսպիսի կառուցվածքը ամենից ավելի էր համապատասխանում այն նպատակներին, որոնց ձգտում էր հասնել Իվանեն՝ փորագրելով այս արձանագրությունները. գալիք սերունդներին ավանդելու զորավար Զաքարիայի հերոսական գործերի տարեգրությունը, հուշարձան կանգնեցնելու նրա թարմ գերեզմանին։ Եվ հիրավի, այդ յուրատեսակ դամբանականներում Իվանեն հանրագումարի է բերում Զաքարյան եղբայրների քանամյա ազատագրական արշավանքները և արժանին հատուցում իր «թագ պարծանաց գլխո» Զաքարիայի ռազմավարական մտքին ու արիությանը. այն տարբերությամբ միայն, որ Հաղարծնի արձանագրության մեջ մեկ առ մեկ թվարկվում են օտար նվաճողներից ազատված բոլոր գավառները, քաղաքներն ու ամրոցները, մինչդեռ ներկա բնագրում ընդհանուր ձևով է նշվում «անօրեններից» հայրենի երկիրը ազատելու մասին (...առաւ զերկիրս Հայոց ի յանաւրէնաց...)։

Արձանագրության երկրորդ մասում Իվանեն հաղորդում է ամիրսպասալար Զաքարիայի մահվան մասին (...սիրեաց զնա ած և առ ինք տարաւ...) *և նրա հիշատակը հավերժացնելու նպատակով նորոգել է տալիս Աստվածածին եկեղեցին* (...ետու նորոգել զսբ ածածինս...)։ *Բնագրի այս հատվածը կարծես թե անհամաձայն է երկրորդ տողի բո-*











վանդակությանը, որտեղ Իվանեն, հավանաբար նույն եկեղեցին նկատի ունենալով, հայտնում է՝ ...շինեցաք զուխտս (կամ զեկեղեցիս, զվանքս), որ վաղուց հետէ աւերե[ա]լ կայր...: Այստեղ եզակի ստորոգյալը (աւերել կայր), եթե այն փորագրողի սխալը չհամարենք, գալիս է հաստատելու, որ շինեցաք զուխտս վերաբերում է Մորո ձորո վանքին*: Սակայն վերստին դառնանք բնագրին, որտեղ պարզ փորագրված է աւերե[ա]լ կայր, ուրեմն և խոսքը միայն Մորո ձորո վանքի մասին է։ Արդ, արձանագրության 2-րդ տողում Իվանեն հայտնում է վաղուց ավերված վանքը շինելու, իսկ երրորդ տողում՝ նույն վանքը կամ եկեղեցին նորոգելու մասին, ըստ որում, դրանց ժամանակների տարբերությունը մի քանի տարուց չի անցնում։ Իհարկե, հնարավոր է, որ Իվանեի կառուցած եկեղեցին այդքան շուտ ավերվեր բնական աղետների հետևանքով, ասենք երկրաշարժից կամ ջրհեղեղից, սակայն այդպիսի դեպքերում սովորաբար բնագրում գոնե հարևանցիորեն նշվում են ավերման պատճառները, մինչդեռ ներկա դեպքում այդ մասին որևէ հիշատակություն չկա։

Այս հարցի պարզաբանմանը նպաստում է նույն եկեղեցու թմբուկի հարավահայաց երեսին, արտաքուստ փորագրված մի ընդարձակ արձանագրություն, որի հեղինակն է ամիրսպասալար Սարգիս Մեծի դուստրը, Զաքարիայի և Իվանեի քույր Նանան։ Թեև արձանագրության առաջին երկու տասնաշարքերը խիստ հողմահարված են, եղծված և դժվարությամբ են վերծանվում, այսուհանդերձ նրա հիմնական բովանդակությունը հավաստի կերպով վերականգնվում է. պարզվում է, որ Նանան միաբանել է Մորո ձորո վանքին և «կամակից ու օգնական» եղել Իվանեին՝ եկեղեցու շինության գործում։ Քանի որ Նանայի այս արձանագրությունը ցայժմ անծանոթ է գիտությանը, անհրաժեշտ ենք համարում մեջ բերել բնագրի մեզ հետաքրքրող հատվածը սեփական վերծանությամբ. ի թուի Ո[Խ]Զ... շինեաց Իւանէ զվանքս Մորո ձորո [և ե]ս Նանա կամակից և աւգնական եղէ Ա̅ծածնիս...:

Եթե արձանագրության թվագիրը՝ ՈԽԶ ճիշտ ենք կարդացել[5], ապա

[5] Թվագրի հարյուրավորը՝ Ո և միավորը՝ Զ պարզ երևում են և տարընթերցման տեղիք չեն տալիս, կասկածելի է տասնավորը՝ Խ-ն, որը հողմահարված է, եղծված և ավելի նման Ի-գրին, սակայն ՈԻԶ ընթերցումը բացառվում է մի շարք պատճառներով, որոնց շարադրանքը դուրս է մեր նպատակներից։

* Այս հատվածում հեղինակի շարադրանքը վերանայված է—Խմբ.:

Իվանեն Մորո ձորո վանքի Աստվածածին եկեղեցին շինել է 1197 թ., ուստի հեշտ է համոզվել, որ ՈԿԲ (1213) թ. փորագրելով շինեցաք զվանքս, աթաբեկ Իվանեն նկատի ուներ հենց 1197 թ. այդ շինությունը։ Եվ պատահական չէ, որ երկու արձանագրության մեջ էլ այդ իրողության համար գործածված են «շինել» բայի անցյալ կատարյալ ժամանակի ձևերը՝ շինեաց, շինեցաք, մինչդեռ Իվանեի արձանագրության երկրորդ մասում, ինչպես տեսանք, խոսվում է եկեղեցին նորոգելու մասին (...ետու նորոգել): Այսպիսով, Նանայի արձանագրության մեր վերծանությունից պարզվում է. ա. Իվանեն Մորո ձորո վանքը շինել է ՈԽԶ=1197 թ. (...շինեաց Իւանէ զվանքս Մորո ձորո...), բ. Իվանեի 1213 թ. արձանագրության շինեցաք զվանքս վերաբերում է հենց այս եկեղեցու շինությանը։

Սակայն Մորո ձորո վանքի հյուսիսային խաչթևի թաղին փորագրված երկու արձանագրություններ գալիս են համոզելու, որ վերոբերյալ բնագրերի շինեաց, շինեցաք բայաձևերը տվյալ շրջապատում արտահայտում են ոչ թե եկեղեցին ի նորո շինելու, կանգնելու, կառուցելու, այլ՝ վերանորոգելու, վերակառուցելու, «վերստին շինելու» իմաստը։ «Շինել» բայի բառիմաստի նեղացման այս իրողությունը սովորական երևույթ է հայ վիմագրական հուշարձաններում և դիտված է վիմագրագետների կողմից[6]։

Նշված երկու բնագրերում էլ հաղորդվում է միևնույն իրողությունը՝ վրաց Գեորգի Գ թագավորի արտոնագիրը՝ Մորո ձորո վանքը «յամենայն հարկէ» ազատելու և Հովհաննես վանահոր տնօրինությանը հանձնելու մասին, այն տարբերությամբ միայն, որ մի դեպքում թագավորական «գիր ազատությանը» շարադրվում է Կայենո և Մահկանաբերդի տեր, Թիֆլիսի ամիրա և վանքի հովանավոր Քուրդ Արծրունու անունից, իսկ երկրորդ դեպքում ինքը՝ թագավորաց թագավոր Գեորգի Գ-ն է հրապարակում արտոնագիրը՝ ըստ երևույթին նպատակ ունենալով արքայական հրովարտակի նշանակություն տալ Ամիր Քուրդ Արծրունու «հոգացողությամբ» տրված «գիր ազատությանը»։

Ամիր Քրդի արձանագրությունը անծանոթ է բանասիրությանը, իսկ Գեորգի թագավորինը հայտնի է միայն Մ. Բարխուտարյանի սխալաշատ ընթերցումով[7], ուստի ավելորդ չենք համարում մեջ բերել այդ բնագրե-

[6] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 40։

[7] Մ. Բարխուտարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 342

րի՝ տվյալ հարցի հետ առնչվող հատվածները մեր վերծանությամբ.

Ա) Ամիր Քրդի արձանագրությունը Աստվածածին եկեղեցու հյուսիսային խաչթևի թաղի արևմտյան մասում։

Կամաւն այ և ողորմութ[եամ]բ թագաւորին Գիւրգէ, ես՝ Ամիր Քուրդս առի գիր ազատութե[ան] ի թագ[աւորէ] սբ Ածածնիս Մորո ձոր[ո] ճաւրն Յովանիսի... ապա շարադրվում է հատուցումը և անեծքի ձևակերպումը։

Բ) Գեորգի Գ թագավորի արձանագրությունը նույն թաղի արևելյան մասում, նախորդի շարունակության վրա։

Անուամբ ամենակալին այ, ես՝ Գիւրգի թագաւորաց թագ[աւոր] ետու զՄորո ձորո վանէս ճաւրն Յովանիսի և արարի ազատ յամենայն ճարկէ, Ամիր Քրդին ճոգցողութ[եամ]բ..., հետևում է հատուցման և անեծքի բանաձևի շարադրանքը։ Թեև այս արձանագրությունները անթվագիր են, սակայն նրանց ժամանակը հնարավոր է լինում մի քանի տարվա ճշտությամբ որոշել վրաց Գեորգի Գ թագավորի և Ամիր Քուրդ Արծրունու ժամանակագրական տվյալներով. վրաց պատմությունից հայտնի է, որ Գեորգի Գ-ն գահակալել է 1156—1184 թթ.[8]։ Նույն ժամանակներում և ավելի ուշ էր գործում նաև Թիֆլիսի ամիրա, Կայեն և Մահկանաբերդ գավառների մեծ իշխան Քուրդ Արծրունին[9]։ Ուրեմն Գեորգի Գ-ի արտոնագրերը պետք է փորագրված լինեն մինչև 1184 թ.։ Մի շարք պատճառներով, որոնց մանրամասն շարադրանքը մեր նպատակից դուրս է, հակամետ ենք կարծելու, որ այդ բնագրերը փորագրվել են 1177—78 թթ., այսինքն թագաժառանգ Դեմնայի կամ Օրբելյանների խռովությունը դադարեցնելուց և վրաց եկեղեցու իմունիտետը վերականգնելուց անմիջապես հետո[10]։

Քուրդ Արծրունու և Գեորգի Գ-ի արձանագրությունները անհերքելի ապացույց են, որ դեռևս 1177—78 թ., երբ փորագրվում էին այդ բնագրերը, Մորո ձորո վանքը իբրև այս շրջանի նշանավոր հոգևոր կենտրոն գոյություն ուներ և հավանաբար իր ազդեցիկ դիրքի շնորհիվ էր, որ արտոնություններ էր ստանում վրաց «թագավորաց թագավորից»։ Այստեղից միանգամայն ակնհայտ է, որ Նանայի արձանագրության շինեաց Իվանէ զվանէս Մորո ձորո նախադասությունը պետք է մեկնաբանել այն իմաստով, որ Իվանեն 1197 թ. ոչ թե ամայի տեղում, «ի կորդոյ» հիմնադրել ու կառուցել է Մորո ձորո վանքը, այլ՝ նորոգել, վերակառուցել կամ «վերստին շինել է» վաղուց գոյություն ունեցող շինվածքը։

Եվ հիրավի, Աստվածածին եկեղեցու ներքին տարածությունների և արտաքին կերպարի ամենաթռուցիկ ակնարկն անգամ մեզ բերում է այն համոզման, որ այստեղ առկա են ճարտարապետական ձևերի մի շարք հանգույցներ ու մանրամասներ (շեշտված պայտաձև կամարները, թմբուկի լուսամուտների պսակները, բեմի քանդակազարդ գոտու մոտիվները և այլն), որոնք անառարկելիորեն գալիս են պատկառելի հնությունից և իրենց զուգահեռներն են գտնում 7-րդ դարի հայ դասական ճարտարապետության կոթողներում։ Բացի դրանից, եկեղեցին իր պահպանված տեսքով մեզ է ներկայանում հետնադարյան հիմնովին վերանորոգումների նկատելի հետքերով, որոնք հեշտությամբ տարբերվում են նրա նախնական ձևերից։

Մորո ձորո վանքի վիմագրությունը նրա պատմության միակ աղբյուրն է և հնարավորություն է տալիս հետևելու այդ հոգևոր կենտրոնի գործունեությանը սկսած 12-րդ դարի վերջին քառորդից մինչև 13-րդ դարի առաջին տասնամյակները։ Սակայն հուշարձանի կառուցողական առանձնահատկությունների քննությունն ապացուցում է, որ վանքը հիմնադրվել ու գործել է դրանից դարեր առաջ, թերևս 7—9-րդ դարերում, թեև նրա կառուցման մոտավոր թվագրումն անգամ անհնար է համապատասխան տվյալների բացակայության պատճառով։

Աթաբեկ Իվանեի արձանագրության վերծանությունից պարզվում է, որ 1197 թվականի վերանորոգումից շատ առաջ (վաղուց ճետէ...) Մորո ձորո վանքն ավերված էր (աւարե[ա]լ կայր) հավանաբար սելջուկների ասպատակումների հետևանքով։ Ուստի պետք է ենթադրել, որ սելջուկներից Հայաստանի հյուսիսային գավառներն ազատելուց անմիջապես հետո Իվանեն ձեռնամուխ է եղել իր տիրույթների մեջ մտնող այս ավերված վանքի վերակառուցմանը, որը և ավարտել է 1197 թ., «կամակից և աւգնական» ունենալով իր քույր Նանային։ Այդ վերակառուցումից 16 տարի անց, 1213 թ. Իվանեն նորից է նորոգել տալիս եկեղեցին՝ Զաքարիայի հիշատակը հավերժացնելու նպատակով, որի համար էլ փորագրել է վերծանվող բնագիրը։

Իվանեի և Նանայի արձանագրություններից ակնհայտ է դառնում, որ Աստվածածին եկեղեցու վերանորոգման կամ «երկրորդ շինության» այս ժամանակաշրջանում Մորո ձորո վանքը իր սահմաններով այլևս Մահկանաբերդի Արծրունիների հովանավորության տակ չէր գտնվում, այլ

[8] Н. А. Бердзенишвили и др., История Грузии, Тбил., 1962, стр. 191—194.

[9] Կ. Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 204, Վարդան Վարդապետ, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 140։

Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 389—90, 402։

[10] «История Грузии», стр. 193։

անցել էր նրանց արյունակից Զաքարյան եղբայրներին՝ մտնելով Իվանեի ժառանգական տիրույթների մեջ։

Այդ պատճառով հուշարձանի հետագա տարիների վիմագրության մեջ իբրև վանքի հովանավորներ այլևս չեն հիշատակվում ոչ միայն վանքի երբեմնի «հոգացող» Ամիր Քուրդը, այլև՝ նրա իշխանական տան ականավոր հետնորդները (Սադուն Ա, Շերբարոք, Սադուն Բ, Խութլուբուղա և այլն), որոնց անունները հաճախ են հանդիպում շրջակայքի այլ հուշարձանների արձանագրություններում (Առաքելոց, Մակարա, Դեղձուտի վանքերը, Խնձորուտի, Աբոյի խաչքարերը և այլն[11]:

Հետագա տասնամյակներում Մահկանաբերդի Արծրունիները նոր հոգևոր ու մշակութային կենտրոններ են հիմնում իրենց վարչական իշխանության սահմաններում, գերազանցապես Աղստև գետի միջին հոսանքի ձախափնյա լեռնալանջերին (Մակարավանք), Կունեն և Խնձորուտ գետակների բարձրադիր ափերին (Դեղձուտի և Սամսոնի վանքերը) ու հովիտներում (Կիրանց վանք, Առաքելոց ավան-ամրոց), որոնք բարձր զարգացման են հասնում հատկապես 13-րդ դարի երկրորդ կեսերին, աթաբեկ ամիրսպասալար Սադուն Բ-ի և նրա որդի Խութլուբուղայի իշխանության տարիներին։

Ուշագրավ է Իվանեի արձանագրության վերջաբանը. անեծքի ձևակերպմանը հաջորդում է մի բարդ նախադասություն, որը առաջին հայացքից լոկ ժամանակագրական նշանակություն կարող է ունենալ, քանի որ նրա առաջին նախադասությունը իրոք մատնանշում է Աստվածածին եկեղեցու նորոգման ժամանակը՝ **նորոգեցաւ սբ Ածածինս յառաջնորդութե[ան] հաւր Եւագրի...** Սակայն նույն նախադասության երկրորդ մասում Իվանեն անսպասելիորեն ընդհատում է ժամանակագրությունը և թելադրում իր իշխանական կամքը՝ «հեզ և խոնարհ» Եվագրին «յազգէ ցազգ» Մորո վանքի առաջնորդ հաստատելու մասին՝ **Եւ հաստատեցի զնա առաջնորդ յազգէ ցա[զ]գ մինչև յաւիտեան:**

Հոգևոր հիերարխիայի բարձր աստիճանների ժառանգական իրավունքը հանրահայտ իրողություն է միջին դարերում և դրա ամենացայտուն օրինակը Անիի կամ Շիրակի եպիսկոպոսական աթոռն է, որը մեկ դարից ավելի հաջորդաբար զբաղեցնում էին Պահլավունի իշխանական տան հոգևոր հայրերը[12]։ Պահլավունիների հոգևոր իշխանության ժառանգական իրավունքը վկայված է ոչ միայն մատենագրական աղբյուրներում, այլև Շիրակի ու Անիի բազմաթիվ վիմական հիշատակություններում, որոնցից առավել բնորոշը Պահլավունի Աբուղամրի որդի Գրիգորի երկարաշունչ արձանագրությունն է Լմբատավանքի արևելյան խաչթևի հյուսիսային որմին, որտեղ հեղինակը հետևյալ բառերով է բնութագրում իր հոգևոր իշխանությունը. **այս մեր արձան.. տր Գրիգորո արհիեպիսկոպոսի մայրաքաղաքիս Անւո և նահանգիս Շիրակայ, ժառանգորդի սեփական մերո աթոռոյ...**[13]:

Սակայն հոգևոր հիերարխիայի միջին կամ ստորին աստիճանների համար, որպիսիք են առանձին վանքերի առաջնորդները կամ վանահայրերը, ժառանգական իրավունք սահմանող վկայություններ մեզ հայտնի չեն և աթաբեկ Իվանեի սույն հրամանագիրը՝ հայր Եվագրին «յազգէ ցազգ, մինչև յաւիտեան» Մորո ձորո վանքի առաջնորդ հաստատելու մասին՝ այդօրինակ միակ վկայությունն է հայ վիմագրական հուշարձաններում։

* * *

Վերծանվող արձանագրությունը շարադրված է 12—13 դարերի գրական հայերենով՝ գրաբարով, որի որոշ իրողություններ, սակայն, չեն բացատրվում դասական լեզվի կանոններով և հավանաբար ներթափանցված են խոսակցական լեզվից. այսպես, առաջին տողում... **թագաւորութե[ան]ն Գիաւրգէ...** կապակցության մեջ **Գիաւրգէ** սեռական հոլովաձևը չպետք է համարել փորագրողի սխալը, որովհետև ի-հանգող անունների սեռական, տրական հոլովների «է» հոլովակազմիչը օրինաչափ երևույթ է հայ վիմագրության մեջ և հաստատվում է բազմաթիվ վկայություններով։ Գրաբարում այս երևույթը չի դիտվում և նման դեպքերում սպասելի է **եայ** վերջավորությունը (**Գիաւրգեայ...**):

Երկրորդ տողում **հաւց** բառի մեջ անտեսվել է յ-կիսաձայնը, որը նույնպես դժվար է գծողի բացթողումը համարել, քանի որ բառիս այսպիսի գրությունը սովորական է արձանագրություններում և, ըստ երևույթին, գալիս է տեղական այնպիսի խոսվածքի արտասանությունից, որտեղ հանդուրժելի է ձայնավորների հանդիպումից առաջացող հորանջը։

---

[11] Գ. Սարգսյան, Մակարավանք, «Էջմիածին», 1954, № 5, էջ 30—36, Առաքելոց վանք-ամրոցը և գյուղատեղը, «Էջմիածին», 1955, № 8, էջ 36—39, Դեղձուտի վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1953, № 4, էջ 41—43, Գ. արք. Հովսեփյան, Հավուց թառի Ամենափրկիչը, Երուսաղեմ, 1935, էջ 62—65, Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 141—142։ Խնձորուտի և Աբոյի խաչարձանների արձանագրությունները հրատարակված չեն, առնում ենք մեր հավաքածուից։

[12] Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 96, Գ. արք. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մաս Ա, Վաղարշապատ, 1928, էջ 15։

[13] Ալիշան, Շիրակ, էջ 165, մեր ուղղումներով։

Հինգերորդ տողում զճրագլուցին բարդ բառը խոսակցական լեզվի հետևությամբ փորագրվել է առանց ա հոդակապի. գրական լեզվում և վիմագրության մեջ սովորական է ճրագալուցին (ճրագալոյծ) հոդակապով ձևը[14]։

Իվանեի արձանագրությունը ուշագրավ է նաև իր հնագրական հատկություններով։ Նրա տառաձևերը կանոնավոր բոլորգիծ երկաթագիր են, ավելի նեղացված և ձգված վերև։ Ա գրի աջ ստեղի վրա ներքևից գծված է ավելի բարակ աղեղիկ, որը տարբեր ձևերով հանդիպում է ինչպես նախնագույն, այնպես էլ 10—11-րդ դարերի արձանագրություններում։ Ավանդական տառակցումներից բացի տեղ են գտել նաև միայն այս միջավայրին հատուկ միացումներ (Գ+Է, Տ+Է, Ա+Գ և այլն)։

Մորո ձորո վանքի արձանագրությունների զգալի մասը փորագրրված է համարյա նույն տառաձևերով, ինչ Իվանեի կամ Ամիր Քրդի ու Գեորգի Գ-ի արձանագրությունները, չնայած նրանց ժամանակների զգալի տարբերությանը։ Մերձակա մի շարք հուշարձանների (Մակարավանք, Առաքելոց, Դեղձուտի վանքեր և այլն) արձանագրությունների փորագրման ոճը և տառատեսակները շատ կողմերով հիշեցնում են Իվանեի արձանագրության տառաձևերը։ Այս բոլորը հիմք են տալիս պնդելու, որ Մորո ձորո վանքի շրջակայքում աշխատել են այնպիսի հմուտ փորագրող-գծողներ, որոնք ստեղծել են Կայեն և Մահկանաբերդ գավառների վիմագրական հատուկ ոճը, որը իր մի շարք ինքնուրույն գծերով գալիս էր ճոխացնելու ավանդներով հարուստ հայկական վիմագրական մշակույթը։

ՆՈՐԱՏՈՒՍԻ XIII Դ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

Հարկային, պարհակային նոր տերմինների վկայություններ պարունակող այս կարևոր արտոնագիրը փորագրված է եղել Նորատուսի Աստվածածին եկեղեցու հարավային որմի մի սրբատաշ քարի վրա, որն

[14] Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 84։

Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1942, էջ 134, ՆՀԲ, Վենետիկ, 1837, Բ, էջ 187։

* «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, № 11։

այժմ տեղում չէ։ Հայաստանի պատմության թանգարանում պահպանվում է բնագրի հստակ սևապակին, որի վրայից հնարավոր է վերականգնել գոնե նրա հիմնական բովանդակությունը։

Գեղարքունիքի նախորդ տեղագրողներ Մ. Սմբատյանցը և Ե. Լալայանը տեսել են արձանագրված քարը և ընդօրինակել բնագիրը, սակայն նրանց վերծանությունը խիստ հեռու է իրականից և ոչ մի պատկերացում չի տալիս արտոնագրի բովանդակության մասին։ Վերջերս Նորատուսի սույն արձանագրությունը հրատարակվեց «Դիվանի» հերթական IV պրակում, հանգուցյալ վիմագրագետ Ս. Բարխուդարյանի վերծանությամբ՝ նույնպես լուսանկարի վրայից։ Այստեղ վերծանողն աշխատել է հնարավորին չափ նույնական ընթերցել պահպանված տառաշարքերը, հասնել նրանց ավելի ստույգ բառանջատմանը և բառիմաստների ճշգրիտ բացահայտմանը։ Սակայն, հակառակ սպասածի, նրան ևս այդ չի հաջողվել, և արտոնագիրը մնացել է նույնքան անհասկանալի ու առեղծվածային, որքան և անցյալ դարում կատարված հիշյալ ընդօրինակություններում։

Ահա խնդրո առարկա արձանագրությունը ըստ Ս. Բարխուդարյանի վերականգնման. Յանուն ա̅յ̅ այս իմ գիր ե Նորատուց... ճնայեսինայ ես ղեմեքարու, ...այծայս ի վեր կալաւ Աւագին արեւին համար :ՈՁ: (680) գզրին տան, եակ ոչ, :ՁԱ: (81) փողին :Ա: եզն, մեսալում գզրին լծե :Ա: եզն. մեսալում :Ծ: (50) փողն. վկա գրիս Ա̅ծ̅, Աբսանխորդն, որ խափանէ նայ ա̅յ̅. խիել. ես Թունիս[1]: Սմբատյանցն ու Լալայանը տվյալ բնագրից վերծանել են. Յանուն ա̅յ̅ այս իմ գիր է Նորատուաց... Աստուծով ի վեր կալայ Գաւառին համար ՈՁԳ չրին տան՝ այգւոյ գիւղին... վկաներս Աստված է..., ուրեմն և չեն կարող նպաստել բնագրի իրական նույնական վերծանությանը[2]։

Վերծանողները ոչ մի բացատրություն չեն տալիս բնագրի բովանդակության մասին, միայն Ս. Բարխուդարյանը նշում է, որ արտոնագրի «որոշ մասեր մնում են անհասկանալի՝ կիսագրագետ գրչի և անծանոթ տերմինների պատճառով»[3]։ Սակայն, ինչպես ակնհայտ է, մութ և անհասկանալի են ոչ թե վիմագրերի որոշ մասերը, այլ արտոնագիրն ամբողջությամբ, որը ներկայացվել է իբրև անորոշ բառերի ու թվերի

[1] «Դիվան հայ վիմագրության», պրակ IV, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 13։

[2] Մ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, Վաղարշապատ, 1895, էջ 483։

[3] «Դիվան հայ վիմագրության», IV, էջ 14։

խառնաշփոթ կույտ։ Արդարև, եթե ի վեր կալաւ Սւազին արեւին համար կապակցությունը Նորատուսի նախորդ արձանագրության հետևությամբ (մեւ՝ Նորատուաց մեծ եւ փոքր մեր սրտի կամաւ զեղին շար եւ զչեւելկ ի վեր կալաւ)[4] դեռ կարելի է հասկանալ հարկերը, պարհակները սահմանելու կամ վիջելու, թողնելու իմաստով, ապա սրան հաջորդող անկապ բառերը ոչ մի չափով չեն պարզում, թե ի՞նչ հարկեր ու պարտույթներ և ի՞նչ ձևով են վերացնում կամ զեղչում Նորատուսի իշխանավորները։ Ինչպե՞ս հասկանալ, օրինակ, :ՈՁ: (680) զզրին տան նախադասությունը, արդարև, 680 ի՞նչ տան գզրին և ինչի՞ համար կամ ի՞նչ է նշանակում՝ ճակ ոչ, :ՁԱ: (81) փողին, կամ՝ :Ա: եզն, մեսալում գզիրն լծե, :Ա: եզն. մեսալում :Ծ: (50) փողն... և այլն։

Ակներև է, որ սույն բառանջատումով Նորատուսի արժեքավոր հարկային արտոնագիրը ներկայացվել է անճանաչելի աղավաղված, նրանում վկայված հարկային-պարհակային տերմինները մնացել են մթագնած ու ըստ էության չբացահայտված։

Նախքան մեր վերծանությանն անցնելը, հարկ ենք համարում նշել, որ արձանագրության նախաբանը, որտեղ եղել են Նորատուսի պաշտոնյաների անունները, քարը այդ մասում ջարդված լինելու պատճառով, մենք ևս սպառիչ չենք կարողացել վերականգնել, սակայն արտոնագրի հիմնական բովանդակությունը՝ հարկերը, պարհակները սահմանելու կամ վիջելու մասին, որոշված է հավաստիորեն։

Ահա ամբողջ արձանագրության մեր ընդօրինակությունը՝ կատարված այստեղ ընտեղված գրչանկարից.

1 Ցանոււն ա̅յ ա[յ]ս իմ գիր ե Նորա[տու]ոց
2 [շա]հնայի Սինայիս, ըեմեթար[ն...]հև
3 . . այծայս ի վեր կալաք Աւագին արև
4 ին համար՝ ոչ գզրին տան հակ, ոչ չափո
5 ղին։ .Ա. եզն մ[ի]ւսալում գզիրն լծե, .Ա. եզն
6 մ[ի]ւսալում չ[ա]փողն։ Վկայ գրիս ա̅ծ ու Սան
7 խորդն։ Որ խ[ա]փանէ, նայ ա̅յ [է] խփել։ Ես՝ Թունիս գրեց[ի]։

Ինչպես կարելի է նկատել, Բարխուդարյանի ընդօրինակությունը լրացված է հետևյալ կետերում. 2-րդ տողում վերականգնված են շահնայի Սինայիս բառերը, անորոշ ննայեսինայ տառաշարքի փոխարէն, 6—7-րդ տողերում՝ վկայ ա̅ծ, աբսանխորդն-ի դիմաց վերծանել ենք՝

4 Նույն տեղում, էջ 13։

վկայ ա̅ծ ու Սանխորդն, վերջինիս տակ ենթադրաբար հասկանալով անձնանուն։ Ես Թունիս բառերից հետո կարդացել ենք հաջորդ քարի վրա փորագրված շարունակությունը՝ ստորոգյալը և ստացել՝ Ես՝ Թունիս գրեց[ի], որը, անշուշտ, արտոնագրը փորագրողի հիշատակությունն է։

Սակայն էական ճշգրտումները կատարվել են բնագրի հիմնական բովանդակության վերծանության մեջ, այստեղ մեր և Ս. Բարխուդարյանի ընթերցումների տարբերությունները հիմնականում առաջացել են բնագրի Զ, Չ տառաձևերի ընկալումից և Զ գիրը թվանիշ համարելուց, ըստ այսմ, Ս. Բարխուդարյանը 4—5-րդ շարքերում կարդացել է՝ :ՈՁ: (680) զզրին տան, ճակ ոչ, :ՁԱ: (81) փողին, նույն հատվածը մեր ընթերցմամբ կլինի՝ ոչ գզրին տան ճակ, ոչ չափողին, այսինքն Ս. Բարխուդարյանի վերականգնած թվերից ոչ մեկը իրական չէ, և նրանց փոխարեն երկու դեպքում էլ հարկ էր վերծանել ոչ ժխտական մասնիկը։

Արդարև, ինչպես այս արձանագրության մեջ, այնպես էլ Գեղարքունիքի ու Վայոց ձորի այլ վիմագրերում երբեմն Չ գլխագիր է փորագրված Զ-ի փոխարեն. օրինակ, նույն Նորատուսի ՈՀԵ (1226) թվականի խաչքարի պատվանդանի վրա հստակ կարդացվում է ԽԱՉՍ ԿԱԳՆԵՑԻ, իսկ շարունակության վրա էլ՝ Ի ՓՐԿՈՒԹԻՆ ԻՆՉ[5], որտեղ Չ գիրը երկու դեպքում էլ (ԽԱՉՍ, ԻՆՉ) փորագրված է նույն ձևով, մինչդեռ ակներև է, որ ԽԱՉՍ բառի մեջ այն գրված է Զ-ի փոխարեն։ Ուշ միջնադարի տապանագրերում Զ, Չ տառաձևերի շփոթությունը միայն խաչ բառում առաջին անգամ դիտել է Ս. Բարխուդարյանը՝ միջին դարերի քարգործ վարպետների մասին իր ուսումնասիրության մեջ։ Նրա կարծիքով՝ այդ շփոթությունը չպետք է բացատրել արտասանական փոփոխությամբ, ենթադրելով, թե հիշյալ գավառների որոշ խոսվածքներում վկայված ժամանակաշրջանում խաչ հաճախ գործածվող բառն արտասանվել է խաձ։ Ավելի հավանական է երևույթը համարել Զ, Չ գլխագրերի նմանության հետևանքով առաջացած փորագրման շփոթության արդյունք[6]։

Մյուս կողմից, բնագրում եղած տառաձևերով ու կետադրությամբ ևս չեն արդարացվում Ս. Բարխուդարյանի վերականգնած ՈՁ (680), ՁԱ (81), Ծ (50) թվագրերը, ըստ այսմ, ոչ մի հիմք չկա այդ գրերը թվեր համարելու, քանի որ արձանագրության լուսանկարում կամ հենց գծա-

5 Նույն տեղում, էջ 23։

6 Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 192, Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Երևան, 1973, էջ 276—277։

գրի ընդօրինակության մեջ պարզ երևում է, որ դրանք քարի վրա չեն առնված մեկական կամ կրկնակ կետերի մեջ, վերևում չունեն պատիվ-գծիկ, որն սպասելի էր այդ գրերին թվային արժեք վերապահելու դեպքում։ Ուրեմն սրանք թվեր չեն նշանակում և պետք է ընկալվեն իբրև հնչյուններ արտահայտող սովորական գրեր։ Իր վերծանությունն արդարացնելու նպատակով վերծանողն առանց բավարար հիմքի այդ գրերն առել է կրկնակի կետերի մեջ, մինչդեռ, ավեց, քարի վրա այդպիսի կետեր չեն փորագրված, իսկ նույն բնագրում իրոք թիվ արտահայտող Ա գիրը միևնույն կապակցության մեջ (.Ա. եղն) 2 անգամ առնված է միայն մեկական կետերի մեջ։ Չի արդարացված նաև Ս. Բարխուդարյանի :Ծ: (50) փողն ընթերցումը 6-րդ տողում. Ծ կարդացված գիրը իրականում ակնհայտորեն շղագիր Չ-ն է և նույնպես չի կարելի թիվ համարել, քանի որ կետերի մեջ չի առնված, և պատվի գծիկ չունի։ Այս մասում քարի վրա փորագրվածին ավելի մոտ է մեր՝ չափողն ընթերցումը, մանավանդ որ դրանից առաջ, 4—5-րդ տողերում արդեն հանդիպել է նույն տերմինի տրական հոլովաձևը՝ չափողին, հարկավ, բառասկզբի Չ>Չ մեր նշած գրային անցումով։



Ճշգրտման կարիք ունի բնագրում 2 անգամ նույն ձևով փորագրված ՄԻՍԱԼՈՒՄ անծանոթ բառը։ Բարխուդարյանը տվյալ տառաշարքը կարդացել է ՄԵՍԱԼՈՒՄ, այսինքն նախահունչ Մ-ին հաջորդող Ի գիրը համարել է Ե։ Այս ընթերցումն առարկելի է, քանի որ քարի վրա տվյալ տառաշարքի երկրորդ տառը երկիցս պարզ փորագրված է Ի, նման բնագրի մյուս Ի-երին՝ ԱԻԱԳԻՆ, ՄԻՍԱԼՈՒՄ, իսկ Ե գիրն էլ այլ բառերում փորագրված է կանոնավոր՝ ԳԻՐ Ե, ԴԵՄԵԹԱՐ, Ի ՎԵՐ ԿԱԼԱՔ, ԵՂՆ, և ոչ մի բառի մեջ նրա փոխարեն չի հանդիպում Ի գիրը։

Ասածները հաշվի առնելով, առաջարկում ենք երկբայելի տառաշարքը վերծանել այնպես, ինչպես փորագրված է՝ ՄԻՍԱԼՈՒՄ։ Սակայն կարող են առարկել, թե ի՞նչ հնչյունային արժեք ունի տվյալ՝ միջբաղաձայնային, բացառված դիրքում Ի գիրը, կամ ինչպես արտասանել ՄԻՍԱԼՈՒՄ բառը։ Հայերենի ուղղագրության պատմությունից հայտնի է, որ միջին դարերի գրական ու վիմագրական հուշարձաններում ԻՒ երբեմնի երկբարբառ արտահայտող տառակապակցության փոխարեն հաճախ հանդիպում է միայն նրա երկրորդ բաղադրիչը՝ Ւ-ը, ըստ որում, առանց հապավման որևէ նշանի։ Այսպիսի գրությունը չի պայմանավորված հնչյունական փոփոխությամբ և բացատրվում է սոսկ ուղղագրական դյուրացման ձգտումով, մագաղաթի, թղթի, քարի վրա տեղ շահելու, նաև արագ գրելու պահանջով։ Այսպես, X—XVI դդ. ձեռագրերում և վիմագրերում հանդիպում են ԻՒ-ի փոխարեն Ւ-ի գրությամբ՝ Սւնեաց (=ՍԻՒՆԵԱՑ), սռուգն, հւսսի (=հիւսիսի), գւտ (=գիւտ), աւրւն (=արիւն), երկւղ (=երկիւղ). նւթոց (=նիւթոց) և այլն[7]։ Այս օրինաչափությունը նկատի ունենալով, մեր բնագրի ՄԻՍԱԼՈՒՄ տառաշարքում անհրաժեշտ է Ւ-ից առաջ վերականգնել Ի գիրը և բառը կարդալ՝ Մ[Ի]ՒՍԱԼՈՒՄ։

Քննության առարկա արձանագրության մեջ վերծանությունն ու բառանջատումը հնարավորություն են տալիս հավաստիորեն վերականգնելու նրա բովանդակությունը, ըստ այդմ, արտոնագրի հեղինակները՝ Նորատուսի շահնա Սինային (հարկահավաք պաշտոնյա) և դեմեթարը (ավանապետ, գյուղապետ, գեղջավագ) սահմանում են, որ Աւագին արևին համար ի վեր կալաք, այսինքն Զաքարյան Ավագի (Իվանեի որդու) արևշատության համար թողել, վերացրել, վիչել են (=ի վեր կալաք) գզրին և չափողին տրվելիք հարկը՝ ՈՉ ԳԶՐԻՆ ՏԱՆ ՀԱԿ, ՈՉ ՉԱՓՈՂԻՆ։ Նույն ժամանակների (XIII դ. առաջին տասնամյակներ) այլ արտոնագրերում ևս հանդիպում են հարկահավաք կամ վարչական պաշտոնյաների օգտին հավաքվող հարկերի վիջման կամ վերացման մասին նման վկայություններ, որոնցից մեր օրինակին ավելի համահունչ են Աշտարակի և Նորավանքի վիմագրերը։ Այսպես, Աշտարակի Մարինե եկեղեցու XIII դ. արձանագրության մեջ ունենք. եւ պարոնայքն զայն տներոյն զամէն հարկ թողին, ոչ բարաթ, ոչ պարոն, ոչ ամիրայ, ոչ ձեռնաւոր, ՈՉ ԳԶԻՐ, ոչ ով հետ տներոյս բան չունի[8]։ Նույն ձևով Ամաղուի Նորավանքում Տարսայիճ Օրբելյանը սահմանում է. «ոչ ամիրայի, ոչ պարոնի, ոչ ձեռ-

[7] Ս. Գյուլբուդաղյան, Հայերենի ուղղագրության պատմություն, Երևան, 1973, էջ 158։

[8] Աշտարակի արձանագրության վերծանությունը տե՛ս «Լրաբեր», 1969, № 6, էջ 42։

հաւորի ոչինչ հաշիւ չկայ հետ Հալէնորոյ, ոչ շորտայի, ոչ այլ ոչ ում»[9]:

Միջնադարյան Հայաստանի վարչական աստիճանավորության ստորին պաշտոնյայի՝ գզրի և նրա օգտին բնակչությունից հավաքվող հատուկ հասույթի մասին աղբյուրներում որոշակի տվյալներ կան, որոնք արծարծվել են պատմագրության մեջ, ուստի այստեղ դրանց չենք անդրադառնա։ Հենց վերևում մեջբերված Աշտարակի XIII դ. արձանագիրը համատեղում է պարոնի, ամիրայի, ձեռնավորի հետ նաև ԳԶՐԻ առնչությունը, տվյալ դեպքում վանական հյուրատան 30 սենյակների շահագործումից ստացված եկամուտից մասհանվող հարկի հետ։ Ինչ մնում է մեր բնագրի մյուս՝ ՉԱՓՈՂ տերմինին, ապա վկայված ժամանակաշրջանի վարչական, հարկային պաշտոնացանկը, գոնե հայկական աղբյուրներում, այդպիսի պաշտոնյա չի ճանաչում։ Մոնղոլական շրջանում նվաճված երկրներում պարբերաբար անցկացվող աշխարհագիրների ժամանակ գործում էին մարդկանց, անասունների գլխաքանակը և բնակչության եկամուտները հաշվառող հատուկ պաշտոնյաներ, որոնք միջին դարերի ձեռագրերի հիշատակարաններում և մանր ժամանակագրություններում սովորաբար անվանվում են համարողք: Համարել, համարողք տերմինի բազմաթիվ վկայություններից մեջ ենք բերում երկուսը, XIII դ. մի ժամանակագիր ՉԳ (1254) թ. դեպքերի մասին պատմում է. «Եւ Մանկու ղանն հրամայեալ համարել զհնազանդեալ աշխարհս, և էր համարող Արղոնն, դնել հարկս ի գլխոյ արանց, բայց ի կանանց ի ծերոց և ի բոյն տղայոց»[10]։ Մյուս վկայությունը 1314 թ. ձեռագրի հիշատակարանում է. «Ի թուականիս Հայոց ի ՉԿԳ համարողքն ի Վայոյ ձորս եկին, ու մինչև ի յամսական տղայն համարէին»[11]:

Չափող բառի իմաստից և վկայված կապակցությունից երևում է, որ այս տերմինը ևս պետք է արտահայտեր մոնղոլների աշխարհագիր-մարդահամարներն անցկացնող, ընդհանրապես հարկահավաք պաշտոնյա, որն, ի տարբերություն համարողների, հավանաբար զբաղվում էր ոչ թե մարդկանց ու անասունների գլխաքանակի հաշվառումով, այլ հողատարածությունների չափումներով ու շահութաբեր հաստատությունների եկամուտների հաշվառման, հարկման ու մոնղոլական դիվանին հասանելիք հարկերի գանձման գործերով։

Նորատուսի արձանագրի ամբողջ բովանդակությունը ճիշտ հասկա-

[9] Նորավանքի այս արձանագրի վերծանության ճշգրտումը տե՛ս նույն տեղում, էջ 46—48, «Դիվան», III, էջ 235։

[10] «Մանր ժամանակագրություններ», XIII—XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 141։

[11] «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1956, էջ 104։

նալու համար, բացի ԳԶԻՐ, ՉԱՓՈՂ տերմիններից, կարևոր է պարզել նաև նույն փորագրումով երկիցս վկայված ՄԻՍԱԼՈՒՄ կամ մեր վերականգնած՝ ՄԻՒՍԱԼՈՒՄ տառաշարքի իմաստը։ Միջնադարյան Հայաստանի հարկացանկում և պատմագիտական գրականության մեջ այս տերմին-հասկացության մասին տեղեկություններ չկան, իսկ քննության առարկա բնագրի վերծանություններում էլ, ինչպես տեսանք, տառաշարքը ներկայացվել էր աղավաղված և համարվել անբացատրելի։

Արդ, ի՞նչ է նշանակում ՄԻՒՍԱԼՈՒՄ բառը բնագրի այս կապակցության մեջ՝ .Ա. եզն ՄԻՒՍԱԼՈՒՄ գզիրն լծե, .Ա. եզն ՄԻՒՍԱԼՈՒՄ չափողն։ Músellem=միւսէլլէմ, միւսալլամ, միւսալլիմ արաբ. բառերի համար բառարանները տալիս են 2 հիմնական նշանակություն. ա) հարկից ազատված, ապահարկ, իբրև համանիշ վիմագրերում հանդիպող մյուս փոխառյալ՝ բարխան, մուաֆ տերմիններին, բ) որևէ բարձրաստիճան պաշտոնյայի տեղակալ, փոխանորդ, փոխկառավարիչ[12]: Այս վերջին իմաստով մուսալիմ տառադարձությամբ բառս վկայված է հնագույնս XIII դ. մի ժամանակագրության մեջ. «Վանայ մուսալիմ Ալի աղան իմացաւ, կամ՝ յետոյ Մուրթազայ փաշայն եկաւ մուսալիմ Սարխօշ Ալի փաշային»[13]։

Սակայն մեր բնագրի միւսալլիմ-ով կապակցությունը այս բառի՝ փոխկառավարիչ, տեղապահ իմաստը անհամապատասխան է, ավելի հարմար է տվյալ դեպքում նկատի ունենալ մյուս՝ ապահարկ, տուրքից, պարտույքից ազատված նշանակությունը։ Այսպես ընկալելով ՄԻՒՍԱԼՈՒՄ (=ՄԻՒՍԷԼԼՄ, ՄԻՒՍԱԼԼԱՄ) տերմինը, խնդրո առարկա արձանագրության տվյալ հատվածը կարելի է հասկանալ այն իմաստով, որ Նորատուսի գզիրն ու չափողը տեղի իշխանավորներից իրավունք են ստանում իրենց տնտեսական կարիքների համար բանեցնելու համայնքից կոռին հատկացվող լծկան անասունը, մեկ լուծ եզը (.Ա. եզն պետք է հասկանալ մեկ լուծ, մեկ զույգ), ընդ այսմ, հատուկ շեշտվում է, որ լծկանը բանեցվելու է ՄԻՒՍԱԼՈՒՄ (.Ա. եզն միւսալում գզիրն լծե), այսինքն առանց հատուցման կամ համապատասխան հարկ վճարելու, անհարկ, անվճար։ Նորատուսի վարչահարկային պաշտոնյաներ ԳԶՐԻՆ ու ՉԱՓՈՂԻՆ այս արտոնությունը տրվում է մասամբ հատուցելու հարկատու-բնակչությունից նրանց համար հավաքվող հատուկ հարկ-հասույ-

[12] «Մեծ բառարան օսմաներենէ հայերէն», Կ. Կարապետյան, Պոլիս, 1912, էջ 800, «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», կազմեց Հ. Փափազյան, Երևան, 1956, էջ 114—116։

[13] «Մանր ժամանակագրություններ», XIII—XVIII դդ., հ. II, էջ 487—488։

թի վերացումից առաջացած վնասը, որ, ինչպես տեսանք, սահմանված էր արտոնագրի առաջին մասում՝ ՈՉ ԳԶՐԻՆ ՏԱՆ ՀԱԿ, ՈՉ ՁԱՓՈՂԻՆ։

Այսպիսով, քննության առարկա արտոնագրի մեր ճշգրտած վերծանությունից ստացվում է, որ Նորատուսի իշխանավորներ ՇԱՀՆԱՆ (հարկահավաք պաշտոնյա) և ԴԵՄԵԹԱՐԸ (գեղջաւագ, գիւղապետ, աւանապետ) ԳԶՐԻՆ ու ՁԱՓՈՂԻՆ տրվելիք հատուկ հարկը վերացնելով, զիջելով, դրա փոխարեն՝ համայնքի վրա պարտավորություն են դրել անճատույց, առանց ճարկի, ապաճարկ (=ՄԻԽՍԱԼՈՒՄ) լծկան (.Ա. եզն) տրամադրելու այդ պաշտոնյաների հողամասերը մշակելու և մյուս տնտեսական կարիքները հոգալու համար*։

ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՄԵԿՅԱՆ ՏՈՀՄԻ ՄԱՍԻՆ**

Դիլիջանի գավառագիտական թանգարանի հնագիտական բաժնի ցուցանմուշների շարքում բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում բաց վարդագույն տուֆից, փոքր չափերի (60×40×15 սմ) մի խաչքար, որի բեկորները թանգարան են բերվել Դիլիջան—Կույբիշև ճանապարհից դեպի աջ, անտառի մեջ ընկած «Տախտ» հանդամասի հին գյուղատեղի եկեղեցու ավերակներից։ Հավանաբար եկեղեցու փլուզման հետևանքով խաչքարը ջարդվել, մի շարք բեկորների է վերածվել, որոնցից տեղում պահպանվել են միայն չորսը, իսկ նրա գլխամասից մի ամբողջ եռանկյունաձև հատված չի հայտնաբերվել։

Խաչքարի երեսին քանդակված է պարզ խաչ՝ եզերված երկրաչափական զույգ զարդաքանդակներով, որոնց մոտիվները և քանդակման եղանակները, հիշեցնելով XII—XIII դարերի նույնանման հուշարձանների առավել անպաճույճ նմուշները, առանձնապես չեն փայլում կատարման արվեստով, ուստի և, այդ առումով, զուրկ են հետաքրքրությունից։ Դրա փոխարեն խաչքարը արժեքավոր վիմագրական հուշարձանի նշանակություն է ստանում շնորհիվ այն կարևոր 13 տողանի արձանագրության, որը փորագրված է նրա թիկունքի հարթված մակերեսին։

* Հոդվածի համառոտված տարբերակը վերահրատարակված է Ս. Ավագյանի «Վիմական արձանագրությունների բառաքննություն» գրքում (էջ 207—215)։

** «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 2։

Անտարակույս է, որ խաչքարը մինչև արձանագրվելը, իբրև հարթված բեկոր, դրված է եղել եկեղեցու որմի մեջ՝ թիկունքով դեպի դուրս, այլ կերպ ասած, այն շենքի համար ծառայել է իբրև երեսապատման մշակված քար և միայն հետագայում է նրա մակերեսին փորագրվել ստորև վերծանվող բնագիրը։

Խաչքարի պահպանված չորս բեկորները իրար մոտեցնելով և հարադրելով՝ հնարավոր է լինում մոտավոր ճշտությամբ վերականգնել նրա նախնական վիճակը, ինչպես և թիկունքի արձանագրությունը, որի տառաձևերը մեծ մասամբ մնացել են անաղարտ, պարզ են, ուստի և ընթերցվում ու վերծանվում են դյուրությամբ։ Միայն տողասկզբների առաջին տառերը տեղ-տեղ ջարդվել, եղծվել են, սակայն նրանց վերականգնումը ևս զգալի դժվարություններ չի հարուցում։ Նույնը չի կարելի ասել խաչքարի գլխամասի ձախ անկյան մասին, որի պակասը մեծապես խանգարում է բնագրի վերջին չորս տառաշարքերի (10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ) վերականգնմանը և դժվարացնում ամբողջ արձանագրության վերծանությունը։ Ցավոք, այդ վերջին, խաթարված տառաշարքերում է բնագրի հիմնական իմաստը՝ նախադասության երկրորդ ստորոգյալը, ուստի և այդ հատվածի հավաստի վերականգնումը շատ կարևոր է արձանագրության ամբողջացման համար։

Արդ, ինչպես է վերականգնվում խաթարված կամ պակասող տառաշարքերի բնագիրը. սկսենք իններորդ շարքից, որը գրեթե ամբողջական է, անեղծ և կարդացվում է՝ զի նա եղեւ փր(կ)ությի(ւն). այստեղ բնական է Կ գրի վերականգնումը, որի տեղը անկյունաձև ջարդված է, անվիճելի է նաև նույն բառի վերջի ԻՆ գրերի վերականգնումը, թեև փորագրողը չի քանդակել ութիւն մասնիկի հապավման նշանը։ Հաջորդ 10-րդ շարքը սկսվում է եկեղեցեց եւ գրերով և, 3—4 տառատեղ ընդհատվելուց հետո, շարքի վերջում ունի՝ տեց գրերը, ըստ որում Տ գրի միայն վերևի կեսն է պահպանվել՝ ներքևի թեքվող գլխիկը, իսկ Ց-ն ոչ մի նմանություն չունի բնագրի մյուս Ց-երի հետ, շատ մանր է փորագրված և շղագիր է։ Պետք է կարծել, որ փորագրողը Ց գիրը նախապես բաց թողնելով, ավելացրել է հետո՝ տառատեսակը նեղացնելով ու հարմարեցնելով ազատ մնացած տարածությանը։ Այսուհանդերձ պահպանված գրերը պետք է կարդալ տեց, որը, հավանական է, բայի անցյալ կատարյալ ժամանակի եզակի 3-րդ դեմքի վերջամասն է, իհարկե, եա>ե պատմական հնչյունափոխությամբ (գրեաց-գրեց, ազատեացազատեց)։ Այս շարքի միջամասի պակասող 3—4 գրերը պետք է կազմեին նույն բայի սկիզբը, որի վերականգնումով կամբողջանար տեց վեր-

ջավորվող բայը։ Մեզ հավանական է թվում, որ այդ գրերը պետք է լինեին՝ ազա, իսկ վերականգնվող բայը՝ ազատեց (ազատեաց)։

11-րդ շարքը ավելի է եղծված ոչ միայն հողմահարումից, այլև կոտրըվածքի գիծը նրա վրայով անցնելու հետևանքով։ Շարքի բնագիրը սկսվում և ընդհատվում է քահանայս գրերով, որից հետո մոտ 7—8 տառանիշ պակասում է։ Այդ տողի վերջում պետք է լիներ հաջորդ՝ 12-րդ շարքի բառասկիզբը՝ առ կամ յառ, որը միանալով շարքի սկզբի աջնորդութ գրերին՝ կամբողջացներ բնագրի յառաջնորդութեան բառը։ Այսպիսով, 11-րդ տողավերջի յառ գրերի վերականգնումից հետո նույն տողում ազատ է մնում ևս 4—5 տառատեղ, որի բնագիրը, մեր կարծիքով, պետք է շարահյուսական կապի մեջ լիներ նախորդ նախադասության հետ, քանի որ հաջորդ՝ յառաջնորդութեան բառը ինքնուրույն նախադասության սկիզբն է։ Պակասող տառաշարքին նախորդում է եւ ազատեաց քահանայս... նախադասությունը, որի վերականգնումը երկու բացատրություն կարող է ունենալ. կամ նախադասությունն ավարտված է և, ըստ այդմ, ժամանակի իրադրությունը հաշվի առնելով, պետք է կարծել, որ Ումեկը քահանաներին ազատել է նետողաց ընդհանուր ավարառությունից, գերեվարումից և այլ կամայականություններից, առանց կոնկրետացնելու, թե ինչից է ազատել նրանց, և կամ՝ նախադասությունը թերի է և վերջից պակասող 4—5 գրերով պետք է կազմված լիներ նրա անդամներից մեկը, որը պետք է պարզեր, թե ինչից է Ումեկը ազատել քահանաներին։ Մենք ավելի հավանական ենք համարում այս երկրորդ մեկնությունը և, այլ արձանագրությունների համանմանությամբ, պակասող բառը համարում ենք՝ ի հարկէ (ա և ր գրերի կցումով, ինչպես բնագրի պարոն, բարերարին բառերում), որով և ամբողջանում է հիշյալ նախադասությունը՝ եւ ազատեաց քահանայս ի հարկէ։

Ինչպես տեսանք, 12-րդ շարքում յառաջնորդութեան բառից հետո ազատ էր մնում 7—8 տառատեղ. հասկանալի է, որ այստեղ պետք է հետևեր վանքի առաջնորդի անունը՝ կազմված առ առավելն 5—6 տառից, քանի որ պակասող 7—8 տառերից վերջին 2-ը (որ) անվիճելիորեն վերաբերվում է հաջորդ տողի անեծքի ձևակերպմանը (որ խափանէ...)։ Մենք դժվարանում ենք վերականգնել առաջնորդի անունը. Գոշավանքի այդ տարիների առաջնորդը վարդապետ Մարտիրոսն է (1212—1252), որի անունը, սակայն, չի համարվում պակասող տարածությանը։

12-րդ շարքի վերջը և ամբողջ 13-րդ շարքը, ամենայն հավանականությամբ, անեծքի բանաձևն է, որը, դատելով 13-րդ շարքի պահպանված գրերից և նույն շարքի պակասող հատվածի երկարությունից, պետք է ունենար այսպիսի բովանդակություն. որ խափանէ յծր իցն զովի, որտեղ Ն գիրը ընդհանուր է երկու եզրերի համար, ինչպես հաճախ է հանդիպում այդ դարերի հայ վիմագրության մեջ։

Այսպիսով, պակասող կամ խաթարված տառաձևերի վերը նշված վերականգնումներից ու անհրաժեշտ հավելումներից հետո քննության առարկա արձանագրության վերծանությունը հետևյալ պատկերն է ընդունում.

1. ՄԱՆԿՈՒ
2. ԽԱՆԻՆ ՀՐԱ
3. ՄԱՆՈՎՆ,
4. [Կ]ԱՄԱՒ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ, ԵՒ
5. [Յ]ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԷՐՈՒ
6. [Թ]Ե[ԱՆ] ԱՒԱԳԻՆ, ԳՈՆՑԻՆ ԵՒ
7. ԶԱՒԱԿԱՑ ԻՒՐՈՑ, ԱԾԱ
8. ՍԷՐ ՊԱՐՈՆ ՈՒՄԵԿԻՆ,
9. ԶԻ ՆԱ ԵՂԵՒ ՓՐ[Կ]ՈՒԹԻ[ԻՆ]
10. [Ե]ԿԵՂԵՑԵ[ԱՑ] Ե[Ի ԱԶԱ]ՏԵ[Ա]Ց
11. [Ք]ԱՀԱՆԱՅՍ [Ի ՀԱՐԿԷ ՅԱՌ]
12. ԱՋՆՈՐԴՈՒ[ԹԵԱՆ]. . . . . . . [ՈՐ]
13. ԽԱՓԱՆԷ Յ[ԺԸԻՑՆ ԶՈՎԻ]

Նորահայտ արձանագրության լեզուն այդ դարերի գրական հայերենն է, գրաբարը, որը, սակայն, չի փայլում դասական ձևերի անաղարտությամբ և զգալի չափով մոտեցած է ժամանակի խոսակցական լեզվի իրողություններին։ Համեմատաբար փոքր բնագրում նկատում ենք դասական լեզվից կատարված մի շարք շեղումներ, որոնք, անշուշտ, գալիս են հեղինակի կամ փորագրողի խոսվածքից։ Այսպես, Մանկու խանին հրամանովն կապակցության շարադասությունը չի համապատասխանում գրաբարի կանոններին. սպասելի էր՝ հրամանովն Մանկու խանին։ Բացի դրանից, հրաման բառի գործիական հոլովը պետք է լիներ հրամանաւ և ոչ թե հրամանովն։

10-րդ շարքի եկեղեցեց և ազատեց բառերում վերջընթեր Ա-ն բաց է թողնված, այսինքն փորագրվել է այնպես, ինչպես ժամանակի խոսակցական լեզվում արտասանվել են այդ բառերը, ըստ այդմ էլ այստեղ առկա է եա>ե պատմական հնչյունափոխությունը (ազատեաց, եկեղեցեաց>ազատեց, եկեղեցեց)։

5-րդ տողում սպասելի էր՝ յաշխարհակալ փխ. աշխարհակալ, իսկ 11-րդ տողասկզբին պետք է լիներ զքահանայս, այսինքն բաց է թողնըված զ նախդիրը, երևի այն պատճառով, որ այն այլևս չէր գիտակցվում իբրև հայցական հոլովի ցուցիչ։

7—746

Գոնցայ անձնանվան հոլովված ձևը՝ Գոնցին նույնպես չի բացատրվում հին հայերենի օրենքներով և, անտարակույս, գալիս է խոսակցական լեզվից. անձնանունը սեռական, տրական հոլովներում պետք է ունենար Գոնցային, ինչպես հանդիպում ենք Հերհերի 1283 և 1287 թվականների արձանագրություններում[1], սակայն խոսվածքի ազդեցությամբ այ երկբարբառի սղումով առաջացել է ժողովրդական Գոնցին ձևը։

Նկ. 1

Վերջին շարքում **որ խափանէ** իմաստի թելադրանքով պետք է լինեի՝ **որ խափանիցէ**, այսինքն ոչ թե բայի սահմանական ներկան, այլ

¹ Ալիշան, *Սիսական էջ, 113, 114 (երկու դեպքում էլ՝ «...եւ ամուսնոյն իւրոյ Գոնցային...»)։*

ստորադասականի ապառնին. այս իրողությունը դիտվում էր դեռ դասական շրջանում, ուստի և չպետք է համարել մեր բնագրի շեղումը։

Քննության ենթարկվող արձանագրությունը հետաքրքիր է նաև իր հնագրական հատկություններով։ Տառաձևերը մեծ մասամբ կանոնավոր բոլորաձև երկաթագիր են, փոքր ինչ ձգված ու նեղացված։

Ա-գրի ստեղները մեծ մասամբ անհավասար են փորագրված, ըստ այդմ՝ ձախ ստեղը կարճ է բոլոր այն դեպքերում, երբ աջի վրա այլ գիր է կցված. մնացած դեպքերում աջ ստեղը ավելի կարճ է ձախից։ **Աւագին, Ածաւէր, Այ** բառերում **ա**-ի աջ ստեղը կարճեցված է շարունակության վրա, ազատված տեղում ւ գիրը կամ հապավման նշանը տեղավորելու համար։ Ի գիրն ամենուրեք անհամաձայն է բնագրի տառատեսակներին, կարճ է ու շղագիր, որ հազվադեպ է հայ վիմագրության մեջ։

Տառակցումները սովորական են և չեն շեղվում ավանդական ձևերից, բացի Մ+Է միացումից, որ միայն այստեղ է հանդիպում։



Իր տառաձևերով ու փորագրման եղանակով ներկա արձանագրությունը շատ կողմերով հիշեցնում է Նոր Գետիկի, Հաղարծնի և մերձակա այլ հուշարձանների վիմագրությունը, չնայած նշված նորամուծություններով տարբերվում է նրանցից։

Թեև արձանագրությունը անթվագիր է, նրա ժամանակը մի քանի տարվա մոտավոր ճշտությամբ որոշվում է նրանում հիշատակված պատմական անձերի ժամանակագրության տվյալներով։ Պատմագրական աղբյուրներից և վիմական արձանագրություններից հայտնի է. որ աթաբեկ Իվանեի որդի Ավագը (որոշ աղբյուրներում նաև Սարգիս) ամիրսպասալարության, ապա նաև աթաբեկության պաշտոն է ստացել և ժառանգել հոր տիրույթների վրա իշխանության իրավունքը՝ նրա մահվանից մի քանի տարի հետո, 1233 թվականին[2]։ Նույն աղբյուրները

² Վարդան Վարդապետ, *Պատմութիւն, Վենետիկ, 1862, էջ 144։* Կիրակոս Գանձա-

նշում են նաև Ավագի մահվան ստույգ ժամանակը՝ 1250 թ.[3]։ Ուստի վերծանվող արձանագրությունը պետք է գրված լինի մինչև այդ թվականը։ Մյուս կողմից, հայտնի է նաև, որ բնագրում հիշատակված «աստվածասեր պարոն Ումեկը» Կարինից Արևելյան Հայաստան է տեղափոխվել 1242 թ., մոնղոլների կողմից հայրենի քաղաքը գրավելուց և ավերելուց հետո։ Սրանից հետևում է, որ արձանագրությունը փորագրված պետք է լինի 1242—1250 թթ. ընթացքում։

Քննության ենթակա արձանագրության բովանդակությունը ներկա վերծանությամբ ընդհանուր առմամբ բացահայտվում է, թեև նրա կառուցվածքի որոշ տարրեր, շեղվելով հայ վիմագրության ավանդական համակարգից, երկբայությունների տեղիք են տալիս. այսպես, բնագիրը պետք է սկսվեր 4-րդ տողով՝ կամաւ բարերարին այ, այսինքն երկնային տիրակալի, աստվածային կամքի հիշատակությամբ և հետո միայն թվարկվեին երկրային՝ աշխարհիկ կամ հոգևոր իշխանությունները, մինչդեռ իրականում Մանկու խանին հրամանովն գերադասված է «ամենազոր աստծուն», մի բան, որ անսպասելի է հայ վիմագրական հուշարձաններում։ Բացի դրանից, ներկա արձանագրության հեղինակը չի նշված և ընդհանուր շարադրանքից էլ չի հասկացվում նրա ով լինելը, որպիսի երևույթը նույնպես հազվադեպ է հայ վիմագրության մեջ։

Զաքարյան Ավագի, Գոնցայի և նրանց զավակների հիշատակությունը արձանագրության հիմնական բովանդակության հետ ուղղակիորեն չի առնչվում և տվյալ իրադրության մեջ սոսկ մատնանշում է պարոն Ումեկի բարեգործությունների ժամանակը և տեղը, համապատասխանելով այլուր հանդիպող «յիշխանութեան», «յաշխարհակալութեան», «ի տէրութեան» և այլ բառերին։

Բնագրում Ավագի իշխանությունը բնութագրվում է իբրև «աշխարհակալ տէրութիւն», որը դժվար է միայն ավանդության ազդեցությամբ բացատրել։ Իրականում Ավագը, խոհեմաբար հպատակություն հայտնելով մոնղոլներին՝ ոչ միայն նրանցից վերստացյալ Զաքարյանների երբեմնի լայնարձակ տիրույթները, այլև զգալի չափով ընդարձակեց իր տիրապետության սահմանները՝ նոր կալվածքներ ու տոհմական տներ ենթարկելով իր գերիշխանությանը, քանի որ «...մոնղոլները կենտրոնական և հարավային Հայաստանի նոր նվաճված մասերն ալ հայ տանու-

կեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 223։ Գ. արք. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, մասն Ա. Վաղարշապատ, 1928, էջ 101։

3 Վարդան Վարդապետ, էջ 148։ Կիրակոս Գանձակեցի, էջ 321։ Օրբելյան, Ժամանակագրություն, Երևան, 1942, էջ 26։

տերներու հանձնեցին՝ Ավագի ստորադասելով զանոնք»[4]։ Ուրեմն հիմնական անձը, որի գործողությունների և հիշատակի հավերժացմանն է ծառայեցված սույն արձանագրությունը «աստվածասեր պարոն Ումեկն է», որը, հավանաբար, միջնորդություն է հարուցել Մանգու խանի առջև և նրա հրամանով շրջակայքի եկեղեցիներն ու քահանաներին ազատել մոնղոլական հարկատվությունից։

Արդ, ո՞վ է պարոն Ումեկը, ի՞նչ նպատակներով է հայտնվել հյուսիսային Հայաստանում, Զաքարյան Ավագի տիրույթներում և կատարել բնագրում նշված բարեգործությունները։

Մատենագրական աղբյուրների, ձեռագրերի հիշատակարանների և մանավանդ վիմական արձանագրությունների տվյալներով հնարավոր է լինում ընդհանուր կերպով ուրվագծել «ընչավետ և մեծատուն» վաճառական պարոն Ումեկի և նրա ողջ գերդաստանի տոհմագրությունը և հետևել այդ տոհմի անդամների գործունեությանը ավելի քան մեկ դարի ընթացքում՝ սկսած տոհմի հիմնադիրներ ավագ Ճարի և նրա որդի Ումեկի առաջին հիշատակումից (ըստ Վարդանի վկայության՝ 1242 թ.[5]), մինչև Ումեկի թոռ Սրղութի (Քարիմադինի որդի) պարոնության հիշատակությունը՝ 1345 թ. Գոշավանքում կանգնեցված խաչարձանի արձանագրության մեջ[6]։

Այդ աշխատանքը բացառիկ հմտությամբ և սպառիչ կերպով կատարել է դեռևս 1935 թ. վաստակաշատ Գ. Հովսեփյանը՝ «Վախտանգ որդի Ումեկա» մեծարժեք ուսումնասիրության մեջ[7]։ Վերջին ժամանակներս Ումեկի և Ումեկյան տոհմի գործունեության տարբեր կողմերի լուսաբանությանն անդրադարձել են նաև այլ պատմաբաններ[8], սակայն բոլոր այս դեպքերում գիտական շրջանառության մեջ ներգրավվել են նույն փաստերը, ինչ օգտագործված են հմուտ բանասերի կողմից։

Այս տեսակետից մեր նորահայտ արձանագրությունը կարևոր նշա-

4 Ա. Ալպոյաճյան, Պատմական Հայաստանի սահմանները, Կահիրե, 1950, էջ 340։

5 Վարդան Վարդապետ, էջ 147։

6 Տե՛ս Ի. Հարությունյան, Գոշավանք կամ Նոր Գետիկ, «Ազգագ. հանդես», 1903, № 10, էջ 33։

7 Գ. արք. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Ա, Երուսաղեմ, 1935, էջ 1—15։

8 Հր. Ջանփոլադյան, Մխիթար Գոշը և Նոր Գետիկի վանքը (Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հ. 1, Երևան, 1948, էջ 151—154)։ Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Երևան, 1957, էջ 206—220։ Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—X դդ., հ. 2, Երևան, 1964, էջ 129—132։

նակություն է ստանում ոչ միայն Ումեկյան տոհմի, այլև Նոր Գետիկի վանքի պատմության մի քանի հարցեր լուսաբանելու համար։

Մեր նպատակից դուրս է Ումեկյան գերդաստանի տարեգրության մանրամասն շարադրանքը, սակայն վերծանվող արձանագրության հիմնական բովանդակությունը հստակ պատկերացնելու համար անհրաժեշտ ենք համարում համառոտակի ներկայացնել այն տեղեկությունները, որոնք հայտնի էին բանասիրությանը՝ տոհմի հիմնադիր Ումեկի մասին, մինչև սույն խաչքարի հայտնաբերումը։

Ավագ Ճարի որդի Ումեկը ծննդով Մանազկերտցի էր («աշխարհաւ Մանծկերտացի»), սակայն իբրև խոշոր վաճառական ու մեծատուն հաստատվել և գործում էր Կարինում։ Երբ 1242 թ. մոնղոլները գրավում են Կարինը, Ումեկը իր ընտանիքով ու ազգականներով գաղթում է Արևելյան Հայաստան և բնակություն հաստատում վրաց մայրաքաղաք Թիֆլիսում։ Այդ մասին իրար լրացնելով պատմում են Վարդանը և Կիրակոս Գանձակեցին։ «Ի վեց հարիւր իննսուն և մի թուին հայոց,— պատմում է Վարդանը,— Բաչու Նուինն փոխեաց զիշխանութիւն Չարմաղանին և էառ զԿարնոյ քաղաք՝ հանեալ անտի զայրն երևելի, մեծատուն և երկիւղած ի տեառնէ զՈւմեկն և զազգականս նորա՝ զորդիս պարոն Յոհանու՝ զՍտեփաննոս և զեղբայրսն իւր հինգ»[9]: Կիրակոս Գանձակեցին շարունակելով Վարդանի պատմությունը, լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում այն գործունեության մասին, որ ծավալում է Ումեկը Թիֆլիս տեղափոխվելուց հետո։ «Եւ էր յայնժամ ի Տփխիս քաղաքի բնակութիւն կալեալ, և հայր անուանեալ Թագաւորին Վրաց Դաւթի, և մեծարեալ ի ղանէն գրով, և յամենայն ուազանւոյն...։ Սա առատ տուրս ետ Արղունին և որ ընդ նմա, և մեծարեցաւ յոյժ ի նոցունց»[10]։

Այսպիսով, Արևելյան Հայաստան գաղթելուց հետո Ումեկը ոչ միայն խուսափում է մոնղոլ նվաճողների հարստահարություններից, այլև իր անբավ հարստության և ձեռներեցության շնորհիվ բարձր դիրքի ու ազդեցության հասնելով վրաց Դավիթ թագավորի մոտ և մոնղոլական արքունիքում, շարունակում է ընդարձակել իր առևտրական գործարքները, նաև ծավալում է բարեգործական-շինարարական վիթխարի գործունեություն։ Նրա կառույցներից առաջինը Թիֆլիսի ս. Գևորգ (Կաթողիկե կամ Բերդի մեծ) եկեղեցին է, որի շինության մասին ստույգ տեղեկություն է տալիս Հովհաննես Երզնկացին «Յաղագս երկնային շարժման» աշխատության հիշատակարանում. «...ի դուռն եկեղեցոյ մեծապատիւ և խո-

[9] Վարդան Վարդապետ, էջ 147։

[10] Գանձակեցի, էջ 363։

հեմամիտ և մեծ իշխան Հայոց պարոն Քարիմադինին, զոր շինեալ էր աստուածասէր և բարեհոգի հայրն նորա պարոն Ումեկն»[11]։

Ակադ. Հ. Օրբելին և պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը պարզել են, որ Երզնկացու խոսքը վերոհիշյալ ս. Գևորգ կաթողիկե եկեղեցու մասին է և նրա շինության տարին համարում են 1251 թիվը[12]։ Սակայն մեծատուն Ումեկի՝ հյուսիսային Հայաստանում կատարած գործարքների պսակը պետք է համարել Նոր Գետիկի վանքի և շրջակա բավականաչափ ընդարձակ կալվածքների ձեռք բերումը Զաքարյան իշխաններից և այդ տերիտորիաների վրա առանձին վարչական իշխանության՝ պարոնության հիմնադրումը։ Այդ մասին տեղեկանում ենք Ումեկի որդի կրտսեր Ճարի մի երկարաշունչ արձանագրությունից, որ նա թողել է Գոշավանքի Աստվածածին եկեղեցու գլխավոր խորանի պատին՝ 1283 թվականին[13]։ Պարզըվում է, որ Ումեկը 40 հազար կարմիր դուկատով գնել է Նոր Գետիկի վանքը՝ հավանաբար բոլոր այն սահմաններով, որոնք հաստատվել էին դեռևս Զաքարե և Իվանե իշխանների կողմից («...Եւ ընծայեցին եկեղեցւոյն սահման ջրադարձիւք՝ լեռնէ ի լեառն...»)[14]։

Նկատի ունենալով 40 հազար կարմիր դուկատի վիթխարի արժեքինը այն ժամանակներում, պետք է կարծել, որ Ումեկը գանձագին է արել նաև Ն. Գետիկի վանքապատկան այն գյուղերը (Աշավա, Տզրկածով, Ուռևլանջ, Վաշխե և այլն), որոնց Զաքարյանները նվիրել էին վանքին՝ նրա կառուցումն ավարտելու կապակցությամբ, այլև հետագա տարիներին զանազան անձանց կողմից վանքին նվիրած կալվածքները։ Ումեկի գնած հողային տարածությունների ընդարձակության մասին գաղափար են տալիս նաև նրա հետնորդների և այլոց արձանագրությունները և հիշատակարանները, որոնցում այդ տիրույթները բնութագրվում են «պարոնութիւն», «տէրութիւն», «իշխանութիւն» բառերով, այսինքն Զաքարյանների գերիշխանության տակ գտնվող ինքնուրույն վարչական միավոր, որն ըստ իր մեծության ստորադասվում է Կայենո գավառին՝ իբրև նրա ենթագավառներից մեկը։ 1273 թվին Գետիկում գրված ձեռագրի հիշատակարանում հենց այդպես էլ ներկայացվում է Ումեկյանների հողային ժա-

[11] Ալիշան, Հայապատում, մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 511—512։

[12] **И.Орбели,** Фрагмент крестного камня с арабской надписью в Тифлисе, Избранные труды, Ереван, 1963, стр. 217. **Л. Меликсет-Беков**, О междоусобице в Тифлисе 1197 г. по поводу пасхи, КИАИ, т. III, 1925, стр. 59.

[13] Ջալալյանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, հ. Ա, Տփխիս, 1842, էջ 138։ Շահխաթունյանց, Ստորագրություն Կաթողիկե էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ, էջմիածին, 1842, հ. Բ, էջ 367։

[14] Գանձակեցի, էջ 216։

տանգությունը. «յաթաբակութեան Սադունին և տէրութեան տեղւոյս ճարին...»[15]։

Այսպիսով, «ընչավետ և մեծատուն» վաճառական Ումեկը իր քսակի զորությամբ ընդարձակ կալվածքներ է ձեռք բերում Նոր Գետիկի շրջակայքում և օգտվելով վրաց արքունիքի և Զաքարյանների բարեհաճությունից՝ ստանում է ավատական իշխանի բոլոր իրավունքները, փաստորեն դառնալով Կայենո գավառի այս շրջանի օրինական տերը կամ պարոնը (պատրոն), միաժամանակ վանքը դարձնելով իր տոհմական հոգևոր և մշակութային կենտրոնը, «գանձատուն հայրենի եկեղեցին»։

Չնայած երկրի անհաստատ վիճակին ու քաղաքական արհավիրքներին, հետագա տասնամյակներում պարոնության իրավունքը անցնում է նաև Ումեկի հետնորդներին, որոնց իշխանությունը այդ պատճառով բազմիցս հիշատակվում է Գոշավանքի և մերձակայքի մի շարք վիմական արձանագրություններում և այդ տարիներին գրված ձեռագրերի հիշատակարաններում («...յաթաբակութեան Սադունին և տէրութեան տեղւոյս ճարին...»[16], «...ի թվ. Հայոց Չէ, պարոնութեան Իգդիշ խաթունին և եղբարց իւրոց Արղութին և Թաղադամուրին, որդոց Քարիմադինին, որդո մեծի Ումեկին»[17], «Պարոնութեան Արղութին և Խորիշ խաթունին... ի թուին ՉԴԳ»[18]։

Նորահայտ արձանագրության վերծանության տեսակետից հետաքրքրություն ներկայացնող խնդիր է ոչ միայն Ն. Գետիկի վանքի հետ գնված հողատարածությունների ընդարձակության հարցը, այլև այն պարագան, թե երբ է կատարվել այդ գործարքը և ումից է Ումեկը գանձագին արել «զԳետիկ»։

Նոր Գետիկի վաճառքի մասին միակ աղբյուրը՝ Ումեկի որդի կրտսեր Ճարի վերոհիշյալ արձանագրությունը չի տալիս այս հարցերի պատասխանը։ Արձանագրությունը գրված է եղել սպիտակ կրաշաղախի վրա կարմրադեղով և խպառ եղծվել է. XIX դարի կեսերին այն անաղարտ է

[15] Գ. արք. Հովսեփյան, Նյութեր..., էջ 10։ Հռ. Ջանփոլադյանի նշված աշխատության 146-րդ էջում հիշատակարանի այս կապակցությունը մեջ է բերված «...և տէրութեան գեղոյս ճարին...» ընթերցմամբ, որը, եթե վրիպակ չէ, ապա անհավանական է ոչ միայն իմաստային առումով, այլև քերականորեն (անբացատրելի է գեղոյս փխ. գեղջիս): Հեղինակը չի տեսել ձեռագիրը և հիշատակարանը քաղել է Գ. Հովսեփյանի աշխատություններից (Նյութեր..., էջ 10), որտեղ հիշյալ հատվածը ավելի հավաստի է, քանի որ Հովսեփյանը ինքն է արտագրել Երուսաղեմի № 1288 ձեռագրից։

[16] Գ. արք. Հովսեփյան, Նյութեր..., էջ 10։

[17] Հռ. Ջանփոլադյան, նշվ. աշխ., էջ 164։

[18] Ի. Հարությունյան, Գոշավանք կամ Նոր Գետիկ, «Ազգագրական հանդես», 10, 1903, էջ 33։

եղել և մեզ է հասել Ջալալյանցի և Շահխաթունյանցի արտագրություններով, որոնց լիակատար հարազատությունը բնագրի հետ դժվար է երաշխավորել։ Այդ արտագրությունների մեջ ոչ մի ակնարկ չկա Գետիկը վաճառելու ժամանակի և վաճառողի մասին, այնտեղ առուծախի մասին հարևանցիորեն ասված է. «...իմ հայրն Ումեկ գնեալ էր զԳետիկ ի ԽՌ կարմիր ղուկատի...»։ Ինչ մնում է ժամանակի մատենագիրներին, ապա նրանցից և ոչ մեկը չի հիշատակում այդ առուծախի մասին. նույնիսկ Կիրակոս Գանձակեցին, որ կյանքի և ուսումնառության մի զգալի մասը անց է կացրել Նոր Գետիկի վանքում և իր «Պատմության» մեջ հատուկ գլուխներ նվիրել վանքի անցուդարձին, ոչինչ չի հիշում այդ մասին։ Նորագույն հետազոտողներից Գ. Հովսեփյանը, իր ձեռի տակ անհրաժեշտ տվյալներ չունենալով, զգուշանում է գործարքի ստույգ ժամանակը ցույց տալ, ենթադրաբար նշելով միայն, որ «Ումեկի գնումը կատարված պետք է լինի 1242—1250 թթ. ընթացքում»[19]։ Հռ. Ջանփոլադյանը չի համաձայնում Հովսեփյանի կարծիքին և գտնում է, որ «այս առևտուրը տեղի է ունեցել 1260—1266 թվականներին Ումեկի և Գոնցա խաթունի միջև»[20]։ Իր այս կարծիքը հեղինակը հիմնավորում է նրանով, որ նախ՝ 1266 թ. Ումեկի մահվան տարին է[21], և ապա, 1260 թվից առաջ չէր կարող տեղի ունենալ վաճառքը, քանի որ Գոշավանքի մի արձանագրության համաձայն 1260 թ. Գետկա ժողովուրդը դեռևս հարկատու էր Գոնցա խաթունին, ուրեմն դեռ չէր անցել Ումեկի տնօրինությանը։

Այս փաստարկը այնքան էլ համոզիչ չէ և, հավանաբար, ծագում է Յովհաննես Արմանեցու վերոհիշյալ արձանագրության ոչ ճիշտ վերծանությունից. ահա բնագրի մեզ հետաքրքրող հատվածը հեղինակի ընթերցմամբ.

1. Աստուծով ես տէր Յովան
2. էս Արմանեցի ազատ գրեցի
3. զԳետկա ժողովուրդս ի հարկէ որ տային յաթու
4. ն յիշխանութեան Գոնցա խաթունին, ի խնդրո Կիր
5. ակոս վարդապետին ի հայրութեան Աբրամի վարդապետի...

Այնուհետև շարադրվում է անեծքի բանաձևը, որին հետևում է.

[19] Գ. արք. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 9, ծանոթություն։

[20] Հռ. Ջանփոլադյան, նշվ. աշխ., էջ 152։

[21] Ստեփանոս Օրբելյանը Ումեկի մահը դնում է ՉԺԶ—(1267), Ժամանակագրություն, Երևան, 1942, էջ 26։

8. ...գրեցաւ ՉԹ թվիս
9. վկայութեամբ Յովհաննեսի... Վարդան վարդապետի...[22]։

Մեր կարծիքով, այստեղ խոսքը ոչ թե Գոնցա խաթունին կամ Զաքարյաններին վճարվող աշխարհիկ հարկի մասին է, այլ եկեղեցական հարկի, եպիսկոպոսական աթոռին տրվող հասույթի՝ աթոռահարկի մասին, որ վճարում էր Գետիկի ժողովուրդը հոգևոր հիերարխիայի բարձր աստիճաններին։ Եվ պատահական չէ, որ ժողովրդին աթոռահարկից ազատում է ոչ թե որևէ մեծատուն կամ իշխան, այլ Հաղարծնի վանքի նշանավոր առաջնորդ Յովհաննես եպիսկոպոս Արմանեցին, որ հենց այդ թվականին (1260) միաժամանակ ստանձնել էր նաև Նոր Գետիկի վանահայրությունը[23]։ Ըստ երևույթին, անցնելով վանական միաբանության գլուխ՝ Հովհաննես Արմանեցին ի մոտո ծանոթացել էր Գետիկի գյուղացիների ծանր վիճակին և, անսալով վանքի վարդապետ պատմագիր Կիրակոս Գանձակեցու խնդրանքին, նրանց ազատել աթոռին տրվող հարկից։

Թյուրըմբռնումը առաջացել է արձանագրության 3-րդ և 4-րդ տողերի ոչ ճիշտ վերծանությունից. բնագրի «...ի հարկէ, որ տաին յաթոռն, յիշխանութեան Գոնցա խաթունին» կապակցությունը հեղինակի մոտ ստացել է՝ «...ի հարկէ, որ տաին յաթոռն յիշխանութեան Գոնցա խաթունին» տեսքը, այսինքն փոխվել է տրամաբանական շեշտը և աղավաղվել բնագրի իմաստը։ «Յիշխանութեան Գոնցա խաթունին» այս միջավայրում միայն մատնանշում է իրողության տեղն ու ժամանակը և ոչինչ չի ասում Գոնցային վճարվող հարկի մասին։

Հովհաննես Արմանեցու այս արձանագրության ճշգրիտ վերծանությամբ հիմքից զրկվում է նաև այն տեսակետը, ըստ որի Գոշավանքին նվիրված Տզրկածով, Ուռելանչ և Աշավա գյուղերի բնակիչները նույնպես, «հարկ էին վճարում Զաքարյաններին»[24]։ Եվ այդ այն պատճառով, որ նախ՝ այդ վարկածի համար հիմք ծառայող Արմանեցու արձանագրության մեջ, ինչպես տեսանք, հարկի մասին որևէ հիշատակություն չկա, և ապա, ինչպես հայտնի է, Զաքարյան իշխանները նշված գյուղերը նվիրել էին Նոր Գետիկի վանքին, «ազատ յամենայն հարկէ», այսինքն ազատելով աշխարհիկ իշխանությանը տրվող հարկերից, հարկատու էին դարձրել վանքին։

---

22 Հո. Ջանփոլադյան, նշվ. աշխ., էջ 160։

23 Գանձակեցի, էջ 223։

24 Հո. Ջանփոլադյան, նշվ. աշխ., էջ 150։

Նորահայտ արձանագրությունը, որ անվիճելիորեն փորագրված պետք է լինի Ումեկի կողմից Նոր Գետիկը և շրջակայքը (այդ թվում նաև «Տախտ» գյուղատեղի եկեղեցին, որտեղ գտնվել է արձանագրված խաչքարը) գանձագին անելուց հետո, գալիս է մեկ անգամ ընդմիշտ լուծելու այս կնճիռը և հաստատելու բազմավաստակ բանասեր Գ. Հովսեփյանի կռահումն այն մասին, որ Նոր Գետիկի առուծախը տեղի է ունեցել Ումեկի և Զաքարյան Ավագի միջև 1242—1250 թվականներին, այսինքն վաճառական Ումեկի Արևելյան Հայաստան տեղափոխվելուց հետո (1242) և մինչև Ավագի մահվան թվականը (1250)։

Քանի որ արձանագրված խաչքարի բեկորները հայտնաբերվել են Գոշավանքից ոչ հեռու գտնվող գյուղատեղից, ուստի դժվար չէ համոզվել, որ այդ գյուղատեղը ևս իր երբեմնի սահմաններով Նոր Գետիկի վանքապատկան կալվածքների մեջ է մտնելիս եղել XIII դարի սկզբներին և հավանաբար այն ևս գանձագին է արվել Ումեկի կողմից։ Այլապես պարոն Ումեկի հիշատակությունը քննարկվող արձանագրության մեջ կմնար միանգամայն անհասկանալի։

Բացի դրանից, մեծատուն Ումեկը «պարոն» (կամ «պատրոն») տիտղոսով հորջորջվում է միայն Կարինից հյուսիսային Հայաստան տեղափոխվելուց հետո. իր հայրենիքում նա լոկ մեծահարուստ վաճառական էր, «երկիւղած ի տեառնէ»և «այր բարեգործ», ինչպես բնութագրում են նրան Վարդանն ու Գանձակեցին։ Առաջին անգամ «պարոն» տիտղոսով Ումեկը հիշատակվում է վերծանվող արձանագրության մեջ, որի ժամանակը, ինչպես տեսանք, 1242—1250 թվականներն էին։ Այստեղից դժվար չէ եզրակացնել, որ՝ ա) Ումեկը պարոնության իրավունք է ստացել ոչ այնքան վրաց Դավիթ Թագավորի կամ մոնղոլական ավագանու բարեհաճությամբ, որքան Ն. Գետիկի վանքը իր «ջրադարձիւք լեռնէ ի լեառն», վանքապատկան գյուղերն ու բավականաչափ ընդարձակ կալվածքները ձեռք բերելուց հետո և դրա շնորհիվ, բ) թեև վերծանվող արձանագրությունը և Նոր Գետիկի վանքի վաճառքը մոտավորապես նույն ժամանակների (1242—1250) իրողություններ ենք համարում, քանի որ նրանց ժամանակագրական սահմանները հենվում են նույն կռվանների վրա (Ումեկի գաղթը 1242 թ. և Զաքարյան Ավագի մահը 1250 թ.), միանգամայն ակնհայտ է, որ նախ պետք է կատարվեր Նոր Գետիկի առուծախը և ապա միայն փորագրվեր պարոն Ումեկի բարեգործության մասին սույն հիշատակագրությունը։

Այն հանգամանքը, որ վերծանվող արձանագրությունը ինչ-որ ժամանակով նախորդել է Թիֆլիսի ումեկաշեն Կաթողիկե ս. Գևորգ եկեղեցու կառուցմանը (1251) հիմք է տալիս պնդելու, որ Կարինից տեղափոխ-

վելուց և Թիֆլիսում բնակություն հաստատելուց անմիջապես հետո Ումեկի առաջին գործն է եղել Նոր Գետիկի վանքի և վանքապատկան գյուղերի ու կալվածքների գնումը, որը և հաջողությամբ գլուխ է բերել՝ գործի դնելով Կարինից բերած կարմիր դուկատները։

Գ. Հովսեփյանը այն միտքն է հայտնել, թե Ումեկյանների հողային սեփականությունը, ինչպես նաև տոհմական հոգևոր հաստատությունները բաժանված են եղել Ումեկի որդիների միջև. ըստ այդմ՝ որդիներից ավագը՝ Քարիմադինը ժառանգել է հոր շինած եկեղեցին Թիֆլիսում, միջնեկը՝ Ճարը ստացել է Գետիկը, իսկ կրտսեր որդու՝ Վախտանգի ժառանգության մասին տեղեկություններ չկան[25]։

Դժվար է համաձայնել բազմահմուտ գիտնականի այս վարկածի հետ, քանի որ Գոշավանքի հուշարձանների արձանագրություններում Ումեկյանների իշխանության՝ «պարոնության» կամ «տերության» մասնանշումով հիշատակվում են ոչ միայն Ճարը և նրա հետնորդները, այլև Թիֆլիսում ապրող պարոն Քարիմադինի որդիները և նույնիսկ դուստրը՝ Իգդիշ խաթունը։ Այդ է ցույց տալիս, օրինակ, Դասապետ և Կարապետ եղբայրների 1291 թվի շինարարական արձանագրությունը զանգակատան արևելյան պատին, որտեղ կարդում ենք. «Ի պարոնութեան Իգդիշ խաթունին և եղբարց իւրոց Արղութին և Թաղադամուրին, որդոց Քարիմադինին, որդո մեծին Ումեկին...»[26]։

Ուստի ավելի հավանական է կարծել, որ Նոր Գետիկը չի պատկանել Ումեկի որդիներից կամ թոռներից որևէ մեկին, այլ հանդիսացել է Ումեկյան գերդաստանի ընդհանուր տիրույթը, պարոնության նստոցը, այլև տոհմական հոգևոր կենտրոնը՝ «գանձագին հայրենի եկեղեցին»[27]։

Վերը շարադրվածից միանգամայն հասկանալի պետք է դառնան այն շարժառիթները, որոնք ստիպել են վանքի սպասավորներին Գետիկի վանքից ոչ այնքան հեռու եկեղեցիներից մեկի պատին արձանագրելու «աստվածասեր պարոն Ումեկի» կատարած բարեգործությունների մասին։

Բնագրում «աստվածասեր պարոն Ումեկը» փրկություն է դառնում եկեղեցիների համար և քահանաներին ազատում է հարկից։ Կասկածից վեր է, որ տվյալ դեպքում խոսքը մոնղոլական նվաճողների ավարառություններից և հարկապահանջությունից եկեղեցիները և նրանց սպասավորներին ազատելու մասին է, որ տեղի էր ունենում «նետողաց» ազգի

---

25 Գ. արք. Հովսեփյան, Նյութեր..., էջ 10։

26 Հր. Ջանփոլադյան, նշվ. աշխ., էջ 164։

27 Նույն տեղում, էջ 159։

արշավանքների առաջին տարիներին և համընկնում է արձանագրության փորագրման ժամանակին (1242 թվականից մի քանի տարի անց)։

Թաթարական հրոսակախմբերի կողմից Գետիկի վանքը և մերձակա գյուղերը ասպատակելու և ժողովուրդը գերեվարելու ցնցող պատկերներ է ներկայացնում դեպքերին ականատես Կիրակոս Գանձակեցին, որի տեղեկությունները ավելի մեծ հավաստիություն են ստանում նաև նրանով, որ Կիրակոսը իր սիրելի ուսուցիչ Վանական Վարդապետի հետ ճաշակել է թաթարական գերության բոլոր դառնությունները. «Անդ էր տեսանել,— գրում է Կիրակոսը,— զսուրս յանխնա կոտորել զարս և զկանայս, զերիտասարդս եւ զմանկունս, զծերս և զպառաւունս, զեպիսկոպոսս և զերիցունս, զսարկաւագունս և զդպիրս»[28], և ապա շարունակում է՝ «Սուգ զգեցաւ եկեղեցի, և բարձաւ զպայծառութիւն գեղեցկութեան նորա... ժողովեցին եւ զինչս, եւ ստացուածս եւ զգերիս բազմութեամբ»[29]։

Միանգամայն հասկանալի է, որ այս պայմաններում Գետիկին ու մերձակայքին դեռ նոր տիրացած պարոն Ումեկը չէր կարող անտարբեր անցնել իր տիրույթներում կատարվող ավերածությունների կողքով. վերծանվող արձանագրությունը հավաստիացնում է, որ պարոն Ումեկը օգտվելով մոնղոլական խաների և ավագանու մոտ ունեցած իր բարձր համարումից («...մեծարեալ ի ղանէն գրով եւ յամենայն աւագանւոյն») գուցե և իր ոսկիների ուժով զսպելով բասղաղների ընչաքաղցությունը (ինչպես նա այդ արել էր Կարինում), կարողանում է իր պարոնության սահմաններում մեղմել նրանց կամայականությունները և ձեռք բերել Մանգու խանի հրամանը՝ շրջակայքի եկեղեցիներն ու քահանաներին հարկատվությունից ազատելու մասին։

Արձանագրության այս հատվածը ստույգ մեկնաբանելուն մեծապես նպաստում է նույնանման մի իրողության նկարագրություն, որ մեջ է բերում Ստեփանոս Օրբելյանը իր «Պատմության» «Վասն մեծի նախարարութեանն Օրբէլեանց...» գլխում։ Խոսքը իշխանաց իշխան Սմբատ Օրբելյանի առաջին առաքելության մասին է դեպի Կարակորում՝ Մանգու խանի մոտ, որը տեղի է ունեցել մոտավորապես նույն տարիներին, 1251 թվականին։ Ինչպես պատմում է Օրբելյանը, իշխան Սմբատը Կարակորում մեկնելուց առաջ «շրջեալ ի վանորայս մեր, որք կային ի դառն հարկապահանջութեան...», վանական հայրերին խոստանում է

---

28 Կ. Գանձակեցի, էջ 239։

29 Նույն տեղում, էջ 241։

միջնորդել խանի առջև, որպեսզի նա՝ «զամենայն քահանայս ազատեսցէ ի հարկէ և զամենայն յափշտակեալ հայրենիս դարձուսցէ անդրէն»[30]։

Եվ հիրավի, Սմբատ Օրբելյանը Մանգու խանից ստանում է «Ոսկի փայիզայ» և «Եառլեխ» («որ է հրաման, զոր մեք սիգել կոչեմք»), որով նորից նրան են վերադարձվում Օրբելյանների բոլոր այն տիրույթները, որոնք այդ տարիներին անցել էին մոնղոլական իշխաններին։ Միաժամանակ Սմբատ իշխանը «...հրաման էառ ազատել զամենայն եկեղեցիս Հայոց և զքահանայս», որը և իրագործում է հայրենիք վերադառնալուց անմիջապես հետո։

Թեև Սմբատ իշխանի առաքելության այս նկարագրության մեջ հանդիպում են մի շարք առասպելական միջադեպեր (նշանագործ մասունքի տեսիլքը, «անգին և անգին» գոհարի պատմությունը և այլն), որոնք զգալի չափով վիպականացնում են պատմական իրադարձությունները, այնուհանդերձ պահպանելով պատմական դեպքերի հավաստիությունը, այդ հաղորդումը շատ կողմերով հիշեցնում է պարոն Ումեկի կատարած բարեգործությունը. երկու դեպքում էլ աշխարհիկ իշխանները միջնորդում են Մանգու խանի առջև և նրանից հրաման ձեռք բերում իրենց տիրույթների եկեղեցիներն ու քահանաներին մոնղոլների հարկերից ազատելու մասին։

Մեր կարծիքով, վերծանվող արձանագրության մեջ անուղղակի անկնարկվում է Նոր Գետիկի ու շրջակայքի նկատմամբ պարոն Ումեկի ունեցած վարչական իշխանության մասին. բնագրի «...յաշխարհակալ տէրութեան Աւագին, Գոնցին և զաւակաց իւրոց, աստուածասէր պարոն Ումեկին» թվարկումը պետք է հասկանալ իբրև աշխարհիկ իշխանության հիերարխիայի մատնանշում, իսկ Ումեկի պարոնությունը իբրև այդ հիերարխիայի ստորին աստիճան։

Մյուս կողմից, վերծանվող արձանագրությունը և Օրբելյանի վերոհիշյալ հաղորդումը միաժամանակ ցույց են տալիս, որ մոնղոլների տիրապետության առաջին շրջանում (1236 թվականից մինչև առաջին աշխարհագիրը՝ 1254 թ.) եկեղեցիներն ու հոգևորականությունը հարկահավաքման են ենթարկվել ամբողջ բնակչության հետ համահավասար, առանց որևէ արտոնության։ Ուստի Գանձակեցու վկայությունը՝ «բայց յեկեղեցականացն ոչինչ առին հարկս զի չունէին հրաման ի զանէն»[31],

[30] Տե՛ս Ստեփաննոս Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 408—9։

[31] Գանձակեցի, էջ 363։

պետք է վերագրել առաջին աշխարհագրին հաջորդող ժամանակաշրջանին։

Այսպիսով, ամփոփելով նորահայտ արձանագրության վերծանության և ընդհանուր բովանդակության առթիվ մեր ասածները, կարելի է եզրակացնել.

ա) Արձանագրությունը փորագրվել է 1242—1253 թթ. երբեմնի փոքրիկ խաչքարի թիկունքին, որը իբրև հարթ բեկոր դրված է եղել Ն. Գետիկի վանքից ոչ հեռու գյուղական եկեղեցու ներսի երեսպատման մեջ։

բ) Պատմական գյուղատեղը, որի եկեղեցու ավերակներում հայտնաբերվել են արձանագրված խաչքարի բեկորները, XIII դարի սկզբներին գտնվելիս է եղել Ն. Գետիկի վանքապատկան կալվածքների սահմաններում և արձանագրությունը փորագրելու ժամանակ ամբողջ վանքի հետ միասին Զաքարյան Ավագի կողմից վաճառված է եղել Կարինից գաղթած մեծատուն Ումեկին։

գ) Վաճառական Ումեկը Ն. Գետիկի վանքը և շրջակայքի բավականաչափ ընդարձակ տարածությունները գանձագին անելու շնորհիվ օժտվել է ավատական իշխանի բոլոր իրավունքներով և դարձել Կայենո գավառի այս շրջանի օրինական տերը, պարոնը (այլև վանքի պատրոնը), հիմք դնելով Ումեկյանների մոտ մեկ դար հարատևող պարոնությանը։

գ) Պարոնացած Ումեկը, օգտվելով մոնղոլական իլխանության մեջ ունեցած իր հեղինակությունից, միջնորդում է Մանգու խանի առջև և նրա հրամանով իր պարոնության եկեղեցիներն ու քահանաներին ազատում է մոնղոլների հարկատվությունից, որի մասին և այդ եկեղեցիների սպասավորները քանդակել են քննարկվող արձանագրությունը։

Ո՞Վ Է ՍԱՆԱՀՆԻ ՏԱՊԱՆԱԳՐՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ՍԱՐԳԻՍ ՓԱՐՋԻԿԸ*

Սանահին գյուղի արևելյան ծայրին, հուշարձանախմբից ոչ հեռու, «Թեփակեր» կոչվող հնագույն (1011 թ.) խաչարձանի մոտ ընկած է մի անզարդ տապանաքար, որի վրա, ըստ պրոֆ. Կ. Ղաֆադարյանի միակ վերծանության, փորագրված է՝ ՍԱՐԳԻՍ։ ՈՐ Է ՓԱՐՋԻԿ հիշատակա-

* «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 1։

գիրը։ Վերծանողը բացատրություն չի տալիս Թաղվածի անձի կամ տապանագրի մասին, միայն նրա ժամանակը համարում է XII—XIII դդ. և, անձնանունների ցանկում Փառշիկ-ը գլխագրով դնելով, հավանաբար, այն դիտում է իբրև հանգուցյալ Սարգսի ազգանուն կամ մականուն[1]։

Ուսումնասիրությունից պարզվում է, որ Սանահնի սույն տապանաքարի տակ հանգչող Սարգիս Փարշիկը մի սովորական, պատմությանն անհայտ մահկանացու չէ, այլ միջնադարյան Հայաստանի ականավոր արվեստավորներից մեկը։



Բանասիրությանը վաղուց հայտնի էր, որ Անիում Աբլղարիբ Պահլավունու 1036 թ. կառուցած Ս. Փրկիչ եկեղեցու ներսի բազմագույն որմնանկարների հեղինակը Սարգիս Փառշիկ որմնանկարիչն է, որը տաճարի հյուսիսային գմբեթարդներից մեկի վրա պատկերված Մատթէոս ավետարանիչի դիմաց նկարել է իրեն՝ ծնկաչոք վիճակում, հայացքը ուղղած ավետարանիչին, նրանից բարեխոսություն հայցելիս։ Փրկչի հուշարձանի որմնանկարների հպանցիկ նկարագրությունը, հատկապես Սարգիս Փառշիկի ծնկաչոք պատկերի, սրա բարեխոսական հիշատակագրության և այդ հիմամբ նրան որմնանկարների հեղինակ համարելու մասին իր նկատառումները դեռևս 1898 թ. առաջին անգամ բանասիրությանն է ներկայացրել ակադ. Մառը, Անիի պեղումների արդյունքներին նվիրված ուսումնասիրության մեջ. «Մատթէոսի պատկերից ներքև,— գրում է նա,— նկարված է ծնկաչոք Սարգիս Փառշիկը՝ ավետարանիչից բարեխոսություն խնդրելիս. ամենայն հավանականությամբ սա տաճարը պատկերագրող նկարիչն է»[2]։

Սարգիս Փառշիկ արվեստավորի մասին Մառի այս վարկածը հետագայում համընդհանուր հավանություն ստացավ և առանց նոր փաստերի ներգրավման կրկնվեց այլ հետազոտողների կողմից, որով և նա ճանաչվեց իբրև Փրկչի տաճարի որմնանկարների հեղինակ[3]։ Ավելի հիմնավոր Փրկչի պատկերագրությանը և նրա հեղինակ Սարգիս Փառշիկին անդրադառնում է Թ. Թորամանյանը «Պատկերները հայոց հին եկեղեցիներում մեջ» անավարտ ուսումնասիրության մեջ։ Այստեղ հայ ճարտարվեստի անխոնջ հետազոտողը նկարագրում է Անիի մյուս եկեղեցիների և հատկապես Փրկչի որմնանկարների պահպանված բեկորները, աշխատում պարզել դրանց կատարման ժամանակաշրջանը և հեղինակներին։ Թորամանյանն իրավամբ այն համոզմանն է հանգում, որ Փրկչի գմբեթարդների որմնանկարները ժամանակակից չեն հուշարձանի կառուցմանը (1036 թ.), այլ կատարվել են տաճարի հետագա նորոգումների ժամանակ, XIII դարի ընթացքում. բստ որում, նա անհավանական է համարում որմնանկարների ժամանակը դնել առաջին նորոգության շրջանում, այն է՝ ՈԻԲ—1173 թ. (թվականը պետք է լինի 1133, քանի որ իրականում վերանորոգման արձանագրությունը, ինչպես կտեսնենք ստորև, թվագրված է ՈԽԲ, ոչ թե ՈԻԲ), այն պատճառով, որ հուշարձանի գմբեթի ներսը մնացել է առանց նկարների, այսինքն նորոգման ժամանակ չի պատկերագրվել։ Այսպիսով, բստ Թորամանյանի՝ «հայտնի բան է, որ շատ թեթև ծախքով մը ստորին մասը (տաճարի) ծեփեր և վրան նկարեր են նորոգութենեն շատ հետո»[4]։ Թորամանյանն առաջինը լինելով արտագրել է Սարգիս Փառշիկի ինքնագիր հիշատակագրությունը, որը սևաներկով, գեղեցիկ տառերով գրված է կանաչավուն ծեփի վրա, նկարչի գլխից վերև. Ս. ԱՒԵՏԱՐԱՆԻՉ ԲԱՐԵԽՕՍԵ՛Ա ՎԱՍՆ ՍԱՐԳՍԻ ՓԱՌՇԿԵԱՆՍ[5]։ Մինչև Թորամանյանի այս վերծանությունը, Մառի և Օրբելու հրապարակումներից հայտնի էր ոչ թե ամբողջ բարեխոսականը, այլ միայն որմնանկարչի անունն ուղիղ ձևով, այն էլ ռուս. տառադար-

[1] Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 181, 200։

[2] «Братская помощь армянам», М., 1898, стр. 207.

[3] Տե՛ս Ա. Սեդրակյան, Հայաստանյայց եկեղեցու պատկերհարգությունը, ՍՊբ, 1904, էջ 93։ И. А. Орбели, Избранные труды, Е., 1963, էջ 127։

[4] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Ա, 1942, էջ 166։

[5] Նույն տեղում։

ձուլմամբ՝ Саргис Фаршик, որից հայերեն բնագիրը ենթադրաբար վերականգնվում էր ՍԱՐԳԻՍ ՓԱՐՇԻԿ կամ ՓԱՌՇԻԿ։

Հայաստանի պատմության թանգարանում պահվող սևապակու վրայից կարդալով հիշատակագրությունը, Թորամանյանի վերծանությունը ճշգրտում ենք հետևյալ կետերում. ա. ՎԱՍՆ-ի փոխ. պետք է լինի ԱՌ ՔՍ, բ. ԱՒԵՏԱՐԱՆԻՋ բառից հետո կարդացվում է ՔԻ (Քրիստոսի), գ. ՓԱՌՇԿԵԱՆՍ հարկ է ուղղել՝ ՓԱՌՇԿԱՆՍ։ Այսպիսով, Սարգսի ամբողջ արձանագրությունը ըստ լուսանկարի նույնական վերծանության կլինի (նկ. 2). ՄԲ ԱՒԵՏԱՐԱՆԻՋ ՔԻ, ԲԱՐԵԽԱՒՍԵ՛Ա ԱՌ ՔՍ ՍԱՐԳՍԻ ՓԱՌՇԿԱՆՍ, որտեղից էլ արվեստավորի անվան ուղիղ ձևը՝ ՍԱՐԳԻՍ ՓԱՌՇԻԿ (=ՓԱՐՇԻԿ)։

Ամենայն հավանականությամբ նույն Սարգիս Փառշիկն է հիշատակված նաև Խծկոնքի Ս. Սարգիս եկեղեցու մոտ կանգնեցված խաչարձանի ճակատին ՈԿԵ (1216) թ. փորագրված նվիրագրում։ Այս բնագիրը գիտական վերծանություն չունի և բանասիրությանը ծանոթ է անցյալ դարի վերջում կատարված ընդօրինակություններից, որոնց հավաստիությունը, լուսանկարը չունենալու պատճառով, դժվար է երաշխավորել։ Մեջ ենք բերում այդ արձանագրության համապատասխան հատվածը Կրպեի և Հուսիկ եպիսկոպոսի վերծանությունից. այգի մի ի ծմակին Շիկանին :Բ: աւր ժամ Մարգարէին :Բ: աւր Մխիթարայ. այգի մի ի Մարմետի, ի Փաղանկ. տեղն արևիսի :Գ: աւր պատարագ. ի Մարմետ Վարդիրեցո հողին :Ա: վարն, :Բ: աւր պատարագ. ի Կոդբ խաչին այգին, որ Յոհաննէս տուեալ է յիշատակ իւր դստերն Մամին, :Գ: աւր պատարագ Մամին, :Ա: աւր Մամքանին, :Բ: աւր պատարագ ՍԱՐԳՍԻ ՓԱՐՇԿԵԱՆՑ, որ երետ ի Թարխինակնէն :Ժ: բեռին տեղ...[6]:

Այս նվիրատվական բնագիրը փորագրված է խաչքարի թիկունքին, ՈԿԵ—1216 թ., սակայն բուն խաչքարը կանգնեցվել է ավելի վաղ՝ ՆՁ (1031) թ., ինչպես վկայված է նրա արևմտյան ճակատի հետևյալ հիշատակագրության մեջ. քանզի է սա սեռ և նշան անապակ Այ սիրոյն, կամ եղև իմ հաւր (անունն անընթեռնելի) կանգնել զխաչս ի բարեխաւսութիւն ինձ եկեղեցպանիս Յիսէի, որք կամք ի թաղման առաջի ս. խաչիս, ի ՆՁ թվա[7]: Ինչպես ակներև է մեջ բերված զույգագրական արձանագրություններից, նվիրատու Սարգսի ազգանունը կամ մականունը այստեղ ոչ թե Փառշիկ, Փարշիկ է, այլ Փարշկեանց, որ առաջանում է Փարշկեանք (<Փարշիկ) հավաքական տոհմանունից։ Եղած տվյալներով

[6] «Ազգագրական հանդես», Թիֆլիս, Ա, 1896, էջ 45։ «Արարատ», 1904, էջ 991։

[7] Նույն տեղում։

դժվար է որոշել, թե Սանահնի տապանագրի Փարշիկը և Փրկիչ եկեղեցու որմնանկարիչ Փառշիկը Խծկոնքի խաչքարի նվիրագրում հիշատակվել է այլ ձևով՝ իբրև տոհմանուն՝ Փարշկեանց, դարձյալ առաջացած Փառշիկ, Փարշիկ ձևերից, թե՞ իրականում Խծկոնքում փորագրված է եղել Սարգսի Փարշկան և ընդօրինակողներն են այն դիտել ազգանուն և դարձրել Փարշկեանց, մանավանդ որ նույն շփոթությունը տեղի էր ունեցել նաև Փրկչի որմնանկարի արձանագրության վերծանության դեպքում, երբ պարզ գրված ՍԱՐԳՍԻ ՓԱՌՇԿԱՆՍ Թորամանյանը, հավանաբար նույն հիմունքով, կարդացել էր ՍԱՐԳՍԻ ՓԱՌՇԿԵԱՆՍ։

Վերևում մեջբերված երեք վկայությունները՝ Սարգսի Փառշկանս (Փրկիչ եկեղեցու որմնանկար), Սարգիս: որ է Փարշիկ (Սանահնի տապանագիր) և Սարգիս Փարշկեանց (Խծկոնքի խաչքար) նույն անձի անուն, մականուն կամ ազգանուն համարելով, աշխատենք պարզել նրա ապրած ու ստեղծագործած ժամանակը։ Խծկոնքի նվիրագրի ժամանակը ստույգ հայտնի է՝ ՈԿԵ—1216, այդ թվականին կամ դրան մոտ ժամանակում Սարգիս Փարշկեանցը Խծկոնքի վանքին է նվիրել Թարխինակն հանդամասում գտնվող իր հողակտորը՝ 10 (:Ժ:) բեռի տեղ տարածությամբ։ Հարկ է նշել, որ ինչպես Սարգիս Փարշկեանցի, այնպես էլ ընծայագրում հիշատակված մյուս նվիրատուների արժեքները վանքին են հատկացվել այնտեղ ՈԿԵ թ. վերանորոգման ընթացքում, քանի որ մեր մեջբերած զույգագրական ցուցակին նախորդում է այդ նպատակով կանգնեցված խաչքարի արձանագրության նախաբանը՝ 1031 թ. Վեստ Սարգսի կառուցած Ս. Սարգիս եկեղեցին նորոգելու մասին։ Ահա այդ հատվածը. եղև վերստին նորոգումն վանացս ի ձեռն ածասէր բարեպաշտ թագաւորին Շահնշահի, որդո Զաքարիայի, ի թուականութեանս հայոց :ի ՈԿԵ: ի հայրութեան Յովհաննիսի, կամ եղև ամենայն եղբարցս և շինեցաք, որ անխափան լինի... այնուհետև հաշվարկվում է վանքին տրված կալվածքների և դրանց դիմաց խոստացած հատուցումների մասին[8]։

Սարգիս Փառշիկի կյանքի և ստեղծագործության ժամանակագրությունը պարզելուն մեծապես կարող է նպաստել Փրկիչ եկեղեցու որմնանկարների և ինքնագիր հիշատակագրության ժամանակի որոշումը, քանի որ նրա մասին վերջին վկայությունը՝ Սանահնի անթվական տապանագիրը, սոսկ նկարչի կյանքի ավարտն է նշում։ Արդ, ե՞րբ է պատկերագրվել Աբլղարիբ Պահլավունու 1036 թ. կառուցած Փրկիչ տաճարը։ Անառարկելի է, որ տաճարի որմնանկարումը կատարվել է ոչ թե շինու-

[8] Նույն տեղում։

թյան ընթացքում, այլ ավելի ուշ, հետագա նորոգումների ժամանակ։ Հարցն արծարծող գիտնականները՝ Մառը, Թորամանյանը, Օրբելին համոզիչ ցույց են տվել այդ իրողությունը և հարկ չկա կրկնելու նրանց փաստարկները։ Մնում է պարզել, թե ե՞րբ են տեղի ունեցել տաճարի նորոգումները, և դրանցից որի ժամանակ են նրա գմբեթարդները որմնանկարվել։ Մատենագրական աղբյուրները Փրկչի վերանորոգման մասին տեղեկություններ չեն տալիս. բարեբախտաբար տաճարի պատերին փորագրված հիշատակություններից հնարավոր է պատկերացում կազմել այնտեղ XII—XIV դ. կատարված երեք նորոգումների ծավալի և ժամանակի մասին։ Սկսենք վերջինից. ՉՂԱ—1342 թ. Զաքարյանների շառավիղ Վահրամը ձեռնարկում է միայն գմբեթի նորոգմանը, որը նրա հրամանով ավարտում է ոմն Գրիգորի որդի Ասիլը։ Ահա այդ մասին պատմող արձանագիրը. Ես՝ աթապակ Վարհամ, որդի Իւանէի, որդուն մեծին և հզաւրին Զաքարիաի վերստին նորոգեցի զկումբէթ Սուրբ Փրկչիս...: Ես՝ Ասիլս, որդի Գրիգորո առաքեցա պատրոնին հրամանաւն աթաբակ Վարհամա և էկել կատարեցի մեծ ջանիւ և աշխատութեամբ զհրամանելն ինձ[9]: Այս բնագրից ակներև է, որ 1342 թ. վերանորոգման ընթացքում որմնանկարներ, գոնե գմբեթի ներսում, չեն արվել, քանի որ նրա առկա ծեփածածկույթի վրա այդ նկարների հետքեր չեն պահպանվել։

Տաճարի վերանորոգման կամ շինարարության մասին մյուս հիշատակությունը վերաբերում է 1271 թ. (Օրբելին այս արձանագրության թվականը դնում է ըստ նախորդ վերծանողների՝ Չխ—1291 թ., մինչդեռ Անիի արձանագրությունների իր հետմահու հրատարակված ժողովածուում թվագիրը Չի—1271 է)։ Ըստ այդ արձանագրության ոմն Մխիթար Շերացի սուրբ նշան է տվել Փրկչին, զանգակներ բերել և կառուցել տաճարին կից զանգակատուն. Ի թուին :Չի: Ես՝ Մխիթար Շերացի, որդի Զոսիմի Սալուքենց.. սուրբ նշանս ետու ի Փրկչիս և բերի զանգականիս և շինեցի զանգակատունս ի հալալ արդեանց իմոց[10]: Այստեղ, ըստ էության, գործ ունենք զանգակատան շինարարական արձանագրության հետ և Փրկչին խաչ նվիրելուց բացի, ոչինչ չի ասված բուն տաճարում կատարված նորոգումների, առավել ևս որմնանկարման մասին, թեև բնագիրը փորագրված է ոչ թե զանգակատան, այլ տաճարի արտաքին պատին։

[9] «Դիվան հայ վիմագրության», պրակ Ա, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 44։

[10] Նույն տեղում, էջ 43։

Մնում է հուշարձանի նորոգման ամենավաղ հիշատակությունը՝ Տրդատ քահանայի երկարաշունչ արձանագրությունը, մուտքից արևմուտք, կամարներից մեկի մեջ, որտեղ հեղինակը հայտնում է զանձագին հայրենիք Սուրբ Փրկիչը նորոգելու և վանքին բազմաթիվ կալվածքներ տալու մասին. Յամի :ՈԽԲ: (այլ ընդօրինակություններում՝ ՈԻԲ—1173 թ.) թուականին, արդ ես՝ Տրդատ քահանա, որդի Սոսթէնէս քահանաի եւ զուգակից իմ Խուշուշ շինեցաք վերստին զմեր զանձագին հայրենիքս զՍուրբ Փրկիչս շատ աշխատութեամբ և նորոգեցաք յառաջին պայծառութիւնն... շինեցաք սմա ժամատունս ամարանո և ձմեռանո..., ապա թվարկվում են նվիրված արժեքները[11]: Հավանական է, որ հենց այդ ժամանակ էլ որմնանկարվել են տաճարի բոլոր ութ կիսակլոր գմբեթարդները, այդ է ակնարկում բնագրի ձևակերպումը. շատ աշխատութեամբ... նորոգեցաք յառաջին պայծառութիւնն:

Թ. Թորամանյանը, հաշվի առնելով Փրկիչ տաճարում Տրդատի նորոգության ժամանակից (1173 թ.) մինչև Խծկոնքի Ս. Սարգիս եկեղեցու նորոգումն ու Սարգիս Փարշկեանցի նվիրատվությունը (1216 թ.) ընկած 43 տարվա զգալի միջոցը, հնարավոր չէր համարում Սարգիս Փառշիկի որմնանկարների ժամանակը դնել Տրդատ քահանայի կատարած նորոգության ընթացքում (այդ ժամանակ Սարգիսը զառամյալ ծերունի պետք է լիներ), այլ դրանք ավելի ուշ, XIII դարի վերջերին կատարված առանձին, փոքր նորոգության արդյունք էր համարում[12]։ Այժմ, երբ ճշգրտված է Տրդատի ձեռնարկած վերանորոգման ժամանակը՝ 1193 թ., այդ առարկությունը զրկվում է հիմքից, քանի որ 1193 թ. հազիվ 50 տարեկան (Թորամանյանն այդքան է որոշում որմնանկարում պատկերված ծնկաչոք անձի տարիքը) Սարգիս Փառշիկը 23 տարի անց՝ 1216 թ., կարող էր դեռ գործունյա լինել, իր հողակտորը նվիրել վանքին և նույնիսկ մասնակցել Խծկոնքի եկեղեցու նորոգմանը։

Այժմ դառնանք Սարգիս Փառշիկի (=Փարչիկ) վերջին հիշատակությանը՝ Սանահին գյուղում գտնվող տապանաքարին, որի վրա հստակ փորագրված է ՍԱՐԳԻՍ : ՈՐ Է ՓԱՐՉԻԿ հիշատակագիրը։ Պրոֆ. Կ. Ղաֆադարյանը, ելնելով տապանաքարի մշակման եղանակից, տապանագրի տառաձևերի հնագրական կերպարից, այլև հարևան թվագրված խաչքարերի ու տապանագրերի ժամանակից, Սարգիս Փարշիկի շիրմաքարը XII—XIII դդ. գործ է համարում։ Հավանաբար հեղինակը նկատի չի ունեցել Փրկչի որմնանկարի Սարգիս Փառշիկին և Խծկոնքի

[11] Նույն տեղում, էջ 47։

[12] Թ. Թորամանյան, Նյութեր..., Ա, էջ 166։

խաչարձանի Սարգիս Փարշկեանցին, այդ պատճառով էլ նկատի չի առել սրանց և Սանահնի տապանագրի Սարգիս ՓԱՐՁԻԿԻ նույնացման հնարավորությունը, մինչդեռ հիշյալ երեք անձերի միայն ապրած ժամանակաշրջանի մոտիկությունը որոշակի հիմքեր է ընձեռում այդ նույնացման համար։ Սակայն հիշյալ Սարգիսների նույն անձը լինելու լավագույն ապացույց կարող ծառայել այդ անվան վրա դրված՝ Փառշիկ, Փարշկեանց (<Փարշիկ), Փարչիկ հարադրի ստուգաբանությունը։ Արդ, ի՞նչ է նշանակում փառշիկ, փարչիկ բառը. արդյոք այստեղ գործ ունենք սովորական մականվան կամ ազգանվան հետ, թե այդ բառով մատնացույց է արվել Սարգսի ով, որտեղացի լինելը, ինչ զբաղմունք կամ արհեստ ունենալը, ինչպես սպասելի էր նման պարագաներում։ Սանահնի տապանագրի ձևակերպումը, որ զգալապես շեղվում է սովորական հիշատակագրություններից, ակնհայտորեն ցույց է տալիս, որ փարչիկ բառն այս դեպքում ոչ թե Սարգսի տոհմանունը կամ ազգանունն է, այլ նրա զբաղմունքի, արհեստի, մասնագիտության բացահայտիչը՝ Սարգիս, որ է փարչիկ. այսինքն՝ Սարգիս, որը փարչիկ է, ինչպես կարող էր լինել՝ Սարգիս, որ է ծաղկող (որը ծաղկող է), որ կազմող, որ է գծող և այլն։ Եվ իրոք, եթե փարչիկը լիներ Սարգսի ազգանունը կամ մականունը, այդ դեպքում տապանագրում կունենայինք օրինաչափ՝ Սարգիս Փարչիկ, Սարգիս Փարշկեան, Սարգիս Փարշկեցի, Սարգիս որդի Փարշկան և այլն, մինչդեռ պարզ փորագրված է՝ Սարգիս : որ է փարչիկ:

Սանահնի և Հաղբատի հուշարձանների մերձակայքում տարբեր դարերի բազմաթիվ տապանագրեր կան, որոնք կամ մի հատիկ բառից են՝ հանգուցյալի անունից՝ Վանենի, Ռուսուդան, Վասակ, կամ թաղվածի ազգակցությունը, իշխանությունը, հոգևոր աստիճանն ու պաշտոնը նշող բառակապակցությունից՝ Կիւրիկէ թագաւոր, Գրիգոր ամիրա, Զաքարէի եւ Իւանէի քոյրն է Դափն, Սմբատ որդի Ուխտանա, Յոհաննէս հայր, Գրիգոր վարդապետ, որդի Աբասայ և այլն։ Ուշ շրջանի Հաղբատի տապանագրերից մեկում անունից հետո դրված է որ է հարաբերականը, և դարձյալ բացահայտում է նրա որտեղացի լինելը. այս է տապան Գայրանայ մահդասուն, որ է յէրէվանցի[13]։ Եթե անգամ ընդունենք, որ Փառշիկ, Փարշկեանց վկայված իրադրության մեջ Սարգսի տոհմանունը կամ մականունն է, ապա այն պետք է առաջանար զբաղմունք, արհեստ, մասնագիտություն արտահայտող բառից, ինչպես ունենք մազման արհեստից՝ Մազմանեան, նալբանդից՝ Նալբանդեան, սառաչից՝ Սառաչեան, մանկալից՝ Մանկալեան, ներկարարից՝ Ներկարարեան և այլն։

13 Կ. Ղափադարյան, Սանահնի վանքը..., էջ 175, 182, նույնի՝ Հաղբատ, Երևան, 1963, էջ 182—186, 215։

Այստեղից ակներև է, որ Փրկչի որմնանկարի բարեխոսականում և Սանահնի տապանագրում փառշիկ, փարչիկ հարկ է վերծանել փոքրատառով և դիտել իբրև Սարգսի արհեստը, զբաղմունքը մատնանշող որոշիչ բառ, իսկ Խծկոնքի նվիրագրի Փարշկեանցը (եթե այն ստույգ է վերծանվել)՝ նրա տոհմանունը, որը կարող էր առաջանալ նույն արհեստի, մասնագիտության փարչիկ սկզբնաձևից։

Իսկ ի՞նչ մասնագիտություն է արտահայտում փառշիկ, փարչիկ (=Փարշկեանք) բառը։ Քանի որ Փրկչի տաճարը որմնանկարողի ինքնագիր բարեխոսության տակ պահպանվել է արվեստավորի անունը և դրան հարադրված մասնագիտությունը՝ Սարգիս փառշիկ, ուրեմն վերջինս պետք է նշանակեր նկարիչ, որմնանկարիչ, շենքերի ներսի ծեփը պատկերազարդող և այլն, ինչպես ձեռագրերի մանրանկարների տակ ունենք նրանց հեղինակներին՝ ծաղկող, նաղաշ, նկարող, գրիչ, խաչքարերի քանդակների մեջ կամ վիմագրերի վերջում՝ կազմող, հօրինող, քարգործ, գծող և այլն։

Փառշիկ, փարչիկ բառի ստուգաբանությունը հաստատում է այս ենթադրությունը. պարս. fars արմատի դիմաց բառարանները տալիս են գորգ, կարպետ, ծածկույթ, տապաստակ, փռվածք իմաստները[14], ըստ այսմ, իկ հայ. ածանցի հավելումով faršik — փարչիկ կարող էր արտահայտել հիշյալ բառերի հետ առնչվող արհեստ-արվեստավոր, այսինքն պատերի ծեփածածկը նկարներով, գորգանման կամ կարպետանման ճարդարող, ծածկող, որմնանկարիչ:

Հայ մատենագրության մեջ մինչև փառշիկ արհեստի այս հիշատակությունը շենքերի ներսի պատերը նկարազարդողները անվանվում էին՝ գեղագեղիչ, նկարիչ, զաւախ (զօռախ)* կամ պատկերագործ, երեքն էլ ավանդված Մովսես Կաղանկատվացու և Ստեփանոս Օրբելյանի երկերում։ «Աղվանից պատմության» հեղինակն այսպես է ներկայացնում Գարդմանի տաճարում մեծ իշխան Ջիվանշիրի ձեռնարկած հարդարումները և սրանք կատարող վարպետներին. «սկսանէր զօր ինչ ազնուական նիւթեղինացն առ ի զարդ հրաշագեղութեան անճառելի լուսոյն ծախել. որ և գեղագեղիչս ի գործ արկեալ նկարեաց ի գմբեթէն մինչև ի բարաւորս դրան, պատաղահիւթ կերպասագործեալ»[15]։ Այստեղ մեր

14 «Персидско-русский словарь», под ред. Ю. Рубинчика, М., 1970, էջ 229:

15 «Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 225։

* Պետք է կարդալ աւռախ—>վարրախ: —Խմբ.:

կարծիքով խոսքը գեղագեղիչների (որմնանկարիչ) ձեռքով եկեղեցին ներսից որմնանկարելու մասին է, և պատաղանիք կերպասագործեալ եւս պետք է հասկանալ ոչ թե բառացի՝ պատերը կերպասներով պատառելու (все покрыл шелковыми материалами), ինչպես հասկացել են Կաղանկատվացու երկի թարգմանիչները, այլ գմբեթից մինչև բարավորները պատերը զարդանկարելու, պատկերագրելու, նկարներով կերպասի նման ծածկելու՝ կերպասագործելու իմաստով[16]։

Ստեփանոս Օրբելյանն էլ, պատմելով Սոփիա տիկնոջ կողմից Գընդեվանքի կառուցման մասին, հավանաբար հնագույն վավերագրերից քաղելով, նշում է. «ապա յարուցեալ տիկնոջն ետ ածել վաղվաղակի արուեստաւորս ի ճարտար քարատաշաց. և սկիզբն առնէ շինուածոյն կացուցեալ ի վերայ վանաց երէցն զհայր Սարգիս, և գործակալ զԵղիշա երէց և նկարիչ»[17]։ Ինչպես հայտնի է, մեզ են հասել Եղիշայի՝ Գնդեվանքի եկեղեցում նկարած գունավոր որմնանկարների մնացորդները, ինչպես նաև որմնանկարչի 931 թ. ինքնագիր հիշատակությունը՝ այդ աշխատանքներն ավարտելու մասին. «Ես՝ Եղիշա ի :Զ: կարգես առաջ արարի»[18]։ Տաթևի պատկերագրման և կատարող վարպետների մասին վկայությունը Օրբելյանը մեջ է բերում Հակոբ եպիսկոպոսի շինարարական գործերը նկարագրելիս. «շինէ... զմբէթայարկ խորան մի յոյժ հրաշակերտ յօրինուածովք, և զորմ և զձեղուն նորա ետ զարդարել նկարչաց զանազան երանգօք, նկարել զամենայն տնօրինական և տէրունական պատկերս»։ Պատկերազարդող նկարիչների մասին ավելի որոշակի Օրբելյանը շարունակում է. «Այս Յակոբ ետ ածել [զ]նկարիչս* և զաւախս, որ է պատկերագործ ի հեռաւոր աշխարհէ Փռանգ ազգաւ. և զլուսաճեմ յարկս աստուածաբնակ տաճարիս բազում և անհուն ծախիւք ետ նկարել զբովանդակն ի վերուստ մինչև ի վայր»[19]։

Փոխառյալ զօռախ–պատկերագործ բառը, Աճառյանի կարծիքով, ծագում է պարս. zar-vara ∆-ոսկեբերք բուղք հարադրությունից (պրս. zar –ոսկի, արաբ. vara ∆-բերք արմատներից), որ անշուշտ կարող էր վերաբերել միայն շենքերի պատերը նկարազարդող, հատուկ մասնագետ

16 Տե՛ս «История Агван Моисея Каганкатваци», пер. К. Патканяна, СПб., 1861, էջ 158։ „The History of the Caucasian Albanians by Movses Dasxuranci", translated by C. Dowsett, London, 1961, էջ 126։ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմ. Վ. Առաքելյան, Երևան, 1969, էջ 153։

17 Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 260։

18 «Դիվան հայ վիմագրության», պրակ Գ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 14։

19 Ստ. Օրբելյան, էջ 260։

* Ուղղումը մերն է։ — Խմբ.։

ծաղկողներին կամ որմնանկարիչներին, սրանց՝ ձեռագրերի սովորական նկարիչ-ծաղկողներից տարբերելու համար[20]։

Հայ արվեստի պատմությունից հայտնի է, որ Բագրատունիների ոստան Անիում և մերձակայքում ճարտարապետական ձևերի բուռն վերելքի հետ, բարձր զարգացման է հասնում նաև հոգևոր ու աշխարհիկ շենքերի ներքին մակերեսները նկարազարդելու, որմնանախշերով ու գեղազարդային միջոցներով հարդարելու արվեստը, որի առանձին բեկորներ հասել են մեզ և նկարագրված են մասնագիտական գրականության մեջ։ Անիում տնօրինական և տէրունական նկարներով պատկերագրված են եղել Փրկչի, Առաքելոց, Տիգրան Հոնենցի, Բախտաղեկի եկեղեցիները, Պարոնի պալատը, քաղաքացիական այլ շենքեր, նաև ունևոր անեցիների բնակարանները։ Որմնանկարներ են ունեցել Աղթամարի, Մրենի, Հոռոմոսի տաճարները։ Բնական է, որ շենքերը որմնանկարելու արվեստը եւս պետք է ունենար համապատասխան վարպետ կատարողներ, ինչպես նույն Անիում և մերձակայքում ունենք քաղաքային նոր կենցաղն ու մշակույթն արտացոլող արհեստների և արվեստների բազմաթիվ անվանումներ՝ ճարզոծ, լարարար, փոկար, սարաչ, ոսկող, գծող, գրիչ և այլն։

Փրկիչ եկեղեցու որմնանկարում հիշատակված փառշիկ անվանումը վկայում է, որ որմնանկարչությունը ինքնուրույն մասնագիտություն էր դարձել բարգավաճ Անիում այն չափով, որ հարկ է զգացվել այն առանձնացնելու թղթի կամ մագաղաթի վրա ծաղկող, ոսկող, նկարող վարպետներից, հատուկ փոխառյալ տերմինով որակելով այդ արվեստավորներին։ Այդ է պատճառը, որ պատմական Հայաստանի այլ գավառներում որմնանկարիչ վարպետներին տրված՝ գեղագեղիչ, նկարիչ, զօռախ, պատկերագործ անվանումների փոխարեն Անիում ունենք նույն մասնագիտությունն արտահայտող նոր, պարսկերենից փոխառված փառշիկ, փարշիկ տերմինը, որը միաժամանակ վկայում է այդ արհեստ-արվեստի ուրույն, մյուս նկարիչ-արվեստավորներից տարբերվող առանձնահատկության մասին։

Փառշիկ, Փարշկեան, փարշիկ պարս. farş արմատից սերած ձևերի հնչյունական աննշան տարբերությունները չեն կարող լուրջ առարկություն լինել ինչպես մեր առաջարկած ստուգաբանության, այնպես էլ նրա երեք վկայությունների նույնացման համար։ Պատմական հնչյունաբանությունից գիտենք, որ հին պարս. f հայերենում տառադարձվում է հ-ով՝ frasax, farsax-հրասախ, fireşta- հրեշտակ, farhang-հրահանգ,

20 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Բ, 1973, էջ 113։ Ստույգ և նախընտրելի է Ն. Մառի ստուգաբանությունը՝ արաբ. wazraq։ — Խմբ.։

իսկ ավելի ուշ շրջանի փոխառություններում՝ նաև փ-ով՝ farman–փարման, fadān–փաղան, fānid–փենիտ և այլն[21]։ Այսպիսով, farş արմատի նախահունչ f-ն հայերենում օրինաչափորեն կարող էր վերածվել փ-ի՝ փարշ–իկ: Մյուս կողմից, բառամիջի r-ի ավելի թրթռուն դառնալը՝ փառշկան և շ>չ ձայնեղացումը՝ փարչիկ, կարող էր տեղի ունենալ բարբառային արտասանության ազդեցությամբ։

Սակայն կարող են առարկել, թե ինչպես է պատահել, որ Անիում ու Խծկոնքում ապրած ու ստեղծագործած Սարգիս փառշիկ, փարչիկը իր մահկանացուն կնքել է հյուսիսային Հայաստանի հոգևոր-մշակութային կենտրոնում՝ Սանահնում, հայրենի վայրերից այդքան հեռու։ Պատմությունից հայտնի է, որ Բագրատունիների քաղաքամայր Անին սերտ հարաբերություններ է ունեցել Հաղբատ-Սանահին կենտրոնների հետ ոչ միայն նրանց կառուցման ժամանակներում, որ իրականացրել են Հայոց Խոսրովանույշ թագուհին և Աշոտ Ողորմած թագավորը (X դար), այլև հետագա դարերում, հատկապես Զաքարյանների տիրապետության շրջանում։ Նվազագույն ապացույց կարող են ծառայել Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Սարկավագը, Գրիգոր Տուտեորդին, Հովհաննես Երզնկացին, որոնց գործունեությունը կապված է եղել թե՛ Անիի և թե՛ Հաղբատ-Սանահնի հետ։ Հաղբատում են թաղված Հովհաննես Սարկավագը, Հովհաննես Երզնկացին։

Ինչպես նշել ենք վերևում, 1216 թ. Խծկոնքի վանքին նվերներ տալիս Սարգիս Փառշկեանցը արդեն առաջացած տարիքի պետք է լիներ՝ ըստ Թորամանյանի հաշվումների՝ շուրջ 70 տարեկան, ուստի քիչ հավանական է, որ նա դրանից հետո ուղևորվեր Հաղբատ-Սանահին, այնտեղ որմնանկարչությամբ զբաղվելու։ Ճիշտ է, Հաղբատում, Ս. Նշան եկեղեցու պատերի վրա պահպանվել են որմնանկարների երկու շերտեր, որոնցից վերևինը պրոֆ. Ղաֆադարյանի կարծիքով կատարվել է XIII դարի վերջերին, ամիրսպասալար Խութլուբուղայի իշխանության տարիներին, սակայն հազիվ թե հնարավոր լինի հավաստել փարչիկ Սարգսի մասնակցությունը գոնե ներքին շերտի որմնանկարների կատարմանը։ Մնում է մտածել, որ Սարգիս փարչիկը Անիից կամ Խծկոնքից կարող էր Հաղբատ-Սանահին գնալ ուխտագնացության կամ ապահովության նկատառումներով, վախճանվել ու թաղվել Սանահին գյուղում։

Այսպիսով, ակներև է, որ Անիի Փրկիչ տաճարի որմնանկարները, նրանց հեղինակի ինքնանկար պատկերն ու բարեխոսական արձանագիրը, ինչպես նաև Սանահնի տապանագիրը մեզ են ավանդել միջնադար-

[21] Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա, Երևան, 1940, էջ 268, 290։

յան Հայաստանի ականավոր որմնանկարիչ-արվեստավոր Սարգիս փարչիկի գործերը, անունը, ինքնանկարը և գերեզմանը՝ կարճառոտ տապանագրով*։

ՆՈՐԱՎԱՆՔԻ ԳԱՎԹԻ ԲԱՐԱՎՈՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ամաղուի Նորավանքի գավթի կիսակլոր ճակատակալի կամարին փորագրված միտողանի գեղաքանդակ արձանագրությունը մինչ այժմ ստույգ չի ընդօրինակված, որի հետևանքով բնագիրը չի ամբողջացել և այդ տեսքով գրեթե անիմաստ է։ Արձանագրության առավել ամբողջական վերծանությունը՝ լուսանկարով ու գծագրական պատճենումով լույս տեսավ հմուտ վիմագրագետ Ս. Բարխուդարյանի վերականգնումով[1]: Սակայն այդ ընդօրինակությունը ևս շատ քիչ բան է ավելացնում Ս. Ջալալյանցի, Ղ. Ալիշանի, Ե. Լալայանի պակասավոր հրապարակումներին, ուստի և կարևոր բնագիրը մնում է կարոտ ավելի հավաստի քննության։

Հարկ է նշել, որ ինչպես ճակատակալի մեծ վարպետությամբ կատարված խմբաքանդակը, այնպես էլ կամարին փորագրված խնդրո առարկա արձանագրությունը համարյա անաղարտ են պահպանվել, և բնագրի որոշումը լուրջ դժվարություններ չի հարուցում։ Ահա արձանագրությունն ըստ Ս. Բարխուդարյանի ընդօրինակության. «Այս է ԱՌ ԻՄ ԱԻՐՀՆԵԱԼ ԵՒ ԱՀԵՂ ԱՆՈՒՆ ԱԾ̅. Ի ԾԱԳԱՑ ՄԻՆՉ Ի ԾԱԳՍ ԾԱԳ Ի ՆՈՐՈ :ՉՀ: (1321) ԲԱՌՆ [ԽՐ]ԱՏ ԵՒ ՈՉ ՎՃ[ԻՌ] ԵՍԱՅԻ»[2]:

Այստեղ վերծանողի ավելացրած գրերից բացի, մյուսները՝ պահպանվածները, ստույգ են արտագրված (միայն կարդացվել է՝ ԱՆՈՒՆ, փոխ. ԱՆՈՒՆՆ) և, չնայած դրան, ամբողջ ասացվածքը անորոշ է, անիմաստ։ Այսպես, անհասկանալի է՝ Ի ԾԱԳԱՑ ՄԻՆՉ Ի ԾԱԳՍ ԾԱԳ Ի ՆԱՐՈ :ՉՀ: բառակապակցությունը, թեև Ի ԾԱԳԱՑ ՄԻՆՉ Ի ԾԱԳՍ բանաձևը տիեզերքի անսահմանությունը բնութագրող շատ սովորական

* Հոդվածի համառոտ վերաշարադրանքը տե՛ս Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, էջ 326—332։ — Խմբ.:

** «Լրաբեր հասարակական գիտությունների», 1979, № 8։

[1] «Դիվան հայ վիմագրության», պրակ III (այսուհետև՝ «Դիվան»), կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 222։

[2] Նույն տեղում։

ձևակերպում է, բազմիցս վկայված դասական մատենագրության մեջ, նաև Ս. Գրքում։ Հին հայերենի օրինաչափություններով չի բացատրվում նաև՝ ԱՅՍ Է ԱՌ ԻՄ ԱԻՐՀՆԵԱԼ ԵՒ ԱՀԵՂ ԱՆՈՒՆ ԱԾ նախադասությունը, հատկապես ԱՌ ԻՄ ԱԻՐՀՆԵԱԼ կապակցությունը։

Նախքան մեր վերծանությունը ներկայացնելը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ բուն ճակատակալի խմբաքանդակին հյուսված ծաղկանկար քանդակների ուռուցիկ գրերը, ինչպես նաև Եսայի մարգարեի հարթաքանդակից ներքև, ժապավենի վրա փորագրված տառերը ինքնուրույն հիշատակություններ են և ոչ մի ձևով չեն կապվում կամարի արձանագրության հետ, որը մեկ տողով, խորաքանդակ գրերով շարունակվում է ամբողջ կամարի և նրա հիմքը կազմող մուտքի հորիզոնական շրջանակի վրա։ Ահա այդ արձանագրության մեր վերծանությունը. «ԱՅՍ ԷԱՌ ԻՄ ԱԻՐՀՆԵԱԼ ԵՒ ԱՀԵՂ ԱՆՈՒՆՆ ԱԾ, Ի ԾԱԳԱՑ ՄԻՆՉ Ի ԾԱԳՍ ԾԱԳԻՆ, ՈՐ ՈՉ ՀԱՏ ԵՒ ՈՉ ՎՃԱՐ»։ Ինչպես կարելի է նկատել, մեր վերծանության մեջ համարյա նույն գրերն են, ինչ Ս. Բարխուդարյանի հրատարակածում, միայն թե շտկված է այդ գրերի բառանջատումը։ Այսպիսով, Բարխուդարյանի՝ վերջակետերի մեջ առած :ՉՀ: (1321) թվագիրը գոյություն չունի, արհեստական է և առաջացել է ոՉ Հատ եւ ոչ վճար տառաշարքի սխալ բառազատումից։ Մյուս կողմից, արհեստական են նաև ԽՐԱՏ, ՎՃԻՌ կարծեցյալ բառերում ԽՐ, ԻՌ վանկերի վերականգնումները, քանի որ ԽՐԱՏ-ի փոխարեն պարզ, առանց հավելումների կարդացվում է ՈՉ ՀԱՏ, իսկ ՎՃԻՌ կարծեցյալ բառի վերջին երկու գիրը՝ ԻՌ, հարկ չկար վերականգնելու, ընդ որում ՎՃ գրերից հետո, ժապավենից այն կողմ պահպանվել են բառի վերջին վանկի գրերը՝ ԱՐ (լուսանկարում երևում են Ա-ի առեղները և Ր-ի կարճ առեղը), ուրեմն առկա է վճար բառը, առանց հավելում-վերականգնման։

Ինչ մնում է բարավորի խմբաքանդակի ծաղկազարդերի արանքներում քանդակված ենդավոր գրերին, ապա Երեմիա մարգարեի հարթաքանդակի ներքևի գրերն են՝ ԲԱՌՆ, իսկ դիմացինը՝ ՁՆ կամ ՁՆ:ԲԱՌՆ տառաշարքը, ինչպես ասացինք, չի առնչվում կամարի միտողանի արձանագրության հետ և առայժմ անհասկանալի է մեզ համար*, իսկ ՁՆ-ն թերևս գավթի մուտքի ձևավորման և բարավորի քանդակազարդման թվականը լինի։ Եսայի մարգարեի հարթաքանդակից ներքև, ծալված ժապավենի վրա փորագրված գրերը, որոնց նախորդ ընդօրինակողները զանց են առել, կարելի է վերծանել՝ ԱՅ ԿՈՅՍ (ԿՈՅՍ կարդացվում է

* Պիտի կարդալ՝ ՁԱՅՆ ԱՌ ՔԾ։ — Խմբ.:

աջից ձախ), իսկ փոքր-ինչ հեռու, ժապավենի ծայրին՝ ԵՍԱՅԻ (նկ. № 11—12)։

Սրանով կարելի էր սպառված համարել Նորավանքի գավթի կիսակլոր բարավորի միտողանի հիշատակագրության վերծանության մեր սրբագրությունը, որն անհրաժեշտ էր թեկուզ գիտական շրջանառության մեջ դրված ՉՀ (1321) անիրական թվականը հերքելու նպատակով։ Սակայն խնդիրը միայն թվագրի ճշգրտման մեջ չէ. պարզվում է, որ խնդրո առարկա թվականը որոշակի հիմք է տվել ճարտարապետության դոկտոր Ս. Մնացականյանին՝ Նորավանքի գավթի վերակառուցման, նրա արևմտյան մուտքի հորինվածքի ու զարդաքանդակների ժամանակը դնելու այդ թվականին և նրանց հեղինակ համարելու XIII—XIV դդ. Սյունիքում գործած նշանավոր մանրանկարիչ, քանդակագործ-ճարտարապետ Մոմիկին[3]։ Միջնադարի մեր շնորհաշատ արվեստավորի անհայտ

Նկ. 11

մնացած ձեռակերտները վեր հանելու և ուսումնասիրելու ջանքերը միայն խրախուսանքի են արժանի, սակայն այս դեպքում Ս. Մնացա-

[3] Ստ. Մնացականյան, 14-րդ դարի քանդակագործ, ճարտարապետ և նկարիչ՝ Մոմիկը («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 224—225)։



կանյանը այդ արել է ոչ այնքան համոզիչ ձևով, ձգտելով լրացնել Մոմիկի գործունեության մի քանի տասնամյակների «բաց» շրջանը։

Մինչև Ս. Մնացականյանի նշված հոդվածի հրապարակումը ընդունված էր, որ Մոմիկը իր ստորագրությունը կրող գործերից բացի (1292, 1302 թթ. ձեռագիր ավետարանների ծաղկում, 1304, 1308 թթ. խաչքարերի կերտում, Արենիի Աստվածածին եկեղեցու կառուցում՝ 1321 թ.), իբրև ճարտարապետ-քանդակագործ, մասնակցել է նաև Նորավանքի երկհարկանի եկեղեցու կառուցմանը՝ 1339 թ., հավանաբար փոխարինած լինելով Օրբելյանների պալատական ճարտարապետ Սիրանեսին[4]։ Իր ուսումնասիրության մեջ Ս. Մնացականյանը Մոմիկի ստեղծագործությունների ցանկը համալրում է Օրբելյանների տիրույթներում կանգնած մի քանի այլ հուշարձաններով, նրան վերագրելով Տաթևի Գրիգոր Լուսավորիչ (1295), Եղեգիսի «Զորաց» (1320-ական թվականներ) եկեղեցիների շինությունը, ինչպես նաև բուն Նորավանքի գավթի վերակառուցման և քանդակազարդման աշխատանքները։ Այս ճանապարհով հեղինակը լցնում է Մոմիկի գործունեության «բաց» մնացած՝ 1292—1302 թթ. և 1321—1339 թթ. շրջանները, վերը հիշված շենքերի կառուցումը թվագրելով ազատ մնացած տարիներով։ Թե որքան համոզիչ են Ս. Մնացականյանի համադրությունները ու ճարտարապետական-գեղարվեստական վերլուծությունները, որոնց միջոցով նա աշխատում է հաստատել այս կամ այն ստեղծագործության՝ Մոմիկին պատկանելու հավաստիությունը, դժվարանում ենք ասել, քանի որ հարցը բավականաչափ բարդ է և պահանջում է մասնագիտական հմտություն, որը վեր է մեր իրազեկությունից։

Սակայն Նորավանքի գավթի վերակառուցումը և քանդակազարդումը Մոմիկին վերագրելը անհավանական է, միանգամայն անհարիր եղած փաստական տվյալներին, հատկապես հուշարձանի հարուստ վիմագրությանը։

Արդ, ե՞րբ է կառուցվել կամ վերակառուցվել Նորավանքի գավիթը, և ինչո՞ւ ճարտարապետ-վարպետ Մոմիկը չէր կարող մասնակցել այդ աշխատանքներին։

Հայտնի է, որ ըստ անաղարտ մեզ հասած շինարարական արձանագրության, գաւիթը (Ստ. Օրբելյանի երկում՝ աղօթարան) կառուցել է իշխանաց իշխան Սմբատ Օրբելյանը ՉԺ—1261 թ.։ Տարիներ առաջ հայկական գավիթների մասին իր ուսումնասիրության մեջ անդրադառ-

---

[4] Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 83—84, «Դիվան», էջ 210, Կ. Ղաֆադարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 12։ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Նորավանքի երկհարկ եկեղեցու կառուցումը կամ քանդակազարդումը Մոմիկին վերագրելը ևս մնում է սոսկ ենթադրություն և համենայն դեպս վիմագրության առկա տվյալներով չի հաստատվում։ Հայտնի է, որ այդ հուշարձանի շինարարությունը, համաձայն գեղաքանդակ շինարարական արձանագրության՝ ավարտվել է ՉՁԸ—1339 թ., այսինքն՝ ճարտարապետ-նկարիչ Մոմիկի մահվանից առնվազն վեց տարի անց։ Ահա Նորավանքի բակում ընկած Մոմիկին նվիրված փոքրիկ խաչքարի հիշատակագրությունը. «Թվ.։ ՉՁԲ։ (1333) Յիշեա Քս Ած զՄոմկա ճոգին եւ ողորմեա» («Դիվան», էջ 224)։ Այս արձանագրության թվագիրը Ս. Բարխուդարյանը, նախապես, կասկածանքով վերծանել է ՉՁԸ—1339, հատուկ նշելով, որ միավորը լավ չի երևում և կարող է նաև Բ կարդացվել («Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ», էջ 83—84)։ Ավելի ուշ, նորից ստուգելով տեղում և լուսանկարի վրա, հեղինակը համոզվել է, որ իրականում, քարի վրա թվականի միավորը ոչ թե Ը է, այլ Բ, ուստի «Դիվանի» III պրակում տպագրված գծագրում և վերծանության մեջ վերականգնվել է Մոմիկի հիշատակին կանգնեցված խաչքարի իրական թվականը՝ ՉՁԲ—1333։ Այլ առիթով լինելով հուշարձանի մոտ, մենք նորից ստուգեցինք բնագրի վերծանությունը, հատկապես տարեթվի միավորը ցույց տվող գիրը և համոզվեցինք, որ քարի վրա առկա է ոչ թե Ը, այլ՝ Բ, որեմն Մոմիկը մահացել է 1333 թ. ոչ ուշ։ Այսպիսով, հուշարձանը կառուցվել է նրա մահվանից առնվազն վեց տարի հետո և քիչ է հավանական, որ Մոմիկը մասնակցած լիներ նրա շինության կամ քանդակազարդման աշխատանքներին։

նելով Նորավանքի գավթի ձևերին, Ս. Մնացականյանը հաստատել էր հայ ճարտարապետության պատմաբան Ն. Տոկարսկու այն միտքը, թե գավթի շինարարությունը որոշ ժամանակ ընդհատվել է, որի հետևանքով նրա նախնական քառասյուն տիպարը փոխարինվել է այժմյան անսյուն հորինվածքով. այդ մասին են վկայում, մասնավորապես, պատերի վրա կես բարձրությամբ պահպանված կիսասյուները[5]։ Համառոտակի նկարագրելով գավթի ճարտարապետությունը և նշելով նրա յուրահատուկ ձևերը, Ս. Մնացականյանը կասկած անգամ չի արտահայտել այդ ձևերի՝ հետագայում կրած փոփոխությունների, առավել ևս ներքին հորինվածքի, հարդարման, հատկապես արևմտյան մուտքի վերակառուցումների մասին։ Հավանաբար նա այդ համոզմանն է մնացել մինչև 1967 թ., երբ լույս է տեսել «Դիվանի» (Գ) հատորը, որտեղ Նորավանքի գավթի՝ սույն հաղորդման առարկա արձանագրության մեջ սխալմամբ վերծանվում է ՉՀ—1321 կարծեցյալ թվականը, որը հիմնովին փոխում է Ս. Մնացականյանի տեսակետը գավթի ճարտարապետական ձևերի վերափոխությունների մասին։ Գավթի բարավորի այս գեղաքանդակ բնագիրը դիտելով իբրև շինության կամ վերակառուցման մասին հիշատակություն, հեղինակը 1321 թ. համարել է վերակառուցման աշխատանքների սկիզբը, քանի որ նրան լավ հայտնի էր գավթի կառուցման իրական ժամանակը՝ 1261 թ. (Ս. Մնացականյանի գրքում 1260 թ.)։

Այստեղից առաջ է քաշվում Նորավանքի գավթի պատմական կյանքի մասին այսպիսի դեպքերին հարմար մի նոր վարկած. Հուշարձանը մեզ է հասել ոչ նախնական տեսքով, այլ նկատելի վերակառուցումներով։ Եղել է հին գավիթ, որից միայն պատերի ներքևի մասերն են մնացել 3—4 մ բարձրությամբ։ Այն ունեցել է կենտրոնական 4 սյուների վրա բարձրացող ծածկ։ Այս գավիթը 1319—1320 թթ. երկրաշարժից կործանվել է և ավելի ուշ վերակառուցվել, որի ընթացքում նրա ծածկը փոխարինվել է աստիճանաբար առաջացող, անսյուն ու կենտրոնական մասում ոչ մեծ ստալակտիտավոր երդիկ ունեցող ծածկով։ Այս ամբողջ տեսության համար հիմնական կռվան է ծառայել նույն՝ ՉՀ—1321 թվագիրը։ Հեղինակը հենց այսպես էլ գրում է. «Այդ է վկայում գավթի արևմտյան ճակատի մուտքի վրա եղած արձանագրության թվականը՝ 1321, որն ամենայն հավանականությամբ նշանավորում է վերակառուցման աշխատանքների սկիզբը»[6]։

[5] Н. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1946, стр. 287; С. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, стр. 98.

[6] «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 224։

Քանի որ գավթի վերակառուցման աշխատանքներն ըստ նրա սկսվել են 1321 թ., երբ Վայոց ձորում գործում էր Տարսայիճ Օրբելյանի պալատական ճարտարապետ Սիրանեսին փոխարինած Մոմիկը, ուրեմն՝ վերջինս է այդ վերակառուցումների հեղինակը։ Միայն այսպես, առանց ճարտարապետական ձևերի փոփոխությունների վերլուծության, առանց ցույց տալու, թե գավթի ներքնամասի որ հատվածներն են նախնականը, հինը և որոնք վերակառուցման ընթացքում շարվածները, նյութի, կատարման, պահպանության տարբերությունները, պատերի տարբեր բարձրությունների վրա փորագրված արձանագրությունների վիճակը, բովանդակությունը, տարեթվերը և այլն։ Ինչ մնում է հուշարձանի արտաքին ճակատների վերափոխություններին, ապա քանի որ 1321 կարծեցյալ թվագիրը բարավորի վրա է, ուրեմն այդ ժամանակ, ըստ Ս. Մնացականյանի, վերափոխվել է նաև ամբողջ արևմտյան մուտքը, հատկապես բարավորի կառուցվածքը։ Հեղինակը չի տալիս այս վարկածի հիմնավորումը, անհայտ է մնում, թե գավթի արևմտյան ճակատի ո՞ր հատվածներն են մնացել իրենց սկզբնական շարվածքում, ի՞նչով է արտահայտվել արևմտյան մուտքի ու բարավորի վերափոխությունը, ի՞նչ է կատարվել մյուս ճակատների հետ։ Դժվար չէ նկատել, որ Ս. Մնացականյանի առաջ քաշած այս վարկածների հիմքերի հիմքը գավթի բարավորի գոյություն չունեցող ՉՀ—1321 թվականն է։ Արդարև, այդ թվականին կամ դրանից քիչ առաջ Վայոց ձորին հարող գավառներում երկրաշարժ է եղել, որի մասին մատենագրական աղբյուրներից բացի ակնարկում է հենց Մոմիկը՝ Արենիի իր իսկ կերտած եկեղեցու շինարարական արձանագրության վերջում[7]։ Այդ թվականին Մոմիկը ավարտել է Արենիի եկեղեցին, նույն տարում էլ ըստ Ս. Մնացականյանի սկսել է Նորավանքի գավթի վերակառուցումն ու քանդակազարդումը։ Նույն տարում (1321 թ.) երկու խոշոր շենքերի կառուցումը նույնիսկ Մոմիկի նման հմուտ ու անխոնջ ճարտարապետ-վարպետի համար այնքան էլ հավանական չէ, ուստի, հավանաբար այդ պատճառով էլ, Ս. Մնացականյանը ստիպված է եղել ՉՀ—1321 թվականը ոչ թե գավթի վերակառուցման ավարտի, այլ միայն սկսման ժամանակը համարելու, թեև հայ վիմագրությունից և ճարտարապետության պատմությունից հայտնի է, որ այսպիսի դեպքերում բնագրի թվականը միայն ու միայն շինության ավարտի ժամանակն է մատնանշում և ոչ թե սկսելու, եթե, իհարկե, հատուկ չի շեշտված կառույցը հիմնելու, սկսելու մասին։

[7] «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 157, «Դիվան», III, էջ 29։

Նորավանքի գավթի ՉՀ կարծեցյալ թվագրի հերքումով, մեր խորին համոզմամբ, հիմքից զրկվում է Ս. Մնացականյանի վարկածը՝ գավթի վերակառուցումն ու քանդակազարդումը այդ տարով թվագրելու և Մոմիկին վերագրելու մասին։ Չենք կասկածում, որ գավթի ճարտարապետական ձևերի և զարդաքանդակների համադրական վերլուծությունը ևս շատ քիչ ապացույցներ կտա այդ վարկածի օգտին։ Մինչդեռ գավթի վիմագրության տվյալներով ապացուցվում է, որ նրա շինությունը կամ վերակառուցումը կատարվել է միայն XIII դ. կեսերին, հավանաբար Սիրանես ճարտարապետի գործունեության տարիներին, այսինքն՝ Մոմիկի չափահաս դառնալուց շուրջ կես դար առաջ, ուստի և Մոմիկը չէր կարող մասնակից լինել նրա կառուցմանը կամ քանդակազարդմանը։

Ինչպես վերը նշեցինք, Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկում և գրեթե անխաթար պահպանված շինարարական արձանագրության մեջ գավթի կառուցման կամ վերակառուցման թվականը ՉԺ (1261) է։ Սակայն գավթի ներսում, հարավային և հյուսիսային պատերի վրա պահպանվել են դրանից առաջ, այն է՝ 1232, 1256 թթ. փորագրված նվիրագրեր, որոնք մի քանի քարերի վրա են, իրենց նախնական տեղերում, այսինքն՝ հետագա նորոգումների ժամանակ դրված առանձին բեկորներ չեն[8]։

Ս. Բարխուդարյանը նկատելով այս իրողությունը, իրավամբ գտել է, որ «գավթի շինարարությունից առաջ հենց նրա տեղում գոյություն է ունեցել մի այլ շենք, որը ձևափոխվելով դարձել է ներկա գավիթը»[9]։ Ուրեմն, գավթի կառուցումը կամ վերակառուցումը պետք է կատարված լինի հենց 1261 թ.։ Որ գավթի 1261 թ. վերակառուցումից հետո այնտեղ նորոգման կամ քանդակազարդման նկատելի աշխատանքներ չեն կատարվել, ապացուցում են նաև գավթի պատերին տարբեր բարձրությունների վրա 1261 թ. հետո, մինչև XIV դ. կեսերը փորագրված արձանագրությունները («Դիվան», 693, 694, 697, 699, 792, 704, 708, 709)։ Սրանք բոլորը կամ գրեթե անվնաս են հասել մեզ, կամ միայն ժամանակի ազդեցությամբ որոշ չափով հողմահարված ու եղծված, բայց ոչ շարվածքի փոփոխությունից առաջացած խաթարումներով, համենայն դեպս գավթի նկատելի վերակառուցումների կամ նորոգումների անխուսափելի հետքեր չեն կրում։ Մյուս կողմից, այդ բնագրերից և ոչ մեկում ակնարկ անգամ չկա գավթի վերանորոգման կամ քանդակազարդման աշխատանքների մասին, նրանցում հիշատակված արժեքները նվիրատուները հոգևոր կենտրոնին են նվիրում ոչ թե շինարարությունը կամ վերանորոգումը նպաստավորելու, այլ վանքի տնտեսական հզորությունը մեծացնելու նպատակով և բարեգործական մղումներով։

Չպետք է անտեսել և այն պարագան, որ եպիսկոպոսանիստ Ամաղուի Նորավանքի համակառույցում XIII—XIV դդ. կատարված ամեն մի քիչ թե շատ նշանակալի կառուցում կամ վերանորոգում արտացոլվել է հուշարձանախմբի բազմաթիվ վիմական բնագրերում, ինչպես նաև Սյունիքի հոգևոր առաջնորդ, ականավոր պատմիչ Ստ. Օրբելյանի երկում (մինչև XIII դ. վերջը), իսկ ահա գավթի շինության կամ վերանորոգման մասին միակ տեղեկությունը մնում է բուն՝ 1261 թ. շինարարական արձանագրությունը կամ նրա արտագրությունը «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքում։ Այս իրողությունը ևս կողմնակի ապացույց է, որ 1261 թ. հետո գավթում վերակառուցման կամ քանդակազարդման աշխատանքներ չեն կատարվել, և այժմյան տեսքով հուշարձանը 1261 թ. շինարարության արդյունք է։

Վերը շարադրված մեր նկատառումները կարելի է ամփոփել մի քանի հետևություններում. ա. Նորավանքի գավթի բարավորի միտողանի արձանագրության մեջ վերծանված ՉՀ—1321 տարեթիվը արհեստական է, և իրականում գոյություն չունի. բնագիրը շինարարական չէ, ուրեմն չի կարող ելակետ ծառայել գավթի վերականգնման կամ քանդակազարդման ժամանակը և հեղինակին որոշելու համար. բ. Գավթի կառուցումը (կամ հիմնովին վերակառուցումը) և քանդակազարդումը կատարվել է ՉԺ—1261 թ., ինչպես հստակ նշված է գրեթե անաղարտ պահպանված շինարարական արձանագրության բնագրում և Ստ. Օրբելյանի երկում։ Գավթի պատերին մինչև 1261 թ. փորագրված 1232, 1256 թթ. նվիրագրերը վկայում են, որ Նորավանքի Ս. Կարապետ (ավելի ստույգ՝ Սբ. Նախավկայի) եկեղեցու արևմտյան կողմում, գավթի տեղում եղել է մի այլ շինություն, որը 1261 թ. վերափոխվել է ներկայիս գավթին. գ. Ոչ մի հիմք չկա գավթի կառուցումը (վերակառուցումը) համարելու 1321 թ. և այն վերագրելու Մոմիկին։ Այդ տարիներին, ավելի ստույգ՝ 1319—1320 թթ. Գեղարքունիքում և շրջակայքում երկրաշարժ է եղել, սակայն հայտնի չէ, թե դրանից ինչքան է տուժել Նորավանքի գավիթը, արդյոք կործանվել և հետագայում վերականգնվե՞լ է, թե՞ ոչ։ Հայտնի է միայն, որ գավթից ավելի վաղ կառուցված Ս. Կարապետ եկեղեցին (1221) և հյուսիսից նրան կցված Սմբատի դամբարանը (1275) այդ երկրաշարժից չեն վնասվել։ Գիտենք նաև, որ Մոմիկը 1321 թ. է ավարտել Արենիի Աստվածածին եկեղեցու շինությունը, ուրեմն նույն տարում, գրեթե միաժամանակ նա չէր կարող վերակառուցել ու քան-

[8] «Դիվան», էջ 210։

[9] Նույն տեղում։

դակազարդել նաև Նորավանքի գավիթը. դ. Նորավանքի գավթի պատերի վրա գրեթե անաղարտ պահպանվել են 1261 թ. հետո մինչև XIV դ. կեսերը փորագրված բազմաթիվ նվիրատվական և հուշագրային արձանագրություններ, որոնցում ոչ մի ակնարկ չկա գավթի նորոգման կամ քանդակազարդման աշխատանքների, նրանց կատարողների կամ նպաստավորողների մասին։ Այսպիսով, գավթի շինության կամ վերանորոգման մասին արժանահավատ միակ աղբյուրը մնում է նրա հարավային ու արևմտյան պատերի վրա 1261 թ. փորագրված շինարարական արձանագրությունը, որը աննշան խմբագրումով արտագրված է Ս. Օրբելյանի երկում. ե. Նորագույն հետազոտությունները ցույց են տալիս, որ ճարտարապետ-նկարիչ Մոմիկը չէր կարող մասնակցել նաև 1339 թ. կառուցված Բուրթելաշեն երկհարկանի եկեղեցու շինարարության ու քանդակազարդման աշխատանքներին, քանի որ, ինչպես վկայված է Մոմիկի հիշատակին կանգնեցված խաչքարի հիշատակագրությունից, դրանից առնվազն վեց տարի առաջ, այն է՝ 1333 թ. Մոմիկն արդեն մահացած էր։

ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ*

Ա. ԴԱՎԻԹ ՇՈԹՈՒԿԱ ՈՐԴՈՒ ՆՎԻՐԱԳԻՐԸ ԵՎ Է ԱԾԱԿԱՆԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Դավիթ իշխանի այս նվիրատվական արձանագրությունը փորագրված է Սանահնի վանքի Ամենափրկիչ եկեղեցու ժամատան հյուսիսային պատին՝ արտաքուստ։ Բնագիրը միանգամայն անեղծ է մնացել և նրա տառաշարքերի ընթերցումը բոլոր ընդօրինակողների մոտ էլ, քիչ բացառությամբ, մեջ է բերվում համարյա անսխալ։ Բնագրի վերծանությունը, սակայն, ունի մի մութ կետ, որ մինչև այժմ մնում է չպարզված. խոսքը երկրորդ շարքի բառաբաժանման մասին է, որտեղ թվարկվում են Դավթի նվերները վանքին. այսպես, «...շինական մի ի Հալալաշինի, մշակն, յմճածուխ...», այս բառերը, մանավանդ յմճածուխը (ըստ Հովհաննես Ղրիմեցու ընթերցման՝ Լ մասն ծուխ), չնայած հետազոտողների ջանքերին, մնացել են անբացատրելի։ Նույնն է վիճակը նաև արձանագրության վերջին, առավել կատարյալ հրատարակության մեջ, որ իրականացրել է պրոֆ. Կ. Ղաֆադարյանը։

* «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 4։

Սակայն սույն դիտողության նպատակը այդ չվերծանված տառաշարքերի մեկնությունը չէ, որ վեր է մեր ուժերից, այլ արձանագրության առաջին տողում Շոթուկա բառից հետո փորագրված Է գրի (հնչյունի) ձևաբանական նշանակության պարզաբանումը, որ մեր կարծիքով զգալի նպաստ կարող է լինել միջին դարերի վիմագրական հուշարձանների վերծանության և նրանց լեզվական իրողությունների ուսումնասիրության գործին։

Այդ տառաշարքը, ըստ պրոֆ. Ղաֆադարյանի ընդօրինակության, կարդացվում է. «Թու ՈՀԱ: Ես՝ Դաւիթ իշխան, որդի ՇՈԹՈՒԿԱԷ գնեցի զՈռնակ, Գոմուց կէսն...», և թվարկվում են Դավթի գնած ու վանքին նվիրած մյուս արժեքները[1]։

Արդ, ինչպե՞ս բացատրել Շոթուկաէ բառում վերջնահանգ Է գրի առկայությունը։ Բազմաթիվ այլ վկայություններից հայտնի է Շոթոռկանց տոհմի հիմնադրի անունը՝ Շոթոռիկ, որ սեռական հոլովում օրինաչափորեն դառնում է Շոթոռկա, Շոթուկա կամ Շողրուկայ և այդ ձևերով էլ հիշատակվում է մի շարք վիմական արձանագրություններում ու ձեռագրերում։

Բնագրի նախորդ հրատարակողները այս Է-ն համարել են փորագրողի սխալը կամ ավելադրություն և ընդօրինակելիս բաց են թողել (Ջալալյանց, Ղրիմեցի, Կոստանյանց)։ Գ. Հովսեփյանը արտագրում է Է-ն, սակայն հարցական նշան դնելով մոտը, չի փորձում պարզել նրա իմաստը, թեև բառանջատման ժամանակ առանձին տեղավորելով, ինքնուրույն ձևաբանական միավոր է համարում[2]։

Ավելի հանգամանորեն խնդիրը քննում է պրոֆ. Ղաֆադարյանը՝ Դավթի նվիրագրության վերծանությանը կցված ծանոթագրություններում։ Այստեղ վերծանողը մեջ է բերում Է գրի՝ տվյալ դիրքի համար բոլոր հնարավոր մեկնությունները (Է—«բացառական մասնիկ չէ», «...հավանական չէ, որ Է-ն ավելացված է իբրև էական բայի սահմ. եղանակի ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմք...» և այլն) և համոզիչ հերքելով դրանք, ի վերջո, հավանական ու ընդունելի է գտնում երկու բացատրություն. կամ՝ «Շոթուկաէ բառի մեջ Է-ն կարող է ավելորդ լինել» կամ՝ «Շոթուկաէ-ն Շոթոռիկ-ի սեռական հոլովն է եղել արձանագրությունը կազմողի բարբառում՝ Դաւիթ Շոթուկաէ որդի,— Դաւիթ Շոթոռ-

[1] Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 108։

[2] Տե՛ս Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ..., պր. Ա, Երուսաղեմ, 1935, էջ 32։

կի ոռղի-խ»[3]: Ըստ երևույթին հեղինակը ավելի հակված է այս վերջին տեսակետի կողմը, քանի որ վերծանության մեջ, ինչպես վերը տեսանք, հենց այդպես էլ հրատարակել է:

Այսպիսով, ըստ Կ. Ղաֆադարյանի է-ն տվյալ դիրքում հանդես է գալիս իբրև սեռական հոլովակազմիչ և ըստ այդմ Նորոռկաէ բառի մեջ գործ ունենք սեռական հոլովի կրկնակ վերջավորությունների հետ՝ Նորոռիկ սեռ. Նորոռկա + է = Նորոռկաէ:

Այս բացատրությունը միանգամայն անընդունելի է ոչ միայն այն պատճառով, որ սեռական հոլովի կրկնակ հոլովակազմիչների իրողությունը անծանոթ է հին գրական հայերենին, միջին հայերենին, բոլոր հայ բարբառներին, այլև մանավանդ նրանով, որ հայերենի պատմությունը սեռական հոլովի է հոլովակազմիչ չի ճանաչում բաղաձայնով վերջացող անունների համար, որպիսին է Նորոռիկը: Ճիշտ է, ի հանգող մի շարք անձնանուններ X—XIII դարերի վիմական բնագրերում և ձեռագրերի հիշատակարաններում ունենում են սեռականի և տրականի է/ե-ով վերջավորվող զուգադիր հոլովաձևեր, որոնք ծագումնաբանորեն արդյունք են հին գրական հայերենի եայ (եա) եռաբարբառի թուլացման (հմմտ. Վարդենի սեռ. Վարդենեայ>Վարդենէ, Թագուհի սեռ. Թագուհեայ>Թագուհէ և այլն)[4], սակայն Նորոռիկ անունը ոչ մի պայմանով չէր կարող ենթարկվել այդ օրինաչափության ազդեցությանը: Նորոռկաէ ենթադրյալ սեռական հոլովաձևը անհավանական է նաև հայերենի հնչյունական օրենքների առումով. ա և է ձայնավորների հորանջ առաջացնող հանդիպումը հազիվ թե հնարավոր լինի հաշտեցնել նույնիսկ հայ բարբառների՝ ամեն ինչ հանդուրժող հնչյունափոխական կանոնների հետ:

Մի խոսքով, ավելի դյուրին է համաձայնել պրոֆ. Ղաֆադարյանի առաջին ենթադրությանը և է-ն համարել ավելադրություն, քան ընդունել այդ գրի (հնչյունի)՝ սեռականի հոլովակազմիչ լինելու վարկածը:

Բայց ի՞նչ է վերջապես այդ է գիրը կամ հնչյունը: Մեր կարծիքով է գիրը տեղին է փորագրված և ոչ մի դեպքում չի կարելի ավելադրություն համարել: Սակայն բառանջատման ժամանակ այն պետք է կցել ոչ թե Նորոռկա անվան վերջին, այլ հաջորդ՝ գնեցի բայի սկզբին և այդ դեպքում կստանանք. «Թու ՈՀԱ: Ես՝ Դաւիթ իշխան, որդի Նորոռկա էգնեցի զՄանակ, Գոմուց կէսն...» և այլն:

[3] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 108:

[4] Ավելի մանրամասն տե՛ս մեր «Ի հանգող անձնանունների սեռական, տրական հոլովների կազմությունը Ժ—ԺԳ դդ. վիմական արձանագրություններում» հոդվածը, «Ն. Մառը և հայագիտության հարցերը», ժողովածու, Երևան, 1968, էջ 145:

Այստեղից պարզվում է, որ է-ն դրվել է գնեմ բայի անցյալ կատարյալ ժամանակի առաջին դեմքի վրա և այս դիրքում հանդես է գալիս իբրև տվյալ բայաձևի ե նախահավելվածի տարբերակ (է):

Գրաբարի քերականությունից հայտնի է, որ հին հայերենում, ինչպես և հնդեվրոպական մի շարք լեզուներում, բայի անցյալ կատարյալ ժամանակի եզակի թվի երրորդ դեմքի միավանկ բայաձևերը կարող էին ունենալ զուգահեռ գործածություն՝ առանձին, միավանկ և վանկային աճեցումով կամ ե նախահավելվածով. այսպես, հասանեմ բայից՝ հասի, հասեր, հաս կամ եհաս, գտանեմ-ից՝ գտի, գտեր, գիտ կամ եգիտ և այլն[5]: Միայն երեք կարճ բայեր՝ գամ, տամ, դնեմ ե աճական էին ստանում անց. կատարյալ ժամանակի բոլոր դեմքերում, ինչպես նաև այդ հիմքից կազմվող մի քանի այլ ձևերում. այսպես, գամ բայից՝ ե-կի, ե-կիր, եկն, ե-կաք, ե-կիք, ե-կին, տամ բայից՝ ե-տու, ե-տուր, ե-տ, տուաք, ե-տուք, ե-տուն, դնեմ բայից՝ ե-դի, ե-դեր, ե-դ, ե-դաք, ե-դիք, ե-դին և այլն[6]:

Ավելի ուշ, հետմեսրոպյան շրջանի մատենագրական աղբյուրներում ձայնավորով սկսվող միավանկ բայաձևերի ե աճականը օրինաչափորեն փոխվում է է-ի (ածի, ածեր, ած կամ *եյած>էած, օծի, օծեր, օծ կամ *եյօծ>էօծ): Ի տարբերություն հնդեվրոպական մյուս լեզուների (հին պարսկերեն, զենդերեն և այլն) հայերենում ե(է) նախահավելվածը որևէ քերականական իմաստ չէր արտահայտում, այլ ծառայում էր ձևերի ամբողջականության պահպանմանը և նրանց ներդաշնակությանը, քանի որ դրվում էր «միայն շատ կարճացած բայերին ավելի երկարություն տալու համար»[7]: Հայտնի է նաև, որ հին գրական հայերենի բոլոր շրջաններում, ինչպես և միջին հայերենի գրական հուշարձաններում երկու և ավելի վանկ ունեցող բայերը անց. կատարյալ ժամանակում ե կամ է աճականը չէին ընդունում:

Այդ դեպքում ինչո՞վ բացատրել, որ քննվող արձանագրության մեջ համաձայն մեր վերծանության գնեցի եռավանկ բայը է նախահավելված ունի և այն էլ առաջին դեմքում (էգնեցի):

Ուսումնասիրությունից պարզվում է, որ X—XIII դարերի վիմական

[5] Գրաբարի քերականներից ոմանք բաղաձայնով սկսվող միավանկ բայաձևերի ինքնուրույն, առանց աճականի գործածությունը հատուկ են համարում միայն հետմեսրոպյան շրջանի գրական հայերենին. «Դասական շրջանում ոչ էած կա և ոչ էլ հատ», տե՛ս Մ. Մախուդյանց, Աճումը հայերենի մեջ, 1915, «Արարատ», № 4—5, էջ 470:

[6] J. Karst, Historische Grammatik..., Strassburg, 1901, էջ 321:

[7] Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. IV, Ա, էջ 277: Տե՛ս նաև Մ. Մախուդյանց, նշվ. աշխ., էջ 406—410:

արձանագրություններում դիտվում են ե(է) աճականի կիրառության այնպիսի անկանոն դեպքեր, որոնք զգալի չափով շեղվում են հին հայերենի օրենքներից և չեն համընկնում այդ շրջանի մատենագրության մեջ։

Այստեղ նախանձավելված կարող են ունենալ անցյալ կատարյալ ժամանակի բայաձևերը անկախ վանկերի քանակից, առաջին, երրորդ դեմքերում, հոգնակի և եզակի թվում։

Այս անսովոր քերականական իրողության հավաստիության մեջ համոզվելու նպատակով բերում ենք տարբեր հուշարձանների X—XIII դդ. վիմագրությունից մի քանի վկայություններ, որոնց նույնականությունը իրականի հետ ստուգել ենք տեղում կամ լուսանկարի վրա։

Շխմուրատի վանքի (Շամշադինի շրջ., գ. Ծաղկավան) գլխավոր եկեղեցու հյուսիսային ավանդատան մուտքի վերևում 1248 թ. փորագրել են. «Ես Դանիէլս եւ այլ միայրանէս ԷՏՎԱՆՔ յա[յ]տնութե[ան] :Բ: ժամ Հերայդեղին եւ ամուսնին...»[8]։ Նույն բայաձևը փոքր-ինչ այլ գրությամբ գտնում ենք նաև Ն. Վարագավանքի (Շամշադինի շրջ., գ. Հախում) մի արձանագրության մեջ, որը փորագրված է XII դարի վերջերին. «Ես տր Յոհ[աննէս] հրամանաւ պատրոն Վասակա եւ ամենայն եղբարցս ԵՏՈՒԱՔ զմին խորանս Իվանոյ նայչենեցուն...»[9]։ Սանահնի վանքի մեծ գավթի միջին թաղի վրա XIII դարի սկզբներին Գրիգոր վարդապետը արձանագրել է. «Ես Գրիգոր վարդապետ ամեն միաբանաւքս ԷՏՈՒԱՔ զուրբաթ աւրն զամէն էկեղեցիքս...»[10]։

Մշկավանքի (Նոյեմբերյանի շրջ., գ. Կողբ) գավթի հարավային պատին, արտաքուստ փորագրված է. [Ի Թ Ո] ԽՁ (1197 թ.) Ես Շեռանշահ եւ [իմ եղ]բարքս ԷՏՎԱՔ զայգ[ին] ս̅ր̅ Ա̅ծ̅ածնիս»[11]։

Տամ բայի անցյալ կատարյալ ժամանակի եզակի թվի առաջին դեմքը է նախահավելվածով վկայված է բազմաթիվ արձանագրություններում, որոնցից այստեղ տեղավորում ենք երկուսը. Անիում, Առաքելոց եկեղեցու 1058 թ. արձանագրության մեջ վկայված է Էտվի բայաձևը.

[8] Միակ հրատարակությունը տե՛ս Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 335, որտեղ մեջբերված հատվածը վերծանված է. «Ես Դանիէլ եւ Այլարայ միաբանեցաք վանքս եւ տուաք յայտնութեամբ ժամհերայ տղին» :Բ: ժամ Հերայդեղին կապակցությունը հեղինակի մոտ դարձել է ժամհերայ (ժամհայր) տղին անձնանունը և այս ձևով մտել Հ. Աճառյանի «Անձ. բառարանը» (հատ. Բ, էջ 377), Էտվաք վերծանվել է եւ տուաք։

[9] Գ. Սարգսյան, Ն. Վարագա վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1952, № 11—12, էջ 32։

[10] Կ. Ղափադարյան, նշվ. աշխ., էջ 123։

[11] Լ. Բարսեղյան, Մշավանք, «Էջմիածին», 1959, Գ, էջ 57, մեր լրացումներով։

«Ի:Շ:Եւ:Է Ի Թուականութեան Հայոց Ես Գրիգոր... գնեցի: Ն: դրամ եւ ԷՏՎԻ ի սուրբ Առաքելս...»[12]։ Նույն բայաձևը այլ ուղղագրությամբ գտնում ենք Մակարավանքի (գ. Աչաջուր, Իջևանի շրջ.) գլխավոր եկեղեցու արևելյան պատին փորագրված նվիրագրության մեջ. «Այս իմ գիր է Վասակա Կուտկանա, որ ԷՏՈՒԻ զայգին վանիցս...»[13]։

Թվարկված օրինակները վերաբերում են տամ բայի անց. կատարյալ ժամանակի ե (է) աճականով ձևերին եզակի և հոգնակի թվում։ Ճիշտ է, այստեղ է նախահավելվածը ամենուրեք դրված է երկվանկ բայի վրա, սակայն շեղումը հին գրական հայերենի օրենքներից այնքան էլ զգալի չէ և կարող է բացատրվել համաբանության ազդեցությամբ, քանի որ, ինչպես տեսանք, նույն բայը գրաբարում ևս ստանում էր ե աճականը անց. կատարյալ ժամանակի բոլոր դեմքերում և թվերում (բացի տուաք ձևից)։

Հետագա վկայությունները վերաբերում են ե (է) նախահավելվածի գործածությանը մի քանի այլ բայերի հետ և գալիս են հաստատելու վերևում սահմանած օրինաչափությունը վիմագրական հուշարձաններում։ Այսպես, բառնամ բայի անցյալ կատարյալ ժամանակի հոգնակի երրորդ դեմքը՝ բարձին Անիի գլխավոր դարպասի մի արձանագրության մեջ հիշատակված է Եբարձին ձևով. «...եւ խորհուրդ բարի ծագեաց ի սիրտ պատռնացն Գրիգորի եւ Յոհաննիսի, որ զքաղաքս մեր նորոգեալ շինեցին եւ զամենայն հարկապահանջութիւն ԵԲԱՐՁԻՆ...»[14]։ Իսկ Թերփ գյուղի (Ազիզբեկովի շրջ.) պատմական գերեզմանոցում մի խոյաձև տապանաքարի վրա 1264 թ. փորագրվել է. «Ես Փուրղուլիս կանկնեցի զխաչս եղբաւր իմոյ Ճանդուլին, որ դառն սուք ԵԹՈՂԻՆ ի վ̅ր̅ մեր իջեցէք ի Ք̅(ս)»[15]։ Գրեմ բայը անց. կատարյալ ժամանակում վանկային աճեցում չէր ունենում (գրեցի, գրեցեր, գրեաց, գրեցաք, գրեցիք, գրեցին), բայց ահա Մակարավանքի XIII դարի մի արձանագրության մեջ հիշատակված է Էգրեցաք. «Այս մեր գիր է Դաւթի եւ այլ միաբանացս, որ ԷԳՐԵՑԱՔ ամիր Սարգսի որդոյն Հասանա...»[16]։ Նույն Մակարավանքի մի

[12] Հ. Օրբելի, Դիվան հայ վիմագրության, պր. Ա, 1966, էջ 13։

[13] Միակ հրատարակությունը տե՛ս Գ. Սարգսյան, Մակարավանք, «Էջմիածին», 1964։ № 4, էջ 30, որտեղ տվյալ հատվածը վերծանվել է. որ էտու ի (մ) զայգին. թվում է այստեղ մ գրի վերականգնումը չի հիմնավորված և անհարկի է, քանի որ այդ դեպքում սպասելի էր որ էտու զի (մ) այգին...։

[14] Հ. Օրբելի, նշվ. աշխ., էջ 1։

[15] Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պր. 3, Երևան, 1967, էջ 199, վերծանությունն ըստ Գ. Հովսեփյանի, տե՛ս Խաղբակյանք..., Ա, էջ 48—49։

[16] Հրատարակված է Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան,



Նկ. 1. Մակարավանքի գլխավոր եկեղեցու արձանագրությունը։



Նկ. 2. Մակարավանք. Հովհաննես քահանայի արձանագրությունը։

այլ նվիրագրության մեջ, որ փորագրված է գավթի հյուսիսային սյան խոյակի վրա, նույնպես հանդիպում է գրեմ բայի է աճականով ձևը, այս անգամ հոգնակի թվի երրորդ դեմքում. «Ես Մխիթարիչս միաբանեցա Ածանիս եւ ետուի :Խ: դահեկան: Հայր Յովանէս եւ միաբանէս ի սբ Յակոբա տաւնին :Բ: ժամ ԷԳՐԵՑԻՆ...»[17]: Նույն բայաձևը, բայց ե աճականով վկայված է Օձունի տաճարի մի արձանագրության մեջ, որ փորագրված է արևմտյան մուտքի բարավորին և վերաբերում է XIII դարի կեսերին. «...Ա ժամ Ումեկին ԵԳՐԵՑԻՆ: Ով խափանէ Յուդայի մասնակից է»*:

Հաջորդ վկայությունները վերաբերում են է աճականի կիրառության քննության ենթարկվող գնեմ բայի անց. կատարյալ ժամանակի եզակի թվի առաջին դեմքի հետ և գալիս են անառարկելի հաստատելու, որ Շոթոկա որդի Դավթի արձանագրության մեջ էգնեցի բայաձևի մեր վերականգնումը, թվում է, հավաստի է և օրինաչափ: Իջևանի շրջանի Ենոքավան գյուղից հարավ, ձորի մեջ դեռ կանգուն է մի փոքրիկ թաղակապ եկեղեցի, որի միակ՝ հյուսիսային ավանդատան մուտքի ճակատին ՉԽ (1291 թ.) ոմն Աստվածատուր փորագրել է. «Ես Ածայտուր ԷԳՆԵՑԻ զԼուսերին զայգին յԱբասայ իւր որդոյն, որ գնել ին պարոնաց կամակցութեամբ պարոն Ս[ար]գ[ս]ի, ընծայէցի սբ Ածածնիս»[18]:

Նույն էգնեցի բայաձևը հանդիպում է նաև Մակարավանքի գլխավոր եկեղեցու հարավային ճակատին 1260 թ. փորագրված նվիրատվական արձանագրության մեջ. «...Ես Յովանէս քահանայ էտու զիմ հոգո արդիւնս ԷԳՆԵՑԻ յԱռտաւազայ իւր ամեն որդեցն զայգին եւ ընծաեցի Ածածնիս...»[19]: Ուշագրավ է, որ X—XIII դարերի վիմական արձանագրություններում ե (է) նախահավելվածը դրվում է նաև այնպիսի բայերի վրա, որոնց անցյալ կատարյալ ժամանակի կազմությունը շեղվում է հին գրական հայերենի խոնարհման համակարգից և անտարակույս գալիս է միջին հայերենից կամ ժամանակի խոսակցական լեզվից: Օձունի հուշարձանի 1275 թ. արձանագրության մեջ է աճականը դրված է հատաւ կրավորաձև բայի վրա (գեւս էհատաւ ի անասնէ) և վեր կալաք (գրաբարում սպասելի էր բարձաք. թողաք) հարադիր բայի կալաք դիմավոր բաղադրիչի վրա: Բնագիրն անճանաչելի աղավաղված է Ջալալյանցի գրքում[20], ուստի անհրաժեշտ ենք համարում մեջ բերել այս կարևոր արձանագրության՝ մեր հարցի հետ առնչվող հատվածը Ս. Բարխուդարյանի հավաստի վերծանությամբ. «Թվին ՉԻԴ... Ես՝ Դեղս, որդի Անգղէցոյն ծառա մեծին Իվանի, էս ժամս, որ գեղս էհատաւ ի անասնէ, վս Իվանէի ու իր որդեացն ար[եւշա]տութ[եան] համար իմ ձեռնատրութեամբս զեզին ու կովի գլխահակ ի վեր էկալաք...»:

Կարելի էր շարունակել այս օրինակների թվարկումը, սակայն բերված վկայություններն էլ բավական են ցույց տալու, որ ե (է) աճականի կիրառության՝ գրաբարից կատարված շեղումները չի կարելի համարել պատահական վրիպում կամ ավելադրություն, այլ պետք է դիտել իբրև օրինաչափ իրողություն X—XIII դարերի հայ վիմագրության մեջ:

Սակայն ինչո՞վ բացատրել վիմական բնագրերում ե (է) նախահավելվածի կիրառության այս անսովոր վկայությունները, որոնք անծանոթ են հին գրական հայերենին, ուստի և չէին կարող այնտեղից թափանցել վիմագրության մեջ: Միջին դարերի հայկական վիմագրական հուշարձաններում գրաբարից կատարվող բազմաթիվ շեղումներն ու նորաբանությունները սովորաբար բացատրվում են բնագրերը կազմողների կամ գծող վարպետների բարբառների ազդեցությամբ, այսինքն այդ շեղումների աղբյուրը բոլոր դեպքերում համարում են տեղական, ժողովրդական խոսվածքները: Սակայն ե (է) աճականի դեպքում այս մեկնությունն անընդունելի է, քանի որ խոսակցական լեզվում ոչ նախկինում և ոչ էլ արդի բարբառներում վանկային աճեցումը չի դիտվում, ուստի և անհնար է մտածել այդ իրողության խոսակցական հիմքի մասին: Մոտավորապես նույնն է ե (է) նախահավելվածի կիրառության վիճակը նաև միջին հայերենի գրական երկերում. այստեղ հին գրական հայերենի միավանկ բայերը անցյալ կատարյալ ժամանակում այլևս վանկային աճեցում չեն ունենում, քանի որ նրանք ամենուրեք երկվանկ են դարձել շնորհիվ կրավորականի ու վերջավորության, որը և ձևավորում

մաս Ա, Տփղիս, 1842, էջ 149: Խնդրո առարկա բայաձևը վերծանված է որ եւ գրեցաք, Գ. Սարգսյան, Մակարավանք. նույն տեղում, էջ 33, նույն հատվածը հրատարակված է... որ է գրեցաք աք Տէր Սարգսի...:

[17] Գ. Սարգսյան, Մակարավանք, նույն տեղում, № 5, էջ 50, Ջալալյանցը (նույն տեղում, էջ 151) այս հատվածը վերծանել է... ի սբ Յակոբայ տաւնին կարգեցին մեզ ժամ...

* Արձանագրությունը հրատարակվում է առաջին անգամ:

[18] Ընդարձակ արձանագրությունը հրատարակված չէ. հայտնաբերվել է 1964 թ. վիմագրական գիտարշավի ժամանակ:

[19] Արձանագրությունը էական տարընթերցումներով հրատարակված է Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 153: Գ. Սարգսյան, Մակարավանք, նույն տեղում, № 4, էջ 32: Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 375: Բոլոր ընդօրինակություններում պարզ կարդացվող էգնեցի բայաձևը վերծանվել է եւ գընեցի:

[20] Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 91: է աճականով բայաձևերն այստեղ վերծանվել են. հազաւ ի յանասնէ, գլխահարկն վեր կալանք:

է այս կարգի բայերի եզակի թվի 3-րդ դեմքը՝ երկվանկ դարձնելով այն **ետես–տեսաւ, եհաս–հասաւ, ել–ելաւ, էառ–առաւ, եբեր–բերաւ, եդ–դրաւ** և այլն)։

Մեր կարծիքով **ե** (**է**) նախահավելվածի գործածության թվարկված շեղումները զուրկ են խոսակցական կամ գրական հիմքից և ծագում են արձանագրությունների հեղինակների կամ փորագրողների՝ հին գրական հայերենին բավարար չափով չտիրապետելուց։ Հմուտ չլինելով գրաբարի իմացության մեջ, բայց ստիպված լինելով այդ մեռած լեզվով շարադրել բնագրերը, նրանք ամեն կերպ աշխատել են հետևել գրական լեզվի օրենքներին և հնարավորին չափ ազատ մնալ կենդանի խոսվածքների խրողություններից։ Բարեբախտաբար այդ նրանց քիչ է հաջողվել, ուստի և վիմական բնագրերի լեզվում այդքան զգալի են ինչպես աշխարհիկ, առօրյա կյանքին ու կենցաղին վերաբերող և խոսակցական լեզվից եկող նորաբանությունները, այնպես էլ գրաբարյան նորմավորված ձևերի բազմաթիվ այլ խաթարումները։ Այս վերջինների թվին պետք է դասել **ե** (**է**) աճականի անկանոն կիրառությունները արձանագրություններում։

Սակայն միջին հայերենում **ե** (**է**) աճականի անհետացման հետ միաժամանակ, X—XIII դդ. դիտվում է նաև **գամ, տամ, դնեմ** կարճ բայերի անց. կատարյալ ժամանակի եզակի 3-րդ դեմքի նոր, գրաբարին անհայտ, զուգադիր բայաձևեր՝ **երեկ** (=**եկն**), **երետ** (=**ետ**), **երեդ** (=**եդ**), որոնցից վիմագրության մեջ լայն գործածություն ունի միայն **երետ** դիմավոր ձևը։

Այս նորամուտ ձևերի ծագման խնդիրը հայերենագիտության մեջ վերջնական լուծում չի ստացել, թեև նրան անդրադարձել են շատերը։ Առավել համոզիչ է Ք. Պատկանյանի և Կարստի մեկնությունը, ըստ որի **երեկ, երետ, երեդ** առաջանում են գրաբարյան **եկն** (yekn), **եթ** (yet), **եդ** (yed) բայերից, որոնք **ե** աճականը չգիտակցվելու և միավանկ մնալու հետևանքով նորից են ընդունել նույն նախահավելվածը, ըստ այդմ ստացվել են նախ՝ նրանց միջնորդական չվկայված օղակները՝ ***եյեկ, *եյետ, *եյեդ**, և ապա՝ համապատասխան հնչյունափոխությամբ՝ **երեկ, երետ, երեդ**[21]: Սակայն անցումը միջանկյալ օղակներից դեպի առկա ձևերը Պատկանյանի և Կարստի մոտ բավարար հիմնավորում չի ստանում, քանի որ գրական աղբյուրներում միջանկյալ ձևերի վկայություններ չեն պահպանվել **եյ** երկբարբառի՝ հայերենին անհարազատ լինելու պատճառով։ Առարկություն է առաջացնում, մանավանդ, այդ բայաձևե-

[21] Տե՛ս К. Патканов, Исследование о составе армянского языка, СПб, 1864, էջ 96: J. Karst, նշվ. աշխ., էջ 321—323։

րում յ>**ր** փոփոխությունը կամ **ր** ձայնորդի ներմուծումը (**եյետ**>**երետ**), որ հազիվ թե հնարավոր լինի արդարացնել հայերենի հնչյունափոխական օրենքներով[22]։

Եյետ միջանկյալ բայաձևի առայժմ միակ հիշատակությունը մեզ հաջողվել է գտնել Վարդենիկի եկեղեցու XIII դ. սկզբի մի արձանագրության մեջ, որ առաջին անգամ վերծանել է Ս. Բարխուդարյանը. ահա այդ արձանագրությունը. «**Ես Աղբլմառեղս** (այս անունը կասկածելի է— **Ս. Ա.**)[23] **միայրանեցայ սբ Գրիգորիս եւ վանայկանիս զատիկ շաբաթ աւրին պատարագն ինձ ԵՅԵՏ: Ով խափանէ դ[ա]տի յԱյ**»: **Եյետ** ձևի այս հավաստի վկայությունը ավելի հավանական է դարձնում Պատկանյանի և Կարստի տեսությունը **երեկ, երետ, երեդ** բայաձևերի առաջացման մասին, թեև նրանցում յ>**ր** փոփոխության հարցը առաջվա նման բաց է մնում։ **Երեկ, երետ, երեդ** նորամուտ բայաձևերը գրական աղբյուրներում հանդիպում են սկսած XII դարից, եթե նկատի չունենանք Կեղծ Շապուհ Բագրատունու երկը, որտեղ նույնպես ավանդված են այդ ձևերը («**...զինքն մարգարէ ԵՐԵՏ անուանել եւ խոստովանել...**», «**...եւ ԵՐԵԿ Ապումրվան ի քաղաքն Շամիրամայ**», «**...այլ ԵՐԵՏ սակաւ գեղեր ի գաւառն Առնեաց**»[24]:

Երեկ, երետ ձևերի նախնագույն հիշատակությունը գտնում ենք 1173 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում. «**Եւ ԵՐԵՏ վերատին կազմել...**», «**...անչափ ձին ԵՐԵԿ եւ պաղեց**»[25]: Այնուհետև դրանք հաճախանում են այդ դարերի «ռամկախառն» մատենագրության մեջ (Մխիթար Հերացի, Սամուէլ Անեցի, Գրիգոր Ականցի, Վարդան վարդապետ, Սմբատ սպարապետ և այլն) և հատկապես ձեռագրերի հիշատակարաններում։

Ինչպես նշել ենք, վիմական արձանագրություններում երեք բայաձևերից լայն գործածություն ունի միայն **երետ**-ը, գուցե այն պատճա-

[22] Մ. Մաքսուդյանը **ր** հնչյունի առկայությունը **երեկ, երետ, երեդ** բայաձևերում բացատրում է Կիլիկիայի և Ջուղայի բարբառների **արեկ** (<**արի՛ ե՛կ**)) հրամայականի ձևաբանական առնմանումով. «ր-ի աղբյուրը պետք է որոնել **արեկ** կամ **արի՛ ե՛կ** հրամայականի մեջ»,— գրում է հեղինակը նշված հոդվածում, էջ 409։

[23] Ավելի իրական է թվում կասկածելի անձնանվան այն վերծանությունը, որն առաջարկում է հնագետ Ս. Սաղումյանը. «**Ես աղբար Առեղս միայրանեցայ...**», քանի որ նույն **աղբար** (**աղբէր**) **Առեղը** հիշատակվում է նաև Վարդենիկից ոչ հեռու գտնվող Ալուչալուի (հնում Ն. Կթանոց) հուշարձանի շինարարական արձանագրության մեջ. «**...Ես աղբէր Առեղս**, խաչատուր... շինեցաք սբ գխորանս յիշատակ մեզ և ծնողաց մերոց...»։

[24] «Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ», Էջմիածին, 1921, էջ 47, 49, 71։

[25] Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 452։

ռով, որ տամ բայի դիմավոր ձևերը նվիրատվական բնագրերի անհրաժեշտ տարրը կազմելով, իմաստի թելադրանքով ավելի հաճախ են կիրառվել, քան երեկ (<գամ) կամ երեդ (<դնեմ) բայերը[26]: Հնագույն հիշատակությունը պահպանվել է Ցաղաց քար (Ծղեղնաձոր շրջ., գ. Ծղեգիս) հուշարձանախմբի ս. Հովհաննես եկեղեցու ճակատակալի շինարարական արձանագրության մեջ. «ՆՂ Եւ :Ժ: (1051 թ.) կամ եղեւ ինձ, հայր Վարդկա գրել զյիշատակս վասն Վարդա, Զաքարէի որդո, որ մեծ յուսով ԵՐԵՏ զԲվեա մարգ եւ Սեղաի այգին եւ այլ շատ իրք»[27]: Ըստ ժամանակի հաջորդ վկայությունը գտնում ենք Արցախի Խաթրավանք տաճարի մի նվիրագրության մեջ, որ 1204 թ. թողել է հուշարձանը կառուցող Հովհաննեսի եղբայր Հասանը՝ իբրև Հովհաննեսի շինարարական արձանագրության շարունակություն. «Ի ՈՄԳ թուիս... այս իմ գիր է Հասանա, որ երբ իմ աղբէրս զեկեղեցիս շինեաց ու զվանքս ինձ ԵՐԵՏ, ես զխնձորաքակս իւր սահմանովն ի յեկեղեցիս տուի...»[28]: Նույն Արցախի Գտիչ վանքի (Տող գյուղ) վիմագրության մեջ երկու անգամ հանդիպում է երետ բայաձևը. նախ 1246 թ. մի նվիրատվության հատուցման բանաձևում. «...տր Վրդանէս իւր կամաւ զաւագ տանն ինձ ԵՐԷՏ», և ապա՝ հայր Վրթանեսի 1250 թ. մի այլ հիշատակագրության մեջ. «...Եւ տր Վրթանէս ԵՐԵՏ ի տարոջ :Բ: ժամ»[29]:

Նշելի է, որ երետ բայաձևը ավելի հաճախ գործածվում է պատմական Հայաստանի հյուսիսային գավառների, հատկապես Արցախի, Լոռու, Վայոց ձորի և Կայեն-Մահկանաբերդի վիմագրության մեջ (Հաղբատ, Սանահին, Բարձրաքաշ, Մակարավանք, Աղջոց, Վանստան և այլն):

Վիմական արձանագրություններով ավելի հարուստ հնավայրերում, ասենք Արարատյան աշխարհում կամ Շիրակ-Արագածոտնում, երետ-ը համարյա չի հանդիպում: Առայժմ եզակի վկայությունը գտնում ենք Անիի մոտ գտնվող Բագնայր հուշարձանի 1233 թ. մի նվիրագրության մեջ, որը գիտությանը հայտնի է Ն. Սարգիսյանի միակ և անստուգելի ընդօրինակությամբ. «...զԵրդ որ Խաչէրեսն, Վարդին որդին ի Քս փոխեցաւ եւ զիւր զանձով շինած տներն ի Գաղտ դրանն խեչ ԵՐԵՏ սբ

Մայրս լուսո... ապա դառն ժամանակի հանդիպեցաւ եւ ծախեցաւ»[30]: Առաջին հայացքից պարզ ու դյուրըմբռնելի թվացող այս հատվածը հետազոտողների մոտ տարբեր կերպ է հասկացվել, վիճելի է համարվել մանավանդ ի գաղտ դրանն խեչ երետ կապակցությունը: Մ. Էմինը 1881 թ. բնագրի այդ մասը թարգմանել է. «на его деньги построенные дома у Тайных ворот... отдал в сию св. обитель»[31], այսինքն, խեչ բառը անհասկանալի համարելով, բաց է թողել փոխարենը կետեր դնելով, իսկ երետ-ը իրավամբ թարգմանել է отдал: Ն. Մառը «Վիմական տարեգրի» նշանավոր առաջաբանում առարկելով այս վերծանության դեմ, գտնում է, որ խեչ-ը նվիրատուի՝ Խաչէրեսի անվան հապավումն է, և ըստ այդմ առաջարկում է նույն քաղվածքը վերծանել «на свои деньги купаленные дома у Потайного входа Хеч (Хачерес) дал сей святой матери света ...»[32]: Տողատակում Մառը հնարավոր է համարում նաև խեչ բառը հասկանալ խաչ իմաստով (բառիս մեջ ա>ե փոփոխությունը այժմ էլ դիտվում է Լոռու և Նոյեմբերյանի խոսվածքներում. հմմտ. խէչ, սրփխէչ (<սուրբխաչ), որը, ըստ վերծանողի, տվյալ միջավայրում կարող էր արտահայտել խաչմերուկ իմաստը (...дома на перекрестке Потайного входа...):

Մեր կարծիքով այստեղ Մառը սխալվում է. այս վրիպումը գալիս է Խեչ բառի ոչ ստույգ մեկնությունից: Խեչ միջին հայերենում և արդի բարբառներում շատ տարածված բառ է և արտահայտում է մի շարք իմաստներ, որոնցից ամենահիմնականը մոտ, կից, քով նշանակությունն է, որով և նա հանդես է գալիս մեր օրինակում[33]: Այսպիսով, «տները... ի Գաղտ դրանն խեչ երետ...» կապակցությունը պետք է հասկանալ «...Գաղտ դռան մոտի տները տվեց...», «Գաղտ դռանը կից տըները տվեց...»:

Երետ բայաձևի հնչյունափոխված տարբերակը՝ իրետ հայտնի է եզակի վկայությամբ Արցախի Մեծարանց վանքի մի նվիրագրության մեջ, որը փորագրվել է XIII դարի սկզբին. «Ես՝ Սմբատ որդի Հեջբին տվի էգատեղ Գրիգորոյ, նա ի տարումն :Դ: ժամ իրետ յայտնութենն...»[34]: Երետ>իրետ փոփոխությունը արդարացվում է միջին հայերենի հնչյու-

[26] Երեկ (<գամ) բայաձևի մեզ հայտնի միակ վկայությունը հանդիպում է Հովհաննավանքի մի արձանագրության մեջ, որի ժամանակը ստույգ որոշված չէ, տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 100: (...Աձ պարոնացն աջողում էրետ, երկիրս էրեկ...»):

[27] Մ. Բարխուդարյան, Դիվան, պր. 3, էջ 152:

[28] Սխալներով հրատարակված է՝ Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 194:

[29] Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն, Բ, էջ 258:

[30] Ն. Սարգիսյան, Տեղագրութիւն ի փոքր եւ ի մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 184: Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 118:

[31] Н. Эмин, Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего, М., 1881, էջ 61:

[32] Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, Առաջաբան, էջ X:

[33] Հ. Աճառյան, Հայ գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 464:

[34] Ս. Բարխուդարյանի հավաքածուից: Հրատարակված է՝ Խ. Դադյան, Մեծարանց

նական օրենքներով, ըստ որոնց բառի մեջ երկու Ե-երից առաջինը ձայնորդներից առաջ օրինաչափորեն փոխվում է ի-ի (հմմտ. երեք>իրեք, երեց>իրէց, աւերեմ>աւիրեմ, աւելեմ>աւիլեմ)[35]։

Ե (Է) նախահավելվածի սույն հոդվածում նկարագրված անկանոն կիրառությունները վիմական բնագրերում երկար չեն շարունակվում։ Արդեն XIV—XV դարերի արձանագրություններում այդպիսի օրինակներ չեն հանդիպում։

Միջին հայերենի, աշխարհաբարի և բարբառների բայական համակարգի հետագա զարգացումը հանգեցնում է բայի անց. կատարյալ ժամանակի անկանոն ձևերի կանոնավորմանը և նորմավորմանը։ Վերանում է Ե (Է) աճականի անհրաժեշտությունը բայաձևերի ամբողջությունը պահպանելու գործում, քանի որ հին հայերենի միավանկ բայերը մեծ մասամբ երկվանկ են դառնում շնորհիվ ու կրավորականի վերջավորության կամ գոյական հիմքի (հմմտ. տես—ետես=տեսաւ, ել=ելաւ, եդ=դրեց, մուտ—եմուտ=մտաւ, եկն—եկաւ, լից—ելից=լցեց)։

Ավելի կենսունակ են երեկ, երետ բայաձևերը, որոնք հնչյունափոխված տեսքով մինչև օրս էլ գործում են Լոռու ենթաբարբառում (էրի<երեկ, էրէդ<երետ) և Ղարաբաղի բարբառի Բաշքենդի խոսվածքում (իրետ<երետ)[36*]։

Թ. ԽՈՍՐՈՎԻ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ

Միջնադարի նշանավոր գիտնական Հովհաննէս Տաւուշեցու եղբոր՝ վաղամեռիկ Խոսրովի հիշատակին կանգնեցված խաչքարձանը չի պահպանվել, սակայն հուշարձանի սև տուֆից միակտուր պատվանդանը՝ ընդարձակ տապանագրով ընկած է Հովհաննավանքի հուշարձանախմբից փոքր-ինչ հյուսիս, պատմական գերեզմանոցում։ Գեղեցիկ տառաձևերով փորագրված այս արձանագրությունը գիտությանը հայտնի է միայն պրոֆ. Կ. Ղաֆադարյանի ընդօրինակությամբ ու հրատարակությամբ։

որ եւ ս. Յակովբա վանից արձանագրութիւնները, «Բանասէր», Փարիզ, 1901, № 9, էջ 136։ Այստեղ բայաձևը վերծանված է երետ:

35 J. Karst, նշվ. աշխ., էջ 49—50։

36 Տե՛ս Մ. Մաքսուդյանց, նշվ. աշխ., էջ 409։ Բաշքենդի խոսվածքը նկարագրված չէ. առանձին դիտողություններ գտնում ենք Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» գրքում, Մարդակերտի շրջանի Մինգրելսկ գյուղի խոսվածքի նկարագրության մեջ։ Այս գյուղի բնակիչները, ըստ հեղինակի, 1917 թ. գաղթել են Բաշքենդ գյուղից։ Հեղինակը երետ>իրետ իրողությունը չի դիտել Բաշքենդ-Մինգրելսկի խոսվածքում։

* Շարունակության «Աշտարակը նորքն...» հատվածը կրճատում ենք, քանի որ այն նույնությամբ տեղ է գտել «Վիմական արձանագրությունների բառաքննություն» գրքում (էջ 238—242)։ — Խմբ.։



Նկ. 3. Հովհաննավանք. Խոսրովի տապանագիրը։

Բնագիրը անվթար է մնացել, կարդացվում է առանց դժվարության և տարակարծիքի առիթ չի տալիս, այսուհանդերձ Կ. Ղաֆադարյանի վերծանությունը մի կետում մեզ թվում է խիստ առարկելի։

Ահա տապանագիրը ըստ հեղինակի վերծանության.

1. [Յ]այս նսեմաշէն յ[արկ] տապանի
2. Խոսրովա կրաւնաւորի է եղբաւր Յոհան
3. իսի վարդապետի Տաուշեցու։ Արդ, յ
4. ոյժ ցանկացող էր վարուց երանել
5. ի հարցն եւ զժամանեց, կիսաւրեա փ
6. ոխեցաւ ի Քս։ Աղաչեմ յիշեսջ
7. իք ի տր[37]։

Այնուհետև վերծանողը մեջ է բերում արձանագրության միակ բացատրությունը, ըստ այդմ՝ «5-րդ տողում զժամանեց բառը պետք է հասկանալ ժամանեաց. հարկավ ակնարկում է վանք ընդունվելը»։

Զ նախդիրի կիրառությունը բայի դիմավոր ձևի հետ (զժամանեց) անսպասելի ու անսովոր իրողություն է ոչ միայն XI—XII դդ. գրական հայերենի համար, որով շարադրված է Խոսրովի հիշատակագիրը, այլև նույնիսկ միջին հայերենում կամ ժամանակի խոսակցական լեզվում, որտեղ, ինչպես հայտնի է, հին հայերենի նախդիրները այլևս լայն տարածում չունեին և այդ պատճառով հաճախ էին դիտվում նրանց անհարկի գործածության կամ շփոթման դեպքեր։

Մնում էր կարծել, թե փորագրողը սխալմամբ է քանդակել Զ գիրը կամ նախդիրը։

Սակայն այդպես չէ։ Տեղում, հուշարձանի վրա ի նորո ընթերցելով արձանագրությունը, համոզվում ենք, որ վիճելի բայաձևը ստույգ չի ընդօրինակվել. քարի վրա պարզ փորագրված է ոչ թե ԶԺԱՄԱՆԵՑ, այլ՝ ՉԺԱՄԱՆԵՑ։ Տարբերությունն առաջացել է արձանագրության Չ և Զ տառատեսակների նմանությունից։

Այսպիսով, 5-րդ շարքում ժամանեց բառի սկզբում պետք է վերծանել ոչ թե Զ նախդիրը, այլ Չ ժխտական մասնիկը։

Սակայն միայն այս շտկումով բնագրի վերծանությունը չի ճշգրտվում. զժամանեց բայաձևը հասկանալով ժամանեաց, այսինքն Զ տառաձևը ավելորդություն կամ փորագրողի սխալ համարելով, հեղինակն անվերապահ կերպով գտնում է, որ խոսքն այստեղ Խոսրով կրոնավորի վանք ժամանելու կամ ընդունվելու մասին է, և, ըստ այդմ, բնագրի

[37] Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 112։

այդ հատվածը պետք է հասկանալ այն իմաստով, որ Խոսրովը վանք ժամանելուց կամ ընդունվելուց անմիջապես հետո վախճանվել է։

Մեր կարծիքով բնագրում Խոսրովի՝ վանք ընդունվելու կամ չընդունվելու մասին ոչ մի ակնարկ չկա, քանի որ ժամանեց (ժամանեաց) կամ չժամանեց (դասական գրաբարում սպասելի էր ոչ ժամանեաց) այս իրադրության մեջ պետք է հասկանալ իր նպատակներին, ցանկություններին հասնել, մի բան հասցնել և ոչ թե բառացի իմաստով՝ որևէ տեղ ժամանել կամ տվյալ դեպքում վանք ընդունվել։ Ժամանել բայիմաստի համեմատության համար կարելի է հիշել Հոռոմոսի վանքի հայտնի արձանագրությունը ջրատար անցկացնելու մասին, որտեղ նույնպես բայաձևը այդ իմաստն է արտահայտում. «...զականց զջուրն, զոր մեր հին թագաւորացն կարի յոյժ ջանացեալ եւ ոչ ժամանեցին բերել... մեծ ծախիւք եւ աշխատութեամբ ածաք զջուրս...»[38]։

Այս է վկայում նաև տապանագրի հետագա շարադրանքը. «...յոյժ ցանկացող էր վարուց երանելի հարցն եւ չժամանեց, կիսաւրեա փոխեցաւ ի Քս»։ Այսինքն, Խոսրով կրոնավորը ցանկացող և հետևող էր երանելի հայրերի վարքին (հենց այդ նպատակով էլ մտել էր Հովհաննավանք), սակայն չհասցրեց այդ անել, չհասավ իր նպատակներին, վաղաժամ մեռավ։

Այս է տապանագրի իմաստը։

Չի հիմնավորվում, ուստի և ավելորդ է յ գրի վերականգնումը արձանագրության սկզբում։ Ճիշտ է, այդ մասում քարը մոտ մի տառատեղ ջարդված է, սակայն այստեղ հավանաբար փորագրված է եղել սկիզբը մատնանշող խաչը, որի հորիզոնական թևի մի մասն էլ դեռ նշմարվում է։ Բացի դրանից, յ գրի վերականգնման դեմ առարկում է նաև գրաբարի քերականությունը։ «Այս նսեմաշէն յ[արկ] տապանի Խոսրովա կրաւնաւորի է...» նախադասության մեջ այս, նսեմաշէն բառերը յարկ ենթակայի որոշիչներն են՝ օրինաչափորեն դրված ուղղական հոլովով և ոչ մի կերպ հնարավոր չէ նրանց յ (=ի) նախդրիվ դարձնել։

Գ. ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ

Հովհաննավանքի առաջնորդ Խաչիկ վարդապետի մասին առաջին տեղեկությունը տալիս է Զաքարիա Սարկավագը իր «Պատմագրության»

[38] **Н. Эмин,** նշվ. աշխ., էջ 31։ Մեջ բերված հատվածը թարգմանված է. «...воду из родников, которую древним царям нашим... не удалось провести....» Թվում է նույնական չէ не удалось **провести** թարգմանությունը, ավելի ստույգ կլիներ՝ не успели провести։

«Թէ ով ոք էին առաջնորդք վանացս» գլխում. «Թուին ՈԻ եղեւ ճայր խաչիկ: Եւ զայս ուսաՀ յաՐձանաց խաչի, որ է ի ճասարակաց գեՐեզմանատունն»[39]:

Զաքարիայի տեսած խաչարձանը մինչև վերջերս կորած էր համարվում և այդ պատճառով էլ Խաչիկ վանահոր տապանագիրը, որից օգտվել է պատմիչը վանքի առաջնորդների ժամանակագրությունը կազմելիս, չենք գտնում Հովհաննավանքի արձանագրությունների լիակատար ժողովածուի մեջ, որ հմտորեն հրատարակել է Կ. Ղաֆադարյանը:

Այլ առիթով հուշարձանի պատմական գերեզմանոցում ուսումնասիրություններ կատարելիս մեզ հաջողվեց հայտնաբերել Խաչիկ վարդապետի խաչքարի պատվանդանը՝ ընդարձակ տապանագրով, որի մասին ակնարկում է Զաքարիան:

Պատվանդանի միակտուր սև տուֆից քարը (90×45×80 սմ) այժմ ընկած է Հովհաննավանքի պարիսպներից մոտ 50 մ դեպի հյուսիս, պատմական գերեզմանոցում: Իր չափերով, մշակման եղանակով և համակապես տառաձևերով այս քարը հիշեցնում է Խոսրով Տաուշեցու խաչքարի նույնանման պատվանդանը, որը նույնպես առանց խաչքարի ընկած է նրանից մոտ 40 մ դեպի հյուսիս և նկարագրված է Կ. Ղաֆադարյանի գրքում[40]:

Հուշարձանախմբի երկարամյա պահակ Ա. Խուդավերդյանի ասելով նորահայտ պատվանդանը միայն վերջերս է այստեղ բերվել Օհանավանի բնակիչ Մամիկոն Սարգսյանի գոմից, որտեղ այն ծառայել է իբրև անասունների ջրելու գուռ:

Զնայած այդ տեղափոխումներին, պատվանդանի հարթ մակերեսին փորագրված տապանագիրը տուժել է միայն թվագրի մասում և վերծանվում է հաջողությամբ. ահա բնագիրը.

1. Թ[ՈԻ]... ԱՅՍ ԴԻՐՔ ԳԵՐԵԶՄԱ[Ն]
2. ԻՍ ՀԱԻՐ ԽԱՉԿԱ, ՈՐ ԷՐ ՄՇԱԿ ԷԿԵ
3. ՂԵՑՈ, ԱՌԱ[Ն]Ց ԱՄԱԻԹՈ: ՈՐՔ ԿԱՐԴԱ
4. ՅՔ ՅԻՇՄ[Ա]ԱՆ ԱՐԺԱՆԻ ԱՐԱՐԷՔ Ի ՔՍ:

Արձանագրության սկիզբը, որտեղ պետք է լիներ տարեթիվը, 2—3 տառատեղ ջարդված է, սակայն մեզ թվում է, այդտեղ կարելի է վերականգնել Զաքարիա Սարկավագի մեջ բերած թվագիրը՝ ՈԻ (1171), որը

[39] «Զաքարիա Սարկավագի Պատմագրություն», հատ. Գ, Վաղարշապատ, 1870, էջ 30:

[40] Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 112:

նա վերցրել է տապանագրից և անտարակույս Խաչիկի մահվան կամ խաչարձանը կանգնեցնելու թվականն է:



Նկ. 4. Հովհաննավանք. Խաչիկ առաջնորդի տապանագիրը:

Նույն Խաչիկ վանահոր հիշատակությամբ երկրորդ արձանագրությունը փորագրված է Հովհաննավանքի Տապանատուն կոչվող շինության հյուսիսային պատին, ներքուստ և գիտությանը հայտնի է Կ. Ղաֆադարյանի միակ ընդօրինակությամբ:

Այստեղ տառաձևերը անեղծ են պահպանվել և կարդացվում են հաջողությամբ, սակայն բնագրի վերծանությունը գրքի հեղինակի խոստովանությամբ հեռու է սպառիչ լինելուց և լրիվ չի հասկացվում, ուստի, տեղում ի նորո ընթերցելով փորագրվածը, աշխատել ենք կարելույն չափ պարզել անհասկանալի մասերը:

Ահա բնագիրը՝ Կ. Ղաֆադարյանի ընթերցմամբ.

1. Յառաջնորդութե խաչկա եւ միաբան(ք) ուխտիս հաստա

2. տեցաք, թե ոք ի միաբանութես կոչի ի Քս Բխ ժամ ղատ յնչից

իւրոյ եւ Ի Ժ

3. ամարարն ար ժամ եւ որք միաբանք ԾԿ անուն կցար[41]:

[41] Նույն տեղում, էջ 76—77:

Ապա հետևում է վերծանողի բացատրականը. «երրորդ տողի բառերը անհասկանալի են»։

Իրոք որ տվյալ բառաբաժանումով այդ տողը դժվար է հասկանալ։ Տարակուսելի է հատկապես որք միաբանք ԺԿ անուն կգար կապակցությունը*։

Կարելի էր կարծել, թե գծիկով փորագրված ԺԿ գրերը թվագիր են նշանակում, սակայն իրականում այդպիսի թիվ գոյություն չունի, ըստ որում երկու գիրն էլ տասնավոր են արտահայտում (Ժ=10, Կ=60)։ Մյուս կողմից, հայերենի պատմության համար խիստ դայթակղիչ էր կգար բառի մեջ տեսնել Կ եղանակիչով բայաձև XII դարի բնագրում, եթե այն իրական լիներ և հաստատվեր նրա շարահյուսական կապը վկայված նախադասության մեջ։

Սակայն պարզվում է, որ արձանագրության երրորդ տառաշարքի բառաբաժանումը ճիշտ չի կատարվել, որի հետևանքով և առաջացել են այդ անբացատրելի բառերը։

Բնագրի տարընթերցումները պարզելու և բառանջատումը շտկելու նպատակով մեջ ենք բերում նույն արձանագրության մեր վերծանությունը.

1. Յառաջնորդութե ուխտիս խաչկա եւ միաբան(ք) ուխտիս հաստա

2. տեցաք, թե ոք ի միաբանութես կոչի ի Քս Բն ժամ զատ յնչից իւրոյ եւ Ի Ժ

3. ամարարն աւր ։Ա։ ժամ, եւ որք միաբանք Ժ կանոն կարգ։

Այսպիսով, առաջին շարքում խաչկա բառից առաջ վերծանողը բաց է թողել ուխտիս բառը, երրորդ շարքում աւր բառից հետո, վերևում՝ ։Ա։ գիրը. իսկ նույն շարքի անուն բառի մեջ փորագրված է ոչ թե ՈՒ, այլ Ո, ըստ այդմ տառաշարքը պետք է վերծանել ոչ թե ԺԿ անուն, այլ Ժ կանոն, ոչ թե կգար, այլ կարգ։ Քարի վրա այս վերջին բառը փորագրված է տառակցումով, որին կարծես թե ավելի մոտ է հեղինակի կգար ընթերցումը, սակայն արձանագրությունները վերծանելիս այսպիսի դեպքերում հիմք է ընդունվում ոչ միայն և ոչ այնքան փակագրի պարունակած գրերի շարադասությունը, որքան մեծ մասամբ ամբողջ փակագրի արտահայտած իմաստը կամ բնագրի շարահյուսական կապը։

* Այս հատվածի համառոտ վերաշարադրանքը տե՛ս Ս. Ավագյանի հիշյալ գրքում (էջ 263—265)։—Խմբ.։

Այս կարգի մի վրիպում էլ գտնում ենք տապանատան նույն պատին թողած Գրիգոր Թագավորի դստեր՝ Շուշիկի 1178 թ. արձանագրության մեջ, որ նույնպես հայտնի է միայն Կ. Ղաֆադարյանի վերծանությամբ. «...յանուն իմ կատարել մինչ ի կատարումն սորա դար։ Որք խափանէ նզովեսցի»[42]։ Սորա դար..., եթե վրիպակ չէ, ապա անհասկանալի է և կասկածելի։ Իրականում, քարի վրա այդ մասում պարզ երևում են... սորա գրերը և փակագիրը, որը կարելի է վերծանել դար, դրա, արդ և այլն։ Պարզվում է, որ սրանցից ըստ արտահայտած իմաստի տվյալ իրադրության մեջ ավելի հարմար է արդ շաղկապը և ոչ թե դար բառը, որ միանգամայն անհարիր է բնագրին։ Ակներև է, որ արձանագրության հատուցման բանաձևի նախադասությունը ավարտվում է սորա բառով, որին հետևում է արդ շաղկապով սկսվող անեծքի ձևակերպման նոր նախադասությունը։

Դառնանք քննության առարկա արձանագրության բովանդակությանը։ Վերծանողի կարծիքով այն «մի վանական կարգադրություն է Խաչիկ վարդապետի անունից գրված»[43] մեռած միաբանների հիշատակին պատարագաժամեր տալու մասին։

Բնագրի վերծանության մեջ մեր կատարած մասնակի լրացումներից և շտկումներից հետո պարզ է դառնում, որ այստեղ գործ ունենք ոչ թե վանահայր Խաչիկի «վանական կարգադրության», այլ ամբողջ եղբայրության, բոլոր միաբանների հաստատած կարգի կամ օրինականացման հետ, որով պատարագների որոշ քանակ է սահմանվում վախճանված միաբանների հիշատակին։ Այդ է ցույց տալիս արձանագրության առաջին շարքը, որտեղ որոշակի շեշտված է. «Յառաջնորդութե[ան] (ուխտիս) խաչկա...», այսինքն Խաչիկի առաջնորդության ժամանակ, «...եւ միաբան(ք) ուխտիս հաստատեցաք», ուրեմն հաստատել են ուխտի միաբանները և ոչ թե Խաչիկ առաջնորդը։

Մեռած միաբանների հիշատակին տրվելիք պատարագների մասին նման սահմանումները հանդիպում են նաև այլ վանքերի արձանագրություններում (Հոռոմոս, Բագնայր, Բագարան, Արջո առիճ, Խծկոնք, Հառիճ և այլն)։ Ամենուրեք դրանք շարադրվում են ոչ թե միաբանու-

[42] Նույն տեղում, էջ 77։

[43] Նույն տեղում, էջ 48։

թյան առաջնորդի կամ վանահոր, այլ ամբողջ եղբայրության, բոլոր միաբանների անունից, թեև չի բացառվում, որ իրականում այդ կարգի հաստատման և իրականացման գործում վճռական դերը, այնուամենայնիվ, պատկանել է վանական հայրերին։ Որքան բնորոշ է, օրինակ, Հաղարծնավանքի վանականների սահմանումը, որ փորագրված է գլխավոր եկեղեցու բարավորի վրա. «...**մեք հաւինեցիք հայր Պետրոս և այլ եղբարքս հաստատեցաք հափտենից կտակ անջնջելի**...» և հրապարակվում է պատարագների կատարելու կարգը։

Պատարագների քանակը տարբեր էր տարբեր վանքերում, սակայն բոլոր դեպքերում դրանք սահմանվում էին հաշվի առնելով վանական կենտրոնի հնարավորությունները և խստորեն հետևելով հոգևոր հիերարխիային։

Պատարագներին պետք է մասնակցեին միաբանության բոլոր անդամները, ըստ որում ժամարարները կամ պատարագողները անմիջականորեն վարում էին արարողությունը, իսկ այն միաբանները, որոնք պատարագող չէին, պարտավոր էին տասը կանոն կարդալ հանգուցյալի բարեխոսության համար։

Արջո առիճի արձանագրության մեջ հենց այդպես էլ ձևակերպված է կարգը. «...**ամենայն եղբայր :Ա: ժամ արասցէ եւ որ պատարագող չէ Ժ կանոն աղաւթս արասցէ**...»[44]: Նույնը գտնում ենք նաև Խծկոնքում «...**ամենայն եղբայր :Ա: աւր պատարագ առնէ եւ որ չառնէ :Ժ: կանոն աղաւթս արասցէ**...»[45]:

Գալով Հովհաննավանքի մեր արձանագրության երրորդ տողի անհասկանալի բառերին, այդ բարդ նախադասության զեղչված ստորոգյալները վերականգնելով կարելի է այն հասկանալ. **ժամարարն աւր :ա: ժամ [արասցէ], եւ որք միաբանք**՝ **Ժ կանոն կարգ** կամ **Ժ կանոն կարգ [արասցեն]**:

Դ. ՈՉ ԹԵ ԱԲԵԼ, ԱՅԼ ՍԱՄԵԼ (ՍԱՄՈՒԵԼ) ԿԱԶՄՈՂ

Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղի գերեզմանոցում, կիսավեր մատուռից փոքր-ինչ հարավ, ընդհանուր քանդակազարդ պատվանդանի վրա կանգնած են միջին չափերի (2×0,75×0,19 մ) երկու գեղաքանդակ խաչքար։ Դրանցից հարավայինի թիկունքին գեղեցիկ խոշոր տառերով

[44] Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 191։

[45] Նույն տեղում, էջ 209։

փորագրված է 9 տողանի մի արձանագրություն, որը գիտությանը հայտնի է միայն Մ. Բարխուդարյանցի արտագրությամբ[46]։

Բնագրի տառաձևերը միանգամայն անվնաս են մնացել և հեշտությամբ են ընթերցվում, սակայն, չնայած դրան, Բարխուդարյանցի արտագրության մեջ տեղ են գտել մի քանի էական տարընթերցումներ, որոնք զգալի չափով աղավաղում են բնագրի իմաստը. այսպես, առաջին տողում թվագիրը պետք է լինի ՈՂԴ և ոչ թե ՈՂԳ, 4-րդ տողում պարզ կարդացվում է **եղբարց նոցունց**, հրատարակված է **եղբարց ՈՒնծ**, 5—6-րդ տողերում պետք է վերծանել **հաւրեղբաւր իմո Յոհանա**, այնինչ հեղինակը կարդացել է **հաւրեղբաւր իմոյ Ոհանին**: Սակայն ամենաէական աղավաղումը տեղի է ունեցել 8—9-րդ տողերում, խաչքարը կազմողների անունները վերծանելիս. բնագրում պարզ երևացող ԶՍԱՄԵԼ ԵՒ ՏԵՐԱՒԱԳ ԿԱԶՄՈՂ ԽԱՉԻՍ ՅԻՇԵՑԵՔ նախադասությունը հեղինակի մոտ այլափոխվել է՝ ԶԱԲԵԼ ԵՒ ՏԵՐԱՒԱԳ ԿԱԶՄՈՂ ԽԱՉԻՍ..., այսինքն **Սամել (Սամուել)** վարպետի փոխարեն խաչքարի կազմող է ներկայացվել **Աբելը**:

Հիմք ընդունելով արձանագրության այս սխալաշատ վերծանությունը՝ Ս. Բարխուդարյանը միջնադարյան քարգործ վարպետների մասին իր աշխատության մեջ տեղ է հատկացրել նաև սույն **Աբելին**՝ իբրև Կողբի խաչքարը կազմողներից մեկին[47]։

Իրականում, ինչպես ակնհայտ է դառնում արձանագրության ստույգ վերծանությունից, խաչարձանը, նրա պատվանդանը և, դատելով քանդակների ոճից, նաև երկրորդ խաչքարը, Սարգիս քահանայի պատվերով կերտել է **Սամել** կազմողը **Տերաւագի** հետ միասին 1245 թ.[48]։

Սամել կամ **Սամուել** կազմողը Կողբափոր գավառի այս ժամանակաշրջանի նշանավոր քանդակագործ-վարպետներից է, այդ են ցույց տալիս Կողբ գյուղի մերձակայքում պահպանված մի քանի խաչարձաններ, որոնք կրում են նրա ստորագրությունը. դրանցից ամենահոյակապը Կողբ գյուղից մոտ 3 կմ հարավ-արևմուտք, անտառում, կիսափուլ մա-

[46] **Մ. Բարխուդարյանց**, Արցախ, էջ 385։

[47] **Ս. Բարխուդարյան**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 143։

[48] Մեզ ավելի հավանական է թվում այս անձնանվան **Տերաւագ** ձևը. եթե բնագրի ՏԵՐ բառը ցույց տար սոսկ ԱՒԱԳ-ի հոգևորական լինելը, ապա փորագրված կլիներ ՏՐ հապավված ձևով, ինչպես սովորական է հայ վիմագրության մեջ, առանց որևէ բացառության։ Նույն բառի մեջ Է գրի փոխարեն Ե նույնպես ապացույց է, որ անձնանունը այստեղ պետք է համարել ոչ թե ԱՒԱԳ-ը, ՏԵՐ որոշիչով, այլ՝ ամբողջական ՏԵՐԱՒԱԳ բառը։

տուն մոտ, պատվանդանից ընկած խաչքարն է, որը կանգնեցրել է Վարդաշահը իր կենակից Անիփայի գերեզմանի վրա։ Խաչքարի երեսը զարդարված է անխոցելի վարպետությամբ կատարված բուսական և հյուսկեն քանդակներով, իսկ թիկունքին փորագրված են կնոջ և երեխայի խորաքանդակներ, որոնցից վերը և աջ կողմում տեղավորված է հուշարձանի կերտման ընդարձակ արձանագրությունը։

Անիփայի խաչքարը և թիկունքի արձանագրությունը անծանոթ են բանասիրությանը, ուստի հարկ ենք համարում մեջ բերել բնագրի սկիզբը մեր հավաքածուից.

Ի Ո ԵՒ Ի Խ ԹՎԱԿԱՆԻ Հ[ԱՅՈՑ]
ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՄ՝ ՎԱՐԴԱՇԱՀՍ ԿԱՆԳՆԵՑԻ Զ
ԽԱՉՍ Ի ՎԵՐԱ ՀԱՆԳԸՍՏԱՐԱՆԻ ԿԵՆԱԿՑԻ ԻՄ
ՈՅ ԱՆԻՓԱՅԻ, ԶԻ ԿԵՍԱՒՐԸ ՓՈԽԵՑԱՒ ՅԱՇԽ
ԱՐՀԵՆ ԵՒ ԵԹՈՂ ԶԻՍ ՍԳԱՒՐ
ԿԵԱՆԱՒՔ...

Խաչքարի թիկունքի ստորին մասում, խորաքանդակների արանքում նույն տառաձևերով փորագրված է ՍԱՄՈՒԵԼ ԿԱԶՄ[ՈՂ], որն, անշուշտ, խաչքարը կազմողի ստորագրությունն է։

Չնայած ժամանակների զգալի տարբերությանը (ՈՂԴ (1245)—ՈԽ (1191)=54 տարի), ոչ մի հիմք չկա այս խաչքարի կազմող Սամուելին և Սարգիս քահանայի պատվիրած զույգ խաչքարերը կազմող Սամելին տարբեր անձեր համարելու։ Ավելի հավանական է մտածել, որ Սամուել կազմողը Անիփայի խաչքարը կերտել է երիտասարդ հասակում, 1191 թ., իսկ Սարգիս քահանայի խաչարձանները քանդակելիս նա արդեն ծերացած է եղել, ուստի աշխատել է Տերտագ կազմողի հետ միասին։

Սամել քարգործի մյուս հիշատակությունը պահպանվել է Կոզբ գյուղից մոտ 3 կմ հյուսիս-արևմուտք, կիսականգուն եռանավ բազիլիկ եկեղեցու («Տվարագեղցի») արևելյան ճակատին։ Այստեղ, փոքրիկ լուսամուտի շրջանակին ագուցված սրբատաշ բեկորի վրա քանդակված է հավասարակողմ խաչ, որի ներքևի մասում կարդացվում է 3 տողանի այս արձանագրությունը.

ՍԱՄԵԼ ԳՐ
ԵՑ ՅԱՂՈԹՍ
ՅԻՇԵՔ

Սամել կամ Սամուել վարպետի հաջորդ ձեռակերտը որոշ վերապահությամբ համարում ենք «Տվարագեղցուց» դեպի հյուսիս, անտառի մեջ, պատմական գերեզմանոցում ընկած գեղաքանդակ խաչքարը։ Ճիշտ է, այստեղ չենք գտնում Սամուելի անվան հիշատակությունը, սակայն խաչքարի երեսի քանդակազարդերը, մանավանդ թիկունքին փորագրված երկու եղբայրների խորաքանդակները և արձանագրության տառաձևերը իրենց կատարման եղանակներով հիշեցնում են Անիփայի խաչքարը և վկայում, որ դրանք կերտել է նույն քանդակագործ-վարպետը։ Այս խաչքարի արձանագրությունը ևս այլուստ հայտնի չէ, ուստի ավելորդ չենք համարում տեղադրել հուշարձանների պահպանության բաժնի արշավախմբային նյութերից.

ԵՄ՝ ՔԵՐՈԲՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ[ՒՆ]
ՈՐԴՈՑ ԻՄՈՑ ՅՈՒՆԱՆԱ ԵՒ ՄԽԻԹԱՐԱ, ԶԻ ԿԵՍԱՒՐԸ
ՎԱԽՃԱՆԵՑԱՆ։ ԶՃՆՈՂՔՍ ԶՔԵՐՈԲ ԵՒ ԶԱՒԱԳՏԻԿԻՆ
ՅԻՇԵՑ[ԷՔ]։

Ե. ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ*

Առաքելոց վանք-ամրոցը և համանուն ընդարձակ գյուղաքաղաքի մյուս հուշարձանները տեղավորված են Իջևանի շրջանի Գետաշեն գյուղից մոտ 3 կմ հյուսիս-արմուտք, Կունեն կամ Կիրանց-ջուր գետակի գեղատեսիլ հովտում և անտառապատ լեռնալանջերին։

Հուշարձանախմբի կառույցվածքներից զգալի հետաքրքրություն է ներկայացնում հատկապես Առաքելոց վանքի գավիթը, որը իր «հազարաշեն» ծածկով հայկական ճարտարապետության եզակի կոթողներից է և առավել ակնհայտորեն է ցույց տալիս այն ընդհանրությունը, որ գոյություն ունի ժողովրդական գլխատների և բարձր զարգացման հասած հայկական գավիթների կառուցողական ձևերի միջև։

Առաքելոց վանք-ամրոցի, մասնավորապես նրա նշանավոր գավթի շինության ժամանակը ստույգ որոշված չէ, քանի որ հայ մատենագրության մեջ այդ մասին տեղեկությունները պակասում են, իսկ հուշարձանների սակավաթիվ վիմական արձանագրություններն էլ մեծ մասամբ նվիրատվական են և անթվակիր։

Գիտական գրականության մեջ Առաքելոց հուշարձանախմբի ժամա-

* «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 2—3։

նակագրության համար սովորաբար իբրև ելակետ է ընդունվել գավթի հարավային մուտքի ընդարձակ արձանագրությունը, որի թվագիրը, սակայն, ժամանակին վերծանվել է էական սխալներով և հիմք դարձել հուշարձանների կառուցման ժամանակի մասին թյուր կարծիքների։

Այս նվիրատվական արձանագրությունը փորագրված է գավթի հարավային մուտքի բարավորի երկու քարերի վրա, կանոնավոր, գծալի շափով երկարացված, բոլորաձև երկաթագրով։ Բնագրի վերջին հինգ տառաշարքերը տեղավորված են բարավորի ներքևի սեղանաձև սրբատաշ հատվածի վրա. այստեղ տառաձևերը անաղարտ են մնացել և ընթերցվում են լիակատար հավաստիությամբ։ Նույնը չի կարելի ասել բնագրի առաջին տառաշարքի մասին, որը փորագրված է եղել դրանդի կամարի տակ դրված կիսաշրջանաձև բեկորի վրա և մեծ մասամբ քայքայվել, շերտ-շերտ թափվել է։ Այս շարքում տեղավորված է եղել արձանագրության տարեթիվը, որը եղծված լինելով, դժվարությամբ է վերծանվում և երկբայությունների տեղ է թողնում։

Բնագրի առաջին հրատարակիչ Ս. Ջալալյանցը 1841 թ. թվագիրը անվերապահորեն կարդացել է «ի թուին ՈՂԳ»[1]։ Կես դար անց Մ. Բարխուդարյանցը նույն թվագիրը ինքնուրույն կերպով վերծանել է «ի թվին ՈՂԴ»[2]։

Հետագա ուսումնասիրողները, տարբեր առիթներով դառնալով սույն բնագրին, ընդունել են Ջալալյանցի և Բարխուդարյանցի ՈՂԳ կամ ՈՂԴ ընթերցումը, այն համոզմամբ, թե նրանց արտագրության ժամանակ եղծված թվագիրը ավելի անվթար է եղել[3]։ Վերջերս արձանագրությունը փորագրող Ստեփան գծողի ժամանակը որոշելու առնչությամբ թվագիրը հրատարակել է նաև հայ վիմագրության հմուտ վերծանող Ս. Բարխուդարյանը, որը նույնպես ընդունել է ՈՂԳ ընթերցումը, թեև հեղինակը այն առել է սեփական ժողովածուից[4]։

Մեզ համար անհասկանալի է մնում, թե ինչպես է ծագել թվագրի ՈՂԳ ընթերցումը, որովհետև տեղում և լուսանկարի վրա ուշադիր զննելով արձանագրության առաջին շարքի խաթարված տառաձևերը, այնտեղ չենք գտնում ՈՂԳ կամ ՈՂԴ գրերից և ոչ մեկը։ Մեր ընդօրինակմամբ

---

[1] Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 156։

[2] Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 378։

[3] Տե՛ս Գ. Սարգսյան, Առաքելոց վանք-ամրոցը և գյուղատեղը, «Էջմիածին», 1955, № 7, էջ 38։

[4] Տե՛ս Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 201։

առաջին տողն ունի հետևյալ տառաշարքը՝ Ի ԹՎԱԿԱՆԻ[Ն] ՀԱ..., իսկ 2—3 տառատեղ ընդհատումից հետո պարզ երևում է Ջ գրի բացվածքի աղեղը, որի ներքևի մասը և թեք գծիկը հազիվ են նշմարվում, քանի որ քարի վերի շերտը թափվել է՝ թողնելով այդ մասերի բարակ ուրվագիծը միայն։

Չնայած դրան, պահպանված ուրվագծերը անվիճելիորեն հաստատում են, որ թվագրի առաջին գիրը պետք է կարդալ Ջ։ Երկրորդ գիրը՝ տասնավորը, թեև ավելի պակաս է հողմահարված, բայց նույնպես պարզ չի երևում և մեր կարծիքով ավելի նման է Խ գրին։ Նույն վիճակում է նաև միավոր ցույց տվող տառաձևը, որը վերապահությամբ կարելի է կարդալ Բ։ Այսպիսով, եղծված տառաձևերի մասնակի վերականգնումներից հետո բնագրի վիճելի առաջին շարքը կարելի է վերծանել՝ Ի ԹՎԱԿԱՆԻ[Ն] ՀԱ[ՅՈՑ] Ջ[ԽԲ] (1293 թ.), որը ոչնչով չի հիշեցնում նախկին՝ «ի թուին ՈՂԳ» ընթերցումը։

Թվագրի մեր վերծանության հավաստիությունը հաստատվում է նաև արձանագրության մեջ հիշատակվող պատմական անձերի ժամանակագրությամբ, հանգամանք, որ անտեսվել է բնագիրը ուսումնասիրողների կողմից։ Այդ անձերից նվիրատու Խաչենիսենց Թոռ Գրիգորը և բնագրի վերջում ստորագրող Ստեփան գծողը այլ աղբյուրներից հայտնի չեն, ուստի և չեն կարող ժամանակագրական կռվան հանդիսանալ թվագրի ընթերցման ճշգրտությունը ստուգելու համար։ Այդպիսի կռվան կարող է ծառայել միայն աթաբեկ ամիրսպասալար Խութլուբուղայի հիշատակությունը արձանագրության նախաբանում, որը մեջ է բերված Խաչենիսենց Գրիգորի բարեգործության ժամանակը մատնանշելու նպատակով. ԿԱՄԱՒ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹ[ԵԱՄ]Բ ԱԹԱԲԱԿ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ԽՈՒԹԼՈՒԲՈՒՂԻՆ, ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ ԹՈՌՆ ԽԱՉԷՆԻՍԵՆՑ... և այլն[5]։

Խութլուբուղան Կայենո և Մահկանաբերդի Արծրունիների իշխանական տոհմի աչքի ընկնող շառավիղներից է, աթաբեկ ամիրսպասալար «հայոց և վրաց» Սադուն Բ-ի որդին։ Ինչպես հայտնի է, պարոն Սադունը Մահկանաբերդի իշխանաց իշխանն էր, Հաղբատավանքի և այս գավառի մի շարք հոգևոր ու մշակութային կենտրոնների (Դեղձուտի, Առաքելոց, Կիրանց վանքերը) պատրոնն ու հովանավորը։ Այս իրողությունը բազմիցս վկայված է ոչ միայն պատմագրական աղբյուրներում (Կիրակոս Գանձակեցի, Վարդան Վարդապետ, Գրիգոր Ականցի, Սամուել Անեցի,

---

[5] Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 37։

Ստ. Օրբելյան և այլն), այլև բազմաթիվ վիմական արձանագրություններում՝ սկսած 1250-ական թթ. մինչև 1280-ական թթ.։

Սադունի մահվան թվականը, ուրեմն և Խութլուբուղայի ամիրսպասալարության տարին, ստույգ հայտնի չէ. ըստ վրաց պատմության նրա մահվան թվականն է 1281 թ.[6], ըստ Ստ. Օրբելյանի ժամանակագրության՝ 1282 թ.[7], իսկ ըստ Սամուել Անեցու Պատմության շարունակության՝ «եւ Սադօն մեռաւ ի Տաշիր ի թւ ՌՄԶԵ» (1285 թ.)[8]։ Հոր մահվանից անմիջապես հետո Խութլուբուղան վրաց Դեմետրե թագավորից ստանում է «վրաց և հայոց ամիրսպասալարի» տիտղոսը, իսկ մի քանի տարի անց՝ նաև աթաբեկության պաշտոնը, որով և նա վրաց արքունիքում հասնում է իր հոր առաջնակարգ դիրքին[9]։

Այստեղից ակնհայտ է դառնում, որ քննարկվող արձանագրության թվագրի ՈՂԳ (1244 թ.) ընթերցումը միանգամայն անհարիր է նրանում հիշված ամիրսպասալար և աթաբեկ Խութլուբուղայի գործունեության ժամանակներին՝ 1281—85 թթ. մինչև դարավերջը։ ՈՂԳ (1244) թ. պատմական ասպարեզ չէր իջել ոչ միայն Խութլուբուղան, այլև նրա հայրը՝ աթաբեկ Սադունը, որի իշխանության՝ մեզ հայտնի հնագույն վկայությունը վերաբերում է 1251 թ. (Խնձորուտ հնավայրում կանգնած «Բեմ» խաչքարի չհրատարակված արձանագրությունը)։ Բնական է կարծել, որ այդ ժամանակ Խութլուբուղան նույնիսկ դեռ ծնված չէր, քանի որ «Բեմ» խաչարձանի նշված արձանագրության մեջ հիշատակվում է «իշխանաց իշխան, պարոն» Սադունի միայն մեկ՝ Պապաց որդին։

Խութլուբուղայի որմանկարը իր հոր եղծված նկարի կողքին պահպանվել է Հաղբատավանքի ս. Նշան եկեղեցու հարավային պատին, ներքուստ, «Պարոն Խուտլուբուղայ» մակագրությամբ։ Նա աչքի ընկնող դեր է կատարել վրաց պատմության մեջ մոնղոլական տիրապետության շրջանում և պատահական չէ, որ նրա ռազմավարական սխրանքների մասին հիացմունքով են պատմում վրաց ժամանակագիրները։ Նրա հիշատակը հավերժացված է Երուսաղեմի վրացական Խաչ վանքի հուշացուցակում, հուլիսի 1-ի օրվա տակ, այս բառերով. «Այդ օրը պատարագ

———

[6] **Н. А. Бердзенишвили и др.**; История Грузии, Тбилиси, 1962, էջ 246:

[7] Ստ. Օրբելյան, *Ժամանակագրություն*, Երևան, 1942, էջ 28։

[8] *Սամուելի քահ. Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 163։*

[9] «История Грузии», էջ 247:

և հավիտենական մաղթանք կատարել Խութլուբուղային, Սադունի որդուն։ Աստված ողորմի նրան»[10]։

Հայկական աղբյուրներում ամիրսպասալար Խութլուբուղայի իշխանության հիշատակությանը առաջին անգամ հանդիպում ենք իր իսկ ընդարձակ արձանագրության մեջ՝ փորագրված Ավանի տաճարի արևմտյան պատին. «Ի թվիս ՉԼԶ (1287) յաշխարհակալութե[ան] արքայից արքային Արղունին։ Ես աթաբեկ և ամիրսպասալար Խութլուբուղայ, որդի աթաբեկ և ամիրսպասալար Սադունին, թողի զԱւանայ զայգեց շարետն և զջուլհկերոյն հորակտաւն...»[11]։

Խութլուբուղայի երկրորդ հիշատակությունը Առաքելոց գավթի՝ քննարկվող արձանագրության մեջ է, որի թվականը, ինչպես տեսանք, ստույգ վերծանված չէ։ Արդ, մինչև ե՞րբ է գործել աթաբեկ ամիրսպասալար Խութլուբուղան։ Հ. Աճառյանի «Անձնանունների բառարանում» և Մառի վերոհիշյալ հոդվածում այս հարցը բաց է մնացել. Աճառյանը Հաղբատավանքի որմանկարում պատկերված պարոն Խութլուբուղային և Առաքելոց վանքի մեր արձանագրության աթաբեկ ամիրսպասալար Խութլուբուղային տարբեր անձնավորություններ է համարում, հիմք ընդունելով Մ. Բարխուդարյանցի «Արցախը», որտեղ այդ անձնանունը ավանդված է «Խութլու Փուղին (Խութէ ու Բուղին)» աղավաղված ընթերցմամբ, իսկ արձանագրության թվագիրը՝ անիրական ՈՂԴ-ով[12]։ Մինչդեռ, ինչպես ակնհայտ է դառնում վերը շարադրվածից, դրանք միևնույն անձրն են՝ պարոն Սադուն Արծրունու որդին՝ ամիրսպասալար Խութլուբուղան։

Ակադ. Աշ. Հովհաննիսյանը Խութլուբուղայի կառափնումը մեզ անհայտ աղբյուրների հիմամբ դնում է 1293 թ.[13]։ Մի բան անվիճելի է, որ Խութլուբուղայի սպանությունը պետք է կատարված լինի մինչև 1294—95 թթ., քանի որ Խաչատուր Կեչառեցու այդ թվականներին գրված «Ողբ վասն աւերման տանս Արևելեան» բանաստեղծության մեջ Խութլուբուղան հիշվում է մեռած իշխանների թվում. «...Զխութլուբուղեն յարեան հալա-

———

[10] **Н. Я. Марр**, Фресковое изображение парона Хутлу-буги в Ахпате, ХВ. 1912, т. I, вып. III, 351—352:

[11] Կ. Ղաֆադարյան, *Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը*, Երևան, 1945, էջ 21։

[12] Հ. Աճառյան, *Անձ. բառ, Բ, էջ 357—358*, Բարխուդարյանց, *Արցախ, 1895, Բաքու, էջ 378։*

[13] Աշ. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հատ. Ա, Երևան, 1957, էջ 255։*

11—746

վի, գիր աններման պատկերն ի հողի»՝ այսպես է ողբում նրա վախճանը բանաստեղծը[14]։

Այսպիսով, ամիրսպասալար աթաբեկ Խութլուբուղայի գործունեությունը հարատևել է ավելի քան մեկ տասնամյակ, հոր մահվանից՝ 1281—83 թ. մինչև իր մահը՝ 1293—94 թթ.: Ահա այս տասնամյակի ընթացքում էլ Ստեփան գծողը փորագրել է Խաչենիսենց քոռ Գրիգորի նվիրատվական արձանագրությունը՝ Առաքելոց վանքի գավթի հարավային մուտքի բարավորի վրա:

Քննարկվող արձանագրության բուն բովանդակությունը բացահայտվում է հեշտությամբ և տարընթերցումների առիթ չի տալիս. Նվիրատու Խաչենիսենց Գրիգորը իր հալալ արդյունքով միաբանել է Առաքելոց վանքին և երկու պատարագաժամ ստացել դրա փոխարեն։

Չնայած դրան, որոշ բանասերներ արձանագրությունը շինարարական բնույթի են համարել, հավանաբար նկատի ունենալով նրա աչքի ընկնող տեղադրությունը՝ միակ մուտքի ընդարձակ ճակատակալը, որտեղ սովորաբար փորագրվում էին հուշարձանի շինության կամ նորոգման մասին հիշատակությունները։ Ոմանք էլ, ճիշտ մեկնաբանելով բնագրի նվիրատվական բնույթը, Առաքելոց հուշարձանախմբի ժամանակագրության համար ելակետ են ընդունել ՈՂԳ (1244 թ.) թվագիրը և ըստ այդմ հանգել այն եզրակացության, թե գլխավոր եկեղեցին, գավիթը, պարսպապատերը և մերձակա շինությունները կառուցվել են դրանից մի քանի տասնամյակ առաջ, XII դարի վերջին կամ XIII դարի սկզբներին[15]։

Գավթի արձանագրության թվագրի մեր վերծանությամբ այդպիսի եզրակացությունը զրկվում է հիմքից։ Առաքելոց վանք-ամրոցի և գյուղաքաղաքի ընդարձակ տերիտորիայում պահպանված մի շարք կանգուն կամ կիսավեր հուշարձանների արձանագրություններից երևում է, որ դրանք բոլորն էլ կառուցվել են «աստվածասեր աթաբեկ» Սադունի տիրապետության ժամանակ և թվագրված են այդ տարիներով. դրանցից են՝ Զույգ եկեղեցիները և մերձակա խաչքարերը՝ ՉԻԳ (1247 թ.), ՉԻԲ (1273 թ.), ՉԺԶ (1267), պարսպամերձ եկեղեցին՝ ՉԻԵ (1276 թ.), Թևավոր խաչը՝ ՉԼԲ (1283 թ.), Տամարքի գյուղատեղի խաչքարը՝ ՉԻԲ (1273 թ.) և այլն։ Առաքելոց վանքի մոտակայքում պահպանված թվագիր ու-

[14] Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 539։ Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն Բ, էջ 38—39, մասն Գ, էջ 186։

[15] Տե՛ս Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 38։ Հ. Եղիազարյան, Իջևանի շրջանի պատմական հուշարձանները (ուղեցույց), Երևան, 1947, էջ 12։ Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960, էջ 98։

նեցող հնագույն հուշարձանը վերը նշված Խնձորուտ հնավայրի «Բեմ» կոչվող գեղաքանդակ խաչքարն է, որի Չ (1251 թ.) թվականի արձանագրության մեջ, ինչպես և պետք էր սպասել, պարոն Սադունը հիշատակվում է առանց «աթաբեկ» կամ «ամիրսպասալար» տիտղոսների, սոսկ իբրև «պարոն իշխանաց իշխան»[16]։

Ուստի ավելի հավանական է, որ Առաքելոց վանքի հուշարձանախմբի շինվածքները ևս կառուցվել են Մահկանաբերդի Արծրունիների իշխանության ծաղկման ժամանակաշրջանում, աթաբեկ ամիրսպասալար Սադուն Բ-ի և նրա որդի Խութլուբուղայի տիրապետության տարիներին, XIII դարի երկրորդ կեսին*։

Զ. ՍՐՎԵՂԻ ՎԱՆՔԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սրվեղի հուշարձանախումբը գտնվում է Իջևանի շրջանի Ուզունթալա գյուղից մոտ 3 կմ հարավ-արևմուտք, անտառի խորքում, ընդարձակ սարահարթի վրա։ Գլխավոր կենտրոնագմբեթ եկեղեցու հիմնապատերը մոտ 1 մետր բարձրությամբ շարված են մուգ վարդագույն սրբատաշ քարերով, իսկ ամբողջ շենքը՝ թրծած աղյուսով։

Հուշարձանի աղյուսաշեն պատերի մեջ ագուցված են բազմաթիվ մշակված ձևավոր բեկորներ և խաչքարերի կտորներ՝ մեծ մասամբ խաթարված արձանագրությունների հատվածներով, որոնցից մի քանիսը ժամանակին ընդօրինակել և իր գրքում զետեղել է Մ. Բարխուդարյանցը։

Այդ արձանագրություններից Սրվեղի վանքի շինության ժամանակը և շինարարներին որոշելու համար կարևորություն է ներկայացնում հատկապես եկեղեցու հյուսիսային աղյուսաշար որմի մեջ, մկրտության ավազանի կողքին, շրջված վիճակում ագուցված ձևավոր բեկորի արձանագրությունը, որը ժամանակին Բարխուդարյանցը կարդացել է «Թիվ ՈԱ. Ես Արտաւազ և Սարգիս շինեցաք զեկեղեցիս ձեռամբ Յովհաննեսի»[1]։

Հետագա ուսումնասիրողները, հիմք ընդունելով խաթարված բնագրի այս վերծանությունը, Սրվեղի վանքի գլխավոր եկեղեցին համարել են հայկական ճարտարապետության հնագույն և սակավաթիվ աղյուսա-

[16] Խաչարձանի ընդարձակ արձանագրությունը հրատարակված չէ, բերում ենք մեր հավաքածուից։

* «Թատր անունով կազմող-քանդակող չի եղել» խորագիրն ունեցող շարունակության վերատպությունը տե՛ս հեղինակի «Վիմական արձանագրությունների բառաքննություն» գրքում (էջ 91—93)։—Խմբ.:

[1] Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 340։

շեն հուշարձանը՝ կառուցված Հովհաննես ճարտարապետի ձեռքով, ՈԱ (1152) թվին[2]։

Իրականում հուշարձանի, ինչպես և լուսանկարի վրա այդ բեկորի արձանագրությունը փոքր ինչ այլ կերպ է կարդացվում. առաջին տողում, բեկորի ավելի լայն, հարթ մակերեսին, խոշոր գրերով փորագրված է՝ Ս[Բ] ՅՈՎ[ԱՆՆ]ԷՍ, իսկ երկրորդ տողում, բեկորի նեղ, ձևավոր մակերեսին, ավելի մանր գրերով՝ ...ԱՐՏԱՒԱԶ ԵՒ ՍԱՐԳԻՍ ՇԻՆԵՑԱՔ ՁԵԿ(ԵՂԵՑԻՍ) ՋԵՌԱՄԲ ՅՈՎՀԱՆԻՍ[Ի]:

Ինչպես տեսնում ենք, այստեղ տարեթիվ չկա և Մ. Բարխուդարյանցի «Թիւ ՈԱ» թվագիրը գալիս է Ս[Բ] ՅՈՎ[ԱՆՆ]ԷՍ անվան սխալ վերծանությունից (ՍԲ գրերը վերծանվել են «թիւ», իսկ Յ|ՈՎ գրերը դարձել են ՈԱ թվագիրը)։ Բացի դրանից, բնագրի սկզբում չկա և չէր կարող լինել ԵՍ դերանունը, քանի որ նրա փոխարեն սպասելի էր՝ ՄԵՔ։

Սակայն խնդիրը չի սպառվում միայն այս շինարարական արձանագրության թվագրի շտկումով. մեր վերծանությունից հետո բաց է մնում ոչ միայն Սրվեղի հուշարձանի կառուցման ժամանակը, այլև այն պարագան, թե որ հուշարձանին է պատկանում շրջված վիճակով աղյուսաշեն պատի մեջ ագուցված ձևավոր քարաբեկորը, կամ որն է Հովհաննես ճարտարապետի կառուցած եկեղեցին։ Դժվար է ասել, թե աղյուսաշեն հուշարձանի որ մասում է նախապես դրված եղել բարդ մշակում ունեցող այս բեկորը. կասկածից վեր է, որ այն ներկայիս տեղում չի եղել և այստեղ է դրվել հետագա վերանորոգումների ժամանակ։ Ամենայն հավանականությամբ այս մշակված քարը եկեղեցու մուտքի շրջանակի մի մասն է եղել, իսկ լրիվ արձանագրությունն էլ փորագրված է եղել ամբողջ շրջանակի վրա։

Սակայն ո՞ր հուշարձանի մուտքի շրջանակը, դժվար է ասել։ Միայն լրացուցիչ ճարտարապետական քննությամբ կարելի է պարզել, թե որն է այս բեկորի նախնական տեղը, արդյոք ներկայիս հուշարձանին է պատկանում, թե բերված է մի այլ, քարաշեն կառույցվածքից, ինչպես եկեղեցու պատերի մեջ ագուցված մյուս արձանագրված քարե բեկորները։

Մյուս կողմից, հավանականությունից զուրկ չէ նաև հնագետ Հ. Եղիազարյանի տեսակետն այն մասին, որ «այժմյան հուշարձանի տե-

---

[2] Տե՛ս Մ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 41։

ղում հնում եղել է մի ուրիշ քարաշեն հուշարձան» և որ ներկայիս աղյուսաշեն եկեղեցին կառուցվել է ավելի ուշ, XIII—XIV դարերում[3*]։

Է. ՎԿԱՅՎԱԾ Է ՈՉ ԹԵ ՏԱՐԻԵԼ, ԱՅԼ՝ ՏԱՇՐԵԼ...

Շոթա Ռուսթավելու վերջերս հրատարակված «Ընձենավոր» պոեմի ծանոթագրություններում Պ. Մուրադյանը հայկական աղբյուրներում Տարիել անձնանվան նախնագույն հիշատակության առթիվ բացատրում է. «Տարիել—անձնանուն, որ առաջին անգամ վկայված է Մակարավանքի արձանագրության մեջ. «... Ես՝ Դաւիթ, որդի Տարիէլի և Լիտան մեծ եւ հզաւր իշխանին աթաբէկ Սադունին...»'[1]։

Ամբողջ 7 տողանի արձանագրությունը փորագրված է Մակարավանքի գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին, մի մեծ սրբատաշ քարի վրա և, չնայած հիանալի պահպանությանը, առաջին հրատարակիչ Ս. Ջալալյանցի կողմից արտագրվել և հրատարակվել է էական աղավաղումներով, մանավանդ անձնանունների անհիմն տարընթերցումներով[2]։ Հենց մեջ բերած հատվածում բնավ չի հասկացվում, թե ով է Լիտա(ն) անվանվածը և ինչ հարաբերություն ունի Դավթի, Տարիելի կամ Սադունի հետ։

Միայն այս պարագան բավական էր անվստահություն ներշնչելու բնագրի այդպիսի ընթերցման նկատմամբ և հեղինակին ստիպելու զգուշությամբ վարվել վկայության հետ կամ դիմել ավելի հավաստի վերծանությունների, որպիսին են, օրինակ, Մակարավանքի բոլոր արձանագրությունների նորագույն վերծանությունները, որ բարեխղճորեն կատարել է բանասեր Գ. Սարգսյանը[3]։

Սակայն Պ. Մուրադյանը Տարիել անձնանվան վկայությունը քաղելով Ն. Մառի՝ 1964 թ. հրատարակված արխիվային նյութերից, վստահել է դրանց և, բնականաբար, չի հոգացել այդ իրողության հավաստիության մասին։

---

[3] Հ. Եղիազարյան, Իջևանի շրջանի պատմական հուշարձանները (ուղեցույց), Երևան, 1947, էջ 18։

* Շարունակության վերահրատարակությունը տե՛ս «Վիմական արձանագրությունների բառաքննություն», էջ 86—89։

[1] Շոթա Ռուսթավելի, Ընձենավոր, Երևան, 1966, էջ 312։

[2] Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 152։

[3] Գ. Սարգսյան, Մակարավանք, «Էջմիածին», 1954, № 4, էջ 30—36, № 5, էջ 46—53։

Ն. Մառը «Ռուսթավելու աշխարհայացքը ըստ աֆորիզմների» ուսումնասիրության սևագրություններում, երբ, Տարիել անվան դիմաց հարևանցի նշել է. «Հանդիպում է 1225 թվականի հայկական արձանագրության մեջ. «Ես Դաւիթ, որդի Տարիելի և այլն»[4]*։*

Մառը արձանագրության այս հատվածը մեջ է բերում ոչ թե սկզբնաղբյուրից՝ առաջին հրատարակիչ Ջալալյանցի գրքից, այլ Կ. Կոստանյանցի «Վիմական տարեգրից»[5]*, ուր այս անթվակիր արձանագրությունը տեղավորված է 1225 թ. տակ, որը և նյութ է տվել Տարիել անձնանվան մասին ժամանակագրական թյուր դատողությունների։*

Նշված տարընթերցումները պարզելու նպատակով մեջ ենք բերում Մակարավանքի սույն արձանագրության մեջ հետաքրքրող հատվածը սեփական վերծանությամբ, որի հարազատությունը իրականի հետ հեշտությամբ կարելի է ստուգել տեղադրվող լուսանկարով, ինչպես և Գ. Սարգսյանի ընդօրինակությամբ.

1. [Յ]ՈՒՍՈՎ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ, ԵՍ՝ ԴԱՒԻԹ, ՈՐԴԻ ՏԱՇՐԵԼԻ
2. [Ս]ՆԵ[Ա]Լ Ի ՏԱՆ ՄԵԾ ԵՒ ՀԶԱՒՐ ԻՇԽԱՆԻՆ՝ ԱԹԱԲԱԿ ՍԱԴՈՒՆԻՆ Ե
3. [Տ]ՈՒ ԸՆԾԱ ՅԵԿԵՂԵՑԻՍ Վ[Ա]Ս[Ն] Ն[Ն]ՋԵՑԵԼՈՑ ՄԵՐ, ՈՐ ԸՆԴ ՀՈՎ
4. [Ա]ՆԵ[Ա]Ի ՍՈՐԱ...

ապա շարադրվում են հատուցման և անեծքի ձևակերպումները։

Այսպիսով, բնագրում վկայված է ոչ թե «Դաւիթ որդի Տարիէլի», այլ՝ ԴԱՒԻԹ ՈՐԴԻ ՏԱՇՐԵԼԻ (նորագյուտ անձնանուն, որ հավանաբար ծագում է Տաշիր, Տաշիրք տեղանունից), ոչ թե՝ «...եւ Լիտան մեծ եւ հզաւր իշխանին...», այլ՝ ...[Ս[ՆԵ[Ա]Լ Ի ՏԱՆ ՄԵԾ ԵՒ ՀԶԱՒՐ ԻՇԽԱՆԻՆ... (ըստ Գ. Սարգսյանի ընթերցման՝ ...[Ծ]ՆԵ[Ա]Լ Ի ՏԱՆ...)[6]*։*

Դառնանք արձանագրության ժամանակին. ասացինք, որ տեղում և Ջալալյանցի ընթերցման մեջ թվագիր չկա։ Արձանագրության վերջում, նույն քարի վրա, ԱՒՐՀՆԻՆ բառի տակ ավելի պակաս խորությամբ փորագրված է Զ գիրը, որը չի նկատվել նախորդ հրատարակիչների կողմից և կարող է լինել այս կամ մի ուրիշ արձանագրության անավարտ թվա-

[4] **Н. Я. Марр**, Об истоках творчества Руставели и его поэме, Тбилиси, 1964, էջ 181:

[5] *Տե՛ս Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, ս. Պետերբուրգ, 1913, էջ 69։*

[6] Գ. Սարգսյան, *Մակարավանք, «Էջմիածին», 1954, № 4, էջ 32։*



Նկ. 5

գիրը, ինչ-ինչ պատճառներով կիսատ մնացած, սակայն դժվար է այդ միայնակ Ձ գիրը հավաստի կերպով Դավթի արձանագրության թվագիրը համարել, քանի որ նախ՝ այդ գիրը ոչ մի չափով նման չէ բնագրի տառատեսակներին և ապա՝ նրանից առաջ կամ հետո չեն փորագրված «Թ», «Թուին», «ի Թուին» բառերը, որ սպասելի էր նման դեպքերում։

Սակայն արձանագրության ժամանակը մի քանի տարվա ճշտությամբ որոշվում է նրանում հիշված պատմական անձերի՝ աթաբեկ Սադունի և Մակարավանքի առաջնորդ Հովհաննես Բ-ի ժամանակագրությամբ, էական հանգամանք, որ անտեսվել է բնագիրը ուսումնասիրողների կողմից։

Մահկանաբերդի իշխան աթաբեկ Սադուն Բ-ն հիշատակվում է Հաղբատավանքի և այս գավառի այլ հուշարձանների բազմաթիվ վիմական արձանագրություններում՝ սկսած 1250-ական թթ. մինչև 80-ական թթ.[7]։ Նա աթաբեկության է հասել 1270 թ.[8]։

Այս նույն ժամանակներում էր գործում նաև Մակարավանքի մեզ հայտնի երրորդ առաջնորդ Հովհաննես Բ-ն, որը վանքի վիմագրության մեջ առաջին անգամ իբրև վանահայր հիշատակվում է 1253 թ., իսկ վերջին անգամ՝ 1278 թ.[9]։

Այստեղից միանգամայն ակներև է, որ Տաշրեցի որդի Դավթի արձանագրությունը չէր կարող փորագրված լինել 1225 թ., ինչպես, հետևելով Կ. Կոստանյանցին, գտնում են Ն. Մառն ու Պ. Մուրադյանը։ Աթաբեկ Սադունի և վանահայր Հովհաննես Բ-ի հիշատակությունն ապացույց է, որ բնագիրը քանդակվել է դրանից մոտ կես դար անց, 1270-ական թթ., ուստի ժամանակագրական առումով ևս քննարկվող արձանագրությունը որևէ հիմք չի տալիս այնտեղ Տարիել անձնանվան ավելի հնագույն, քան Ռուսթավելու պոեմում է, վկայությունները որոնելու։

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ մեր կարծիքով Տարիել անձնանվան հնչյունափոխված տարբերակը՝ ԹԱՐԻԼ (ըստ Ջալալյանցի՝ ՏԱՐԻԼ) հանդիպում է նույն Մակարավանքի գավթի երկու նվիրատվական արձանագրություններում, որոնցից առաջինը փորագրված է գավթի հարավային դռան ճակատակալ քարի վրա, դրանդի կամարի տակ

---

[7] Տե՛ս Գ. Հովսեփյան, Ջագավանից ժողովը, «Շողակաթ. հայագիտական ժողովածու», Վաղարշապատ, 1913, էջ 26—27։ Հավուց թառի Ամենափրկիչը... Երուսաղեմ, 1937, էջ 62։ Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 171, 193, 197, 213։

[8] Տե՛ս Н. А. Бердзенишвили и другие, История Грузии, Тбилиси, 1962, էջ 245:

[9] Տե՛ս Գ. Սարգսյան, Մակարավանք, «Էջմիածին», 1954, № 5, էջ 47—51։ Ս. Ջալալյանց, նույն տեղում, էջ 151։

և թվագրված է «ՈՂ Թ[Վ]ԻՍ» (1241), իսկ մյուսը՝ նույն մուտքից փոքր ինչ վերև, զույգ խաչերի կողքին և ունի ՈՂԳ (1244) թվագիրը[10]։

Ի ՀԱՆԳՈՂ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ, ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ Ժ—ԺԳ ԴԱՐԵՐԻ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

Մեսրոպյան շրջանի հայերենի համեմատական ուսումնասիրությունը պարզում է, որ Ի-ով վերջացող բառերի հոլովման համակարգը արտացոլում է հնդեվրոպական արական-չեզոք և իգական հիմքերով հոլովումները կամ դրանց զուգորդումները, ըստ որում հնդեվրոպական անխառն Ո բնով հոլովումը պահպանել են սահմանափակ թվով, մեծ մասամբ միավանկ բառեր (գի-գիոյ, գիոց, գիով, Թի-Թիոյ, Թիոց, Թիով(ք), մնացած դեպքերում առկա են՝ կամ ւոյ, ւով, ւոց արական հոլովումը, որը ծագում է հնխ. *iyo (*io, *yo) աճանցով արական և չեզոք հիմքերից՝ հայերենի հնչյունական օրենքների ազդեցությամբ վերափոխված ւո-ի (հոգի- հոգւոյ, հոգւով, հոգւոց, որդի-որդւոյ, որդւով, որդւոց) և կամ՝ եայ (ւոյ), եաւ, եաց արականի հետ զուգորդված իգական հոլովումը, իբրև արդյունք հնխ. *iya մասնիկով կազմված իգական հիմքերի հիմքակազմ տարրի հնչյունական փոփոխության, որը օրինաչափորեն արտացոլվում է որպես եա (մահի-մահւոյ, մահեաւ, մահեաց, զարի-զարւոյ, զարեաւ, զարեաց)[1]։

Հինգերորդ դարի գրական հուշարձանների լեզվում սեռի քերականական կարգի ըմբռնումը արդեն գոյություն չուներ, ուստի Ի հանգող անունների կրկնակ հոլովման հիշյալ իրողությունները ներկայացնում են մի այնպիսի վիճակ, երբ հին հայերենը հնդեվրոպական մյուս լեզուների նման տարբերում էր անունների քերականական սեռը՝ համապատասխան հոլովական բներով։ Այսպիսով, ի հանգող բառերի կրկնակ հոլովման ձևերը իրենց գոյությունը շարունակում են իբրև հայերենի

---

[10] Տե՛ս Գ. Սարգսյան, նույն տեղում, էջ 46—47։

* «Մառը և հայագիտության հարցերը», Երևան, 1968։

[1] Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 3, Երևան, 1957, էջ 293—295։

Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 147, 237։

հնագույն շրջանի՝ սեռերի տարբերակումը ճանաչող հոլովման վերապրուկներ։

Երկու հոլովումներից մեսրոպյան շրջանի հայերենում առավել լայն տարածում ստացավ Նա հոլովումը, ըստ որում համարյա բոլոր ածականները պահպանում են իգական հոլովումը, իսկ մի շարք արական իմաստով բառեր էլ համաբանության ազդեցությամբ սկսում են հետևել նույն հոլովմանը (պոռնկորդեաց, այծենեաւք, փորոտեաւք)[2]:

Հետագա դարերի «ռամկախառն գրաբարում» և կիլիկյան միջին հայերենում Ի հանգող բառերի հոլովումը մեծ մասամբ ենթարկվում է ընդհանրացման օրենքին, ազատվում կրկնակի ձևերից և հանգում միասնական ոյ հոլովմանը, որը հնչյունական ազդեցությունների հետևանքով փոխակերպվում է լայն տարածում ստացող ու հոլովման (գարի-գարոյ (գարու), գարով, մաքի-մաքոյ (մաքու), մաքով, եկեղեցի-եկեղեցոյ (եկեղեցու), եկեղեցով, աղաւնի-աղւնոյ (աղավնու), աղւնով և այլն)։

Փոքր-ինչ այլ պատկեր է ներկայացնում Ի-ով վերջացող անձնանունների հոլովման դրությունը հին հայերենում։

Այդ շրջանից ավանդված նման տիպի անձնանունների քանակն այնքան էլ մեծ չէ և հազիվ է անցնում մեկ տասնյակից[3]։

Դրանք բացառապես ուշ շրջանի փոխառություններ են, քանի որ հնդեվրոպական միասնության կամ նույնիսկ նախահայկական ժամանակաշրջաններից անձնանուններ չեն պահպանվել։

Այդ անձնանուններից միայն երկուսն են արմատական անուններ՝ Դադարշի, հին պրսկ. Dadarsi քաջ, աներկյուղ բառից, Դարեհի հայ զորավարի անունը՝ միայն ուղիղ ձևով վկայված Բիհիսթունի սեպագիր արձանագրություններում, և Եսայի՝ եբրայեցերենից ներմուծված, որի հնագույն վկայությունները սեռ. տրական հոլովներում ունեն՝ Եսայեայ:

Բացի այս երկուսից, մյուս անձնանունները բաղադրյալ կազմություններ են, որոնց առաջին եզրը մեկ այլ անձնանուն է, իսկ երկրորդ եզրը՝ ուրհի կամ ուհի «դուստր» պահլավերենից փոխառված բառը (Աւագուհի, Զարուհի, Թագուհի, Համազասպուհի, Ոգուհի, Սիսակուհի, Սմբատուհի, Վարդանուհի (Վարդուհի), Տաճատուհի, Տիգրանուհի): Սրանցից՝ Աւագուհի, Սիսակուհի, Վարդանուհի, Տաճատուհի անունների թեք

---

[2] Տե՛ս Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 301։

[3] Անձնանունների մասին բոլոր տեղեկությունները քաղում ենք Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի» հատորներից։

հոլովները չեն ավանդված, ուստի անհնար է նրանց հոլովման մասին ստուգապես դատել։ Մյուսները՝ Զարուհի, Համազասպուհի, Ոգուհի, Սմբատուհի, Տիգրանուհի նախնագույն մատենագրության մեջ սեռական, տրական հոլովներում ներկայացված են Զարուհեայ (բաց. ի Զարուհեայ), Համազասպուհեայ, Ոգուհեայ, Սմբատուհեայ, Տիգրանուհեայ: Միայն Թագուհի անձնանունը հնագույնս ավանդված է սեռ. Թագուհոյ ձևով[4]։

Այս վկայությունների 5-րդ դարին պատկանելը հավաստիորեն դժվար է երաշխավորել, քանի որ դրանց մատենագրական աղբյուրները մեզ են հասել մեծ մասամբ ուշ շրջանի արտագրություններով, որտեղ անխուսափելի էին գրիչների թույլ տված տարընթերցումներն ու աղավաղումները կամ հետնադարյան հայերենին հարմարեցնելու նպատակով կատարված «խմբագրումները»։

Այդ է ցույց տալիս, օրինակ, ուրհի, ուհի իգականանիշ մասնիկով կազմված բառերի հնագույն օրինակների հարազատության քննությունը, որ հմտորեն կատարել է բանասեր Ա. Վարդանյանը[5]։

Պարզվում է, որ ուհի կամ ուրհի մասնիկը դասական հայերենում դեռևս իգականակերտ ածանցի բառակազմական արժեքը չէր ստացել, այլ հանդիսանալով պահլավերեն uhi (urhi) բառի փոխառությունը հանդես էր գալիս իբրև բարդության երկրորդ եզրը և արտահայտում դուստր, աղջիկ բառերի իմաստը, ինչպես նույնպես փոխառյալ դուխտ, անոյշ բառերը Որմիզդուխտ, Սանդուխտ, Սահականդուխտ, Խոսրովանոյշ, Վարդանոյշ կազմություններում։

Բացի դրանից, Ա. Վարդանյանի բնագրական համեմատությունները ապացուցում են, որ ուհի (ուրհի) մասնիկով կազմված և ոսկեդարյան համարված քանանուհի, առաքելուհի, սարկաւագուհի, Երանուհի, իմաստուհի և հավատուհի հասարակ անունները անհարազատ են առաջին թարգմանիչների լեզվին, աղավաղումներ են կամ հետամուտ գոյացումներ, որոնց դիմաց նույն բնագրության մեջ ընտիր մատենագիրները ամենուրեք ունեն կամ դասական հայերենի համարժեքները և կամ նկարագրական կապակցություններ (քանանուհի=կին մի քանանացի, սամարուհի=սամարացի կին, Երանուհի=երանելոյ, սարկաւագուհեաց=սարկաւագացն կանանց և այլն)[6]։

Բացառություն է կազմում միայն թագուհի բառը, որը չնայած դշխոյ, տիկին, բամբիշն, արքայակին ոսկեդարյան համազորների առկա-

---

[4] Հ. Աճառյան, Հայոց անձն. բառ., Բ, 1944 թ., էջ 241։

[5] Տե՛ս Ա. Վարդանյան, «Ուհի» մասնիկը հայերենի մեջ. «Հուշարձան» գրական ժողովածու, Վիեննա, 1911, էջ 309—315։

[6] Նույն տեղում, էջ 310—311, Հ. Աճառյան, Լիակ. քեր., հատ. 3, էջ 305։

յության, երբեմն հանդիպում է առաջին թարգմանիչների երկերում, սակայն ոչ ածանցավոր բառի նշանակությամբ, այլ իբրև պարսկական պատրաստի փոխառություն։

Չնայած Ի ճանգող անձնանունների հնագույն վկայությունների նկատմամբ մեր ունեցած անվստահությանը, նրանց զուգահեռ ձևերի բացակայությունը այնուամենայնիվ ստիպում է ընդունել, որ այդ անունների վկայված հոլովաձևերը արտացոլում են մեսրոպյան շրջանի հայերենում նրանց հոլովման դրությունը, ըստ այդմ, ավանդված անձնանունների զգալի մեծամասնությունը հետևում է ա(եա) հոլովման։

Հետմեսրոպյան շրջանի մատենագրության մեջ և միջին հայերենում Ի-ով վերջավորվող անձնանունների քանակը համալրվում է կամ հարևան լեզուներից կատարված նոր փոխառություններով (Էաչի, Էլթի, Թենի, Ջոճի, Մերչի, Սիթի և այլն), կամ բնիկ հայերեն հասարակ անուններով (Հոգի, Գանձի, Ոսկի, Վանենի, Տուտի և այլն) և կամ ունի իգականակերտ ածանցով կազմված բազմաթիվ նոր անուններով (Արմենունի, Արշակունի, Համազասպունի, Սրբունի և այլն), որոնք նույնպես հետևում են ա(եա) հոլովման։

Միանգամայն այլ պատկեր է ներկայացնում Ի հանգող անձնանունների սեռական, տրական հոլովների կազմությունը Ժ—ԺԳ դարերի վիմական արձանագրություններում։ Հայտնի է, որ վիմարձանագրությունները սովորաբար շարադրվում էին ժամանակի գրական հայերենով՝ գրաբարով, սակայն բնագիր կազմողները կամ փորագրիչները, հմուտ չլինելով դասական լեզվի իմացության մեջ, հաճախ արձանագրվող բնագրերում ավանդական ու օրինականացված ձևակերպումների հետ խառնում էին նաև խոսակցական, կենդանի բարբառների բազմաթիվ տարրեր՝ առօրյա կենցաղին կամ տնտեսական գործարքներին վերաբերող տերմիններ ու դարձվածքներ, նույնիսկ քերականական իրողություններ, որոնցով այդ բնագրերի լեզուն հարստանալով նորամուտ ձևերով՝ հետզհետե նմանվում է կենդանի խոսվածքներին և զգալի չափով հեռանում գրական հայերենից։ Այս է պատճառը, որ այդ դարերի վիմագրական հուշարձաններում գրական նորմավորված հոլովական ձևերին զուգահեռ հաճախ հանդիպում է եզակի սեռ.-տրական հոլովների Է(Ե) վերջավորությունը, որը տվյալ իրադրության մեջ անծանոթ է ոչ միայն դասական գրաբարին, այլև կիլիկյան միջին հայերենին և աշխարհաբարին։

Պարզենք այս ձևաբանական առանձնահատկությունը Ժ դարավերջի (992 թ.) մի արձանագրության օրինակով, որը փորագրված է Ալամանի (Նախիչևան, արևմտյան Շիրակ) Անանէ եկեղեցու բարավորի

վրա. «Յանուն Այ այս իմ գիր է Սոփէ դստեր մեծին Աշոտոյ Շահնշահի, հայոց և վրաց թագուհո, թողել եմ զԱլաման շարյատս...»[7]։ Թեև արձանագրության առաջին տասաշարքը որոշ չափով եղծված է և դժվար է վերծանվում, սակայն մեզ հետաքրքրող հատվածը Սոփի (Սոփիա) անվան հիշատակությամբ հավաստի է և որևէ կասկած չի առաջացնում. խաթարված են «վրաց և հայոց» թագուհու ծննդաբանությունը մատնանշող բառերը, որոնք մեր կարծիքով կարելի է վերականգնել՝ «դստեր մեծին Աշոտոյ...», հետևելով նույն Սոփիայի մի այլ արտոնագրին՝ փորագրված Մրենի տաճարի հարավային պատին 992 թ., որտեղ Աշոտ Գ Ողորմածի դուստրը նույն բառերով է բնութագրվում. «Ես Սոփի դուստր մեծին Աշոտոյ Շահնշահի հայոց և վրաց թագուհի... տուեալ եմ և հաստատեալ...»[8]։

«Այս իմ գիր է...» նախադասությունը վիմական արձանագրությունների նախաբանի շատ տարածված բանաձև է, որը միանալով անձնանվան սեռական հոլովին, մատնանշում է նվիրատուին կամ նվիրագրի հեղինակին։ Այստեղից ակներև է, որ Ալամանի արձանագրության «Այս իմ գիր է Սոփէ... հայոց և վրաց թագուհո...» կապակցության մեջ Սոփէ-ն Սոփի (<Սոփիա) անձնանվան սեռական հոլովաձևն է (գրական լեզվում՝ Սոփիոյ, Սոփեայ), թեև հրատարակիչներից ոմանք սխալմամբ այն համարել են անվան ուղիղ ձևը[9]։

Նույն Է(Ե) ձայնավորով է ձևավորվում ի հանգող անձնանունների նաև տրական հոլովը. Մաթոսավանքի (Դիլիջան) գրատան հյուսիսային կամարի վրա ԺԳ դարի կեսերին խոշոր, գեղաքանդակ գրերով փորագրել են՝ «Տր Ած ողորմի թագուհէ» ինքնուրույն նախադասությունը[10], ակնհայտ է, որ այստեղ պահպանվել է Թագուհի անվան տրական հոլովաձևը՝ Թագուհէ (փոխ. Թագուհւոյ, Թագուհոյ)։

Այս իրողությունը հայ քերականներից առաջինը նկատել է Շահան Ջրպետը. 1823 թ. Փարիզում հրատարակած գրաբարի ֆրանսերեն քերականության վերջում Ջրպետը հատուկ գլուխ է նվիրել ժամանակի մի

---

[7] Ալիշան, Շիրակ, էջ 125։

[8] Նույն տեղում, էջ 138։

[9] Տե՛ս Н. Эмин, Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего, М., 1881, էջ 71. Բնագրի նախաբանը թարգմանված է. «Сие есть мое писание... Я, Сопе (София)... Шахиншаха, армянского и Иберского царица...».

[10] Մաթոսավանքի արձանագրությունները չեն հրատարակված, առնում ենք մեր հավաքածուից։

շարք բարբառների ու խոսվածքների համառոտ նկարագրությանը («Տարբեր հայկական ժողովրդական բարբառների»), որտեղ նմուշներ են տեղավորված տարբեր խոսվածքների հոլովական համակարգից. «Քերականության» 748-րդ էջում Չրպետը մեջ է բերում տիրունի բառի հոլովական փոփոխությունները արտացոլող հետևյալ աղյուսակը.

ուղղ. տիրունի	տիրունիք, նիներ
սեռ. տիրունոյ, նէ	տիրունիներու, նեց
բաց. տիրունիէ, նէ	տիրունիներէ, նեցմէ
գործ. տիրունիով. նէով	տիրունիներով, նեցմով[11]:

Ըստ հեղինակի հավաստիացման նույն ձևով են հոլովվում նաև ունի վերջածանցով մյուս իգական անունները (Վարդունի, Թագունի իր օրինակներն են)։ Սակայն Չրպետը չի նշում, թե որ բարբառից կամ խոսվածքից են քաղված տիրունի բառի վերոբերյալ հոլովաձևերը, չեն նշված նաև գրքում հանդիպող մյուս մեջբերումների աղբյուրները. ուստի աղյուսակի և հատկապես երկրորդական ձևերի հավաստիությունը դժվար է ստուգել։ Հոգնակի թվի տարբերակների աղբյուրները մոտավոր ճշտությամբ կարելի է որոշել. առաջնային շարքը համապատասխանում է արևմտյան մի շարք բարբառների, ասենք պոլսահայ բարբառի հոլովական համակարգին[12], իսկ երկրորդայինը հիշեցնում է միջին հայերենի ք հոգնակերտ ունեցող անեզական բառերի հոլովումը (հայրենիք-հայրենեց, բաղնիք-բաղնեց)[13]։

Ինչ մնում է եզակի թվի մյուս զուգադիր ձևերին (տիրունէ, տիրունէով), ապա դրանք, թվում է, հայերենի համար անսովոր գոյացումներ են, չեն վկայված ոչ միայն հին և միջին գրական լեզուներում, այլև աշխարհաբարում և բարբառներում։ Առարկություն է առաջացնում մանավանդ եզակի գործիական նէով ձևը (տիրունէով), որը հազիվ թե հնարավոր լինի բացատրել հայ բարբառների լեզվական օրինաչափություններով։

Մեր հին մատենագրության մեջ և կիլիկյան հայերենի գրական հուշարձաններում Ի հանգող անձնանունների սեռական, տրական հոլովների այդպիսի կազմությունը (է, Ե) արտացոլող հատուկենտ օրինակներ կարելի է գտնել, որոնք, ամենայն հավանականությամբ խոսակցա-

11 Ch. Cirbied. Grammaire de la langue arménienne, Paris, 1823, էջ 748։
12 Հմմտ. Հ. Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941, էջ 94։
13 I. Karst, Historische Grammatik des Kilikisch-Armenischen. Strassburg, 1901, էջ 213—214։

կան լեզվից կատարված ներթափանցումներ պետք է համարել։ Հին գրական հայերենով՝ գրաբարով հորինված միակ երկը, որի մեջ հանդիպում ենք այդ փաստերին Միխայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն թարգմանությունն է, որի երկու հնագույն ձեռագրերը ընդօրինակվել են 1246 և 1271 թվերին։ Ահա այդ երկում տեղ գտած է-ով սեռականի օրինակները. «Եւ Լևոն զօրագլուխն Թեոդոսիէ եկն առ Մսլիմ» (անձնանվան ուղիղ ձևը՝ Թեոդորոս, Թեոդոս), «...եւ Արղլա Ալէ որդին եկն ի Խորասանայ» (ուղիղ ձևը՝ Ալի), «իսկ Զօսլին յորժամ լուաւ զմահն Զանգէ» (ուղիղ ձևը՝ Զանգի), «Իսկ պարոն Լևոն որդին Ստեփանէ...» (ուղիղ ձևը նույնն է)։

Այս վկայությունները քաղում ենք Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն» գրքից[14]. սակայն հարկ է նշել, որ բերված բոլոր օրինակները չէ, որ հաստատում են մեզ հետաքրքրող քերականական օրինաչափությունը. Թեոդոսիէ և Ստեփանէ ձևերն, օրինակ, ոչ մի չափով չեն համապատասխանում քննարկվող տեսությանը, քանի որ նախ՝ նրանց անվանական ձևերը ի-ով չեն վերջանում (Ստեփանէ, Թեոդորոս) և ապա՝ «Ժամանակագրության» տարբեր էջերում հանդիպող այդ անունների մյուս թեք հոլովները ևս անփոփոխ պահպանում են բառի նախաձևը. այսպես. «Եւ Ստեփանէ եղբայրն պարոն Թորոսի»[15], «Եւ արար հաշտութիւն ընդ պարոն Թորոս և ընդ Ստեփանէ»[16], «Եհարց պարոն Ստեփանէ զեկեղեցականսն»[17], իսկ մի անգամ էլ վկայված է Ստեփանէ անվան սեռականի օրինական ձևը՝ Ստեփանէի. «Եւ բերին զՄոբէն որդին պարոն Ստեփանէի»[18]: Ուստի անհամոզիչ է Ստեփանէ, Թեոդոսիէ ձևերը տվյալ շրջապատում ինքնուրույն սեռական հոլովաձևեր համարել։ Մեր կարծիքով այստեղ գործում է մի այլ օրինաչափություն, ըստ որի Է հանգող հատուկ անունների եզակի ուղիղ ձևը երբեմն կարող է արտահայտել նաև սեռական սինկրետիկ հոլովի նշանակություն, իրողություն, որ նկատել է նաև «Ժամանակագրության» հրատարակիչը[19]։

Այսպիսով, «Ժամանակագրության» հայերեն թարգմանության մեջ, այնուամենայնիվ, մնում են է-ով սեռական ունեցող երկու անձնանուն՝ Զանգէ (<Զանգի) և Ալէ (<Ալի):

Սակայն սեռականի այս հոլովաձևերը բացարձակ գերակշռություն

14 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, հատ. 3, էջ 538։
15 Միխայել Ասորի, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1871, էջ 436։
16 Նույն տեղում, էջ 440։
17 Նույն տեղում, էջ 438։
18 Նույն տեղում, էջ 476։
19 Նույն տեղում, էջ 334, տողատակի ծանոթագրությունը։

չունեն թարգմանության լեզվում և կարող են դիտվել իբրև խոսակցական լեզվից եկող ավանդախախտումներ, քանի որ Միխայել Ասորու երկի այլ էջերում ավելի մեծ թիվ են կազմում դրանց զուգահեռ, գրական հայերենի հոլովմանը համապատասխան, օրինաչափ ձևերը՝ Ալի>Ալեայ, Զանգի>Զանգեայ, ինչպես. «Առաւ Ուռհա ի Զանգեայ աթաբակէ)[20], կամ «...ի ցեղէն Ալեայ[21]...», «եւ լինէր նոցա խալիփայ յազգէն Ալեայ»[22]... և այլն։

Ինչպես նշել ենք վերը, Միխայել Ասորու «Ժամանակագրության» թարգմանությունը հայ միջնադարի մատենագրության միակ երկն է, որի լեզվում վկայված են Ի հանգող անձնանունների Է-ով սեռական հոլովաձևերը։ Այս երևույթը դժվար չէ բացատրել. հայտնի է, որ Միխայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն թարգմանության ընդօրինակությունը կատարել է Կիլիկիայի Ականց (Ակներ) անապատի միաբան («սպասաւոր բանի») Գրիգորը։ Նույն Ականցի (Ակներցի) Գրիգորն է շարադրել «Ժամանակագրության» շարունակությունը, սկսելով Միխայել Ասորու կանգ առած տեղից՝ ՈՀԸ (1229) թվից և հասցնելով մինչև ՉԻԲ (1273) թվականի դեպքերը, այսինքն շուրջ 44 տարվա պատմություն, որ բանասիրության մեջ հայտնի է իբրև «Պատմութիւն վասն ազգին նետողաց»[23]։ Գրիգոր Ականցու այս աշխատությունը, չնայած իր համեստ ծավալին, բացառիկ արժեք է ստացել ամենից առաջ հայերենի պատմության համար, քանի որ այն մեր հարուստ պատմագրության եզակի հուշարձաններից է՝ շարադրված միանգամայն պարզ կիսագրաբարով, տեղ-տեղ նույնիսկ ժամանակի խոսակցական լեզվով։

Այստեղից մեզ հավանական է թվում, որ «Ժամանակագրության» հայերեն թարգմանության մեջ վկայված Զանգէ և Ալէ սեռական հոլովաձևերը կարող էին ներթափանցել ձեռագիրն արտագրող Գրիգոր Ականցու լեզվից, թեև այս վարկածի համար որոշակի հիմքեր կարող էր տալ բնագրի մյուս ընդօրինակությունների համեմատական ուսումնասիրությունը, որ ցայժմ չի կատարված։

Է-ով սեռական հոլովի մի հիշատակություն էլ պահպանվել է Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում, որը ստեղծվել է ԺԳ դարի կե-

[20] Նույն տեղում, էջ 418։

[21] Նույն տեղում, էջ 277։

[22] Նույն տեղում, էջ 431։

[23] Տե՛ս Հ. Ժամկոչյան, «Պատմություն վասն ազգին նետողաց» երկի հեղինակը. Երևանի պետհամալսարանի գիտական աշխատություններ, հատ. 23, Երևան, 1946, էջ 378—379։ Միխայել Ասորի, Ժամանակագրություն, Գրիգորի հիշատակարանները, էջ 43 և 525։

սերին և շարադրված է կիլիկյան միջին հայերենով։ Դատաստանագրքի Գ գլխի «Վասն որ ոսկէհանք գտնըւի...» հոդվածը հեղինակի մոտ ձևակերպված է. «Եթէ յիշխանի գաւառն կամ երկիր որ ընդ թագաւորի հնազանդութեամբն լինի՝ ոսկեհանք գտվի, նա թագավորին է և թէ արծաթհանք նա թագունէ է»[24]։ Ինչպես հայտնի է, Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը մեզ է հասել երեք արտագրություններով՝ Էջմիածնի 1618 թ., Վենետիկի 1331 թ. և Վիեննայի անթվագիր, որ համարում են արտագրված Վենետիկյանից[25]։

Արդ, մեզ հուզող թագունէ հոլովաձևը գտնվում է միայն հնագույն՝ Վենետիկյան ձեռագրում, մյուսները դրա փոխարեն ունեն՝ թագունոյն կամ թագունւոյն։ Այս պարագան ստիպում է համոզվել, որ նախնագույն Վենետիկյան ձեռագրում բառս գրված է եղել միջին հայերենի խոսակցական լեզվի կանոններին համեմատ («...ի մեր հեշտալուր եվ ի սովորական բառս») և միայն հետագա արտագրությունների ժամանակ է այն սրբագրվել և հարմարվել գրական հայերենի օրենքներին։

Հայագետ Կարստը թագունէ սեռական հոլովաձևը մեջ է բերում Sempadscher Kodex ուսումնասիրության ձեռագրական տարբերություններում, սակայն այդ իրողությունը ավելի հանգամանորեն քննում է 1899 թ. հրապարակած «Կիլիկյան հայերենի արտասանությունը և ձայնավորական համակարգը» դիսերտացիայում, որը հետագայում անփոփոխ մտավ նրա «Կիլիկյան հայերենի պատմական քերականությունը» նշանավոր աշխատության մեջ՝ կազմելով «Հնչյունաբանություն» բաժնի մի հատվածը։

Սովորաբար իր սահմանումները բազմաթիվ օրինակներով ու մեջբերումներով պարզաբանող Կարստը այս դեպքում իր տեսությունը կառուցում է մեզ հայտնի երկու օրինակով՝ Շահան Ջրպետի կասկածելի տիրունէ-ով, և Դատաստանագրքի թագունէ հոլովաձևով։ Ըստ որում նրան անծանոթ են մնացել այդ երևույթը հաստատող ու միայն վիմագրական հուշարձանների մեծաթիվ վկայությունները, որոնց մի զգալի մասը արդեն հայտնի էին հայագիտությանը (նկատի ունենք Ջալալյանցի, Շահխաթունյանցի, Բրոսեի, Ալիշանի, Երզնկյանցի, Սմբատյանցի, Բարխուդարյանցի և ուրիշների տեղագրական երկերը), այլև Միխայել Ասորու «Ժամանակագրության» վերոբերյալ Զանգէ, Ալէ հոլովաձևերը։

Կարստը տիրունէ, թագունէ սեռական հոլովաձևերի է հոլովակազ-

[24] **I. Karst**, Sempadscher Kodex, B. I. Strassburg, 1905, էջ 25։

[25] Տե՛ս **Смбат Спарапет**, Судебник, составление текста, перевод с древнеармянского, предисловие и примечания А. Г. Галстяна, Ереван, 1958, էջ XXIX:

միչի առաջացումը բացատրում է հին գրական հայերենի եայ եռաբարբառի հնչյունափոխությամբ, որ, ինչպես գիտենք, կիլիկյան հայերենում օրինաչափորեն տալիս է Է (Ե+յ) քրիստոնեայ, քրիստոնեայք> քրիստոնէ, քրիստոնէք, միջօրեայ>միջօրէ, աշտեայ> աշտէ և այլն[26]։

Ի-ով վերջացող անձնանունների սեռ., տրական հոլովների Է(Ե) հոլովակազմիչի վկայությունները միջին դարերի վիմական արձանագրություններում առաջին անգամ քննում է Ն. Մառը, որին է պատկանում հայկական վիմագրական հուշարձանների ընդօրինակության, գիտական հրատարակության և քննական ուսումնասիրության կատարյալ սկզբունքների մշակման առաջնությունը։ Դեռևս Անիի կանոնավոր պեղումներն սկսելու օրերին, 1893 թ. հրատարակված «Նոր նյութեր հայ վիմագրության» շարքում[27], Մառը նոր, նախորդ հրապարակումներից արմատապես տարբերվող եղանակներով հրատարակում և մեկնում է մի շարք նորահայտ վիմարձանագրություններ, որոնք աչքի են ընկնում ոչ միայն ընդօրինակությունների բացարձակ նույնականությամբ, այլև, որ կարևոր է, վերծանությունների և մանավանդ խաթարված կամ պակասող բեկորների վերականգնումների անխոցելի համոզչությամբ։

Ի տարբերություն նախորդ տեղագրողների, Մառը չի բավարարվում միայն բնագրերի սպառիչ արտագրությամբ, կամ լավագույն դեպքում նրանց բարեխիղճ ու մանրամասն նկարագրությամբ, այլ ձգտում է այդ բնագրերի վերծանությունից քաղել այն ամենը, ինչ նրանք կարող են հաղորդել միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, կենցաղի, գիտության ու մշակույթի պատմության համար։ Վիմական հիշատակարանները իրավամբ դիտելով իբրև հայերենի պատմության, մասնավորապես աշխարհաբար լեզվի կամ տեղական բարբառների նախնագույն փուլերի ուսումնասիրության անփոխարինելի սկզբնաղբյուրներ, Մառը, հետևելով Այտընյանին, աշխատում է հայտնաբերել, համակարգել ու գիտական հետազոտության ենթարկել այդ բնագրերում ամբարված լեզվական այն իրողությունները, որոնք չեն հանդիպում ժամանակի գրական աղբյուրներում, անհարազատ են դասական հայերենին և արտացոլում են ժողովրդական, խոսակցական լեզվի պատկերն այդ դարերում։

Այս տեսակետից անուրանալի գիտական արժեք է ներկայացնում Մառի նշանավոր խմբագրական խոսքը, որը հրատարակված է Կ. Կոստանյանցի կազմած «Վիմական տարեգիր-ցուցակ ժողովածոյ արձանա-

---

[26] I. Karst, Historische Grammatik..., էջ 71—72։

[27] Н. Марр, Новые материалы по армянской эпиграфике, СПБ, 1893.

գրութեանց հայոց» հավաքածուի սկզբում՝ իբրև նրա առաջաբան, և, չնայած փոքր ծավալին, ըստ էության հանդիսանում է հայկական վիմական արձանագրությունների գիտական հրատարակման և նրանց քննական հետազոտության սկզբունքների ուղեցույցը։ Այդ սկզբունքները հետագայում իրենց զարգացումն ու գործնական կիրառությունը ստացան Մառի և նրա աշակերտների, հատկապես Հ. Օրբելու՝ հայ վիմագրական հուշարձանների ուսումնասիրությանը նվիրված աշխատանքներում, ներկայումս նույն սկզբունքով են հրատարակվում «Դիվան հայ վիմագրության» պրակները։

Բացի դրանից, Մառի այդ աշխատության մեջ և հետագա ուսումնասիրություններում առաջին անգամ վերծանվում, համոզիչ ստուգաբանվում կամ ճշգրտվում են վիմական բնագրերում հանդիպող բազմաթիվ տերմիններ, դարձվածքներ, տեղանուններ ու անձնանուններ, որոնք հայագիտությանը հայտնի էին նախորդ հրատարակիչների անստույգ կամ աղավաղված ընթերցումներով։ Լեզվական շատ իրողություններ, որ մինչ այդ գրաբարի անբացատրելի խախտումներ էին դիտվում, կամ փորագրող վարպետների թույլ տված վրիպումներ, Մառի խորամիտ դիտողություններով բացատրվում են իբրև վիմարձանագրությունների լեզվում օրինաչափ գործող երևույթներ։ Ավելին, Մառի հայտնաբերած օրինաչափությունների միջոցով հնարավոր է դառնում հետադարձ ձևով վերականգնել մի շարք աշխարհագրական անունների, առօրյա կյանքին ու կենցաղին վերաբերող բառերի ու անձնանունների ուղիղ ձևերը՝ պահպանված բեկորների կամ նույն անունների՝ վկայված թեք հոլովաձևերի օգնությամբ («...Աւետման մեծ ագին...» փոխ. «աւետարան մեծագին», «եւ ետուց Առահ զիմ այգին ի Թամիր», որտեղ «ի Թամիր» պետք է վերծանել ոչ թե իբրև տեղանուն, այլ՝ հասարակ անուն՝ ի թամիր= մշակման համար. Սիթի, Մերչի անունների վերականգնումը և այլն)[28]։

«Վիմական տարեգրի» այս առաջաբանում Մառը հայերենագիտության մեջ առաջին անգամ վիմական արձանագրությունների փաստերով հաստատում է Ի-ով վերջավորվող անձնանունների սեռական, տրական հոլովների Է(Ե) ինքնուրույն հոլովակազմիչի գոյությունը, մի իրողություն, որ ինչպես տեսանք, գրական աղբյուրների և կենդանի խոսվածքների սակավաթիվ օրինակներով մինչ այդ հարևանցի մատնանշել էին Շահան Ջրպետը և Կարստը։

Ճիշտ է, Մառը այդ վկայությունները մեջ է բերում ոչ թե սեփական ընդօրինակությամբ ու վերծանությամբ, այլ մեծ մասամբ նախորդ տե-

---

[28] Տե՛ս Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Պետրոգրադ, 1913, էջ X—XII։

դպրողների հրատարակություններից, որոնց նույնականությունը իրականի հետ հաճախ դժվար է ստուգվում, ուստի և կասկածելի է, այսուհանդերձ, քննարկվող հարցի առնչությամբ նրա կատարած դիտողությունները պահպանում են իրենց գիտական արժեքը և հաստատվում հետագայում ի հայտ եկած նորանոր փաստերով։ Մյուս կողմից, Մառի մատնանշած սակավաթիվ օրինակները վերաբերում էին պատմական արևմտյան Շիրակի ու մեծ շրջանի՝ Անիի և մերձակայքի հուշարձանների վիմական արձանագրություններին (Հոռոմոս, Արջոառիճ, Անի, Ալաման, Մրեն և այլն), ուստի նշված ձևաբանական իրողությունը կարող էր դիտվել իբրև տեղական սահմանափակ երևույթ, որ տարածում ուներ միայն այս ոլորտում և անծանոթ էր պատմական Հայաստանի մյուս գավառներին։

Միակ արձանագրությունը, որ դուրս է Շիրակի սահմաններից և կարող էր առարկել մեր այս դիտողության դեմ, Տաշքենդ գյուղի (պատմական Սոդք գավառ, այժմ Վարդենիսի շրջան) սագաշեն եկեղեցու բակում կանգնած խաչքարի հիշատակագրությունն է, որ Մառը քաղել է Ս. Ջալալյանցի գրքից. «Ի թվին ՆՂԵ ես Գրիգորի (ս) **Քամէ** որդի կանգնեցի զխաչս»[29]։ Սակայն այստեղ էլ պարզվում է, որ տապանագիրը ոչ մի չափով չի կարող ծառայել քննարկվող լեզվական հարցի լուսաբանմանը, որովհետև նրա վերծանությունը լուրջ տարակարծությունների տեղիք է տալիս և ըստ երևույթին անվստահելի է։ Այսպես, մեզ հուզող **Քամէ** սեռ. հոլովաձևը Ջալալյանցից բոլորովին տարբեր է վերծանել նույն բնագրի երկրորդ ընդօրինակող Մ. Սմբատյանցը. «Ես Գրիգորս **Քարամի** որդի (**Քամի**) կանգնեցի զխաչս...»[30], իսկ հաջորդ վերծանող Ե. Լալայանը «Ազգագրական հանդեսում» տեղավորելով իր ընդօրինակությունը՝ «Ես Գրիգորս **Քարամի** որդի կանգնեցի զխաչս», տողատակում տալիս է անձնանվան ստուգաբանությունը, ըստ այդմ՝ «**Քարամ** կամ **Քերիմ** անունը **Սենեքերիմ** անվան կրճատումն է»[31]։

Տաշքենդի խաչարձանը ներկայումս իր տեղում չէ և **Քամէ** վիճելի հոլովաձևի իսկությունը անհնար է ստուգել։ Թե անձնանվան երեք ընդօրինակություններից՝ **Քամէ**, **Քամի**, **Քարամի** որն է իրականը և ընդունելին, դժվար է ցույց տալ, ըստ որում, այլ դեպքերից հայտնի է, որ տվ-

29 Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մաս Բ, Տփխիս, 1858, էջ 115։

30 Մ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, Վաղարշապատ, 1895, էջ 629։

31 Ե. Լալայան, Գեղարքունիք կամ Ն. Բայազետի գավառ, «Ազգագ. հանդես», Թիֆլիս, 1910, գիրք 19, էջ 17։

յալ բնագրի երեք հրատարակողներն էլ, առավել Ջալալյանցը և Լալայանը, աչքի չէին ընկնում վիմական արձանագրությունների քիչ թե շատ ճշգրիտ վերծանությամբ և հաճախ էին թույլ տալիս անհիմն տարընթերցումներ ու աղավաղումներ։

Այս պարագան մի անգամ ևս հաստատում է այն ճշմարտությունը, որ վիմարձանագրությունների լեզվաբանական քննությունը հնարավոր է կատարել միայն նրանց սպառիչ ընդօրինակությունների և պատշաճ գիտական հրատարակությունների նյութերով, երբ հետազոտողն իր ձեռքի տակ կունենա ուսումնասիրվող բնագրի ոչ միայն ընթերցվածներն ու վերծանությունը, այլև, որ տվյալ դեպքում ամենակարևորն է, նրանց լուսանկարչական, գծագրական և այլ արտապատկերները, որոնք ամեն անգամ կարողանային ապահովել այս կամ այն վկայության իսկության ստուգումը իրականի հետ։

Հակառակ դեպքում վիմագրական հուշարձանների անցյալ դարում կատարված ոչ գիտական ու մասնագիտական ընդօրինակությունների ստուգման չենթարկվող նյութերով նրանց լեզվական օրինաչափությունների ուսումնասիրությունը միշտ էլ տառապելու է աղբյուրների կամայական ու անորոշ մեկնաբանությամբ և, բնական է, չի կարող ներկայացնել լեզվի պատմության իրական նկարագիրը։

Եվ հիրավի, միջնադարյան Հայաստանի քաղաքական պատմության, սոցիալ-տնտեսական հարաբերությունների քննության, ազգագրական կամ իրավաբանական ուսումնասիրությունների համար թերևս հանդուրժելի համարվի վիմագրական բնագրերի ընդօրինակությունների բացարձակ նույնականության անտեսումը, քանի որ այդպիսի հետազոտությունների համար կարևորը վերջին հաշվով ոչ այնքան բնագրերի առանձին գրերը, տառակցումները կամ քերականական ձևույթներ են, որքան նրանց ընդհանուր շարահյուսական իմաստը, որը և այս կամ այն կերպ ապահովում են նախորդ վերծանությունները։ Այնինչ, վիմարձանագրությունների լեզվի ուսումնասիրության համար պետք է ունենալ միայն և միայն գիտականորեն հրատարակված հավաստի կամ ստուգելի բնագրեր, որոնք ապահովեին քննության ենթակա յուրաքանչյուր առանձին տառաձևի կամ ձևաբանական միավորի ստույգ համապատասխանությունը իրականին, քարի վրա փորագրվածին, որը հնարավորություն կտար լեզվաբանական եզրահանգումները կառուցել հավաստի և իրական փաստերի հիման վրա։

Այստեղ հարկ ենք համարում նորագույն վերծանություններից քաղված մի օրինակով ցույց տալ, թե բնագրերի քերականական առանձնահատկությունները պարզելու տեսակետից ինչպիսի կարևոր նշանակու-

թյուն ունեն նրանց առանձին բեկորների ստույգ վերականգնումները, նույնիսկ այն դեպքերում, երբ այդ բեկորների ընդհանուր իմաստը անվիճելի է և որևէ երկբայություն չի առաջացնում։ Խոսքը վերաբերում է Հաղբատավանքի բակում կանգնեցված եռախորան խաչքարերից հյուսիսային թիկունքին փորագրված՝ Նաջմադինի 1211 թ. նվիրատվական արձանագրությանը, որը մեզ է հասել բարվոք վիճակում և ընթերցվում է լիակատար հաջողությամբ։ Սակայն բնագրի 10—12-րդ տառաշարքերում Նաջմադինի և որդիների՝ Հաղբատի վանքին տրվող նվերների թվարկումից հետո («...անդ Ջաքեւոնք շինական և զԿեչեւնուտին այգին») փորագրողը ըստ երևույթին բաց է թողել նվիրատվության ստորոգյալը և հետո, 12-րդ տողավերջի ազատ մնացած տեղում ավելացրել Տ միայնակ, ավելի փոքր չափի տառաձևը։ Նախորդ ընդօրինակողները (Ջալալյանց, Երզընկյանց, Լալայան) չեն նկատել այս հավելումը և բնագրի այդ հատվածը վերծանել են առանց ստորոգման, սոսկ իբրև մատուցվող նվերների թվարկում։ Արձանագրության վերջին հրատարակիչ հմուտ վերծանող Կ. Ղաֆադարյանը իրավամբ այդ առանձին Տ գիրը համարել է նախադասության բաց թողնված ստորոգյալի սկիզբը, որը պետք է արտահայտված լիներ տալ բայի անցյալ կատարյալի հոգնակի թվի առաջին դեմքով (քանի որ նվիրատուները երեքն են՝ Նաջմադինը և որդիները՝ Սմբատն ու Վահրամը, բացի դրանից, բնագրում մի քանի անգամ շեշտվում է մեր, մեր մեղաց, մեզ մեղաց թողութիւն և այլն)։ Ելնելով այս ճիշտ կռահումից Կ. Ղաֆադարյանը վերականգնում է թերի ստորոգյալը՝ տ[ուինք][32]։ Արդ, հնագետի, պատմաբանի կամ իրավագետի համար այս վերականգնումը համոզիչ կարող է թվալ և հազիվ թե որևէ առարկության հանդիպի. մինչդեռ հայոց լեզվի պատմությանը քիչ թե շատ տեղյակ ամեն ոք ոչ մի կերպ չի կարող համաձայնել այդպիսի բանաձևի գոյության հետ Ժ—ԺԳ դարերի վիմագրության մեջ, նույնիսկ եթե մի պահ վերանանք իրականից և ընդունենք, որ այդ բայաձևը կամ Նաջմադինի ողջ նվիրագիրը շարադրված է ոչ թե ժամանակի գրական հայերենով, ինչպես է իրոք, այլ անխառն ժողովրդական խոսակցական լեզվով։

Այո՛, անգամ աշխարհաբարով կամ ժամանակի (1211 թ.) խոսակցական լեզվով գրված վիմական արձանագրության մեջ տուինք բայաձևը ժամանակավրեպ ձև է, անհավանական ու անսպասելի։ Ուստի միանգամայն ակներև է, որ նրա փոխարեն անհրաժեշտ էր պակասող ստո-

———

32 Կ. Ղաֆադարյան, *Հաղբատ*, Երևան, 1963, էջ 230—231։

րոգյալը վերականգնել՝ տուաք, տաւք, նույնիսկ էտուաք կամ ետուաք, բայց ոչ երբեք՝ տվինք[33]։

Առաջնորդվելով այս գիտական սկզբունքով ներկա ուսումնասիրության մեջ մենք աշխատում ենք տեղում կամ լուսանկարի վրա ճըշգըրտված վկայություններով քննել Ի հանգող անձնանունների սեռական, տրական հոլովների կազմությունը Ժ—ԺԳ դարերի վիմագրական հուշարձաններում։

Հարկ է նշել, որ այդ վկայությունների զգալի մեծամասնությունը հուշարձանների վրայից ընդօրինակել և վերծանել ենք հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ վիմագրության բաժնի ամենամյա գիտական արշավանքների ընթացքում։ Բացի դրանից, վիմագրական արշավախմբի կազմում շրջագայելով հանրապետության հնավայրերը, մենք առիթ ենք ունեցել ի նորո ընթերցելու և վերծանելու նախկինում հրապարակված բազմաթիվ արձանագրություններ, որոնց մեջ հաճախ մեզ հաջողվել է ճշգրտել հատկապես խնդրո առարկա լեզվական իրողությունն արտացոլող հիշատակություններ։ Եվ քանի որ Ի հանգող անձնանունների սեռական, տրական հոլովաձևերի կազմությունն արտացոլող նորահայտ փաստերը անծանոթ են բանասիրությանը, իսկ հայտնի փաստերի մի զգալի մասն էլ ճշգրտվում է մեր դիտողություններով, անհրաժեշտ ենք համարում ստորև ներկայացնել այդ բոլոր վկայությունները համապատասխան մեկնություններով։

* Խաթութի— իգ. նորագյուտ անձնանուն, անծանոթ է բանասիրությանը և տեղ չի գտել Աճառյանի բառարանում։ Հավանաբար ծագում է արաբ. xatut շէրտէր, զոլէր բառից։ Անվան սեռ. հոլովաձևը՝ Խաթութն վկայված է երկու անգամ. ա. Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղի գերեզմանոցում կանգնած զույգ խաչքարերից հյուսիսայինի ճակատի արձանագրության մեջ. «[պ]արոն Սանասար որդի Խաթութն, լեր բարեխաւս առ Ք-ս», բ. նույն խաչքարի ստորին մասում, խաչի տակ. «Ես Սարգիս կանգնեցի զխաչս ի հանգստարանին... Խաթութն»։

Խաչքարը, ըստ թիկունքին փորագրված ընդարձակ արձանագրության, կանգնեցրել է նույն Սարգիս քահանան ՈՂԴ (1245) թվին»[34]։

———

33 *Հովհաննես Ղրիմեցու վերծանության մեջ բայաձևը վերականգնված է տուաք,* *տե՛ս* «Описание монастырей Ахпатского и Санаинского архимандрита Иоанна Крымского». СПб., 1863, էջ 23:

34 *Տե՛ս* Մ. Բարխուդարյանց, *Արցախ, Բաքու, 1895, էջ 150։ Թեև արձանագրությունը լավ է պահպանվել, հեղինակն այն հրատարակել է զգալի անճշտություններով, որոնցից նշելի են.* եղբարց ՈՒՆԾ *փոխ.* եղբարց նոցունց, Ոնանին *փոխ.* Յոնանա, *Թվա-*

խաթութի անվան տրական հոլովաձևը է վերջավորությամբ հանդիպում է Մակարավանքի երկու բնագրերում. ա. Գլխավոր եկեղեցու արևմտյան պատին, արտաքուստ, հատուցման ձևակերպման մեջ. «...միաբանքս սահմանեցաք :Գ: պատարագ մատուցանել :Ա: Ռասուղանա :Ա: Խաթութէ :Ա: Ասփարին»[35], բ. Գավթի հարավ-արևելյան սյան խոյակի վրա, նույնպես հատուցման բանաձևում... «սահմանեցաք Յար զատկին :Ա: պատարագ Խաթութէ արասցեն անխափան»։

* **Խաղողի**— նորագյուտ, անհայտ սեռի անուն, որի տրական հոլովաձևը միայն մեկ անգամ վկայված է Հոռոմայրի հուշարձանախմբի ձորի եկեղեցիների առջև կանգնած խաչարձանի տապանագրի վերջաբանում. «Ես Սանուել[36] առաջնորդ սբ ուխտիս ամենայն միաբանաւքս գրեցաք.... գ :Դ: եկեղեցիքս :Բ: աւր Խաղողէ :Ա: աւր Առաքելին. :Ա: աւր Գրիգորո արնեն...»։

Խաչարձանի ճակատին կարդացվում է նրա կանգնեցման տարեթիվը՝ «ՈԾ կանգնեցաւ Տրունականս» (1201 թ.)։

Խաղողի անձնանունը անհայտ է մնացել հայագիտությանը, որովհետև այս արձանագրության առաջին ընդօրինակող Ջալալյանցի գրքում նույն անունը տպագրված է Երկու աւր Խաչոշին ընթերցմամբ[37], որը և նույնությամբ արտագրվել է «Վիմական տարեգրում»[38], մինչդեռ տեղում և լուսանկարի վրա աներկբա կարդացվում է Խաղողէ, որը Խաղողի անձնանվան տրական հոլովաձևն է։

Շատբարի—նորագյուտ ար. անուն, որ կազմված է հյ. շատ և բարի բառերից Շատաղէկ, Շատարև, Շատլույս անունների նմանությամբ, բոլորն էլ արական։ Անվան ուղղական և տրական (Շատբարէ) հոլովաձևերը վկայված են Շամշադինի շրջանի Կապտավանքի հարավային մուտքի բարավորին փորագրված նվիրատվական արձանագրության մեջ. «Կամաւն Այ ես Շատբարի միաբանեցայ...», իսկ անվան տրական ձևը՝ շա-

գիրը ընթերցվել է ՈՂԳ փոխ. ՈՂԴ, իսկ խաչքարը կազմողի անունը վերծանվել է Աբել, այնինչ իրականում Սամել է։

[35] Ս. Ջալալյանց, նույն տեղում, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 150։ Այստեղ ի շարս այլ տարընթերցումների Խաթութէ արտագրված է Խաթունին (տե՛ս մեր «Վիմագրական սրբագրումներ» հոդվածը, «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 2—3, էջ 285)։

[36] Այլ բնագրերում Հոռոմայրի նշանավոր առաջնորդի անունը փորագրված է Սամուէլ:

[37] Ս. Ջալալյանց, նույն տեղում, մասն Ա, էջ 93։

[38] «Վիմական տարեգիր», էջ 45։

ռունակության մեջ, հատուցման բանաձևում. «վադ եւ միաբանքս գրեցին :Բ: պատ[ար]ագ մին Շատբարէ եւ մին ամուսնոյն իւրոյ»[39]։

Շատբարիի այս նվիրագրությունը թվագրված չէ, սակայն նրա ժամանակը մոտավոր ճշտությամբ որոշվում է Կապտավանքի վիմագրության տվյալներով՝ ԺԳ դարի կեսերը։

Սէվճի, Սեւճի— ար. նորահայտ անուն, Աճառյանի բառարանը չունի։ Ծագումը ենթադրում ենք պր. Sefič խակ դդում կամ սեխ բառից։ Անվանական ձևը և սեռականը՝ Սէվճէ փորագրված է Դսեղի Բարձրաքաշ վանքի գավթի երկու բնագրերում, որոնցից առաջինը Սէվճիի անունից է և թվագրված ՈՂԱ (1242 թ.) «Ես Սէվճի ծառայ Մարծպանա եւ ամուսին իմ Կատա շինեցաք զմատուռս...», իսկ երկրորդը տեղավորված է սրանից ներքև և պատկանում է Սէվճիի որդուն՝ Արղանին. «Ողորմութբն Այ եւ կամակցութբ իմ պա[տրոն]ին Գրիգորի ես Արղան որդի Սէվճէ եւ ամուսին իմ Մամա միաբանեցաք...»[40]։

Այս նույն Սէվճին կառուցել է Դսեղի Մամիկոնյանների տիրույթներից շատ հեռու ընկած Մամասի վանքի եկեղեցիներից մեկը (Սալլի գյուղատեղ, Եղեգնաձորի շրջան), որի շինարարական արձանագրության մեջ հիշատակվում է նրա անունը, թեև փոքր-ինչ այլ գրությամբ. «Ես Սեւճի ծառայ Մարծպանա շինեցի զեկեղեցիս...»[41]։

Էրմանի— իգ. նորահայտ անձնանուն, որ անշուշտ ծագում է թաթար. armani, ermaniհայ բառից։ Այս անունը Աճառյանի բառարանում չի զետեղված, սակայն դրա փոխարեն այնտեղ գտնում ենք նույն անվան Արմանի, Արմանի խաթուն տարբերակները, որոնք գործածական էին 15—16-րդ դդ.։

Էրմանի անունը վկայված է Հավուց Թառ վանքի բլրի եկեղեցու մի արձանագրության մեջ, նախ ուղիղ ձևով և ապա՝ տրականը՝ Էրմանէ. «Մեք մեղուցել մուլահր ամիր Սարգիս եւ ամուսին իմ Էրմանի եւ եղբայր իմ Ամիր միաբանեցանք... Տր Աթանաս եւ այլ միաբանքս խոստացան ի տարին :Զ: պատ :Բ: ամիր Սարգսին :Բ: Էրմանէ :Բ: Ամիրին»։ Արձանագրության թվագիրը խաթարված է, հրատարակող Գ. Հովսեփյանի կարծիքով այն վերաբերում է ԺԳ դարի վերջերին[42]։

[39] Վերծանությունը առնում ենք մեր հավաքածուից, որ պատրաստված է Հուշարձանների պահպանության կոմիտեի արշավախմբային նյութերի հետ։

[40] Գ. Սարգսյան, Բարձրաքաշ վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1951, № 11—12, էջ 46։

[41] Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, հատ 3, Երևան, 1967, էջ 171։

[42] Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը, էջ 25—26։

Վարդենի— *իգ. անձնանուն, ըստ Աճառյանի առաջանում է հյ.* **վարդի թուփ** *բառից։ Գրական աղբյուրներում սեռական հոլովաձևը ա- վանդված է* **Վարդենայ, Վարդենեայ:** *Ուղիղ ձևը գտնում ենք Հաղբատի ս. Նշան եկեղեցու հյուսիսային պատին փորագրված արձանագրության մեջ («...Ու ամուսին իւր* **Վարդենի»**), *որի ժամանակը հավանականու- թյան սահմաններում Բրոսեն որոշում է բնագրում հիշված Յոհանեսի վանահայրության տարիներով՝ 1261—1281 թթ.)*[43]*։*

Նույն անվան տրական հոլովաձևը՝ **Վարդենէ** *վկայված է Հառիճա- վանքի ս. Գրիգոր եկեղեցու ՈԽԵ (1196) թվագիր արձանագրության մեջ հատուցման բանաձևում. «...առաջնորդք սբ. ուխտիս խոստացան ինձ ի տարոջն :Բ: աւր, ժամ զ :Ա: աւրն իմ հաւրն Տիկին եւ :Ա: իմ մաւրն* **Վարդենէ...»**[44]*։*

Անձնանունը անհայտ է մնացել գիտությանը, որովհետև Ջալալյան- ցի գրքում, իսկ այնտեղից և Ալիշանի «Շիրակում» նվիրատուի մոր անունը կարդացվել է **Նվարթին** *(«...զմէկ աւրն իմ հաւրն Տիկին եւ Ա իմ մաւրն* **Նվարթին...»**)[45], *մինչդեռ տեղում և լուսանկարի վրա պարզ երե- վում է՝...* **իմ մաւրն Վարդենէ:**

Թագուհի— *իգ. անձնանուն, առաջացած հյ.* **թագուհի** *բառից, որ, ինչպես տեսանք, իրանական փոխառություն է։ Հնագույն վկայություն- ները հանդիպում են մեսրոպյան շրջանի գրական երկերում, որտեղ սեռական, տրական հոլովաձևը ավանդված է* **Թագուհոյ:**

Վիմագրական հուշարձաններում բառիս նախնագույն հիշատակու- թյունը, սակայն ոչ անձնանվան նշանակությամբ, գտնում ենք Թալինի Կաթողիկե եկեղեցու մերձակայքում վերջերս հայտնաբերված երեսա- պատման սալի արձանագրության մեջ, որի բեկորները տաճարի նորոգ- ման ժամանակ խնամքով հավաքվել և ագուցվել են նրա հարավային պատի մեջ։ Արձանագրությունը փորագրվել է «թագուհեաց թագուհի» Կա- տայի (Կատրանիդէ) հրամանով և պատմում է նրա կողմից Կաթողիկե եկեղեցին սալելու մասին։ Բնագրի սկիզբը, սալաքարի ձախ անկյունը, որտեղ սպասելի էր տարեթիվը, չի պահպանվել, սակայն նրա ժամա- նակը կարելի է որոշել Կատայի և նրա ամուսին Գագիկ Ա թագավորի գահակալության տարիներով (990—1020 թթ.)։ Արձանագրությունը զգալապես խաթարված է նաև այլ մասերում և լիակատար վերականգն-

43 F. Justi, Iranisches Namenbuch, Marburg, 1895, *էջ 353։*

44 *Քաղում ենք մեր հավաքածուից, նախորդ վերծանությունները այս մասում ան- ստույգ են։*

45 **Ս. Ջալալյանց,** *նույն տեղում, մասն Ա, էջ 216—217,* **Ալիշան,** *Շիրակ, էջ 159։*

ման չի ենթարկվում, սակայն մեզ հետաքրքրող հատվածը, որտեղ փո- րագրված է **Թագուհի** *բառի սեռական հոլովաձևը՝* **թագուհե,** *կարդացվում է հավաստի կերպով և ինչպես երևում է լուսանկարից, կասկածի առիթ չի տալիս։*

Ջնջված դրան, բնագրի 8, 9-րդ տառաշարքերի մեր ընթերցումը համեմատել ենք հայ վիմագրության քաջագիտակ Ս. Բարխուդարյանի ընդօրինակության հետ և համոզվել, որ այդ տառաշարքերը ստույգ են վերծանված. և քանի որ Թալինի այս նորահայտ արձանագրությունը ցարդ հրատարակված չէ, պատեհ համարեցինք մեջ բերել քննարկվող հարցի հետ առնչվող հատվածը մեր վերծանությամբ.

«...կամ եղեւ ինձ Կատայիս որ [ս]ալեցի զսուրբ կաթաղիկէս վասն արեւշատութեան Գագկա... ամուսնի իմոյ եւ Ածասեր անձին իմոյ թագուհեաց **թագուհե** *եւ զաւակաց մերոց...»։*

Նույն բառը այս անգամ անձնանվան նշանակությամբ հանդիպում է Մաթոսավանքի (Դիլիջանի մոտ) XIII դարի հիշատակագրության մեջ, որ այլ առիթով արդեն մեջ ենք բերել (Տր Ած ողորմի **Թագուհէ**). **Թա- գուհէ** *տրական հոլովաձևը գտնում ենք նաև Հաղբատի մեծ գավթի ՉԲ (1253) թվագիր մի արձանագրության հատուցման ձևակերպման մեջ. «...եւ հաստատեցին մեզ պատարագ :Ժ: Յինանցն Յովհաննու տաւնին :Բ: Շնահաւորին :Բ: Բուսուդանա :Բ:* **Թագուհէ** *:Բ: Վարդուտին...»*[46]*։*

Արջոառիճ հուշարձանի մի նվիրատվական բնագրում նույնպես հի- շատակվում է Թագուհի անձնանվան տրական հոլովաձևը «... եւ հատու- ցին :Բ: իմ մաւրն **Թագուհէ...»**[47]*:*

Սրանով սպառվում են **ուհի** *իգականանիշ վերջածանցով կազմված անձնանունների թեք հոլովաձևի վկայությունները Ժ—ԺԳ դարերի վիմա- գրական հուշարձաններում։ Հեշտ է համոզվել, որ այդ դարերում ևս* **ուհի** *ածանցը իբրև բառակազմական միավոր մեծ տարածում չի ունե- ցել և սահմանափակվել է միայն* **թագուհի** *օրինակով, որը սակայն չպետք է ածանցավոր կազմություն համարել, այլ պատրաստի փոխա- ռություն։*

Վանենի—*իգ. անձնանուն, որ Աճառյանը ենթադրաբար ծագած է համարում* **վանակն,** **ակն Վանի** *գոհարեղենի անունից*[48]*։ Գործածական էր առավելապես Հայաստանի հյուսիսային գավառներում ԺԲ—ԺԳ դա-*

46 **Կ. Ղաֆադարյան,** *Հաղբատ..., էջ 168։*

47 **Ն. Սարգիսյան,** *Տեղագրութիւնք ի Փոքր ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 192։*

48 **Հ. Աճառյան,** *Հայոց անձնանունների բառարան, հատ. Ե, Երևան, 1962, էջ 36։*

բերում։ Գրական բազմաթիվ վկայություններում անվան սեռ., տրական հոլովաձևերը չեն ավանդված։ Նույն ժամանակների վիմագրական աղբյուրները պահպանել են անձնանվան երկու ձևերն էլ. այստեղ մեջ ենք բերում միայն թեք հոլովաձևերը։ Ըստ ժամանակի, առաջին հիշատակությունը վերաբերում է Կիւրիկէ թագավորի դուստր Վանենիին. սրա որդի Դավիթը Հաղբատի մեծ գավթի արևելյան պատին 1189 թվին թողել է մի արձանագրություն, որի մեջ պարզ փորագրված է անվան տրական հոլովը. «...արդ աղաչեմ սբ եղբայրութիդ, որ զաղոհացիցն զշաբաթըն եւ զկիւրակին..., իմ մաւրն Վանենէ, դստեր Կիւրեկէի թագի, եւ իմ քվերն Բ[որդո]խ[ա]նիա, իմ հաւրն արնեն...»[49]։ Աճառյանը այս վկայությունը Վանէ աղավաղված ձևով քաղելով Ղ. Մովսիսյանի գրքից[50], տեղավորել է իր բառարանում իբրև անվան ուղիղ ձևը[51]։ Թյուրըմբռնման աղբյուրը Հովհաննես Ղրիմեցու սխալ վերծանությունն է («Ես Դաւիթ որդի Արանին...», փոխ. «Ես Դաւիթ որդի Վասակա», «իմ մաւրն Վանէի», փոխ. «իմ մաւրն Վանենէ», «եւ իմ հաւրն Արանին», փոխ. «իմ հաւրն արնեն»)[52], որը անփոփոխ արտագրել է Կ. Կոստանյանը [53], իսկ սրանից էլ՝ Ղ. Մովսիսյանը։

Վանենի անվան տրական հոլովաձևի մյուս վկայությունը գտնում ենք Հաղբատի վանքի մի այլ արձանագրության մեջ, որը փորագրվել է ԺԳ դարի կեսերին և պատկանում է ամիրսպասալար Մխարգրձելին և և նրա ամուսին Վանենիին. այստեղ մեզ հետաքրքրող հատվածը կարդացվում է «...կիրակէին ժամն ինձ առնեն եւ Վանենէ...»[54]։

Անձնանվան ուղիղ ձևը՝ Վանենի հիշատակվում է ինչպես այստեղ («...Ես Մխարգրձել... եւ ամուսին մեր Վանէնի...»), այնպես էլ Սանահինի վանքի մի արձանագրության մեջ («...եւ արդ ես ամիրսպասալար Մխարգրձելս... եւ թագաւորազն ամուսին իմ Վանենի...»)[55]։

Նույն անունը սեռական հոլովով (Վանենէ) հանդիպում է նաև Սանահնի վանքի մեծ գավթի կամարի վրայի արձանագրության մեջ, որ-

[49] Կ. Ղաֆադարյան, Հաղբատ..., էջ 174—175։

[50] Տե՛ս Ղ. Մովսիսյան, Լոռիի Կիւրիկյան թագավորներու պատմությունը, Վիեննա, 1823, էջ 71։

[51] Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ե, էջ 37։

[52] «Описание...», էջ 7։

[53] «Վիմական տարեգիր», էջ 37։

[54] Կ. Ղաֆադարյան, նույն տեղում, էջ 171։

[55] Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 125։

տեղ մատնանշվում է, թե ում նվիրատվության դիմաց է կատարվում պատարագը՝ «...արդեամբք դստերն իւրոյ Վանենէ...»[56]։

Այս արձանագրությունը, ինչպես իրավամբ գտնում է Կ. Ղաֆադարյանը, որոշ փոփոխություններով արտագրված է Աստվածածին եկեղեցու արևմտյան պատի նույն բովանդակության նվիրատվական մի բնագրից, որը մեծ գավիթը կառուցելու ժամանակ (1211 թ.) որոշ չափով խաթարվել է։ Նշելի է, որ նախօրինակում Վանենի անվան սեռական հոլովը ոչ մի վերջավորություն չի ընդունել և պահպանել է անվանական ձևը՝ Վանենի. նշված հատվածը այնտեղ վերծանվում է՝ «...արդեամբ դստեր իւրոյ Վանենի». մինչդեռ արտագրության մեջ, ինչպես տեսանք, պարզ երևում է՝ Վանենէ։

Գեորգի—վրաց Գեորգի Գ և Գեորգի Լաշա թագավորների անձնանվան սեռական հոլովաձևը՝ Գիաւրգէ, Գէաւրգէ, Գէորգէ, Գէարգէ, Գաւրկէ, հանդիպում է ԺԲ—ԺԳ դարերի հայկական վիմագրական հուշարձաններում, սովորաբար արձանագրությունների նախաբանում, նրանց ժամանակը մատնանշող ձևակերպման մեջ։ Նույն անունը Գեվորգ անվան և նրա տարբերակների հետ միասին գործածական է եղել նաև հայկական միջավայրում։

Գեորգէ սեռ. հոլովաձևի հնագույն վկայությունը գտնում ենք Մորո ձորո վանքում, Ամիր Քուրդ Արծրունու արձանագրության մեջ, որտեղ հրապարակվում է Գեորգի Գ-ի արտոնագիրը՝ «գիր ազատության» վանքը հարկերից ազատելու մասին. «Կամաւն եւ ողորմութբ թագաւորին Գիաւրգէ...»։ Նույն վանքի հյուսիսային խաչթևի թաղին փորագրված Գեորգի Գ-ի հրովարտակից հայտնի է դառնում վրաց թագավորի անվան ուղիղ ձևը՝ «Ես Գիաւրգի թագաւորաց թագ[աւոր]...»։ Երկու բնագրերն էլ քանդակված են մինչև 1184 թ., այսինքն մինչև Գեորգի թագավորի մահը[57]։ Նույն հոլովաձևը հանդիպում է նաև Հաղբատի մեծ գավթի արևմտյան մուտքի ճակատակալ քարին փորագրված ՈԾԹ (1210) արձանագրության մեջ. «Յամս աւծելոյ Այ թագաւորաց թագաւորին Գէորգէ, որդոյ մեծ թագաւորին Թամարին»[58]։

Հաղպատի վանքի 1221 թվի մի այլ արձանագրության նախաբանում կարդացվում է. «Յայս Ածազաւր թգորացս Թամարա և որդո իւրո Գէորգէ եւ Բ հարազատաց Զաքարէի եւ Իւանէի...»[59]։

[56] Նույն տեղում, էջ 133։

[57] Տե՛ս Ս. Ավագյան, Մորո ձորո վանքը և նրա արձանագրությունները, «Էջմիածին», 1967, № 5, էջ 58։

[58] Կ. Ղաֆադարյան, Հաղբատ..., էջ 168։

[59] Նույն տեղում, էջ 180։

Գեորգի Լաշայի անվան սեռական հոլովաձևը պահպանվել է Հովհաննավանքի գավթի մի անթվագիր նվիրատվության մեջ, որի ժամանակը համարում են ԺԳ դարի սկզբները. «Ի տէրութեն պար[ոն]դդուփալ Թամարին, իր թագաւորայզարն որդի մեծն Մլքիսէթեկին Գաւրգէ...»[60]: Աթաբեկ Իվանեի 1213 թվի նորահայտ շինարարական արձանագրության նախաբանում ևս հիշատակվում է Գեորգի Լաշայի անունը՝ սեռական հոլովով. «ի Թվ[ին] Հ[այոց]: ՈԿԲ թագաւորութենն Գիաւրգէ...»[61]:

Նշված հոլովաձևը դիտվում է նաև այն դեպքերում, երբ Գեորգի վրացաձև անձնանունը կրում է հայազգին. այդ են ցույց տալիս Սանահնի և Հոռոմոսի վանքերի երկու արձանագրությունները. Սանահնի վանքում՝ «ՈԿԶ (1217) Թվիս առաջնորդ հայր վարդապետ Գրիգոր ընկալաք զԳաւրկէ յոյսն...», որը պետք է հասկանալ՝ «ընկալաք զյոյսն Գաւրկէ...»[62], Հոռոմոսի վանքում՝ «ՈՂԷ (1248) ես Աշոտ Դսեղեցի որդի Գեաւրգէ...»[63]:

Սակայն չպետք է կարծել, թե վրացաձև Գեորգի անձնանվան սեռական հոլովը բոլոր դեպքերում ունենում է է կամ ե վերջավորություն. մի շարք բնագրերում նույն թագավորների անձնանունները սեռական հոլովում փորագրված են նաև գրաբարյան եայ(եա) հոլովիչով. այսպես, Հաղարծնի վանքի մի արձանագրության նախաբանում կարդում ենք. «Ի թուին ՈԼ ի թագաւորութե Գէարգեայ...», իսկ նույն վանքի ս. Գրիգոր եկեղեցու արևմտյան պատին՝ «Ի ՈԼԳ թուիս ի թագաւորութենն Ափխազաց Գեորգեա...»[64]:

Ղիմեթի—նորագյուտ իգ. անուն, ծագումը ըստ Աճառյանի արաբ. giymat գին, արժեք, արժանիք բառից. Կիմայթ, Ղիմաթ, Ղըյմէթ տարբերակները գործածական էին ԺԳ և հետագա դարերում: Ղիմեթի անվանական ձևը վկայված է Անիի Մայր տաճարի ՈԽԲ (1293 թ.) արձանագրության նախաբանում՝ «Ես Մխիթար եւ ամուսին Իմ Ղիմեթի...», իսկ տրական հոլովը՝ Ղիմեթէ նույն բնագրի վերջում, հատուցման բանաձևի մեջ «...պարտին սպասաւորք ի տարին :Բ: աւր պատարագ :Ա: Մխիթարայ :Ա: Ղիմեթէ»[65]: Այս անձնանունը չկա Աճառյանի բառա-

[60] Ստույգ վերծանությունը տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948 թ., էջ 100—101:

[61] Ս. Ավագյան, նույն տեղում, № 4, էջ 57:

[62] Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 128:

[63] Ն. Սարգիսյան, նույն տեղում, էջ 154, Н. Эмин, նույն տեղում, էջ 38:

[64] Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն..., մասն Ա, էջ 133, 135:

[65] Հ. Օրբելի, Դիվան հայ վիմագրության, հատ. 1, Երևան, 1963, էջ 40:

րանում և անծանոթ է բանասիրությանը, քանի որ Անի քաղաքի արձանագրությունները, որ տարիներ շարունակ ընդօրինակել և հմտորեն վերծանել էր ակադ. Հ. Օրբելին, միայն վերջերս սպառիչ կերպով հրապարակվեցին «Դիվան հայ վիմագրության» առաջին հատորում:

*Ջոհի—ար. անձնանուն, ծագումն ըստ Աճառյանի պրս. Juhi ծաղրածու բառից, գրական աղբյուրներում անունը չի հանդիպում: Ջոհէ սեռ. հոլովաձևը գտնում ենք Աստղաձոր գյուղի (Կամոյի շրջան) արևելյան կողմում, ճանապարհի եզրին կանգնած խաչքարի արձանագրության մեջ. «Ի թվս. հայոց ՉԺԹ Ես Շահնշահ որդի Ջոհէ կանգնեցի զխաչս յիշատակ հոգոյ իմոյ»[66]: Նույն անունը Ե. Լալայանը վերծանել է Ջոցէ, իսկ բնագրի տարեթիվը՝ ՉԺԹ[67]:

Ընդօրինակությունը ստուգելով անվանի վիմագրագետ Ս. Բարխուդարյանի՝ տպագրության պատրաստվող հավաքածուի նյութերով, համոզվեցինք, որ Սմբատյանցի արտագրությունն ավելի հարազատ է իրականին, քան Լալայանինը, ըստ այդմ՝ մեզ հուզող Ջոհէ հոլովաձևն ավելի ստույգ է, քան Ջոցէ-ն:

* Տուտի— ար. անձնանուն, որի անվանական ձևը չի ավանդված. հանդիպում է սեռական հոլովաձևը Տուտէորդի բարդության մեջ և որդի Տուտայ, Տուտեայ, Տուտէ կապակցություններում: Ստուգաբանությունը Աճառյանը չի տալիս. հավանական է թվում բառիս ծագումը հյ. տուտն (հնխ.* dud մոութ, կտուց, ծայր) բառից, այսինքն մի բանի ծայրը կամ վերջը, ագի, պոչ[68]:

Անվան ուղիղ ձևը Աճառյանը համարում է Տուտէ[69], հավանաբար հիմք ընդունելով Տուտէորդի բաղադրյալ հայրանունը. այս դեպքում սեռական հոլովում սպասելի էր օրինական Տուտէի, մինչդեռ մատենագրական աղբյուրներում և վիմագրական բնագրերում այս անվան սեռականը ամենուրեք ավանդվում է Տուտայ, Տուտա, Տուտեայ կամ Տուտէ: Ինքը* Գրիգորը, որ ժամանակի գիտուն վարդապետներից էր, իր հայրանունը փորագրել է տալիս՝ Հառիճավանքում՝ «Ի ՈԽԵ Թվականիս ես Գրիգոր վարդապետս որդի Տուտա»[70], Սանահնում՝ «զԳրիգոր վարդապետս որդի Տուտայ յիշեսջիք», իսկ Հովհաննավանքում 1154 թ. արտա-

[66] Մ. Սմբատյանց, նույն տեղում, էջ 544:

[67] Ե. Լալայան, Գեղարքունիք կամ Ն. Բայազետի գավառ, «Ազգագրական հանդես», էջ 43:

[68] Տե՛ս Հ. Աճառյան, Արմատական բառարան, հատ. Ջ, 1932, էջ 982:

[69] Հ. Աճառյան, Անձն. բառարան, Ե, էջ 172:

[70] Ալիշան, Շիրակ, էջ 158, մեր ուղղումներով:

գրած ձեռագրի ինքնագիր հիշատակարանում ստորագրում է՝ «Գրիգոր վարդապետ որդի Տուտայ»[71]:

Բոլորովին տարբեր է Գրիգորի հայրանվան սեռականը Սանահնում, Տուտեորդու գերեզմանի վրա կանգնեցված գեղաքանդակ խաչքարձանի արձանագրության մեջ, որի ընդարձակ տապանագիրը շարադրվում է իր իսկ՝ Գրիգորի անունով և կազմվել է մահվանից տարիներ առաջ՝ 1184 թվականին. այստեղ կարդացվում է. «...Ես Գրիգոր վարդապետ, որդի Տուտէ խաչենացւոյ...»: Տուտէ գտնում ենք նաև Սանահնի Ամենափրկիչ եկեղեցու ճակատակալի արձանագրության մեջ. «ուխտիս առաջնորդ էր Տուտէ որդի Գրիգոր եպիսկոպոսն...»[72]:

Որ քննարկվող անձնանվան ուղիղ ձևը Տուտի է և ոչ Տուտէ հաստատում է նաև հայերեն հնագույն տարեթիվ ունեցող վիմական արձանագրությունը՝ փորագրված է Թալինի մեծ տաճարի հարավ-արևելյան մույթի վրա ՄԼԲ (783) թվին, որտեղ Ուխտատուր վանականի եղբայրը հիշվում է Տուտի անունով: «Ես Ուխտայտուր վանական եւ Տուտի եղբայր իմ բերաք աղբիւրանիս...»[73]: Նույն անվան փաղաքշականը՝ Տուտիկ հիշատակված է Կողես գյուղի կենտրոնում կանգնած նույակ խաչքարձանի 1241 թ. արձանագրության մեջ. «Ես Տուտիկս եւ մայր իմ Թամար եւ ամուսին իմ Դեղիկա կանգնեցաք զերրորդութի...»[74]:

* Տուղտի— անորոշ սեռի նորահայտ անձնանուն, հավանաբար ծագում է տուղտ բույսի և ծաղկի անունից: Աճառյանի բառարանը չունի, երևի այն պատճառով, որ վկայող արձանագրության վերծանությունն անստույգ է եղել: Լուսանկարի վրա նորից ստուգելով վերծանությունը գտնում ենք, որ պահպանված տառաշարքը՝ Տուղտէ հավաստի է և ըստ

[71] Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 51, 118, Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 167:

[72] Նույն տեղում, էջ 180, 189:

[73] Վերցնում ենք մեր հավաքածուից. նախորդ ընդօրինակություններում անձնանունը վերծանված է Տուտլի, որը հեռու է իրականից (Ալիշան, Այրարատ, էջ 139):

[74] Առնում ենք մեր հավաքածուից. Ջալալյանցի (Ճանապարհորդություն..., մաս Ա, էջ 127) և Լալայանի («Ազգագրական հանդես», Է, 342) հրատարակածները հեռու են իրականից: Ս. Ջալալյանցը այս խմբական խաչքարձանը կանգնեցնող Տուտիկին նույնացնում է Գրիգոր վարդապետ Տուտեորդու հոր՝ Տուտիի հետ, գտնելով, որ Կողես գյուղը միջին դարերում եղել է «սեփական կալված Տուտի իշխանին, հոր Գրիգոր վարդապետի»: Մեզ անհայտ է հեղինակի այս տեղեկությունների աղբյուրը, սակայն ակնհայտ է այդ վարկածի ժամանակավրիպությունը. 1154 թ. Հովհաննավանքում ձեռագրի արտագրող Գրիգորի հայրը չէր կարող դրանից մոտ մեկ դար անց (1241) կանգնեցնել այդ խաչքարը, այն էլ իր մոր և ամուսնու հետ միասին (տե՛ս Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 53):

այդմ հնարավոր է վերականգնել անվան ուղիղ ձևը՝ Տուղտի: Ավանդված է Հոռոմոսի վանքի տապանատան շինարարական արձանագրության վերջաբանում. «...եւ յամենայն ամի Ժ պատարագ Տուղտէ»[75]:

* Ջանի— ար. անձնանուն է, որի ուղիղ ձևը Աճառյանը գտնելով Ջան, ծագած է համարում պրս. Jan հոգի, հոգեակ բառերից[76]: Չառարկելով այս ստուգաբանության դեմ, գտնում ենք, որ անվան ուղղական հոլովը պետք է վերականգնել Ջանի, քանի որ Հովհաննավանքի արձանագրության մեջ վկայված է նրա տրական հոլովաձևը՝ Ջանէ (ինչպես և նույն բնագրի ի-ով վերջացող մյուս անուններինը՝ Գաւրգէ<Գաւրգի, Բեսուճէ<Բեսուճի), որը, ըստ քննության առարկա օրինաչափության, ուղղական հոլովում պետք է ունենալ ոչ թե Ջան, այլ՝ Ջանի: Սխալը գալիս է Բրոսեից, որը Ամսաջանի արձանագրության ֆրանսերեն թարգմանության բացատրականում անվան ուղիղ ձևը նույնպես դնում է Ջանէ[77]:

Բեսուճի— իգ. անձնանուն, մի անգամ հիշվում է Հովհաննավանքի հիշյալ նվիրագրության մեջ[78]: Աճառյանը անվանական ձևը համարելով Բեսուճ, նրա ծագումը դնում է պրս. bēsūč անմեղ բառից[79]:

Արձանագրության լուսանկարի վրա և հուշարձանի մոտ նորից ստուգելով անձնանվան տառաշարքերը, համոզվում ենք, որ նախաբանում փորագրված է ուղիղ ձևը՝ Բեսուճի («Ես Ամսայջան, որդի Գոգորին եւ ամուսին իմ Բեսուճի...»), իսկ վերջաբանում, հատուցման ձևակերպման մեջ՝ անվան տրական հոլովը՝ Բեսուճէ («խոստացան ի տարոջն :ԺԲ: պատարաք... Գ: Շահանշայի :Գ: Շրվանշահի :Բ: Ջանէ :Բ: Ամսայջանիս :Բ: Բեսուճէ»)[80]: Բրոսեն հիշյալ աշխատության մեջ Բեսուճէ-ն համարում է ուղիղ ձև, հար և նման Ջանէ-ին[81]:

Բեսուճի և Ջանի անձնանունների անվանական ձևերը ստույգ վերականգնել է Ն. Մառը «Վիմական տարեգրի» առաջաբանում[82], որը անհասկանալի պատճառով անհայտ է մնացել Աճառյանին:

* Մերչի— ար. անձնանուն, որի ուղիղ ձևը չի ավանդված. Մերչը,

[75] Ալիշան, Շիրակ, էջ 21:

[76] Աճձ. բառ., Դ, էջ 289, Ե, էջ 272—273:

[77] M. Brosset, Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, St. Pet., 1849, էջ 112:

[78] Բնագրի գիտական հավաստի վերծանությունը տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 100—101:

[79] Աճձ. բառ., Ե, էջ 295 (Հավելված):

[80] Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը..., էջ 100—101:

[81] M. Brosset, Նույն տեղում, էջ 112:

[82] «Վիմական տարեգիր», էջ XII:

Մերշէ թեք հոլովաձևերով վկայված է Արցախի Մեծարանց վանքի, Անիի Քարիմադինի եկեղեցու և Կարմիր վանքի արձանագրություններում, որ փորագրել են տվել Մերշիի կինը՝ Դապտա խաթունը և Ուքան ու Պապքան եղբայրները։ Այդ նվիրագրերից հնագույնը Ջա (1252) թվի պահպանել է անվան տրական հոլովը՝ Մերշո («...Տր վդ եւ միաբանքս :Ժ: ժամ տվին մեր եղբաւրն Մերշո...)[83], մյուսները ՋԻ և ՋԻԳ (1271, 1274 թթ.) նույն հոլովում ունեն Մերշե (Կարմիր վանքում՝ «...յամենայն շաբաթ աւր :Գ: խորանն մեր հաւրն Սարգսի եւ Սիթէ եւ Մերշե պատարագին...»)[84], կամ Մերշէ (Անիի Քարիմադինի եկեղեցու մի երեսպատման քարին՝ «...պատարագեն զՔս ի տարումն... աւր մեր հաւրն Սարգսի եւ Սթէ եւ Սարգսի արքաունին եւ Մերշէ»)[85]: Աճառյանը անվան ուղիղ ձևը համարելով Մերշո, նրա ծագումը կապում է Մերկեռ ար. անվան հետ, որն իր հերթին առաջացած է համարում լատ. Mercurius =Փայլածու մոլորակի անունից՝ իտալական հնչումով (Մերչեր>Մերշո)։ Թվարկված վկայությունների հիման վրա Ն. Մառը 1913 թվին «Վիմական տարեգրի» առաջաբանում վերականգնում է անձնանվան ուղիղ ձևը՝ Մերշի և նրա ծագումը համարում վրաց քաղքեդոնիկ միջավայրում գոյություն ունեցող Մերշ-ող կամ Մերշ-ա անուններից։ Մերշի վերականգնման դեմ ոչ մի չափով չի առարկում Մեծարանց վանքի արձանագրության Մերշո ձևը, քանի որ վերջինս Ի-հանգող անվան տրական հոլովն է՝ այս դեպքում գրական հայերենի օրինաչափ Ո բնով։

Սիթի, Սթի— իգ. անձնանուն, որ ըստ Աճառյանի ենթադրության ծագում է ժող. արաբերենի siti, sitté տիկին, տիրուհի բառից[86]: Առանց սխալվելու կարելի է ասել, որ միջնադարում հայ իրականության ամենատարածված իգական անձնանունն էր, գոնե ըստ վիմական արձանագրությունների։ Անվան սկզբնաձևը՝ Սիթի ԺԳ—ԺԴ դարերի վիմագրության մեջ և ձեռագրերի հիշատակարաններում բազմաթիվ հիշատակություններ ունի, որոնք թվարկվում են Աճառյանի բառարանում[87]։

Սեռական, տրական հոլովներում վկայված է Սթե, ավելի հաճախ՝ Սթէ. հնագույն հիշատակությունը պահպանվել է Անիի Սիթի Պահլավունու եկեղեցու մի արձանագրության մեջ, որը շարադրվում է նվիրատուի՝ Սիթիի անունից և թվագրված է ՈԾԹ (1210). «Ես Սիթի զուգակից Գրիգորի...», իսկ վերջաբանում, հատուցման ձևակերպման մեջ «...զշաբաթ աւրն Գրիգորայ եւ Սիթէ...»[88]։ Նույն հոլովաձևը վկայված է Անիի Քարիմադինի եկեղեցու և Կարմիր վանքի բնագրերում («...պատարագեն... մեր հաւրն Սարգսի եւ Սթէ եւ Մերշէ...»[89], «...մեր հաւրն Սարգսի եւ Սիթէ եւ Մերշէ պատարագեն...»)[90], որոնց մասին խոսք եղավ Մերշի անվան քննության ժամանակ։ Մի նորահայտ վկայություն էլ գտնում ենք Մշկավանքի գլխավոր եկեղեցու հարավային պատին փորագրված Սադունի անթվակիր շինարարական արձանագրության նախաբանում. «Ես Սադունս որդի Սթե շինեցի զմատուռս...»[91]։ Դատելով Մշկավանքի վիմագրության տվյալներով մատուռի շինությունը, ուրեմն և բնագրի փորագրումը պետք է կատարված լինեն ԺԳ դարի սկզբներին։ Միջին դարերում գործածական է եղել նաև Սիթի, Սթի անձնանվան հոգնակին՝ Եր և նի հոգնակերտ մասնիկներով։

Եր հոգնակիով երկու օրինակ է պահպանվել. առաջինը Սթերճեն («Գ: աւր իմ հաւրն՝ Ապրկան եւ :Գ: իմ մաւրն Սթերճեն»)[92] տրական հոլովաձևով փորագրված է Հոռոմոսի վանքի մի բնագրում, որը հրատարակված է Ն. Սարգիսյանի միակ վերծանությամբ, անհնար է ստուգել և, ինչպես իրավամբ գտնում է Աճառյանը, կասկածելի է։ Երկրորդ վկայությունը՝ Սթերոյս սեռ. հոլովով գտնում ենք Հերհերի ս. Սիոն վանքի մի տապանագրում. «Ես վարդպետ կազմեցի տապանանիս Սթերոյս, ոչ որդի ունէր, ոչ աղբէր, ով կարդէք յաղաւթս յիշեք ԻԹ ՋԽԵ»[93]: Այս ընդօրինակությունը ստույգ է և հնարավորություն է տալիս վերականգնել անձնանվան սկզբնաձևը՝ Սթեր, կազմված Սիթի, Սթի արմատից և Եր հոգնակերտից, որին ավելանում են ոյ միջին հայերենի հոգ-

[83] И. Орбели, Избранные труды, 1963, էջ 476:

[84] Կ. Բասմաճյան, Անիի դրացի Կարմիր վանքը, «Լոյս», 1911, № 1, էջ 233—236, Գ. Հովսեփյան, Նյութեր..., Ա, էջ 13։

[85] Հ. Օրբելի, Դիվան հայ վիմագրության, I, Եր., 1963, էջ 65։

[86] Աճ. բառ., Դ, էջ 473։

[87] Նույն տեղում, էջ 491—492։

[88] Հ. Օրբելի, Դիվան, 1, էջ 55։

[89] Նույն տեղում, էջ 65։

[90] Կ. Բասմաճյան, նույն տեղում, էջ 233—236։

[91] Առնում ենք մեր հավաքածուից, Մշկավանքի արձանագրությունների մեծ մասը հրատարակված չէ։

[92] Աճ. բառ., Դ, էջ 490, Ալիշան, Շիրակ, էջ 26, Ն. Սարգիսյան, նույն տեղում, էջ 157։

[93] Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 117. Հրատարակված է էական սխալընթերցումներով։ Տապանագրի նորագույն հավաստի վերծանությունը տալիս է Ս. Բարխուդարյանը։ Տե՛ս «Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ», Երևան, 1963, էջ 94։ Սակայն այստեղ ևս անհասկանալի է մնում, թե ինչու է տապանանիս հոգնակի թվով։ [Պատճառը գիրք-ի նմանողությամբ լինելն է։—Խմբ.]:

նակի սեռականի վերջավորությունը և ս ստացական հոդը (**Սթ+եր+ոյ+ս=Սթերոյս**):

Սիթի կամ **Սթի** անվան հոգնակին միջին հայերենի **նի** մասնիկով միայն մի օրինակ ունի, որը պահպանվել է Անիում, Տիգրան Հոնենցի եկեղեցու արևելյան որմի արձանագրության նախաբանում. «Թվ[ին]-ՉՄԹ... մծիկնաւբարթուխուցէս Մաթէս եւ իմ կենայկից **Սթենի**...»[94]: Այս վկայությունը անծանոթ է եղել Աճառյանին և երևի այդ է պատճառը, որ նա զգուշանում է **Սթեր**, **Սթերնի** ձևերը **Սիթի**, **Սթի** անվան հոգնակին համարելուց, թեև նրանց ծագումը այնուամենայնիվ կապում է **Սիթի-տիկին** բառի հետ։

Մյուս կողմից, Սիթի, Սթի անվան հոգնակիները (**Սթեր**, **Սթենի**), չի կարելի դիտել իբրև հայկական օնոմաստիկային անհարազատ կազմություններ, ըստ որում հայտնի են այլ բազմաթիվ դեպքեր, երբ անձնանունները առաջանում են գոյականների կամ ուրիշ խոսքի մասերի դիտակցված կամ քարացած հոգնակիներից (հմմտ. **Տիկնաց**, **Փառաց**, **Տիրոց**, **Աղբերանի**, **Ականց**, **Ակներ**, **Մամեր**, **Լուսեր**, **Տիրանց** և այլն)։

ԺԲ—ԺԳ դարերի վիմագրության մեջ ավելի մեծ թիվ են կազմում **ի** հանգող այն բաղադրյալ անձնանունները, որոնց երկրորդ եզրը նույն **Սիթի**, **Սթի** անունն է, իսկ առաջինը՝ որևէ գոյական կամ այլ անձնանուն։ Այսպիսի կազմությամբ անձնանունների մի մասը նախկին հրապարակումներով հայտնի է գիտությանը և ստուգաբանվել է Աճառյանի բառարանում։ Վերջին ժամանակներս հայտնաբերվեցին **ի** հանգող բաղադրյալ անձնանունների նոր վկայություններ, որոնց հոլովական փոփոխությունները զգալի հետաքրքրություն են ներկայացնում նաև մեր հարցի քննության տեսակետից։

Ահա բարդության երկրորդ եզրում **Սիթի**, **Սթի** ունեցող անձնանունների վկայությունները։

* **Ալամսիթի**— իգ. նորագյուտ անձնանուն, կազմված արաբ. alam **աշխարհ** և siti տիկին բառերից, «աշխարհի տիկին կամ տիրուհի» նշանակությամբ, նման Ալամխաթուն, Ալամշահ, Ալամտիկին, Ալամխան անուններին։ Տրական հոլովաձևը՝ **Ալամսթէ** հիշատակված է մի չհրատարակված արձանագրության մեջ, որը փորագրված է Ն. Լաչինղայա հնավայրի (Իջևանի շրջանի Վ. Աղդան գյուղ) հարավային եկեղեցու ճակատակալ քարին, ներքուստ։ Բնագիրն անթվագիր է, կիսաեղծ և դժվար է կարդացվում, սակայն մեզ հետաքրքրող տառաշարքը վերծանվում է ստույգ, ըստ այդմ՝ «...միաբանքս եո[ւն] :Բ: ժամ ի տաւնի ծառ-

[94] Հ. Օրբելի, նույն տեղում, էջ 64։

զարդարին :Ա: հաւր իմ Շնաւորին :Ա: մաւր իմ **Ալամսթէ**... ով խափի ղատի Այ...»[95]։

* **Գոհարսիթի, Գոհարսթի**— իգ. նորագյուտ անուն, կազմված հյ. **գոհար** և **արաբ.** siti **տիկին** բառերից։ **Գոհարըսթե** տրական հոլովը վկայված է Առաքելոց վանքի պարսպամերձ եկեղեցու բարավորի բնագրում, որը վերաբերում է հուշարձանի շինությանը և թվագրված է ՉԻԵ (1276 թ.)։ Թեև բարավորի միակտոր քարը պոկվել է տեղից և ընկած է եկեղեցուց մոտ 15 մետր հեռու, շրջված վիճակով, տառաձևերը շատ քիչ են տուժել, կարդացվում են հաջողությամբ և մութ կամ անհասկանալի տեղեր չունեն։ Չնայած դրան, այն հրապարակվել է զգալի անճշտություններով, մանավանդ խնդրո առարկա անձնանվան անճանաչելի աղավաղումով[96], այնինչ այդ հատվածը հավաստի կերպով վերծանվում է «...որ սպասաւորեն սմա արնեն :Բ: ժամ ի տարին Յայտնութեն :Ա: Շնոհոր տիկնա :Ա: **Գոհարըսթե**»:

Միանգամայն օրինաչափ է բառիս մեջ ը գրի, ուրեմն և հնչյունի ներմուծումը՝ բաղաձայնների կուտակումից խուսափելու և բարեհնչյունության նպատակով, որն արտացոլում է ժողովրդական հնչման ու ուղղագրության վիճակն այդ դարերում։

Նույն անվան ուղիղ ձևը՝ **Գոհարըսթի**, պահպանվել է նաև Շահապոնք ամրոցից Նախիջևան տարված մի խաչքարի հիշատակագրության մեջ. «Թվ. ՉԽԲ ես **Գոհարըսթի** անարժան ամուսին կանկնեցի խաչս Դրգոքահնայ...»[97]։ Թվում է, իզուր է Աճառյանը այս անձնանունը բաժանում երկու մասի՝ **Գոհար** և **սթի**, **սրանք** ինքնուրույն միավորներ համարելով և նմանեցնելով **Գոհար տիկին**, **Գոհար խաթուն** կապակցություններին[98]։ Հազիվ թե արդարացված համարվի **Գոհարըսթի** անձնանվան բաղադրիչների ինքնուրույնությունը, ընդհակառակը ը հնչյունի ներմուծումն ապացույց է, որ բարդությունը շարահյուսական կապ չունի, այլ արտահայտում է միասնական իմաստ, ինչպես նույն ձևով կազմված **Մամսթի**, **Մամուկսթի**, **Ալամսթի** անունները։

* **Մամսթի**— իգ. անձնանուն, ըստ Աճառյանի ծագում է հյ. **մամմայր** և արաբ. siti **տիկին** անուններից։ **Մամսթէ** տրական հոլովաձևը

[95] Քաղում ենք մեր հավաքածուից։

[96] Տե՛ս Գ. Սարգսյան, Առաքելոց վանք-ամրոցը և գյուղատեղը, «Էջմիածին», 1955, № 8, էջ 39։ Այստեղ մեջ բերված հատվածը վերծանված է. «Շնոհոր տիկնա ։Ա։ Գոհարջ (ի ս թէ[ր]»)։ Ծանոթության մեջ հեղինակը հնարավոր է համարում անձնանվան նաև **Գոտարջ** ընթերցումը։

[97] Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն Ա, Վաղարշապատ, 1928, էջ 54։

[98] Անձ. բառ., Ա, էջ 483։

վկայված է Արջոառիճ վանքի արձանագրության վերջաբանում, հատուցման բանաձևի մեջ «...եւ հատուցին սպասաւորք... պատարագ :Ը: աւր :Բ: իմ մաւրն Թագոճէ :Ա: կենակցի իմ Մամաքէ»[99]: Ընդգծված անունների ուղիղ ձևերը պետք է վերականգնել Թագոճի, Մամաքի:

Մամուկքի— իգ. անձնանուն, որը Աճառյանը համարում է նախարդի փաղաքշականը։ Անվանական ձևով հիշատակվում է Հոռոմոսի վանքի ՉԺԵ (1266) թվի արձանագրության մեջ[100]։

* **Նուրսթի, Նուսթի**— իգ. անձնանուն, ըստ Աճառյանի կազմված արաբ. nūr լույս և siti տիկին բառերից։ Տրական հոլովը՝ **Նուրսթէ** հիշատակվում է Հոռոմոսի վանքի մի նվիրատվական արձանագրության վերջաբանում «...եւ հատուցին... :Դ: աւրն ինձ :Բ: իմ հաւրն Սարգսի :Ա: **Նուրսթէ**...»[101]։ Նույն ձևը հանդիպում է նաև Արջոառիճ հուշարձանախմբի արձանագրության մեջ—«...եւ փոխարէն հատուցին :Բ: աւր պատարագ... յամէն ամի :Ա: ինձ :Ա: **Նուրսթէ**...»[102]:

Հառիճավանքի գլխավոր եկեղեցու հյուսիսային ավանդատան բարավորի վրա փորագրված է Նուրսթի անվան թե ուղիղ ձևը և թե տրականը՝ **Նուրսթէ**. «Ես Արտեւան... եւ ամուսին իմ **Նուրսթի**... սպասավորք սբ ուխտիս սահմանեցին :Դ: աւր պատարագ :Բ: աւր ինձ եւ :Բ: **Նուրսթէ**...»[103]։

Նուրսթի անունը ր հնչյունի անկումով՝ **Նուսթի** հանդիպում է Հաղբատավանքի մեծ գավթի մի տապանագրում[104], իսկ Նոր Վարագ վանքի մի արձանագրության մեջ անվան տրական հոլովաձևը փորագրված է **Նուսաթէ**[105]:

* **Ամիսթի**—իգ. անուն, Աճառյանը ուղղականը գտնելով **Ամիսթէ**՝ ծագումն անհայտ է համարում։ Հավանական ենք գտնում բառիս կազմությունը արաբ. am ընդհանուր և siti տիկին բառերից[106]։ Միակ հիշատակությունը պահպանվել է Ալայազ գյուղում կանգնած խմբական խաչարձանների պատվանդանին փորագրված տապանագրում։ Բնագիրը նախկինում հրատարակվել է էական տարընթերցումներով, ուստի անհրաժեշտ ենք համարում մեջ բերել լուսանկարով ստուգված

99 Ալիշան, Շիրակ, էջ 123։

100 Նույն տեղում, էջ 26, Այրարատ, էջ 271։

101 Ալիշան, Շիրակ, էջ 25։

102 Նույն տեղում, էջ 123։

103 Նույն տեղում, էջ 162, մեր ուղղումներով։

104 Կ. Ղաֆադարյան, Հաղպատ..., էջ 190։

105 Արձանագրությունը հրատարակված չէ, առնում ենք մեր հավաքածուից։

106 Տե՛ս Х. К. Баранов, Арабско-русский словарь, М., 1962, էջ 688:

հավաստի ընդօրինակությունը, որ սիրահոժար մեզ տրամադրեց Ս. Բարխուդարյանը. «ՉԲ Ես Մխիթարս կանգնեցի զխաչերս հաւր իմոյ Աբլկանն եւ մաւր իմոյ **Ամիսթէ**»[107]։ Ակներև է, որ ընդգծվածը անվան տրական հոլովն է, որը հիմք է տալիս վերականգնել ուղիղ ձևը՝ **Ամիսթի**:

* **Սիրէթի**— նորահայտ, անորոշ սեռի անձնանուն, որի ծագումը մեզ անհայտ է։ Անվանական ձևը չի վկայված. տրական հոլովը՝ **Սիրէթէ** գտնում ենք Անիում, Աղբերիկի եկեղեցու փլատակներում 1912 թվին հայտնաբերված խաչքարի հիշատակագրության մեջ. «Սուրբ խաչս բարեխաւս առ Քս Աղբէրկանն եւ **Սիրէթէ** եւ Խորասուփն»[108]։

* **Տեռնորդի**— կցական բարդությամբ հասարակ անուն, կազմված հյ. **տէր** սեռ. **տեառն** և **որդի** բաղադրիչներից։ Վկայված իրադրության մեջ չպետք է անձնանուն համարել, ինչպես վարվել են Խորանաշատ վանքի սույն արձանագրության առաջին վերծանող Կ. Ղաֆադարյանը և այդ հիմամբ բառս ստուգաբանող Հ. Աճառյանը[109]։ Ահա բնագրի այդ հատվածը ըստ Ղաֆադարյանի ընդօրինակության «...փրկեալ Քի Բաւրինա քոյր Ճալալին, մայր **Տեռնորդէ**»[110]: Այսպիսի բառանջատման և մասնակի ավարտվածության դեպքում, իհարկե, կարելի է համաձայնել վերծանողի հետ և **տեռնորդէ** բառը դիտել իբրև անձնանուն (Բաւրինա՝ մայր **Տեռնորդէ=Տեռնորդւոյ**): Սակայն արձանագրության լիակատար և հավաստի վերծանությունից պարզվում է, որ մեջ բերված հատվածը պոկված է ընդհանուր շարադրանքից և անջատված միջակետով այնպիսի տեղում, որտեղ միտքը ոչ մի չափով չի ավարտված և նախադասության որոշիչը անջատվել է որոշյալից, որը մնացել է բնագրի շարունակության մեջ։ Հիշյալ նախադասությունը մեր վերծանությամբ կար-

107 Միսական, էջ 150։ Նույն արձանագրությունը հրատարակված է. «Մխիթարս կանգնեցի զխաչս հաւրն իմոյ Ամլկան եւ մաւր իմոյ Ամիսթէ»: Տե՛ս նաև՝ «Материалы по археологии Кавказа», т. XIII, М., 1916, էջ 102: Մեջ է բերվում նույն բնագրի միայն թարգմանությունը. «В лето 702 я, Мхитар, водрузил кресты в память отца Бабика и матери...».

Երկու դեպքում էլ աղավաղված է խաչքարերը կանգնեցնողի հոր անունը՝ Աբլիկ կամ Ապլիկ, որ ուղիղ ձևով (բ>պ հնչյունափոխությամբ) վկայված է նույն տեղում թողած իր իսկ արձանագրության մեջ՝ «Ես Ապլիկ գնեցի հողս...»։ Ռուսերեն թարգմանության մեջ բաց է թողնված Ամիսթէ անունը։

108 Հ. Օրբելի, Դիվան, I, էջ 67։

109 Անձ. բառ., Ե., էջ 142։

110 Կ. Ղաֆադարյան, Պատմա-հնագիտական դիտողություններ Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանության մասին, ԳԱ ԱրմՖանի տեղեկագիր, 1940, № 4—5, էջ 177։

դացվում է. «...փրկեալ Քի Բաւրինա, քոյր Ճալալին, մայր տեռնորդես Կիւրիկի *միաբանեցա սբ Ածածնիս...» և այլն։*

Ինչպես երևում է, տեռնորդե *բառի վերջում հեղինակը բաց է թողել ս գիրը, որը տվյալ իրադրության մեջ առաջին դեմքի ստացական նշանակություն ունի և վերաբերում է ոչ թե* տեռնորդե *բառին, թեև նրան է միացած, այլ* Կիւրիկէին: *Ըստ այդմ կապակցությունը պետք է հասկանալ. «...Բաւրինա... մայր* տեռնորդե Կիւրիկիս»:

Ի *հանգող անունների սեռ., տրական հոլովների կազմությունն արտացոլող վիմագրական հուշարձանների մեր քննությունը ցույց է տալիս, որ այդ հոլովներում* Է(Ե) *հոլովակազմիչն ունեցող վկայությունները ինչ-որ մասնակի, առանձնացած, բացառիկ իրողություններ չեն, այլ միջին դարերի գրական հայերենի՝ գրաբարի ընդերքում առաջացած այնպիսի ավանդախախտումներ, որոնք* Ժ—ԺԳ *դարերի վիմական արձանագրություններում դիտվում են իբրև կայուն և գերակշիռ օրինաչափություն։*

Մյուս կողմից, մեջ բերված օրինակները հաստատում են նաև, որ այդ գործուն օրինաչափության գործողությունը չի սահմանափակվում պատմական Հայաստանի մի առանձին, մեկուսացած վայրի լեզվական ոլորտով, այլ ընդգրկում է միջնադարյան Հայաստանի գրեթե բոլոր գավառները՝ Շիրակ-Արագածոտնից մինչև Սյունիք ու Արցախական աշխարհը, Վասպուրականից մինչև Լոռին, Կայենն ու Մահկանաբերդը։

Այստեղ ընդհուպ մոտենում ենք խնդրո առարկա ձևաբանական երևույթի՝ Ի*-ով վերջացող անձնանունների սեռ., տրական* Է(Ե) *հոլովակազմիչի առաջացման կամ ստուգաբանության հարցին. արդ, որտեղից է ծագում հին գրական լեզվին և միջին հայերենին անծանոթ այս հոլովակազմիչը։ Կարստը, Մառը և Աճառյանը* Է(Ե)*-ն առաջացած են համարում հին հայերենի* եայ =(եա+յ) *եռաբարբառի ամփոփումից (թուլացում), որը իր հերթին տվյալ իրադրության մեջ պետք է ծագեր* ի *հանգող անձնանունների օրինաչափ Ա հոլովիչից 3 կիսաձայնի հավելումով և համապատասխան հնչյունական փոփոխությամբ. այսպես.* Մերչի *սեռ.* Մերչի+ա+յ=Մերչիայ>Մերչեայ>Մերչեյ>Մերչէ: *Հ. Աճառյանը հենց այդպես էլ գրում է. «Այս* է *ձևը անշուշտ* եայ *մասնիկի ամփոփումն է»*[111]:

Ծագումնաբանական առումով այս մեկնությունը համոզիչ է և առարկություն չի առաջացնում, թեև փոքր-ինչ ուղղագիծ է թվում. արդարև, բազմաթիվ այլ դիրքերում ևս հին հայերենի եա, եայ *երկբարբառների թուլացումը օրինաչափորեն տալիս է* Ե *կամ* Է: *Մի կողմ թողնելով մատենագրական աղբյուրների հանրահայտ օրինակները, կարելի է հենց* Ժ—ԺԳ *դդ. վիմագրության տվյալներով հաստատել այս իրողությունը,* ճեծեալ>ճեծել, գնեալ էի>գնել էի, Հոնեանց>Հոնենց, ճայրենեացն>ճէրէնէցն, եախնեաց>եախնեց, այգեաց>այգեց>էգէց, քրիստոնեայ>քրիստոնէ, դիմեաց>դիմեց *և այլն*[112]:

Սակայն Ժ—ԺԳ *դդ. վիմական արձանագրություններում* Է(Ե) *ձևույթը արդեն հանդես է գալիս իբրև* ի *հանգող անձնանունների սեռ., տրական հոլովները ձևավորող ինքնուրույն հոլովակազմիչ և դժվար է վերը թվարկած վկայություններում այն համարել* եա, եայ *ձևերի հնչյունական փոփոխության արդասիք, թեև ծագումնաբանորեն այդպիսի բացատրությունը անառարկելի է։*

Այստեղից հավանական է թվում կարծել, որ Է(Ե)*-ն ծագելով* եա, եայ *ձևերի թուլացումից, միջին դարերի կենդանի խոսվածքներում ստացել է գործուն և ինքնուրույն հոլովակազմիչի ձևաբանական արժեք և լայնորեն կիրառվում էր* ի*-ով վերջացող անունների թեք հոլովների ձևավորման մեջ*[113]*։*

Այս վարկածի համար լավագույն կռվան կարող է ծառայել այն հանրահայտ իրողությունը, որ Է(Ե) *հոլովակազմիչը դիտվում է ոչ թե միջին դարերի մատենագրական երկերում կամ անխառն գրաբարով շարադրված արձանագրություններում, այլ բացառապես տեղական բարբառների ու խոսվածքների ներթափանցումներով հարուստ վիմական բնագրերում կամ ձեռագրերի հիշատակարաններում։ Նույնիսկ կիսագրական, կիսաբարբառային լեզվով հորինված այնպիսի գործերում, ինչպիսիք են Կեղծ Շապուհ Բագրատունու կամ Գրիգոր Ականցու պատմագրական երկերը սեռ. տրականի* Է(Ե) *ձևը չի հանդիպում, մինչդեռ* Ժ—ԺԳ *դդ. վիմագրական հուշարձաններում և ձեռագրերի հիշատակարաններում նույն հոլովակազմիչի բազմաթիվ օրինակները գերակշիռ օրինաչափություն են կազմում այդ կարգի անձնանունների հոլովման համակարգում։*

Այս տեսակետից քննության առարկա Է(Ե) *ձևը հիշեցնում է նոր հայերենի* ու *հոլովիչը, որը նույնպես ծագելով* ոյ *ընից, հնչյունական օրենքների ազդեցությամբ փոխակերպվել է ու ինքնուրույն հոլովիչի (գնալ սեռ.* գնալոյ=գնալու, *ձի սեռ.* ձիոյ=ձիու):

---

[111] *Հ.* Աճառյան, *Լիակատար քերականություն, 3, էջ 538։*

[112] *Տե՛ս* Ալիշան, *Շիրակ, էջ 72, 116, 123։* Karst, Historische Grammatik... *էջ 69—71։*

[113] *Այս կարգի անձնանունների բացառական և գործիական հոլովաձևերը վիմական արձանագրություններում վկայված չեն, ուստի դժվար է այդ մասին դատել։*

է(ե) հոլովակազմիչի գործուն կիրառությունը երկար չի տևում. սկսած ԺԴ—ԺԵ դարերից վիմագրական հուշարձաններում ի վերջավորվող անձնանունների սեռ., տրականի վերը թվարկված հոլովաձևերը այլևս չեն հանդիպում։ Միակ հիշատակությունը պահպանվել է Ղրիմի Թեոդոսիա (Կաֆա) քաղաքի հայկական եկեղեցու պարսպի մեջ ագուցված խաչքարի տապանագրում, որ ժամանակին ընդօրինակել է Մ. Բժշկյանցը. «Բարեխաւսք է սբ նշ. պր. Գորգին Վարդերին Երանուհէ Ոսկեհատին Մինասէ թվ. ՋԻԱ (1472)»[114]։

Սակայն այստեղ էլ բնագրի վերծանությունը և մանավանդ Երանուհէ (Երանուհի) ձևը կասկածելի է դառնում Մինասէ ընթերցման հետևանքով, որը անբացատրելի է թվում և հավանաբար տարընթերցման արդյունք է։

է(ե) հոլովակազմիչի անհետացումը պետք է բացատրել ամենից առաջ ի հանգող բոլոր անունների միասնական, ընդհանրացնող ու-հոլովման առաջացումով, որը միջին հայերենի, աշխարհաբարի և նոր բարբառների լայն ընդգրկում ունեցող և գործուն հոլովումներից է։ Հետագա դարերի վիմագրության մեջ և ձեռագրերի հիշատակարաններում ի հանգող անձնանունները ևս անխտիր հետևում են այս հոլովման։

Սակայն չպետք է կարծել, թե սեռ., տրական հոլովների է(ե) հոլովակազմիչը իսպառ է անհետանում հայերենի լեզվազաշտից. բարբառներում պահպանվել են այդ երևույթի հեռավոր արձագանքները։ Վանի բարբառում, օրինակ, իկ փոքրացնող ածանցով վերջացող և անձ ցույց տվող մի շարք անուններ սեռ. տրական հոլովներում ունենում են է ձայնավորը. օր. պապիկ, սեռ. տր. պապկէ. բաց. պապկից, գործ. պապկով. այսպես նաև Շողիկ, Օղիկ, Նազիկ, Քաչալիկ, կատիկ բառերը, որոնք նշված հոլովներում դառնում են՝ Շողկէ, Օղկէ, Նազկէ, Քաչըլկէ, կատկէ[115]։ Այս երևույթը դիտվում է նաև Մեղրու բարբառում, որտեղ տարբեր հոլովումների պատկանող մի շարք բառեր իրենց կանոնավոր ձևերի հետ ունեն նաև է-ով սեռականի զուգահեռ հոլովաձևեր, առանց իմաստային տարբերակման. ահա մի քանի օրինակներ. զատիկ=զէդէկ, սեռ., զէրկու նաև զէրկէ, թագավոր=թաքավօր, սեռ. թաքավօրու նաև թաքավօրէ, սուտ=սօտ, սեռ., սըտու նաև սըտէ, ամիս սեռ. ամսվա նաև ամսէ և այլն[116]։ Համարյա նույն իրողությունն ենք նկատում նաև Ղարաբաղի բարբառում, միայն թե այստեղ զուգահեռ հոլովաձևերը

[114] Մ. Բժշկյանց, Ճանապարհորդություն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 353։

[115] Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1953, էջ 129։

[116] Տե՛ս Է. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 165։

իմաստային տարբերակում են արտահայտում, ըստ այդմ՝ է-ով սեռ., տրական սովորաբար դրվում է որոշյալ, իսկ մյուս հոլովումներով՝ անորոշ առարկան. այսպես. ամըէն կէտու ճըրա խմիլ չըն (կէտու— գետի անորոշ) էս կյէտէն ճըրան խըմիլ չըն[117] (կ էտէ(ն) որոշյալ)։

Այստեղից ակներև է, որ Ժ—ԺԳ դարերի վիմագրության մեջ է(ե)-ով հոլովաձևերը կարող էին ներթափանցել այն բարբառներից կամ խոսվածքներից, որոնցում այդ երևույթը գործուն է եղել միջին դարերում կամ պահպանվել է մեր օրերում (Մեղրի, Արցախ, Վան և այլն)։

Ի-ով վերջացող անձնանունների մի զգալի մասի վկայված կամ մեր վերականգնած անվանական ձևերը բաղադրյալ անուններ են՝ կազմված բուն հայերեն կամ փոխառյալ արմատական բառերից և նրանց միացած վերջնահանգ ի ձայնավորից։ Դրանք են. հայերեն բառերից՝ խաղող+ի, տուտ+ի, տուղտ+ի, գանձ+ի, փոխառյալ բառերից՝ խաթուր+ի, սէվճ+ի, դիմեր+ի, ջան+ի, բեսուճ+ի, հարց է առաջանում, որտեղից է ծագում ի վերջնահանգը և ինչ ձևաբանական նշանակություն ունի տվյալ իրադրության մեջ։ Այս հարցը վիմական արձանագրության ընձեռած տվյալների հիմամբ հարևանցի քննել է Մառը «Վիմական տարեգրի» նույն առաջաբանում։ Նրա կարծիքով այդ ի-ն հայոց անձնանունների մեջ հաճախ հանդիպող իկ փաղաքշական վերջածանցի ամփոփված կամ հատված տարբերակն է. իր վկայակոչած օրինակներն են. վիմական բնագրերից՝ Արեփ (Արեփիկ) և նոր բարբառներից՝ ախշի (աղջիկ)[118]։

Մառի այս մեկնությունը անհամոզիչ է թեկուզ այն պատճառով, որ մատնանշված ամենազորեղ փաստարկը՝ Արեփ զրկվում է հիմքից և անիրական է, քանի որ Մակարավանքի Գավթի արձանագրության մեջ նվիրատուի անունը փորագրված է ոչ թե Արեփ, ինչպես հրատարակված է Մառի աղբյուրը հանդիսացող Ս. Ջալալյանցի գրքում, այլ՝ հստակ երևացող և կանոնավոր Արեփիկ[119]։

Հավակնություն չունենալով սպառիչ մեկնաբանել տվյալ իրադրության մեջ ի վերջնահանգի ծագումը և ձևաբանական նշանակությունը, հավանական ենք համարում կարծել, որ քննարկվող ժամանակաշրջանի վիմական արձանագրություններում ի-ն հանդես է գալիս իբրև ինքնուրույն վերջածանց, որի օգնությամբ բառերից կազմվում են անձնանուններ։

[117] Տե՛ս Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, էջ 100։

[118] Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Առաջաբան, էջ XII։

[119] Տե՛ս Գ. Սարգսյան, Մակարավանք, «Էջմիածին», 1954, № 5, էջ 50, Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն..., մասն Ա, էջ 150։

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա

Գ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Սյունիքի վանական կալվածատիրությունը IX—XIII դարերում, *1973, 266 էջ*[*]:

Միջնադարյան Հայաստանի վանական սեփականատիրությունը ավատական կալվածատիրության անկապտելի մասն է կազմում և նրա տարբեր կողմերի հետազոտությունը կարևոր նշանակություն ունի երկրի սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային պատմությունը լուսաբանելու համար: Հարցի համակողմանի քննության բնագավառում հայ պատմագիտական միտքը զգալի նվաճումների է հասել. հրապարակի վրա են ինչպես բովանդակ Հայաստանի, այնպես էլ առանձին նահանգների աշխարհիկ և հոգևոր կալվածատիրության այլևայլ իրողությունների քննությանը նվիրված մի շարք մենագրություններ ու հոդվածներ, որոնցում այս կամ այն չափով ներկայացված են հիշյալ սեփականատիրական կազմակերպությունների ինչքային կացությունը, վարչական, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, կրթական-մշակութային գործունեությունը: Սակայն զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի վանական-եկեղեցական սեփականատիրությունն իբրև ինքնուրույն բնագավառ դեռևս հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձել և նրա մի շարք երևույթներ տակավին կարոտ են մանրազնին քննության:

Գրախոսվող աշխատությունը նվիրված է միջնադարյան Հայաստանի առավել ինքնամփոփ բնաշխարհի՝ եպիսկոպոսանիստ Սյունյաց նահանգի վանական կալվածատիրության հետազոտությանը, որն առանձնահատուկ տեղ է գրավում ինչպես վարչա-քաղաքական անհամեմատ ինքնուրույն վիճակի, այնպես էլ վանքապատկան սեփականության դրսևորումները լուսաբանող աղբյուրների առատության առումով: Նահանգի վանական միաբանությունների բազմակողմանի գործունեությունը լայնորեն արտացոլված է Սյունիքի հոգևոր առաջնորդ, մետրապոլիտ, նշանավոր պատմիչ Ստ. Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» ստվարածավալ երկում, ինչպես նաև վանական շինվածքների որմերին փորագրված բազմաթիվ արձանագրություններում, որոնք վերջին տարիներին գիտական-քննական վերծանություններով հրապարակվեցին «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի երեք հատորներում (II, III, IV):

Ուսումնասիրության սկզբում Գրիգորյանը քննում է առանձին անապատականների, ճգնավորների, ապա նաև վանական միաբանությունների առաջացման սոցիալ-տնտեսական պայմանները վաղ քրիստոնեական ժամանակաշրջանում: Հետագայում այդ առանձին ճգնավոր-միայնակյացները միանալով կազմում են վանական եղբայրություններ՝ մեծաքանակ հողային տարածություններով, արտադրության միջոցներով և օժանդակ ձեռնարկություններով, որով և հիմք է դրվում հոգևոր սեփականատիրությանը: Զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում վանքերը ավելի են ընդարձակում իրենց տիրույթները, զանազան եղանակներով նոր կալվածքներ, այդ թվում առանձին գյուղեր ու շահութաբեր հաստատություններ ձեռք բերում, այսպիսով դառնալով աշխարհիկ խոշորագույն կալվածատերերին հավասարազոր կազմակերպություններ: Հեղինակը քայլ առ քայլ հետևելով Սյունիքի վանքերի տնտեսական հզորացման ընթացքին, ներկայացնում է վանական հուշարձանախմբերի և առանձին տաճարների կառուցման ժամանակագրությունը, տալիս է նահանգի առավել նշանակալի հոգևոր մշակութային կենտրոնների ամփոփ բնութագրումներ: Այս բաժնում ուշադրության արժանի է նահանգի խոշոր վանքերի վանքապատկան գյուղերի ցանկը, որը հեղինակը քաղել է Ստ. Օրբելյանի երկից և վիմական բնագրերից: Հետազոտության այս հատվածի վերջում առանձին ենթավերնագրերի տակ վերլուծվում են վանքերի սեփականության ձևերը, նրանց ընդարձակման և կենտրոնացման եղանակները, վանքապատկան տնտեսության ճյուղերը, եկամտաբեր ձեռնարկությունների գործունեությունը, ջրօգտագործման կազմակերպումը վանական տնտեսություններում և այլն: Մատենագրական և վիմագրական բազմաթիվ վկայություններով ներկայացվում են վանքերի գանձագին և հոգեցատուր *կալվածքները, առանձին անհատների նվիրատվությունները, վանքապատկան ստացվածքների օտարումներն ու նրանց վերահաստատումները:*

Մենագրության 2-րդ գլխում հեղինակը քննում է Սյունիքի հոգևոր կալվածատիրության բնույթի, կառուցվածքի և ներքին կազմակերպության մի շարք հարցեր: Լուսաբանված են վանական կալվածատիրության երկու հիմնական ձևերի՝ անձնական և ընդհանուր (վանքապատկան) *սեփականության հարաբերությունները, նրանց տնօրինման առանձնահատկությունները: Ուշադրավ դիտողություններ են արվում վանքապատկան սեփականության ապահարկության և անձեռնմխելիության վիճակի մասին, հատկապես օտար նվաճողների գերիշխանության պայմաններում: Հանգամանորեն ներկայացվում են խոշոր վանքերի սեփականատիրության վարչատնտեսական կառուցվածքը, վանական հայրերի ստորակարգության կացությունը, վանքերի առաջնորդների իբրև*

[*] *«Լրաբեր հասարակական գիտությունների», 1973, № 9:*

հոգևոր բարձրաստիճան կալվածատերերի տնտեսական գործունեությունը։

Սյունիքի վանքերի սեփականության ձևերը, նրանցից ստացած խոշոր հասույթները ներկայացվում են աշխատության 3-րդ գլխում։ Վանքապատկան հողատարածությունների մշակման, հասութաբեր հաստատությունների շահագործման եղանակների մասին պատկերացում ենք կազմում աղբյուրների, հատկապես վիմագրերի տվյալներից, ըստ այսմ ի հայտ են բերվում վանքապատկան և վանքահպատակ գյուղերի (գյուղացիների) կոռային աշխատանքի բազմազան կիրառությունները վանական տնտեսության զանազան ճյուղերում։ Այս առթիվ արժեքավոր տվյալներ է պարունակում Ստ. Օրբելյանի «Ժամանակագրության» հուլավարի մասին հավելվածը, որը թեև ավելի ուշ ժամանակների վավերագիր է, սակայն հստակ պատկերացում է տալիս նաև քննվող ժամանակաշրջանում գոյություն ունեցած կոռապարտության մասին։ Պարզվում է, որ Տաթևի եպիսկոպոսարանին հարկատու գյուղացիները աթոռի նկատմամբ ունեին երկու տեսակի կոռային պարտավորություն՝ արդյունքներով հասույթ՝ գյուղատնտեսական մթերքների ձևով և աշխատապարտ ռենտա, որն արտահայտվում էր վանական տնտեսության մեջ կատարվող անվճար աշխատանքով։ Սակայն վանքերի եկամուտների պատկառելի մասն էր կազմում եկեղեցական հիմնական հարկը՝ տասանորդը, որ վաղ միջնադարում մեծ մասամբ առնվում էր բնամթերքով և հայտնի էր իբրև պտուղ (պտղի)։ Մատենագրական աղբյուրներում, հատկապես դատաստանագրքերում ու կանոնագրքերում պահպանված վկայությունների հիմամբ Գրիգորյանը պարզում է տասանորդի բովանդակությունը, նրա սահմանման կարգը, հավաքման ու բաշխման աստիճանական փուլերը։

Ուսումնասիրության 4-րդ գլուխը նվիրված է վանքերի կրթական և բարեգործական հաստատությունների քննությանը։ Հեղինակն, ըստ երևույթին, իր նպատակներից դուրս համարելով Սյունիքի հոգևոր կենտրոնների գործունեության այս կողմի լուսաբանումը, խիստ համառոտակի, մեկ-երկու էջում հապշտապ թվարկում է Նահանգի կրթա-գիտական օջախները, հարևանցի հիշատակում դրանցում գործած մի քանի վարդապետների անունները։

Հետազոտության վերջին գլուխը, ըստ հեղինակի մտահղացման, պետք է ներկայացներ Նահանգի գյուղացիության սոցիալական ընդվզումները վանքերի ու եկեղեցիների դեմ։ Հարցը քննության առարկա է դարձել միջնադարյան Հայաստանի ընդհանուր պատմությանը նվիրված բազմաթիվ աշխատություններում, ինչպես նաև մի ամբողջ շարք հատուկ

ուսումնասիրություններում։ Մյուս կողմից, Սյունիքի հոգևոր առաջնորդ Ստ. Օրբելյանի երկում մանրամասն նկարագրված են Տաթևի վանքապատկան Ցուրաբերդ, Տամալեկ, Ավելադաշտ գյուղերի բնակիչների ապստամբությունները վանական կենտրոնի դեմ, այլ հայեցակետով թափացիկ ակնարկված է պայքարի սոցիալական բովանդակության մասին։ Այստեղ մենագրության հեղինակն առանձին ասելիք չպետք է ունենար, և նա բավարարվում է նորից համառոտակի նկարագրելով Տաթևի դեմ բռնկված ընդվզումների դրվագները, դրանք դիտելով իբրև թոնդրակյան սոցիալական շարժման յուրատեսակ դրսևորումներ։ Այս կապակցությամբ հեղինակն առաջարկում է պատմա-բանասիրական մի քանի լրացումներ և շտկումներ (օրինակ՝ Ստ. Օրբելյանի հայտնի վկայության՝ Ջավախիշվիլու մեկնաբանության շտկումը—էջ 230)։

Խրախուսելի են հեղինակի փորձերը ստուգաբանելու և որոշելու Սյունիքի մի շարք գյուղերի տեղագրությունը, որ նա կատարել է այդ հարցին նվիրված առանձին հոդվածում։ Սակայն Ցուր=Սվարանց նույնացումը պարզունակ է թվում և անհամոզիչ ոչ միայն հնչյունական անհամապատասխանությունների առումով, այլև նրանով, որ հեղինակը այդ նույնացումն անելուց առաջ իր համար դեռ չի պարզել, թե որ գյուղի մասին է խոսքը՝ Ցուր, Ցուրաբերդ, Ցուրագետ, թե Ցուրավանք, քանի որ Օրբելյանի երկում սրանք հիշատակվում են ինքնուրույնաբար և նրանց նույնացումը կամ տարբերակումը այնքան էլ հստակ չէ։

Իբրև գրախոսվող ուսումնասիրության կարևոր արժանիք նշելի է նրա աշխույժ շարադրանքը և հստակ հայերենը, որ չնայած մի շարք օտարլեզվյան բառերին ու անհաջող ձևակերպումներին, ընդհանուր առմամբ ընթերցվում է հետաքրքրությամբ։

Գրիգորյանի գրախոսվող աշխատության մեջ մենք նկատել ենք նաև մի շարք թերություններ, փաստական անճշտություններ և աղբյուրների ոչ իրական մեկնություններ, որոնցից առավել կարևորները ներկայացնում ենք այստեղ, նպատակ ունենալով օգնելու ինչպես ընթերցողներին, այնպես էլ հեղինակին։ Առաջին դիտողությունը վերաբերում է աշխատության մեջ վկայակոչվող աղբյուրների, հատկապես վիմագրերի մեկնաբանությանը։ Գրքի տարբեր էջերում (16, 18, 19, 115) հեղինակը հավաստիացնում է, որ Սյունիքի խոշոր վանքերի վիմական բնագրերը անձամբ ստուգել և անհրաժեշտ դեպքերում վերծանել, հավաքել է։ Իմանում ենք նաև, որ նրա ձեռքի տակ են եղել Ս. Բարխուդարյանի տպագրված և անտիպ նյութերը (հատկապես «Դիվանի» II, III պրակները), ինչպես նաև ՀՍՍՀ ԳԱ հնագիտության ինստիտուտի արխիվում պահվող մյուս բնագրերը։ Սակայն, չնայած հիշյալ վստահելի կամ ստուգելի նյու-

թերին, Գրիգորյանը այդ բնագրերը մեջ է բերում ոչ թե գիտական, նույնական վերծանություններից, այլ անցյալ դարում կատարված ոչ գիտական, աղավաղված ընդօրինակություններից, որի հետևանքով պարզ փորագրված, դյուրին կարդացվող բառերն ու տերմինները շրջանառության մեջ են մտել իբրև այլափոխված տառակույտեր, անիմաստ բառաբեկորներ, անիրական տեղանուններ կամ անձնանուններ։ Այսպես, 106 էջում իբրև խոշոր նվիրատվության օրինակ, զետեղելով Նորավանքի 1292 թ. մի բնագիր, Գրիգորյանը վերջինիս հեղինակ է համարում Տարսայիճին և Մինախաթունին, այնինչ Տարսայիճը այդ ժամանակ կենդանի չէր, և նվիրագիրն էլ փորագրված է նրա հիշատակին։ Թե ինչ աղավաղումներով է ներկայացվում բուն արձանագրությունը, կարելի է պատկերացնել հետևյալ համեմատությունից.

Փորագրված է քարի վրա («Դիվան», III, էջ 238)	Տպագրված է Գրիգորյանի գրքում (էջ 106)
Մինախաթունիս, արքաին, մեծազգի զՆորպետին այգին	Մինայխաթունիս, արքային, մեծարգ զՆորբերդին այգին
Բնաշահ ռաճն ու իր Պազումին այգին	բնաշահու, Անեուէլրգումին այգին
Ալպէկին այգին	Ալբեգին այգին
տեղն :ԺԲ: գրվի	տեղն ԺԲ գրբի
վասն հոգեց արքաաշուէ տն իմո Տարսաինին	վասն հարկից արքայաշուէ տն իմոյ Տարսայինին

Մինչև այս անորոշ բառերը գրելուց առաջ հեղինակը չի մտածել, թե ինչ կարող են նշանակել բնաշահու, Անեուէլրգում, վասն հարկից տառաշարքերը կամ ինչքան հողատարածություն է «տեղն ԺԲ գրբի»:

Ցույց տալու համար, որ միջնադարում գյուղերում ջրերը վարելիս է եղել երեցը գեղջավագի մասնակցությամբ, Գրիգորյանը վկայակոչում է Կոշի մի վիմագիր, որի համաձայն իբր թե «ջրի համար ծագած վեճերը լուծող «դատաւորն աւագերէցն» է եղել, և որ այդ դատաւոր աւագերեցը դատը վարել է «երդվյալ տանուտերերի ներկայությամբ» (էջ 204)։ Կոշի տաճարի հիշյալ բնագրում հեռավոր ակնարկ անգամ չկա Գրիգորյանի մեջբերածի մասին, և այդ բոլորը անհիմն հորինվածք է։ Որպեսզի պարզ դառնա, թե հեղինակը ինչից ինչ է հորինել, տալիս ենք այդ բնագրի նոր ընդօրինակությունը. «Շժ թվականիս (Գրիգորյանի գրքում ՇՄ—1101 թ. է) ես՝ հայր Յոհանէս բազում աշխատուքք Մաղա-

տին երդուեալ Կոշա տանուտէրաւքս, դատաւորն, աւագէրեցն, մանկեւագն թափեցին զբնաշուր առուն...»[1]:

Չխորանալով այս կարևոր վավերագրի մեկնության մեջ, նկատենք միայն, որ այստեղ խոսքը ոչ թե երդվյալ տանուտերերի ներկայությամբ ավագերեցի վարած դատի մասին է, այլ երբեմն վանքին պատկանած բնաշուր առուն թափելու, այսինքն փրկագնելու մասին, որ գլուխ են բերել բնագրում թվարկված պաշտոնյաները։ Հիմնվելով Ցաղացքարի նվիրագրերից մեկի վրա, հեղինակը այն միտքն է հայտնում, թե 1250 թ. Տարսայիճը «վանքի կրոնավորներին նվիրում է Հողակտոր Գառնի գյուղում և Մաճռակաձորի այգին» (էջ 103)։ Ցաղացքարի այս բնագիրը թվագրի և տեղանվան մասում փոքր-ինչ եղծված է, սակայն Ստ. Օրբելյանի երկում պահպանվել է նրա ազատ շարադրանքը, ըստ որի Տարսայիճը «ետ և ի վանսն Ցաղացքարոյ գիւղ ի Գեղաքունի զԳառնակերն և այգի մի ի Մաճռակայ ձորի» (էջ 311)։ Ուրեմն՝ նվիրվել է Գառնակեր գյուղը և Մաճռակաձորի այգին, մինչդեռ Գրիգորյանը մի քանի անգամ մեջ բերելով վիմագիրը և Օրբելյանի հատվածը, դրանք տարբեր նվիրագրեր է համարում, կարծելով, թե նվիրվել է թե՛ Գառնակեր գյուղը, թե՛ հողակտոր Գառնիում (էջ 48, 61, 83, 103)։ Բացի դրանից, անբացատրելի է արձանագրության տարեթիվը՝ 1250։ «Վիմական տարեգրում» (էջ 94) և Բարխուդարյանի վերծանության մեջ («Դիվան», III, էջ 149) թվագիրը Ջ (1251) է, սակայն Բարխուդարյանը փորագրման ժամանակը իրավամբ դնում է 1273 թվականից հետո, գտնելով, որ թվագրի մեջ պակասում են տասնավորն ու միավորը։ Թանատի վանքին ընծայված կալվածքները Գրիգորյանը ներկայացնում է ըստ «Վիմական տարեգրի» խիստ աղավաղված և անորոշ. «զխալն, բղանին հողերներ Դ հառովն և թմբերովն» (էջ 102—103), ըստ այսմ, խալ և բղանին հողերներ (՞) անորոշ բառերը հասկացվել են տարբեր կալվածքներ, մինչդեռ քարի վրա պարզ կարդացվում է՝ «զխալին Բղալանին հողերն իւր Դ հառովն եւ թմբերովն» («Դիվան», III, էջ 80), այսինքն՝ նվիրվել է խալին Բղալան վայրում գտնվող հողերը իրենց սահմաններով։ Զգալի տարընթերցումներով և աղավաղումներով են ներկայացված նաև գրքի 47, 50, 54, 55, 103, 104 էջերում զետեղված վիմական արձանագրությունները։

Մետրապոլիտ Ստ. Օրբելյանի՝ Արատեսի վանքին հատկացրած գյուղերի անունները հեղինակը մեջ է բերում զգալի աղավաղումներով, թեև դրանք վերցված են «Դիվան», II, էջ 126-ից. ըստ այսմ, բնագրում պարզ կարդացվող Կիտանոցը դարձել է Կթանոց, Փառակունիքը՝ Փառա-

[1] «Բանբեր Երևանի համալսարանի», 1972, № 3, էջ 239—240։

գուեի, Շիկակարբը՝ Շիկարբ, Քաւթարանցը՝ Քաւթարեանց (էջ 50, 260, 265)։ Վանանդի Ս. Խաչ վանքը դարձել է Խաչիկ վանք (էջ 176, 260, «Այրարատ» 88)։ Հետևելով հնագետ Հ. Եղիազարյանին, Գրիգորյանը Ցաղացքարի հնագույն եկեղեցու կառուցումը դնում է X դ. սկզբին, Սմբատ Բագրատունու օրոք (էջ 48), մինչդեռ Ստ. Տարոնացու երկում էջ 176), որտեղից քաղված է տեղեկությունը, հուշարձանի շինության ժամանակը համարվում է X դ. առաջին կեսը, Աբաս թագավորի և Անանիա Մոկացի կաթողիկոսի ժամանակ։

Թե ինչ լրջությամբ է հեղինակը մոտենում առնչվող վիմագրերի վերծանությունների հավաստիությանը, կարելի է գաղափար կազմել հետևյալ օրինակից. գրքի 46 էջում զետեղելով Թանատի վանքի նվիրատվական արձանագրության շատ հստակ լուսանկարը, հեղինակը ջանք չի թափել գոնե վերծանելու այն կամ ստուգելու «Դիվան» III, էջ 77 բնագրի հետ և նրա բովանդակությունը մեջ է բերել նախորդ աղավաղ հրատարակությունից, որի հետևանքով նվիրատուի անունը՝ Հասիկ ներկայացվել է Յուսիկ, նվիրված ունեցվածքը՝ ասարանոց կանոնավոր ձևի փոխարեն արդի բարբառային սրանոց (էջ 120)։ Սակայն միայն «Վիմական տարեգրից» բերվող վիմական բնագրերը չեն, որ ներկայացվում են անիրական, աղավաղված վերծանություններով։ Նույնն է վիճակը նաև ըստ ամենայնի գիտական, ստուգելի հրատարակություններից վկայակոչված բնագրերի մեկնություններում։ Ամեն ինչից երևում է, որ հեղինակը լինելով պատմաբան-վիմագրագետ, ոչ մի չափով չի հաղթահարել արձանագրությունների վերծանության և մեկնության հետ կապված դժվարությունները։ Նշենք այս կարգի անճշտություններից մի քանիսը. «Դիվան»-ի III, էջ 220-ից մեջ բերելով Ջուրջի թոռ Ամիրայի 1291 թ. նվիրագիրը, հեղինակը նվիրված ունեցվածքը համարում է 23 ջորի (էջ 110), մինչդեռ բնագրում երկիցս նշված է միայն 3 (Գ) ջորի։ Սխալ է հասկացվել խաթունի՝ Նորավանքին ընծայած արժեքները՝ 300 սպիտակ և Արփայում գնեվող այգին (էջ 104), մինչդեռ ըստ բնագրի («Դիվան» III, էջ 223) նվիրվել է միայն այգին, իսկ 300 սպիտակը հիշատակվում է խաթունի գնած և վանքին նվիրած այգու արժեքը շեշտելու համար։ «Դիվան» III 246 էջից մեջ բերելով Նորավանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսի շատ կարևոր բնագիրը, Գրիգորյանը Բարխուդարյանի մեծատառերով հրատարակածը դարձնում է սովորական, այսինքն՝ բացահայտում է անձնանուններն ու տեղանունները, միաժամանակ թույլ տալով մի շարք անճշտություններ, որոնց հետևանքով Սյունիքի վանական կալվածատիրության համար խիստ ուշագրավ այս վավերագիրը կորցնում է իր հավաստիությունը (էջ 121)։ Այսպես, հյուրատանը տրված

արժեքների շարքում նշվում է. յԱկոռի՝ զնծանադուռնն, որից չի իմացվում, թե ինչ է նվիրվել Ակոռի գյուղում, միթե մի ննձանի դուռ (=ընծանադուռ), մինչդեռ Բարխուդարյանի մոտ Ընծանադուռն դրված է գլխագրով, տեղանուն է։ Նույն ձևով յԱնապատ՝ զթզենին, ըստ Գրիգորյանի տրվում է մի թզենու ծառ, այնինչ Թզենին նույնպես տեղանուն, այգու անուն է։ Բնագրում պարզ տպագրված է. Ի Վէդէ՝ զպարոնին գնած բաժինն հող, ի Նրբոյն՝ զՄարդական Փորակ, Գրիգորյանն արտագրել է. Ի. Վէդէ՝ զՄարդական փորակ..., ուրիշ ոչինչ։ Այստեղ հեղինակը անտեսել է, որ Նրբոյն Նորավանքի գյուղերից մեկն է, որի Մարդական Փորակ դաշտամասը հատկացվում է հյուրատանը։ Մնացել են չբացահայտված այս բնագրում այլ կալվածքների շարքում հիշատակված մարդկանց անունները՝ «տուի ի ճիւանոցս... զԹումաին, զՍվանիսին եւ զՊետրոսին...»։ Ով ծանոթ է հայ վիմագրությանը, կնկատի, որ այդ երեք անձերը Նորավանքին պատկանող ճորտ-շինականներ են, որոնք ամրացվում են վանքի հյուրատանը։ Գրիգորյանն արտագրելով այս անունները, դրանց ճորտեր չի համարում, քանի որ նրան Սյունիքում ճորտեր նվիրելու միայն մի դեպք է հայտնի՝ Սիրանես քարգործին «ճերենիք տուած Աղազար Ըղուերձեցին» (էջ 236)։ Սյունիքի վանական կալվածատիրության մասին հետազոտության հեղինակին պետք է հայտնի լինեին ճորտեր նվիրելու այս և մյուս վկայությունները ևս, հատկապես Գ. Հովսեփյանի մատնանշածը Ջինջիրլուի վանքում[2]։ Շփոթված է Սարգիս եպիսկոպոսի սույն արձանագրության ժամանակը. այստեղ ընդունելով Բարխուդարյանի կարծիքը բնագրի 1273—1290 թթ. արանքում փորագրվելու մասին (էջ 122), այլ առիթով հիշատակելով նույն բնագիրը, մոռանում է այս թվականը և նրա ժամանակը դնում 1251 թ. (էջ 119)։ Ի դեպ, թվարկված վրիպումների մի զգալի մասից հեղինակը կարող էր խուսափել, եթե ծանոթ լիներ բազմաշխատ Գ. Հովսեփյանի մնայուն ուսումնասիրություններին։ Անհավատալի է թվում, որ Սյունիքի կալվածատիրության մասին գրողը կարող էր շրջանցել «Խաղբակյանքի» հեղինակի կուտակած ծովածավալ փաստական նյութերը նահանգի վանքերի, նրանց բարձր դպրոցների, հենց վանական սեփականատիրության մասին։ Այսպես, Ջինջիրլուի վանքի հիմնադրման ժամանակը Գրիգորյանը դնում է 1254 թ. (էջ 33), մինչդեռ վանքի մասին Գ. Հովսեփյանի մենագրության մեջ այդ թվականը ըստ շինարարական արձանա-

[2] Գ. Հովսեփյան, Տարսայիճ Օրբելյանի և Մինախաթունի սերունդը, Անթիլիաս, 1947, էջ 18։

գրության ՉԾ (1303) է[3]։ Հայտնի է, որ Գ. Հովսեփյանը մանրամասն ներկայացնում է Սյունիքի մեջ մտնող Կուքի, Օծոփի, այլև Սպիտակավոր վանքերի անցուդարձը, Գրիգորյանի գրքույկում սրանց մասին ակնարկ անգամ չկա, հարևանցի հիշված է լոկ Սպիտակավոր եկեղեցին (45), որը, չգիտես ինչ աղբյուրի հիմամբ, տեղադրվում է Թանատի վանքից 1—2 կմ հեռու (պետք է լինի՝ 13—14 կմ), այն էլ Գոռշաբերդի փեշերին(՞)։

Իբրև ընդհանուր կանոն, հեղինակը չի ճանաչում իր առկոչած վիմագրերը, ինքնուրույն չի վերծանում կամ ստուգում դրանք և նրանց մասին դատողություններ է անում ոչ նույնական, անստույգ վերծանությունների հիմամբ։ Գրքի 81 էջում հեղինակը նշում է, որ Նորավանքի նավակատիքին ըստ վիմագրերի մասնակցել և ընծաներ է արել իշխան Բուպակը։ Այս առթիվ հղվում են «Վիմական տարեգիրը» և «Միսականը», որպես թե տեղեկությունը քաղված է վանքի վիմագրերից։ Հեշտությամբ պարզվում է, որ Նորավանքում Բուպակի անունով արձանագրություն չկա և չի եղել, ըստ որում Ալիշանը, իսկ նրանից «Վիմական տարեգիրը» Բուպակի տվյալ կալվածագիրը (վճիռ արձանի) արտագրել են Ստ. Օրբելյանի երկից և ոչ թե վիմագրերից։

Թեև հեղինակը քանիցս հավաստիացնում է, որ լինելով Սյունիքի վանքերում, անձամբ վերծանել, ստուգել է բնագրերը և ունի իր սեփական հավաքածուն, սակայն աշխատության մեջ այդ հավաքածուի նյութերին չենք հանդիպում։ Միայն 115 էջում ակնարկում է Արծվանիստ գյուղի մի խաչքարի արձանագրության մասին, որն իբր չի հրատարակված և մեջբերվում է սեփական հավաքածուից։ Գրիգորյանը չի բերում բնագիրը, այդ գրքի 47 և 115 էջերում վերապատմում է նրա բովանդակությունը՝ երկու առանձին հուշարձանների վերագրելով այն, ըստ որում առաջին դեպքում թվականը 1273 է, երկրորդում՝ 1281։ Ահա վերջինիս բովանդակությունը ըստ հեղինակի. «խաչքարի վրա փորագրված է 1281 թ. մի արձանագրություն, որի համաձայն Տարսայիճ Օրբելյանին հպատակվող տեղական իշխանները Վանեվանին հատկացնում են երկու գյուղի սահման իրենց կիրակնաչրով»։ Գրեթե նույնն է ասվում 1273 թ. խաչքարի մասին։ Այստեղ քանի բառ, այնքան սխալ կա. նախ Արծվանիստի խաչքարը և նրա բնագիրը մեկն է, այն էլ թվագրված ՉԼԴ (1285 թ.), ապա այն բոլորովին էլ անտիպ չէ, այլ գիտականորեն հրատարակված է երկու անգամ՝ 1964 թ. Ս. Բարխուդարյանի հայտնի հոդվածում և վերջերս «Դիվանի» IV պրակում, որի նյութերին Գրիգորյանը

[3] Նույն տեղում, էջ 16—17։

ծանոթ է եղել։ Սակայն ամենաանհասկանալի աղճատումը տեղի է ունեցել բնագրի բովանդակության հետ. պարզիպարզո ասենք, որ այստեղ վանքին իրենց ջրով երկու գյուղեր նվիրելու մասին ոչինչ չի ասված, և սա նվիրատվական արձանագրություն չէ։ Խաչքարը սահմանային կոթող է, կանգնեցված երկու գյուղերի սահմանում և նրա երեսին փորագրված է շրջակա գյուղերի միջև ջրօգտագործման կարգը սահմանող պայմանագիր[4]։ Մի՞թե վիմական բնագրերի այսպիսի վերծանությամբ հնարավոր է իրական պատկերացում կազմել Սյունիքի վանական կալվածատիրության մասին։

Մատենագրական վկայությունների մի մասը նույնպես արժանացել է վիմագրերի բախտին. այստեղ ևս հանդիպում են բազմաթիվ անիրական մեկնություններ, ճիշտ չընկալված մտքեր։ Նշենք դրանցից երկուսը. Սևանա վանքի ժամանակագրությունը տալիս Գրիգորյանը նշում է, թե «Գագիկ թագավորը Սևանա վանքի միաբանության հետագայում նվիրեց նաև Շողագա եկեղեցին» (էջ 36), որպես թե այս տեղեկությունը հայտնում է Ստ. Տարոնացին իր երկի 259 էջում։ Բայց պատմիչը այդպիսի անհեթեթ բան չի ասում, այլ՝ «Իսկ Գագիկ յաւուրս մանկութեան իւրոյ յորժամ շրջէր նա ի գաւառին Գեղամայ տայ նմա (Սևանա վանքի վանական Սարգսին—Ս. Ա.) տեղի և վանս բնակութեան զվանսն, որ յաղագս ծագման իւիք լուսոյ աստուածայնոյ՝ Շողագայ անուանի», ըստ այսմ, երիտասարդ Գագիկը Սարգսին տալիս է Շողագայ վանքը, այսինքն նրան դարձնում է այդ վանքի վանահայր։ Իբրև միջնադարում վանքերը հափշտակելու և ապա ետ վերադարձնելու մասին վկայություն, հեղինակը մատնացույց է անում Ստ. Օրբելյանի հետևյալ նախադասությունը. «զՆորաշինիկ և զՁեռատիվանս այլ ի Տաթևոյ սուրբ նշանս դարձուցի իմ թագաւորիս Սեննեքերիմայ հրամանաւ» (էջ 68)։ Գրիգորյանը այստեղ իբրև ետ վերադարձվող վանք է դիտել Ձեռատիվանք գյուղը, մոռանալով, որ սույն գրքույկի 127 էջում նույն տեղանունը գյուղ է համարել։

Սյունիքի խոշոր վանքերի սեփական գյուղերի ցուցակը իբրև տեղեկատու աղբյուր կարևոր նշանակություն կարող էր ունենալ նահանգի վանական սեփականատիրության այլևայլ հարցեր լուսաբանելու առումով, սակայն աշխատության 59—61 էջերում զետեղված այդ ցուցակը զգալի չափով թերի է, հավաստիությունից զուրկ և այս տեսքով

[4] Ս. Բարխուդարյան, Դիտողություններ և նոր նյութեր Հին Հայաստանի ոռոգման գործի վերաբերյալ («Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության» ժողովածու), Երևան, 1964, էջ 267, հմմտ. «Դիվան», IV, էջ 125։

չի կարող քիչ թե շատ իրական պատկերացում տալ վանքապատկան տիրույթների մասին։

Նշում ենք այդ ցուցակում մեր նկատած վրիպումները. Տաթևի վանքըն ըստ Գրիգորյանի ցուցակի մինչև 13-րդ դարը ունեցել է 32 գյուղ, բայց այս քանակից դուրս են մնացել Ձետատիվանճ (239)[5], Յուրագետ (157), Գոտողվանճ (167), Կոկոյճ (167), Ծացարդ (167), Քարատճիճ (167), Եղեգճ (167), գեղ ի Բարկուշատի (242), Գրուակ (224) գյուղերը։ Սրանցից մի քանիսը այլ առիթներով հիշված են Գրիգորյանի գրքում, մնացածները բնավ հայտնի չեն հեղինակին։ Գողեվան կամ Գողեվանճ գյուղը (223, 224) մեկ կայված է համարված (էջ 259), մեկ գյուղ՝ Գողեան անհարկի «սրբագրումով» (126)։ Շողագա վանքի 2 սեփական գյուղերից մեկը չկա ցուցակում, դա համանուն գյուղն է, որ իշխանուհի Մարիամը «գնեալ ի հազարացի մարդկանէ ընդ 60.000 դրամի» (127), նվիրել է իր կառուցած վանքին։ Վանեվանի գյուղերի քանակը՝ 5, վերցված է Ստ. Օրբելյանից։ Թվում է, ավելի հավաստի է արձանագրությունը, որտեղ պարզ փորագրված է «Դ (4) գեղո սահման» (չկա Աղարոյ վաճճ գյուղը— «Դիվան», IV, 122), քանի որ պատմիչը այս տեղեկությունը քաղել է Վանեվանի տաճարի արձանագրությունից։ Այս վանքի գյուղերի ցանկից դուրս է թողնվել Դեղձանագետը (133)։ Վահանավանքի 3 գյուղերի անունները Օրբելյանի երկի այդ մասում աղավաղված են, սակայն բարեբախտաբար դրանք գրության որոշ տարբերություններով հիշատակված են հարկացուցակում, Բաղքի գյուղերի շարքում, ըստ այսմ կա՛մ գյուղերը 3 են՝ Աշաղու (ոչ թե Աշաղուագետ), Գետառավայր (ոչ թե Առավայր), Շէկճ, կա՛մ գյուղերի քանակը համարելով 4, դրանք կլինեն՝ Աշաղու, Աշաղուագետ. Առավայր, Շէկճ: Գրիգորյանը անվերապահորեն ընդունելով Մ. Էմինի անստույգ ընթերցումը, գյուղերի քանակը համարում է 3 (Աշաղուագետ, Առավայր, Շէկճ) և նույնիսկ փորձում տեղագրել դրանք, առանց Օրբելյանի երկի մյուս հրատարակությունների միջոցով պարզելու գյուղերի իրական քանակն ու անվանումները։

Նորավանքի գյուղերի թվում Գճիշիկաձորը չպետք է լիներ, քանի որ ըստ վիմագրի ընծայվել է ոչ թե այդ գյուղը, այլ՝ «այգին ի Գճիշակաձոր» («Դիվան» III, № 693)։ Այստեղ հիշատակված Փողաճաճճ գյուղ գոյություն չունի (301, 360), Օրբելյանի նվիրագրում կա Փոշաճաճճ, բայց սա գյուղ չէ, այլ գավառակ, քանի որ ասվում է «Ի Փոշաճաճճն զՍԲ Սաճակ եւ Աբասաշէճ», այսինքն Փոշաճաճճում գտնվող հիշյալ գյուղերը («Դիվան» III, № 685)։ Սեփական գյուղեր ունեցող վանքերի թվում չի հիշված Հերհերի խոշոր սեփականատեր վանքը, որին 1289 թ. Ստ. Օրբելյանը նվիրել է իր «հերենի գեղն զԱկող» («Դիվան» III, № 133)։

Գրախոսվող աշխատության մեջ հեղինակն աշխատում է մեկնաբանել աղբյուրներում հանդիպող մի շարք նոր կամ քիչ ծանոթ բառեր, սակայն այդ անելիս նա չի հետևում ամեն մի ստուգաբանության առաջադրվող ամենատարրական պահանջին՝ հաշվի առնել մինչ այդ ասվածը և ապա առաջարկել սեփականը, ավելին, Գրիգորյանը նույնիսկ ջանք չի թափում աչքի անցկացնելու հայերենի բառարանները կամ տեղեկատու գրականությունը։ Այսպես, Օրբելյանի՝ «տնկեաց բազում այգիս և որբս սօրէկս» (185) հատվածի ընդգծված բառը հասկանում է՝ ձիթատու ճառիկ, ձիթաբույս, գտնելով, որ «Տաթևի վանքը սօրէկի դաշտեր ուներ Յաքուտ վայրում» (119)։ Սակայն հայտնի է, որ սույն սօրէկը ոչ թե մի քանի բարբառներում պահպանված սօրէկ ձիթատու բույսը կամ ճառիկն է, այլ՝ խաղողի բոտիր վազ (որբս սօրէկս). ուրեմն Յաքուտում խաղողի այգիներ են տնկվել և ոչ թե սօրէկի առտեր: Անդրադառնալով Կաղանկատվացու երկում վկայված վասմ եկեղեցի կապակցությանը, Գրիգորյանը առաջ է քաշում վասմ բառի իր մեկնությունը, ըստ որի «վասմ բառը հավանաբար աղվաներեն է և նշանակում է գլխավոր» (56)։ Միթե նա չգիտի, որ վասմ բառը հայկական բառահիմքի վրա սպառիչ ստուգաբանված է հայերենի բոլոր բառարաններում և Կաղանկատվացու երկի թարգմանություններում, ըստ որում, այդ բացատրությունը դեռևս որևէ առարկություն չի հանդիպել։ Ավելին, նույնիսկ Կաղանկատվացու երկում հայտնի նպատակներով աղվանիզմներ որոնողները վասմ-ը աղվանիզմի օրինակ չեն համարել։ Իր նոր «ստուգաբանությամբ» Գրիգորյանը մի քայլ առաջ է անցնում աղվանիզմներ որոնողներից և առանց որևէ հիմքի բնիկ հայերեն վասմ բառը (=վէս, վսեամ, վսեմ) համարում աղվաներեն։ Աշխատության 102 էջում մեջ բերելով «եւ՝ Դաւիթ եւ Միրան զաւզաճճ տվաճ» («Դիվան», II, 109) հատվածի շարադրանքը, ընդգծված բառը բացատրում է «ջրից օգտվելու համար ճատուկ ճարկ», լռելյայն հասկացնելով, որ այդ մեկնությունը ինքն է կատարել։ Հայ վիմագրությանը ծանոթ ամեն ոք գիտի, որ աւզաճ=արզաճ միայն վիմագրերում վկայված հարկային տերմինի գյուտը, նրա ստուգաբանությունը և մեկնությունը պատկանում են Ս. Բարխուդարյանին, որը հատուկ ու-

[5] Փակագծերում նշվում են Ստ. Օրբելյանի «Պատմության» 1861 թ. մոսկովյան հրատարակության էջերը։

ուսումնասիրություն է նվիրել այդ հարցին[6]։ Քանի որ արգաճ տերմինի վկայությունների մեծ մասը Սյունիքում է, սպասելի էր, որ նահանգի կալվածատիրության մասին գրող հեղինակը փորձ կկատարեր ներկայացնելու այդ ջրահարկի դրսևորումները, ո՞ւմ օգտին, ի՞նչ կարգով, ի՞նչ հողամասերից կամ ցանքերից հարկումը, սակայն այս բոլորը, որ մասնակիորեն շոշափված է Բարխուդարյանի հոդվածում, չենք գտնում Գրիգորյանի աշխատության մեջ։

Գ. Գրիգորյանի «Սյունիքի վանական կալվածատիրությունը IX—XIII դարերում» մենագրությունը օգտակար կարող է լինել միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային պատմության ուսումնասիրողների համար, եթե հաշվի առնվեն ու շտկվեն աշխատության մեջ տեղ գտած և մեր կողմից նշված փաստական անճշտությունները, վրիպումները և չհիմնավորված եզրակացությունները։

Բ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Ա. Ա., Քննություն Հայաստանի IV—IX դարերի շինարարական վկայագրերի, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1977, 254 էջ*։

Հայ դասական ճարտարապետության կոթողների ժամանակագրությունը կարևոր նշանակություն ունի բազմադարյան ճարտարվեստի հորինվածքների ու ձևերի ամբողջական պատմությունը շարադրելու համար։ Հայ ճարտարապետական մշակույթի առաջին հետազոտողները՝ եվրոպացի արվեստաբանները, հուշարձանների կառուցման ժամանակը որոշելիս սովորաբար հիմք էին ընդունում նրանց գեղարվեստաճարտարապետական վերլուծության տվյալները, անտեսում կամ պատշաճ ուշադրություն չէին դարձնում արձանագրություններին կամ մատենագրական տեղեկություններին։ Սա արդյունք էր հայկական հնագրության, հատկապես արձանագրագիտության ոչ բարձր մակարդակի. չկար հայ հնագրության քիչ թե շատ ամբողջական նկարագրություն, չկային բնագրերի գիտական վերծանություններ։

Դրությունը արմատապես փոխվեց, երբ XX դարի սկզբին հրապա-

[6] Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 275—277։

* «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4։ Գրախոսությունը հրապարակված է Պ. Մ. Մուրադյանի հեղինակցությամբ, նշանակալի կրճատումներով։—Խմբ.:

րակ եկան հայ գիտական հնագրության ու վիմագրագիտության հիմնադիրներ Հ. Տաշյանի, Ն. Մառի, Հ. Օրբելու, Գ. Հովսեփյանի, Կ. Բասմաջյանի աշխատությունները։ Վերջին տասնամյակներում հայ վիմագրության երախտավորներ Ս. Բարխուդարյանի, Կ. Ղաֆադարյանի ջանքերով վիմագրերը, նաև հնագույն շինարարական բնագրերը, ճշգրիտ վերծանություններով հրատարակվեցին առանձին ժողովածուներում։

Չնայած հայ արձանագրագիտության կուտակած մեծածավալ ու վստահելի նյութին, վիմական բնագրերը դեռևս անհրաժեշտ չափով չեն օգտագործվում հատկապես հնագույն անթվակիր կոթողների ժամանակը որոշելիս, իսկ մի շարք դեպքերում անհիմն, երբեմն նաև միտումնավոր կերպով կասկածի տակ է դրվում նրանց սկզբնականությունը։

Վիմագրագետ Ա. Մանուչարյանի գրախոսվող մենագրությունը գալիս է մասամբ լրացնելու հայ ճարտարվեստի շինարարական վկայագրերի՝ վիմական ու մատենագրական վկայությունների ամբողջական, համակարգված ուսումնասիրության բնագավառում առաջացած բացը։ Այստեղ հավաքված, քննված, մեկնաբանված են պատմական Հայաստանի տարածքի վրա պահպանված IV—XI դարերի շինարարական կամ նորոգման արձանագրությունները։ Դրանք, համադրված գիտական աղբյուրների տեղեկությունների հետ, նպատակ ունեն վերականգնելու հորինվածքների ու ձևերի հնարավորին չափ ամբողջական ժամանակագրությունը։

Շինարարական վկայագրերի քննությունը առաջ է տարվում ըստ հայկական ճարտարապետության զարգացման առավել ամբողջական փուլերի հաջորդականության։ Առանձին բաժիններում հետազոտվում են նաև IV—V, ապա VI—VII և IX—XI դդ. վիմագրերը։ Քանի որ քրիստոնեական մշակույթի ձևավորման նախնական շրջանում եկեղեցական ու աշխարհիկ շինարվեստի հորինվածքային ձևերն ընդհանուր են եղել, դրանց վկայագրերը հետազոտվում են անկախ տարածքային բաժանումից։ Այս դարերից մեզ են հասել հատուկենտ վիմագրեր, որոնցից Մանուչարյանը շինարարական է համարում միայն Տեկորի տաճարի արձանագրությունը, մյուսները՝ Ավանի, Եղվարդի, Օձունի, Զովունիի հնագույն հիշատակությունները, նրա կարծիքով ոչ մի ձևով չեն առնչվում այդ հուշարձանների շինարարությանը։ Նախնական վիմագրերի պակասը լրացնում են V—VII դդ. մատենագրական աղբյուրները (Խորենացի, Ագաթանգեղոս, Բուզանդ, Փարպեցի, Սեբեոս), որոնցում արժեքավոր տեղեկություններ կան հատկապես քրիստոնեության տարածման ու պետական կրոն հռչակելու տարիներին պատմական Հայաստանի տարածքում պաշտամունքային շենքերի կառուցման մասին։ Հեղինակը հըմ-

տությամբ քաղել, արժեքավորել ու մեկնաբանել է պատմիչների այս կարգի հիշատակությունները, աշխատել դրանց միջոցով վերականգնել IV—V դդ. շինարարական արվեստի ամբողջական պատկերը։ Աշխատության այս բաժնում զգալի տեղ է հատկացված նոր կրոնի պահանջներին համապատասխանող եկեղեցական շենքերի հորինվածքների առաջացմանը, նաև նախկին բազիլիկային շինությունները վերակառուցելու և քրիստոնեական արարողություններին հարմարեցնելու քննությանը։ Ճարտարապետական-գեղագիտական հանգամանալի վերլուծության են ենթարկվել հնագույն գմբեթակիր (Տեկոր, Արթիկ), ինչպես նաև խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցիների (Էջմիածնի Մայր տաճար) հորինվածքները, որոնց հետագա զարգացմամբ VI—VII դդ. կառուցվեցին Ալամանի, Զագավանի, Բագարանի, Մաստարայի տաճարները։

Մանուչարյանը օգտագործել է վիմագրերի նախկինում կատարված առավել հավաստի ընթերցումները, երբեմն էլ, մերժելով եղածները առաջարկել նոր, իր կարծիքով ավելի ստույգ վերծանություններ։

Հայ ճարտարապետության պատմության գիտակների համար նորություն է Երիցավանքի, Արագածի, Ակոռիի եկեղեցիների հորինվածքների նկարագրությունը, որ Մանուչարյանը տալիս է տեղում կատարած հետազոտության կամ պատմիչների տեղեկությունների հիման վրա։

Հեղինակը տեղյակ է VI—VII դդ. կառուցումների մասին մատենագրական վկայություններին, հայ ճարտարապետական արվեստի մասին օտար և հայ հետազոտողների արտահայտած հաճախ իրարամերժ տեսություններին և աշխատում է նոր տվյալներով հիմնավորել ու հաստատել եղած իրականը, հավաստին, հաճախ էլ հերքելով անընդունելին, ներկայացնում է իր պատկերացումները ճարտարապետական նոր հորինվածքների ու ձևերի առաջացման, հների վերափոխությունների վերաբերյալ։

Վիմագրերը մեծ մասամբ գիտականորեն հրատարակված են «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի հատորներում և Մանուչարյանի խնդիրն այստեղ ավելի դյուրին է։ Սակայն կան շինարարական վիմագրեր, հատկապես Արևմտյան Հայաստանում, որոնք չունեն ստույգ ընթերցումներ, և նա ստիպված է եղել առկա կցկտուր տեղեկությունները համադրելով վերականգնել մի շարք բնագրեր (Տողուագավանք, Մարաց անապատ, Տիրակավան և այլն)։

Մենագրության մեջ նոր ընթերցումով են ներկայացված Հայկաձորի (985 թ.), Մակարավանքի (1001 թ.), Բջնիի (1031 թ.) շինարարական շատ կարևոր վիմագրերը։ Առանձին բաժնում քննված են Անիի ճարտարապետական կառույցներն ու վիմագիր հիշատակարանները։

Հայտնի է, որ, մի շարք ընդհանրությունների հետ մեկտեղ, Անիի աշխարհիկ և պաշտամունքային շինությունները ի հայտ են բերում հորինվածքային զգալի ինքնուրույնություն ու նոր լուծումներ հատկապես քաղաքի կառուցապատման, կոմունալ շենքերի ու պաշտպանական կառույցների բնագավառում։ Այստեղ ևս հեղինակի ուսումնասիրությանը մեծ նպաստ են բերում Ն. Մառի գլխավորած Անիի հնագիտական արշավախմբի նյութերը՝ պեղված հուշարձանների նկարագրությունները և բոլոր արձանագրությունների լիակատար հավաքածուն՝ Հ. Օրբելու վերծանությամբ։

Ա. Մանուչարյանի մենագրությունը օգտակար կարող է լինել հայ ճարտարվեստի պատմությամբ հետաքրքրվողների համար։

Անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել նաև աշխատության մեջ մեր նկատած թերությունների, փաստական սխալների ու անճշտությունների մասին, կանխած լինելու համար նրանց շրջանառությունը գիտության մեջ։

Մենագրության էական թերությունը վիմական վկայագրերի քննության միակողմանիությունն է, ոչ լիակատար և սպառիչ լինելը։ Իբրև կանոն, հեղինակը տալիս է գիտությանը այս կամ այն չափով հայտնի բնագրերի ընթերցումները և դրանք հիմք ընդունելով, կազմում IV—XI դդ. կառուցվածքների ժամանակագրությունը։ Վիմական վկայությունների հնագրական ու լեզվական առանձնահատկությունների հետազոտությունն ու արժեքավորումը դուրս են մնացել նրա տեսադաշտից։ Մինչդեռ հայտնի է, որ հայ հնագրության ու հին հայերենի այնպիսի գիտակներ, ինչպիսիք են Ն. Մառն ու Հ. Օրբելին, մի ամբողջ շարք հնագույն շինարարական վիմագրերի փորագրումը վերագրում էին ավելի ուշ ժամանակների, հիմք ընդունելով հենց նրանց տառաձևերի հնագրական ու լեզվական առանձնահատկությունները (Տեկոր, Հռիփսիմե, Արուճ, Անիի Մայր տաճար և այլն)։ XX դարի սկզբին անվանի վիմագրագետների այս կարծիքը համոզիչ էր թվում, քանի դեռ հայ հնագրությունն ու հայերենի պատմությունը առաջին քայլերն էին կատարում, և չկային անթվակիր վիմագրերի գիտական, սպառիչ վերծանություններ։ Ձեռնամուխ լինելով շինարարական վիմագրերի քննությանը, Մանուչարյանը պարտավորված պիտի լիներ ցույց տալ, թե հին վիմագրերի տառաձևերը, լեզվական, հնչյունական առանձնահատկությունները որքանով են հիմք տվել նրանց հանգելու այդպիսի եզրակացության։

Սակայն վիմագրերի քննությանը նվիրված այս աշխատության մեջ նրանց հնագրական կամ լեզվական կողմը բնավ չի շոշափված։ Ավելին, գրքում չենք գտնում վիմագրերի ոչ մի լուսանկար կամ գծագիր

պատկեր, որը ընթերցողին քիչ թե շատ պատկերացում տար բուն էության հայերեն առաջին բնագրերի տառաձևերի մասին, կամ ավելի համոզիչ դարձներ առաջարկվող ընթերցումները։ Բացի այդ քննության են ենթարկված Հայաստանի IV—XI դդ. ոչ բոլոր շինարարական վիմագրերը։ Աշխատության մեջ ոչ մի ակնարկ չկա Զովունիի տաճարի որմնամույթին փորագրված արձանագրության մասին, իր հնությամբ երկրորդը՝ Տեկորի հայտնի վիմագրից հետո, որ բոլոր հետազոտողների կարծիքով շինարարական է և վերաբերում է տաճարի գմբեթավորմանը՝ կատարված V դարի վերջերին, կամ VI-ի սկզբներին։ Բնագրի տառաձևերը և Գնթունեաց տէր Գրիգորի հիշատակությունը աներկբայորեն հաստատում են ճարտարապետական խումբը հետազոտող և արձանագրությունը հրատարակող Ա. Սահինյանի կարծիքն այն մասին, որ Գրիգորը տաճարի հովանավորը կամ կտիտորն է, և վիմագիրը ժամանակակից է երբեմնի բազիլիկայի վերակառուցմանը կամ գմբեթավորմանը։

Այժմյան Ստեփանավանի շրջանում պահպանվել են մի քանի հնագույն բազիլիկ շենքեր, որոնց մասին վիմագիր կամ մատենագիր աղբյուրները լռում են։ Բայց ահա դրանցից Վարդաբլուրի լեռնագագաթին տեղավորված պարսպապատ շինությունն ունի ՆՂԹ—1050 թ. շինարարական հույժ արժեքավոր արձանագրությունը, որտեղ ինքը՝ Կյուրիկե I թագավորը պատմում է այն կառուցելու մասին։ Կուրթան գյուղի գերեզմանատանն ընկած խաչքարձանի ՇԼԵ—1086 թ. հիշատակությունը մասամբ շրջագիր գաղտնագրով հայտնում է նույն Կյուրիկե թագավորի օրոք Ս. Գևորգ եկեղեցին նորոգելու մասին։ Այս շինարարական կարևոր բնագրերը դեռ անցյալ դարի սկզբից հայտնի են հայագիտությանը և անհասկանալի է, թե ինչո՞ւ Մանուչարյանի գրքում դրանց մասին ոչինչ չի ասված։

Պատմական Հայաստանի Արցախ և Ուտիք նահանգների IV—XI դդ. կառույցներից կամ նրանց վիմագրերից քիչ բան է հասել մեզ, բայց այդ քիչն էլ, ցավոք, տեղ չի գտել գրախոսվող գրքում։ Այսպես, այժմյան Հադրութի շրջանի Տումի գյուղի կենտրոնում կանգնած է եղել թագավորական ապարանք-հովոց և տուն աստուծոյ, որի ՆԽԹ—1000 թ. արձանագրությունը պահպանվել է անեղծ, հրատարակվել քանիցս։ Գրախոսվող գրքում ոչ մի խոսք չկա այս տաճարի, նրա շինարարական վիմագրի, ընդհանրապես Արցախ-Խաչենի ճարտարապետական արվեստի մասին։ Գրեթե անառարկելի կարծիք էր, որ Սևանա լճի հյուսիս-արևելյան ափերին Մաղրայի 881 թ. խաչքարից բացի այլ հնագույն կամ մինչև XII—XIII դդ. ստեղծված շինություններ չկան։ Սակայն ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրական արշավախումբը 1962—1964 թթ. այս տարածքում հայտնաբերեց մի շարք շենքեր ու վիմագրեր, որոնք թվագրված են ավելի վաղ։ Կարևոր է, օրինակ, Վ. Ճամբարակի հին եկեղեցու մոտ գտնվող խաչքարի ՆՀԷ—1028 թ. շինարարական բնագիրը. Հայ թուականն ՆՀԷ, յանուն ա̅յ ես՝ Պաչու էրէց ծառայ ա̅յ. շինեցի եկեղեցի վասն իմ հոգոյս, եւ կանգնեցի խաչս սուրբ Գրգոր։ Արշավախմբի նյութերը պահվում են ինստիտուտում և անհասկանալի է, թե ինչու դրանք չեն օգտագործվել Մանուչարյանի գրքում։ Սևանի վանքի շինարարական վիմագրերից հեղինակը առանց մեկնաբանության, այլոց պակասավոր վերծանությամբ մեջ է բերել միայն Առաքելոց եկեղեցու ՅԻԳ—874 թ. բնագիրը, բայց նույն եկեղեցու մուտքի կամարին դրանից 29 տարի անց՝ ՅԾԲ—903 թվականին փորագրվել է մի այլ կառուցողական արձանագրություն, որտեղ ոմն Սարգիս հաղորդում է այդ եկեղեցին շինելու մասին։ Թալինի հին տաճարների վկայագրերից քննված է միայն Ներսես Կամսարականի կառուցած տաճարինը։ Կաթողիկե կամ Մեծ տաճարի մասին ոչ մի խոսք չի ասվում, երևի այն պատճառաբանությամբ, որ հուշարձանը կառուցողական վիմագիր չունի։ Ճիշտ է, Թալինի Մեծ տաճարի հիմնադրման արձանագրությունը չի պահպանվել, սակայն բարեբախտաբար մեզ են հասել բագունեաց բագունի Կատրանիդեի X դարի վերջի շինարարական վիմագիրը՝ Կաթողիկեի սալահատակը փոխելու մասին, ինչպես նաև տաճարի ներսի ծեփին ներկանյութով գրված ավելի վաղ ժամանակների խաթարված արձանագրությունը՝ ներսի պատերը որմնանկարելու մասին։ Կատրանիդեի այս կարևոր արձանագրությունը հավանաբար անծանոթ է հեղինակին, այլապես սալահատակը փոխելու մասին վկայությունը կարող էր հուսալի կռվան դառնալ՝ տաճարի հիմնադրման մոտավոր ժամանակը և կառուցողական ձևերը որոշելու համար, ինչպես այդ արվել է սալահատակման առթիվ փորագրված այլ վիմագրերի վերլուծության ժամանակ (Բջնիի տաճար)։

Թալինի Կաթողիկեի հիշյալ շինարարական վկայագրերի մեկնաբանությունը առավել կարևոր է, եթե նկատի ունենանք, որ հայ ճարտարապետության պատմությանը նվիրված որոշ աշխատություններում փորձեր են կատարվում շրջանցելու վիմագրության տվյալները և հուշարձանի կառուցողական ձևերի կամայական վերլուծություններով այն վերագրելու շատ ավելի ուշ ժամանակների։

IV—XI դդ. մի շարք վկայագրեր ներկայացված են սխալներով։ Իբրև կանոն, հեղինակն այդ արձանագրությունները մեջ է բերում ոչ թե սեփական՝ լուսանկարով կամ գծագրով ստուգվող ընդօրինակությամբ,

այլ անցյալում կատարված, հաճախ ոչ այնքան ճշգրիտ հրատարակություններից, նույնիսկ այն դեպքերում, երբ քննվող վիմագրերը դյուրընթեռնելի են։ Նշենք մի քանիսը։ Սևանի Առաքելոց եկեղեցու 874 թ. վիմագիրը գիտությանը հայտնի է 1924 թ. Թբիլիսիի համալսարանի արշավախմբի անդամ Մելիքսեթ-Բեկի վերծանությամբ՝ հրատարակված նախ Մոսկվայում 1939 թ., ապա Երևանում՝ 1940 թ.։ Այս ընդօրինակությունն ընդհանուր առմամբ անհաջող է, թերի, ունի մի շարք անորոշ ու մութ կետեր։ Թվում է, Մանուչարյանը կօգտագործեր առիթը և քննության նյութ կդարձներ իր կատարած նոր, ավելի ճշգրիտ ընթերցումը, սակայն նա այդպես չի վարվել, այլ այս կարևոր վկայագիրը արտագրել է Մելիքսեթ-Բեկի ընդօրինակությունից։

Վահրամ Պահլավունու 1026 թ. շատ ուշագրավ հրամանագիրը՝ փորագրված իր կառուցած Անբերդի տաճարի բարավորին, ցայժմ լիակատար ընդօրինակություն չունի և սպասելի էր, որ պահանջի թելադրանքով այդ կաներ Մանուչարյանը, սակայն նրա գրքում զետեղված է բնագրի աղավաղված և ոչինչ չասող մի ընդօրինակություն։ Ըստ որում, Պահլավունու հրամանագրի քիչ թե շատ հարազատ հրապարակումներից հեղինակն ընտրել է ամենաանհաջողը։

Հիմք ընդունելով բնագրի այս ընթերցումը, Մանուչարյանը, չգիտես ինչու, հավատ չի ընծայում Անբերդի եպիսկոպոսական աթոռը հիմնելու մասին Պահլավունու գրածին՝ շինեցի զկաթողիկես աթոռ հարապետական, գտնելով, որ եպիսկոպոսական նստատեղի է դարձել ոչ թե Անբերդի, այլ Բջնիի եկեղեցին։ Մանրամասների մեջ չմտնելով ասենք, որ հեղինակի այս տեսակետը ոչ մի ձևով չի հիմնավորված։

Աշխատության մեջ մի քանի վիմագրեր ներկայացված են հեղինակի ի նորո կամ մասնակի վերծանությամբ, որոնք սխալաշատ են։ Ահա Մակարավանքի Ս. Սիոն եկեղեցու 1001 թ. շինարարական վիմագրի վերծանությունը.

բստ Մանուչարյանի

5 Ես Սահակ եւ հայր Ան
6 տոնիս քվերորդիս Դաւիթ
7 (քվերորդիս) շինեցաք զվանքս սբ
8 Գեորգոյ եւ զեկեղեցիքս եւ ամ
9 են աղագաւք շեն. ի բարեխաւսութեան
10 մեզ եւ ամենայն հաւատացելոց
11 եւ կիսաւրեա ի Քս փոխեցաւ
12 անբախտ Դաւիթ որ զգրեցի զյի-
13 շատակ եւ

լուսանկարի վրա

5 ես՝ Սահակ հայր եւ Ան-
6 տոն՝ իմ քվերորդիս եւ Դաւիթ՝ մեւս
7 քվերորդիս շինեցաք զվանքս ի
8 կորդոյ եւ զէկեղեցիքս, ի ամ
9 են աղագաւք շէն, ի բարեխաւսութին
10 մեզ եւ ամենայն հաւատացելոց։
11 Եւ կիսաւրեա ի Քս փոխեցաք։ Եւ ես՝
12 անբախտ Դաւիթ, որ չգրեցի զյի-
13 շատակս եւ...

Իրականում Մակարավանքը կառուցել են հայր Սահակը և իր երկու քեռորդիները (Ես՝ հայր Սահակ եւ Անտոն իմ քվերորդիս եւ Դաւիթ՝ մեւս քվերորդիս), մինչդեռ ըստ հեղինակի վանքի շինարարներն են՝ ես՝ Սահակ և հայր Անտոնիս քվերորդիս Դաւիթ: Բնագրում՝ շինեցաք զվանքս ի կորդոյ, հրատարակված է՝ շինեցաք զվանքս սբ Գեորգոյ, վախճանվել են հայր Սահակն ու իր քվերորդի Անտոնը, ըստ Մանուչարյանի՝ միայն մեն Անտոնի քրոջ որդի Դաւիթը: Քարի վրա կարդացվում է ես՝ անբախտ Դաւիթ, որ չգրեցի զյիշատակս, գրքում տպագրված է. Անբախտ Դաւիթ որ զգրեցի զյիշատակս առանց պարզելու, թե ի՞նչ արժեք կարող է ունենալ դիմավոր բայի վրա դրված զ նախդիրը, կամ ի՞նչ է նշանակում զգրեցի (վրիպակ չէ, քանի որ տարիներ առաջ հրատարակած հոդվածում ևս զգրեցի է)։ Չգիտես ինչու ավելորդ է համարված 7-րդ տողի քվերոր-դիս բառը, իսկ հաւոց, կաթողիկոսի, շէն բառերը «սրբագրվել են» հա-յոց, կաթողիկոսի, շեն: Ի կորդոյ հոլովաձևը, որ նշանակում է խոպան, անմշակ, կոշտ, պինդ և տվյալ դեպքում ակնարկում է վանքը ամայի, անբնակ տեղում հիմնադրելու մասին, Մանուչարյանը «վերծանել է» սբ. Գեորգոյ, և այս անունով վերակնքել գիտության մեջ Մակարավանք անունով հայտնի հուշարձանախումբը։ Նա, նույնիսկ, աշխատում է հիմնավորել այդ անվանափոխությունը. իբր Մակարավանք է կոչվել հետագայում, ուշ շրջանի բնագրերում, մինչդեռ իրական անվանումը վկայված է տաճարի մի այլ՝ շինարարականին ժամանակամերձ նվիրագրում։

Բջնիի եկեղեցու XIII դարի շինարարական անեղծ արձանագրությունը Մանուչարյանի գրքում ներկայացված է այնպիսի ընթերցումներով, որոնք նրա իմաստը ոչ մի չափով չեն բացահայտել (167)։ Սխալ է արտագրվել բնագրի թվականը, վանքի Իշխանավանք անունը վերծան-

վել է իշխան-աւան (Իշխանաւանից), այն կառուցող Վահրամ Զաւուշ պատմական անձը, որը իբրև նպաստավորող հայտնի է նաև Թեղենյաց վանքի 1207 թ. մի բնագրից, հեղինակի կամքով վերծանվել է ոմն Վահանի: Բջնիի այս արձանագրությունը համարելով միայն նորոգման, նրա բնույթի մասին Մանուչարյանը գրում է. «Արձանագրության հեղինակը նախ հիշատակում է շինելու, այսինքն վերանորոգելու, այնուհետև նորոգման մասին» (168)։ Հեղինակը չի նկատել, որ բնագրում հաղորդվում է նաև Իշխանավանքի Աստվածածին եկեղեցին շինելու, ապա նաև Բջնիի եկեղեցին սալելու, այսինքն նորոգելու մասին, ուրեմն խոսքը երկու տարբեր հուշարձանների մասին է, և շինել, նորոգել բայաձևերը այստեղ գործածված են իրենց բուն իմաստներով։ Հեղինակի խնդիրը պետք է լիներ որոշել, թե որն է Վահրամ Զավուշի կառուցած Իշխանաւանքը, սակայն նա ուշադրություն է դարձրել բնագրի միայն սալահատակմանը վերաբերող մասին, բոլորովին անտեսելով հիմնականը՝ շինարարականը, որը առանց որևէ հիմքի վերանորոգում է համարված։

Անհամոզիչ է Մրենի շինարարական արձանագրության խաթարված թվականի Մանուչարյանի վերականգնումը՝ հիմնված սոսկ Կիրակոս Գանձակեցու հաղորդած տեղեկության վրա, ըստ որի տաճարը կառուցվել է հայոց ԿԲ—613 թ., Դավիթ Սահառունի մարզպանի օրոք։ Բնագրի այս թվագրման դեմ համոզիչ փաստերով առարկում են Հ. Օրբելին, Ստ. Մնացականյանը՝ տաճարի շինության ավարտը դնելով 630-ական թթ.։

Թալինի Փոքր տաճարի շինարարական անթվակիր բնագրի ժամանակը Մանուչարյանը համաձայնեցնում է Մրենի տաճարի կասկածելի թվագրի հետ, հիմք ընդունելով Ներսեհ Կամսարականի և նրա որդի Հրահատի հիշատակությունը։ Սակայն Մրենի բնագրի անհիմն տեղափոխումը 613 թ. կասկածելի է դարձնում նաև Թալինի Փոքր տաճարի նոր թվագրումը։

Կեչառիսի հնագույն եկեղեցու ՆՁԲ—1033 թ. շինարարական արձանագրության հակասական կնճիռը լուծելու Մանուչարյանի փորձերը ընդունելի արդյունքների չեն հասցրել (168)։ Բնագրում ասվում է, որ եկեղեցին կառուցվել է Գագիկ I թագավորի և Սարգիս կաթողիկոսի օրոք, սակայն 1033 թ. երկուսն էլ կենդանի չէին։ Ըստ հեղինակի, արձանագրությունը նորոգման մասին է, որը կատարվել է 1133 թ., և արձանագրողն է սխալվել՝ ՇՁԲ-ի (1133 թ.) փոխարեն փորագրելով ՆՁԲ (1033 թ.)։ Բայց այս դեպքում ինչո՞ւ են նորոգման արձանագրությունում հիշատակվել ավելի քան մեկ դար առաջ գործած Գագիկ թագավորն ու Սարգիս կաթողիկոսը։

Անհաջող է հեղինակի փորձը ճշգրտելու Տեկորի արձանագրության

ժամանակը։ Բնագրում հիշատակված Մանան հազարապետը, որ վանքի տնտեսն է, առանց որևէ հիմքի պարսիկ է համարվել, մինչդեռ ակներև է, որ հայկական վանական կենտրոնը չէր կարող պարսիկ պաշտոնյա ունենալ (42—43)։

Անճշտություններ են պարունակում Բջնիի 1031 թ. (166—167), Հայկաձորի 985 թ. (176—177), Անիի 1036 թ. (213) շինարարական վկայագրերի վերականգնումները։

Վիմական բնագրերի անստույգ վերծանության հետևանքով մթագնել ու անտեսվել են մի շարք բառեր, տերմիններ, հատուկ անուններ, որոնց փոխարեն շրջանառության մեջ են դրվել անիրական ու անբացատրելի լեզվական միավորներ։ Նշենք առավել կարևորները։ Անբերդի 1026 թ. հրամանագրում արտագրվել է փոգին տառաշարքը, մինչդեռ իրականում առկա է փաագի (=փաս գինի) կարևոր տերմինը՝ գիտությանը հայտնի այլ աղբյուրներից։ Նույն բնագրում տրված է կապինցր տառաշարքը, մինչդեռ հարկ էր վերականգնել՝ կապին ցորեան: Կեչառիսի XIII դարի արձանագրությունում Վասակ Խաղբակյանի նվիրած ունեցվածքը վերծանվել է. գրիս ընծայ :Ա: լաւ շինականան որտեղ անորոշ է շինականան տառաշարքը։ Պարզվում է, որ Գ. Հովսեփյանի գրքում, որտեղից արտագրվել է ամբողջ վիմագիրը, տվյալ հատվածը ստույգ է. գրիս ընծայ :Ա: լաւ շինականատուն, ըստ այդմ վկայված է սոցիալական ուշագրավ նոր տերմին՝ շինականատուն՝ քննված ու բացատրված հենց Հովսեփյանի, Ադոնցի և այլոց կողմից։ Անիի պարսպի արձանագրությունը Մանուչարյանը մեջ է բերում Ալիշանից, որը իր հերթին այն վերցրել է Մուրավյովի ոչ անքան վստահելի ռուսերեն վերծանությունից. Ես Բագրատ որդի Զարոպայ Արագածունի շինեցի զդուռս: Ավելի ստույգ է Կ. Բասմաջյանի՝ տեղում կատարած ընդօրինակությունը, որտեղ շինողի անունը հիշատակված է. Բագրատ որդի Զարոպայ արքայունի. այսպիսով՝ սխալ ընթերցման հետևանքով սքողվել և անճանաչ է դարձել արքայուն շատ կարևոր տերմինը, քանիցս վկայված Անիի ու մերձակայքի վիմագրերում և սպառիչ մեկնաբանված Ն. Մառի հատուկ ուսումնասիրության մեջ։ Արագածունի ընթերցումը սխալ է նաև այն պատճառով, որ վկայված կապակցության մեջ այն պետք է լիներ սեռական հոլովով՝ որդի Զարոպայ արքայունի, մինչդեռ Արագածունին բառի ուղիղ ձևն է։

Գրախոսվող մենագրության մեջ մատենագրական տեղեկությունները մեծ մասամբ ճիշտ են մեկնաբանված, թեև այստեղ ևս դիտվում են սխալ ընկալված ու անիրական վկայություններ։ Խոսելով Անիի Մայր տաճարի կառուցման ժամանակի մասին, Մանուչարյանը Գանձակեցու

երկից վկայակոչում է հետևյալ հատվածը. «Եւ կատարեցաւ ի հազար ամի մարմնանալոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և ի Նխէ թուականին հայոց» (88—89), որպես թե՝ պատմիչը տաճարի շինությունը դրել է 1000 (—2)=998 թ.։ Սակայն Գանձակեցու խոսքը վերաբերում է ոչ թե Կատրանիդե թագուհու կառուցած Մայր տաճարի, այլ Գագիկ թագավորի կառուցած զվարթնոցատիպ Ս. Գրիգոր եկեղեցուն, որի շինարարությունը, հիրավի, ավարտվել է այդ թվականին։ Դվինի Ս. Գրիգոր եկեղեցու վերակառուցման մասին Թովմա Արծրունու տեղեկությունը արտագրելով կես գրաբարյան, կես արդի ուղղագրությամբ և աղավաղված, մեկնաբանել է ոչ ճիշտ։ Ահա այդ հատվածը. «Վարդան Մամիկոնյանը քանդել և ավերել է «զմեհյանն և հատակեալ զտեղին շինեն նորեն քարամբք զմեծ եկեղեցին զՍուրբ Գրիգորի ի բլուր տեղւոջ, և փոխե անդ զկաթողիկոսն զԳիւտ»։ Նորին դերանունը դարձնելով նորեն և սրան վերագրելով արևմտահայերենի իմաստ՝ նորից, Մանուչարյանը պատմիչի խոսքերը հասկացել է այնպես, որ իբր եկեղեցին նորից կառուցվել, վերակառուցվել է քարերով, մինչդեռ իրականում պետք է լինի նորին քարամբք, այսինքն շինել են նրա (իմա՝ ավերված մեհյանի) քարերով միանգամայն նոր շինություն, այն էլ հարթված տեղում (յատակեալ զտեղին՝ շինեն զմեծ եկեղեցին նորին քարամբք):

Շինարարական վկայագրերի ժամանակ բանաձևերում հանդիպող տոմարական ցուցումները նույնպես վերծանվել ու մեկնաբանվել են անճշտություններով։

Ահա, օրինակ, Հայկաձորի եկեղեցու արձանագրությունը. ըստ Մանուչարյանի այն թվագրված է երեք եղանակով՝ արարչության (6286), հայկական մեծ թվականով (ՆԼԴ—985), լուսավորության հայոց (ՈՁԳ—985), մինչդեռ բնագրում կա նաև չորրորդը՝ Քրիստոսի ծննդյան կամ գալստյան, որը ինքը՝ հեղինակը վերականգնել է «Եւ ի առաջին գալստեանն Քրիստոսի», բայց այն տարեթիվ չի համարել։ Մանուչարյանի այս վերծանությունն անհարիր է մյուս երեք տարեթվերին, քանի որ 985 թ. կառուցված եկեղեցուն վերագրված է Քրիստոսի ծննդյան կամ գալստյան մեկ թվական։ Ուրեմն բնագրի տվյալ հատվածը հարկ էր ընթերցել՝ Եւ ի ՋՁԵ (=ՋՁԷ) ամի գալստեանն Քրիստոսի:

Ավելի զգալի են Մայր տաճարի արձանագրության տարեթվերի վերծանության աղավաղումները։ Տպավորություն է ստացվում, որ հեղինակը իր նկատառումները գրառելուց առաջ չի խորացել բնագրի մեջ, ինչպես նաև չի ուսումնասիրել նրա մասին եղած տեղեկատու գրականությունը։ Ինչպես հայտնի է, այս վիմագիրը թվագրված է վեց տարեթվերով, որոնցից երեքը առաջին տողի վրա են, երեքը՝ վերջին տողե-

րում։ Սրանցից Մանուչարյանը քննել է միայն չորսը։ Անհասկանալի պատճառով անտեսվել են առաջին տողի՝ ՄԺԹԹ հռոմոց և տողավերջի փակագրերով արտահայտված տարեթվերը։ Մանուչարյանը պետք է հիշեր և քննության առներ Ն. Մառի հայտնած տեսակետը ամբողջ բնագրի և սույն տարեթվի մասին. «Տաճարը 1000 թվականին կառուցելու մասին արձանագրությունը, պահպանված հարավային պատին, հնագրական հատկություններից դատելով, XII—XIII դդ. պատճեն է, բացի դրանից, նրանում առկա է վրացական տարեթիվ, որ դժվար է պատկերացնել հայ թագավորների ժամանակաշրջանի Անիի համար» («Ани», 121)։ Բայց հեղինակն այդպիսի քննություն կատարելու փոխարեն, զանց է առել ՄԺԹԹ հռոմոց կամ Մառի վրացական համարած տարեթիվը, կարծես թե այն փորագրված էլ չէ։ Մնացած երեք տարեթվերի մեկնաբանությունը նույնպես ճիշտ չէ։ Այսպես, ի վեց ՌՆԼԳ ամացն Ադամա հարկ էր ընկալել ոչ թե 1008 թ., այլ 1010 (6433—5423), Ռ եւ ԲԺ ամի մարմնանալոյ աստուածային բանի համապատասխանում է 1010 (1012—2) և ոչ թե 1014 թ.։ Ինչ մնում է ՉԸԺ ամի հաւատալոյ ի Քրիստոս տարեթվին, ապա այստեղ Մանուչարյանը պարտավոր էր գոնե ճիշտ կարդալ թվագիրը, որն իրականում ՉԸԺԱ է և համապատասխանում է նույն 1010 թ. (711+301)=1012 (—2)=1010։ Բոլորովին անհիմն է ՉԸԺԱ տարեթիվը խմբագրել կամ դարձնել 1019 թ.։ Հիմք ընդունելով հիշյալ տարեթվերի սխալ վերծանությունը, Մանուչարյանը առաջ է քաշում տաճարի այս վկայագրի փորագրման մասին արտառոց տեսություն, ըստ որի Բենե գրիչը «առաջին տողը փորագրել է 1008 թ., այնուհետև 1014 թ. գրել է Կատրանիդեի արձանագրությունը և 1019 թ.՝ Սարգիս կաթողիկոսինը» (208—209)։ Ստացվում է, որ Մայր տաճարի արձանագրությունը փորագրվել է տասնմեկ տարվա ընթացքում։

Հեղինակի կարծիքով ի Ռ եւ ԲԺ ամի մարմնանալոյ աստուածային բանի կապակցությունը «գրված է բարդ տառակցումներով», այնինչ ամբողջ 21 տողանոց բնագրում ոչ մի տառակցում չկա, եթե չհաշվենք առաջին տողավերջի փակագիրը։

Ցավոք, նույնը պիտի ասել շատ այլ հուշարձանների ու վկայագրերի վերաբերյալ։ Մաստարայի օծման օրվան վերաբերող ամբողջական ու հստակ արձանագրությունը չի ընկալվել, ուստի հայտարարվել է «անընթեռնելի» անավարտ» (54)։ Այնտեղ ասված է. Արաց ամսոյ ԺԳ. նաւակատիք սրբոյ եկեղեցոյս եւ յիշատակ եպիսկոպոսի: Ա. Մանուչարյանը ծանոթ չէ Ալիշանի ճիշտ ընթերցմանը, փորձել է ինքնուրույն լինել

և աղավաղել է եղածը՝ սրաց, ամսոյ յիշատակէ: Գրքում այս կոթողին վերաբերող նորությունը «Գնունի Անաստաս» և հունատառ ΠΕΡΟΖ [ΑΡ]ΧΟΝΤΑΚ վիմագրություններն են, երկուսն էլ թյուր։ Տեղում գրված է Աւգնեա ի Անաստաս, իսկ հունարենը «Պերոզ արքայի 21 տարին» նշանակել չի կարող, քանի որ հինգերորդ դարում X-ն գրվում էր X և ոչ իբրև երկու կիսաշրջագծերի հատում χ։ Այնուհետև, քարի վրա պահպանվել է միջին ելուստի հետք, իսկ այդ նշանակում է, թե գրված է եղել Ε: ΑΡΧΟΝΤ-ը թեք հոլովների հիմքն է և որևէ հոլովական վերջավորություն չունի, ինչպես որ չունի նաև անհրաժեշտ հոդ։ Այս ամենը նշանակում է, թե Մաստարայի կառույցը 480 թ. վերագրելու փորձը անտեղի է։

Ա. Մանուչարյանը հեշտությամբ վճռում է, որ Օձունի արևելյան ճակատի մեծագիր արձանագրությունը շինարարական չէ (74), իսկ այդ դեպքում ո՞վ է Կոզմասը, ի՞նչ է նշանակում փակագիրը, ինչի՞ համար է ողորմեա-ն, ի՞նչ է նշանակում միատող արձանագրություն և այլն։ Այդ նույն ձևով է լուծվում Եղվարդի բազիլիկայի հարավային պատի միատող արձանագրության, ինչպես նաև Ավանի տաճարի արևելյան պատի երկբառ բնագրի շինարարական լինել-չլինելու խնդիրը։ Աշխատության մեջ չի քննված նաև Ներսես կաթողիկոսի հունարեն արձանագրությունը Զվարթնոցում։ Կարմրավորի հնագույն շինարարական արձանագրությունը Մանուչարյանը մեջ է բերում անճշտություններով։ Հ. Շահխաթունյանի վերծանության մասին ճիշտ է ասված, թե այն «առանց խիստ հողմնահարված և դժվար ընթեռնելի վերջնամասի» է, բայց չի ասված, թե գրախոսվող գրքում բերված վերծանությունը հեղինակին չի պատկանում (այն քաղված է Պ. Մուրադյանի աշխատանքից)։

Ընդհանուր առմամբ խնամքով տպագրված ներկա աշխատությունը զուրկ է անհրաժեշտ ապարատից, որ զգալապես կդժվարացնի նրանից օգտվելը։ Չկան տեղեկատու ցանկեր, գրքում չեն զետեղված քննության առնված գոնե հնագույն վիմագրերի լուսանկարներ կամ գծագիր պատկերներ։ Եղած ներդիր լուսանկարները սոսկ նկարազարդման դեր են կատարում, քանի որ չեն համարակալված, շարադրանքում չեն հղվում և զետեղված են ոչ իրենց տեղերում։

Մանուչարյանի մենագրությունը բարի ծառայություն կարող է մատուցել հայ հնագրությամբ ու ճարտարապետական արվեստի պատմությամբ հետաքրքրվողներին, եթե հաշվի առնվեն նշված վրիպումներն ու անճշտությունները։

«ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ» ԵՎ «ՆՅՈՒԹԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ» ՊՏՈՒՂՆԵՐԸ*

Միջնադարյան հայ քնարերգության մեզ հասած նմուշները հիմնականում հորինված են հին կամ միջին հայերենով և այդ պատճառով այսօր գրեթե անմատչելի են ընթերցող լայն շրջաններին։ Հոգևոր կամ աշխարհիկ այդ տաղերի, ներբողների, եղերերգերի ու շարականների մի ստվար մասը մեր օրերում չի հրատարակվել, ուստի նույնիսկ մասնագետները կարող են դրանց հաղորդակից լինել միայն մատենագրական հազվագյուտ օրինակների միջոցով։ Մյուս կողմից, հայոց հին ու միջնադարի բանաստեղծությունը, իբրև «մարդկային ոգու սքանչելի հաղթանակներից մեկը», օրավուր ավելի մեծ հետաքրքրություն է առաջ բերում նաև միութենական ընթերցողների ամենալայն ոլորտներում, ուստի և այդ նմուշների վերածումը հին և միջին հայերենից արդի հայերենի կարող է շահեկան հիմք ծառայել նաև դրանց ռուսերեն կամ այլ լեզվով տողացի թարգմանությունների համար։

Այս առումով ամենայն գովասանքի է արժանի «Սովետական գրող» հրատարակչության նախաձեռնությունը՝ «Հայ քնարերգություն» մատենաշարի առանձին հատորյակներով ներկայացնելու հայ բազմադարյան բանաստեղծության ընտիր փշրանքները՝ սկսած վիպասանական անգիր շրջանից, գրավոր քնարերգության միջնադարից, նոր դարերից մինչև մեր ժամանակները, ըստ որում գրաբար բնագրերին զուգահեռ տալով դրանց ըստ ամենայնի հարազատ նոր հայերեն թարգմանությունները։

Մատենաշարի՝ ճաշակով ձևավորված ու խնամքով տպագրված առաջին հատորյակը, որտեղ զետեղված են հայ քնարերգության լավագույն նմուշները՝ հնագույն ժամանակներից մինչև ութերորդ դար, արդեն դրված է ընթերցողների սեղանին։ Բոլոր երգերին զուգահեռ տրվում են նրանց արձակ թարգմանությունները արդի հայերեն, որ կատարել է բանասեր, բանաստեղծ Լևոն Միրիջանյանը։

Անմիջապես ասենք, որ թարգմանիչը իր վրա վերցնելով առաջին հայացքից դյուրին ու մատչելի թվացող, բայց իրականում դժվարին, գրաբարի խոր իմացություն ու թարգմանչական մեծ հմտություն պահանջող մի գործ, ոչ մի չափով չի հաղթահարել քնարերգական հուշարձանների գրաբարից արդի գրական հայերեն թարգմանելու դժվարությունները, որի հետևանքով մեր հին բանաստեղծությունը ներկայացվել

* «Գրական թերթ», 1982, № 42։ Հեղինակակից՝ Խ. Պալյան։

է զգալիորեն աղճատված, աղավաղված, բազմաթիվ աններելի վրիպումներով ու էական անճշտություններով։

«Գրական թերթի» հունիսի 18-ի համարում տպագրած իր գրախոսականում բանասեր Է. Մկրտչյանը ողջունելով «Հայ քնարերգության» այս հատորի լույս ընծայումը, միաժամանակ նշել էր նրանում տեղ գտած մի շարք անհաջող թարգմանություններ, սխալ ընկալված բառեր, ամբողջ տողեր ու քառյակներ, որոնք գրախոսի կարծիքով զգալի չափով խաթարել են հայ հին բանաստեղծության ոչ միայն բառն ու տողը, այլ նաև անկրկնելի արվեստն ու հուզաթաթավ ոգին։ Մկրտչյանի դիտողությունները հիմնականում արդարացի են, անաչառ ու բարեկամական և մղված են հայկական հին երգերի ոգին ու գեղեցկությունը ընթերցողին հարազատորեն հաղորդելու ցանկությամբ։ Իբրև ընդհանուր եզրակացություն գրախոսը այն միտքն է հայտնում, որ «ժողովածուի թարգմանությունները վերանայման և պարտաճանաչ մասնագիտական խմբագրման խիստ կարիք ունեն», քանի որ այս տեսքով շատ հեռու են գոհացուցիչ լինելուց։

Այլ կերպ է մտածում ժողովածուն թարգմանող Լևոն Միրիջանյանը։ Փոխանակ լրջորեն, «նյութի իմացությամբ» ու անաչառ կերպով ստուգելու, նաև հիմնավոր վիճարկելու Մկրտչյանի դիտողությունները, թարգմանիչը հագուրդ է տալիս իր վիրավորված ինքնասիրությանը և հախուռն ձևով մերժում գրախոսի նույնիսկ ակնհայտորեն անառարկելի դիտողությունները, ընդ սմին չմոռանալով գրաբարի քերականության և «գեղարվեստական թարգմանության» դասեր տալ գրաբարի դասախոս Մկրտչյանին։

Գրախոսության դեմ Միրիջանյանի առարկությունները հիմնականում հանգում են մի կետի՝ հարկ կա՞ արդյոք միջին դարերի շարականներում վկայված գրաբարյան որոշ բառեր, որոնք այս կամ այն չափով ընկալելի են այսօրվա ընթերցողին, թարգմանել արդի հայերեն, թե կարելի է թողնել անփոփոխ։ Թվում է, հարցի պատասխանը մեկն է. եթե հին հայերենի բառաձևը բանաստեղծության մեջ վկայված իմաստով գործածվում է նաև այսօր, կարելի է չթարգմանել, բայց համարեցնել այսօրվա քերականությանը։ Իսկ այն դեպքերում, երբ բառի վկայված իմաստը կամ նրա տարբերակը անծանոթ է արդի հայերենին, անհասկանալի ընթերցողին, անպայման պետք է թարգմանել համապատասխան աշխարհաբար համարժեքով։

Միրիջանյանը պնդում է, որ ինքը ճիշտ է վարվել անփոփոխ թողնելով՝ առավոտները կանխեցի, ընկերք միամիտք, եկ հաւանիր... խոսքերը, երկայնամիտ ես ամենքի հանդեպ, անբանների մսուր կապակցու-

թյունների ընդգծված բառերը, քանի որ դրանց գրաբարյան իմաստները հասկանալի են նաև այսօր։ Ակներև է, որ այսօրվա նույնիսկ բարձր գրագիտության տեր ընթերցողը միամիտ բառը կհասկանա ոչ թե բուն գրաբարի՝ համամիտ, հաւատարիմ, այլ ավելի շատ՝ պարզամիտ, դյուրահավատ, անխարդախ։ Կանխել բայը արտահայտում է կանուխ, վաղ ներկայանալ, մինչդեռ արդի հայերենում նշանակում է ինչ-որ բանից առաջ ընկնել։ Հավանել բնագրում արտահայտում է համաձայնել, դրա համար էլ ասված է հաւանեաց բանից (խօսքերին և ոչ թե հաւանիր խօսքը), մինչդեռ այսօրվա ընթերցողի համար հաւանիր այլ բան է նշանակում՝ հավանել, դուր գալ, հաճելի լինել։ Անբան բառը երգերում գործածված է՝ անխօս, անբանական, անմիտ, անասուն իմաստներով, այնինչ այսօրվա ընթերցողը այն կհասկանա՝ անգործ, ծույլ, դատարկապորտ մարդ։ Քչերը առանց հին հայերենի բառարանների կհասկանան, որ երկայնամիտ նշանակում է համբերող, ներողամիտ։

Նշված և մի շարք այլ գրաբարյան բառեր դեռ ինչ-որ չափով հասկանալի են ժամանակակից ընթերցողին, և դրանց անփոփոխ թողնելը կամ արդի հայերենի համարժեքի վերածելը կարելի է թողնել թարգմանչի ճաշակին։ Լ. Միրիջանյանը, սակայն, նույնությամբ պահպանել է նաև այնպիսի բառեր, որոնց գրաբարյան իմաստները արդի հայերենում կամ չկան, կամ բոլորովին այլ են։ Իր պատասխան հոդվածում թարգմանիչը ոչ մի խոսք չի ասում անփոփոխ թողնված այդ կարգի բառերի մասին, որոնք զգալապես խաթարել, գրեթե անհասկանալի են դարձրել բնագրերը։ Ստիպված ենք նորից հիշեցնելու դրանց մասին։ Բառնալ բազմիմաստ բառի՝ վերացնել, իր վրա վերցնել, կրել իմաստներն աշխարհաբարին անծանոթ են, ուստի բոլոր դեպքերում այն պետք է թարգմանվեր, Միրիջանյանն անփոփոխ է թողել, և այդ պատճառով ստացվել են այսպիսի անհեթեթ տողեր. «Որ զանտանելին յէից ի գիրկս քո բարձեր» թարգմանվել է՝ «Որ արարածներից ամենասուրբը բարձեցիր քո գրկում»։ Ո՞վ բարձեց, ի՞նչ բարձեց, ինչո՞ւ անտանելին բառը, որ նշանակում է անընդգրկելի, անպարփակելի, վերածվել է ամենասուրբ բառին։ Մինչդեռ տողը հարկ էր ընկալել՝ «Որ էություններից անընդգրկելին քո գրկում կրեցիր (ընդունեցիր, պահեցիր)։ Կամ՝ «Բառնալով զխաւար դիւապաշտ մոլորութեանց յաշխարհէ» հստակ տողը Միրիջանյանի ձեռքով դարձել է՝ «Աշխարհի դիվապաշտ մոլորությունների խավարը բառնալով», որտեղ անիմաստ ու անհեթեթ է խավարը բառնալով կապակցությունը, ուրեմն հարկ էր արդի հայերենում այս իմաստով չգործածվող բառաձևը անպայման թարգմանել՝ խավարը վերացնելով (փարատելով, ցրելով)։

Կոմիտասի «Անձինք նուիրեալք» շարականի երկտողում թարգմանիչն անփոփոխ է թողել կոխել-կոխեցայք արդի հայերենում ոչ այնքան նրբիմաստ բայաձևը, ընթերցողին պարգևելով անհոգի աղավաղման այս օրինակը. «Ճգնութեամբ կոխեցիք ձեր հնձանները, որ ուրախ լինեք անմահական բաժակով» (157)։ Ահա բնագրի աղամանդյա տողը՝ ինչպես կասի Միրիջանյանը. «Կոխեցայք ճգնությամբ ի հնձանս ձեր, Զի ուրախ լինիջիք անմահական բաժակաւն»։ Ստիպված ենք թարգմանչին նորից հիշեցնելու, թե ինչ ավերածություն է կատարվել առաջին տողում։ Կոխեցայք բնագրում նշանակում է ոչ թե կոխեցիք (այն էլ ներգործական), այլ միայն և միայն կրավորական՝ տրորվեցիք, ճմլվեցիք, ի հնձանս ձեր պետք էր թարգմանել ոչ թե (կոխեցիք) ձեր հնձանները, որ անհեթեթ է, այլ միայն (ճմլվեցիք) ձեր հնձաններում։ Ավելորդ է ասել, որ Հռիփսիմյան կույսերի ճգնության մասին այս հոյակապ փոխաբերությունը վերածվել է ամենասովորական՝ հնձանը կոխելու (՞), տրորելու (՞) և անմահական գինին ըմպելու արարողության։

Խնդրել բայը գրաբարում նշանակում է նաև փնտրել, որոնել, ձգտել, և միջնադարի հոգևոր երգերում մեծ մասամբ առկա է այս իմաստը։ Թարգմանիչը մի քանի դեպքերում անփոփոխ է թողել բայաձևը՝ խնդրելու, աղաչելու իմաստը վերապահելով նրան։ Օրինակ, «Խնդրե՛ա և զիս զմոլորեալս» (51) տողը դարձել է «Խնդրիր և ինձ՝ մոլորյալիս համար», այսինքն փնտրիր և ինձ՝ մոլորյալիս ընկալվել է բնագրին անհարիր և անիմաստ՝ խնդրիր և ինձ՝ մոլորյալիս համար։ Ունել բայը հին հայերենում բացի ունենալ իմաստից ունի նաև բռնել, պահել նշանակություն, որ արդի հայերենում չի դիտվում։ Թարգմանիչը Վահագնի երգի հայտնի տողը՝ «Երկն ի ծովուն ունէր եւ զկարմրիկն եղեգնիկ» թարգմանել է՝ «Երկունք ունէր ծովում և կարմրիկ եղեգնիկը» (20)։ Մինչդեռ ավելի ստույգ կլիներ՝ «Երկունքը ծովում բռնել էր և կարմրիկ եղեգնիկին» (ինչպես քանիցս թարգմանվել է), քանի որ բնագրում առկա է ունէր (բռնել էր) ներգործական բայի ուղիղ խնդիրը՝ «զկարմրիկն եղեգնիկ»։ Երկունք ունէր անհաջող կապակցությունը հիշեցնում է տարիներ առաջ «Եվգենի Օնեգին» պոեմի հայերեն թարգմանության մեջ տեղ գտած՝ «Բայց հյուսիսում ունեմ վտանգ» կամ՝ «Օնեգին, դու հորանջ ունես» հայերենին խորթ կազմությունները, ժամանակին խիստ նշավակված Գ. Դեմիրճյանի կողմից (Հատ. 8, 1963, էջ 466)։ Խոսրովիդուխտ Գողթնացու շարականի «Իսկ դու առաւել զուարթ» (184) տողը թողնվել է անփոփոխ, որի իմաստը այսօրվա ընթերցողին անհասկանալի է. ո՞վ, ի՞նչ գտավ առավել, մինչդեռ բանաստեղծուհին իր նահատակ

եղբորը դիմելով ասում է. «Իսկ դու ավելին եղար» (արեցիր, գերազանցեցիր)։

Վկայ (վկայել) բառը շարականներում մեծ մասամբ գործածվում է նահատակ (նահատակվել) իմաստով, թարգմանիչն ամենուրեք այն անփոփոխ է թողել, տեղի տալով զգալի աղավաղումների։ Օրինակ, «Զմարդիկ վերագրեաց խաչակից իւր եւ վկայք կամաւոր մահուամբ իւրեանց» (44) տողը թարգմանել է բնագրի հետ ընդհանուր ոչինչ չունեցող բառակույտով. «Փրկեց մարդկանց (՞), որ խաչակից էին իրեն և վկաներ հոժարակամ», մինչդեռ երկտողի իրական իմաստն այս է. մարդկանց դարձրեց իրեն խաչակից և նահատակներ՝ իրենց մահվամբ ինքնակամ։

Հին հայերեն բառերի, կապակցությունների սխալ, անհաջող, բնագրերին անհարիր, երբեմն էլ անիմաստ թարգմանությունները Միրիջանյանը աշխատում է արդարացնել «գեղարվեստական թարգմանության» կամ հին քնարերգության տաղաչափության օրինաչափություններով, բոլոր դեպքերում հանդես բերելով նյութի, լեզվի բացարձակ անտեղյակություն։ Օրինակ, թարգմանիչը առանց որևէ բացատրության շարունակում է ստույգ համարել Կոմիտասի շարականի այս երկտողի իր ընկալումը՝ «Ծնան կուսանք ազգս բազումս, եւ մարք մանկունք զհրապարակս ծերոց», որ գրաբար չիմանալու պատճառով աղավաղել է այսպես՝ «Ծնեցին կույսերը ազգեր բազմաթիվ, մայրերը ծերերի հրապարակները լցրեցին մանուկներով» (155)։ Միրիջանյանը չի ընդունում Մկրտչյանի արդարացի դիտողությունը ընդգծված անհեթեթ տողի առթիվ, ուստի ստիպված ենք հիշեցնել գրաբարն ու քերականությունը, որոնց մասին այնքան տաղտկալի դատողություններ է անում նա։ Ուրեմն աղավաղված տողը հարկ է հասկանալ՝ «Մանկահասակ մայրերը (ծնեցին) ծերերի բազմություններ (խմբեր), քանի որ մարք մանկունք նշանակում է չահել, դեռատի, մանկահասակ մայրեր, իսկ հրապարակս ծերոց=ծերերի բազմություն, խմբեր, ուրեմն ծերերի հրապարակների մասին խոսք չկա այստեղ։

Անստույգ, բնագրերին միանգամայն անհարիր են ներկայացվել մի ամբողջ շարք գրաբարյան բառեր ու կապակցություններ, որոնցից կարևորները ստիպված ենք նշել. «Զանգիտ կորստեան փորեցին խորխորատ» տողի ընդգծված բառը փոխարինվել է հավասարը չունեցող կապակցությամբ, որը, մեղմ ասած, անհեթեթ է։ Կարելի է միայն կռահել, թե ինչ է տեղի ունեցել, թարգմանիչը բառարանում փնտրել է զանգիտ բառը, բայց չի գտել, քանի որ զ-ն այստեղ նախդիր է, ուրեմն հարկ էր որոնել անգիտ, որ նշանակում է անգտանելի, անդառնալի։ Այսպի-

սով (զ)անգիտս կորուստ արտահայտում է ոչ թե նմանը չունեցող, այլ անդառնալի կորուստ:

Դավթյակի «Ողբ»-ում, որ, ի դեպ, քանիցս թարգմանվել է արդի հայերենի և այլ լեզուներով, «Եւ ի նանիր թաքուցին զորոգայթն մահու» տողը դարձել է՝ «Եվ անտես թաքցրին որոգայթը մահու» (167), այնինչ ի նանիր կարող է նշանակել՝ իզուր, անտեղի, վարկպարազի: Բանաստեղծն ուզում է ասել, որ իզուր թաքցրին Ջիվանշիրի սպանության որոգայթը, քանի որ այն շուտով հայտնի դարձավ: Սխալ է ընկալվել առժամայն բառը, որը մի դեպքում թարգմանվել է ներկայիս («Ժամանեցին առժամայն չարիք մեր» (167), դարձել է «Ժամանեցին ներկայիս չարիքները մեր», իսկ մյուս տողում բոլորովին դուրս է թողնվել («Կերիցեն առժամայն զտիրասպան մարմին նորի» (170)—«Ուտեն նրա մարմինը տիրասպան»): Մինչդեռ առժամայն բառը երկու դեպքերում էլ իր տեղում է, և հարկ էր հասկանալ միայն՝ անմիջապես, նույն ժամին, տեղնուտեղը: Անհաջող է թարգմանված արդի հայերենում ևս գործածական կապտել բայը, որ մեր կարծիքով կարելի էր թողնել անփոփոխ: Այսպես, «Կատարեալ քաջութեամբ զՉարին մուրհակն կապտեցին» երկտողը վերածվել է բնագրին անհարիր՝ «Եվ կատարյալ հերոսությամբ չարի մուրհակը ոչնչացրին» (147), ըստ այդմ սխալ է հասկացվել կատարեալ բառը, որ այստեղ նշանակում է ոչ թե կատարյալ կամ անկատար ածական, այլ՝ նահատակվել, զոհվել բայ, իսկ կապտեցին հարկ էր թարգմանել՝ խլեցին, հափշտակեցին, պոկեցին: Ուրեմն ամբողջ երկտողն այս իմաստն ունի՝ «Հերոսությամբ նահատակվելով չարի մուրհակները խլեցին (կապտեցին)»: Իսկ 180 էջի շարականում՝ «Եւ զբոցեղէն զսուրն կապտեցեր» ներկայացվել է «Եվ բոցեղեն սուրը պարտության մատնեցիր», որ նույնպես սխալ, անիմաստ է:

Հին հայերենի քերականությանը անծանոթ լինելու պատճառով թարգմանիչը բազմաթիվ բայաձևեր թարգմանել է ոչ այն ժամանակներով, որ նրանք արտահայտում են բնագրերում: Օրինակ, «Զմեղս իմ ցուցից քեզ» (51) դարձել է «Մեղքերս ցույց տվեցի քեզ», պետք է լինի՝ ցույց կտամ: «Ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում» թարգմանել է «Առավոտների հետ (՞) լսում ես դու իմ ձայնը» (59), հարկ էր՝ «Առավոտները կլսես դու ձայնը իմ»: Այսպես նաև՝ զինչ արարից (=ինչ անեմ), նորոգեսցես (=նորոգես), տօնեսցուք (=տոնենք), առցուք յօրինակ, նմանեսցուք, փոխեսցուք (=օրինակ վերցնենք, նմանվենք, փոխվենք), օրհնեսցուք (=օրհնենք), փայլեսցեն (=փայլեն), մատուսցուք (=տանք, մատուցենք) և ուրիշ բայաձևեր թարգմանված են վկայված տողերին խիստ անհամապատասխան՝ ինչ արեց (65), նորոգվի (87),

տոնում ենք (87), առեք, նմանվեք, փոխադրվեք (37), օրհնեցեք (39), փայլեցին (149), մատուցանում ենք (149):

Ի բարձունս ներգոյականը, որ նշանակում է բարձրում, բարձունքներում (երկնքում) ամենուրեք ներկայացվել է անստույգ, բնագրերին անհամաձայն: Այսպես, «Յամենայն ժամ օրհնութիւն ի բարձունս», դարձել է «Երկնի բարձունքին ամենայն ժամ օրհնություն» (81), կամ՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ» թարգմանվել է. «Փառք բարձունքներին Աստուծո» (81), կամ՝ «Տուք փառս ի բարձունս թագաւորին յաւիտենից» վճիտ երկտողը խաթարվել և անհեթեթ է դարձել ահա թե ինչպես. «Փառք տվեք հավիտենական թագավորի բարձունքներին»: Ըստ թարգմանչի այս շարականներում օրհնություն և փառք է տրվում ոչ թե աստծուն, այլ նրա բարձունքին, բարձունքներին, որ, իհարկե, անիմաստ է: Նույն հոլովաձևը ճիշտ չընկալվելու հետևանքով ահա թե ինչ աղճատման է ենթարկվել Մովսես Խորենացու գողտրիկ շարականի հետևյալ երկտողը՝ «Մանուկ մատաղ ընծայելով Հայր ի բարձունս որդեգիր», որ Միրիջանյանի «գեղարվեստական թարգմանությամբ» հնչում է՝ «Մատաղ են ընծայում մանկանը, որը Հոր բարձունքների որդեգիրն է» (85): Այստեղ քանի բառ, այնքան սխալ կա. մատաղ, տվյալ դեպքում նշանակում է մատղաշ, նորածին, նորաբողբոջ և ոչ մի կապ չունի մատաղ-զոհի հետ, որ այս շարականում անհեթեթ կլիներ: Մինչդեռ Խորենացու երկտողի իմաստն է՝ նորածին մանկանը որդեգիր են ընծայել Հորը բարձունքում (երկնքում):

Առանձին բառերի, կապակցությունների ու տողերի այս կարգի անհաջող, անիրական թարգմանություններից բացի ժողովածուում տեղ են գտել նաև ամբողջ հատվածներ՝ քառատողեր կամ երկտողեր, որոնց բնագրային իմաստները անճանաչելի աղավաղվել են: Ամեն ինչից երևում է, որ թարգմանիչը ապավինելով նյութի իր իմացությանը, ջանք չի թափել աչքի անցկացնելու շարականների մեկնությունները, գրաբարի բառարանները կամ գոնե նախորդ թարգմանությունները: Ահա թե ինչպես է ներկայացվել Դավթակ Քերթողի «Ողբ»-ի հետևյալ քառյակը.

«Ողբք են ինձ արդէն	«Ողբալի են ինձ համար
Ոչ զյաւերժահարսիցն և տարմի չայլեմանց,	Ոչ հավերժահարսերի և լացողների խումբը,
Այլ զորդւոցն համբարուց կոծ կսկծագին,	Այլ կսկծագին կոծի շտեմարաններ վերածված
Առ զատեալ մնացելոցդ քաղաք մենացեալ»	Եվ կենդանի մնացածների համար որբացած քաղաքը» (173):

Սա ինքնահնար թարգմանության զավեշտական օրինակ է, քանի որ տառացիորեն ոչ մի ընդհանուր բան չունի Դավթակի հիրավի գեղեցիկ համեմատության հետ։ Մենք չենք տալիս քառյակի «գեղարվեստական թարգմանությունը», միայն հարկ ենք համարում Միրիջանյանին ասել, որ տարմ ջայլեմանց նշանակում է ոչ թե լացողների խումբ, այլ ջայլամների երամ, որդիք համբարուց (ավելի ստույգ՝ համբարուաց) ասելով բանաստեղծը նկատի ունի համբարուներին, այսինքն հուշկապարիկներին, սիրեններին, որոնք արտակարգ քաղցրաձայն ու աղեկտուր են ողբում իրենց զավակների կորուստը։ Ուրեմն այստեղ լացողների խումբն ու կոծի շտեմարանները ոչ մի գործ չունեն, և Դավթակը պատկերավոր ասում է, որ իր ողբերը ողբեր չեն ոչ հավերժահարսերի և ոչ էլ ջայլամների երամի մասին, այլ կսկծագին կոծ՝ համբարուների որդիների մասին, որոնք նման են ավերված քաղաքում մնացածների։

Եվս մեկ օրինակ անբացատրելի աղավաղման.

«Բարունեացն հրաշալեաց
Գտցուք և մեք աշակերտեալք,
Ցողեսցին մեր արտասուք
Ընդ ցօղ արեան նահատակացն»

«Հրաշալի ուսուցիչներ եղան նրանք,
որոնց գտանք, որոնց դարձանք աշակերտներ,
Շողացին մեր արցունքները
Նահատակաց արյան վրա» (148)։

Սխալ են թարգմանվել գտցուք, ցողեսցին (գտանք, շողացին) բառերը, հարկ էր՝ գտնվենք (դառնանք), ցողվենք։ Քառյակի իրական իմաստն է՝ հրաշալի ուսուցիչներին մենք էլ դառնանք (լինենք) աշակերտներ, մեր արցունքները թող ցողվեն նահատակների արյան վրա։

Այս կարգի թարգմանական «գոհարները» չափից շատ են ժողովածուում, և «գեղարվեստական թարգմանության» օրենքներով դրանց արդարացնելու Միրիջանյանի փորձերը առնվազն բռնազբոս են ու անհամոզիչ։ Ահա Կոմիտասի շարականի երկտողը. «Քանզի ծառն կենաց տընկեցաւ ի դրախտին, բերելով մեզ պտուղ զերանելին Հռիփսիմէ», որի ընդգծված տողը թարգմանիչը հասկացել է բնագրին անհարիր՝ «նրա պտուղը մեզ բերեց երանելի Հռիփսիմեն» (150)։ Պարզից պարզ է, որ տողն ավերվել է, իրական իմաստը խաթարվել, հարկ էր թարգմանել՝ «Մեզ պտուղ բերելով երանելի Հռիփսիմեին», քանի որ բնագրում Հռիփսիմեն ոչինչ չի բերում, այլ ինքն է պտուղ դառնում դրախտում

տնկված կենաց ծառի։ Նույն շարականի հետևյալ երկտողը՝ «Փոխանակ Եւայի դստերք նորա, մարտիրոսք եւ կուսանք ընծայեալք աստուծոյ» դարձել է անիմաստ՝ «Դուք չեղաք Եվայի սովորական դուստրեր, մարտիրոսներ եղաք և կույսեր՝ աստծո ընծայված»։ Աղավաղումը հատկապես առաջին տողում այնքան ակնհայտ է, որ հարկ չկա բացատրելու։ Սահակդուխտ բանաստեղծուհին Մարիամի մասին շարականում ասում է. «Որ զնախամօրն զԵւայի բարձեր զերկունսն՝ տիրացեալ մահուն»։ Ահա ինչքան է հեռացել բնագրից թարգմանությունը՝ «Դու արդարացրիր նախամայր Եվայի ծնունդը (՞), իշխելով մահին» (181)։ Այստեղ ոչ մի բառ բանաստեղծուհունը չէ, բայց հստակ պատկերացում է տալիս թարգմանչի գրաբարի իմացության մասին։ Մինչդեռ երկտողի իրական իմաստն է. «Դու նախամայր Եվայի երկունքը (ոչ թե ծնունդը) կրեցիր (=տարար, ունեցար), դառնալով մահկանացու (=տիրանալով մահվան)։

Թարգմանված երգերի բնագրագիտական, բանասիրական կողմը ևս զգալապես անկատար է։ Երևում է, որ ժողովածուն կազմողները հոգ չեն տարել բնագրերը առավել ընտիր ու ճշգրտված ընթերցումներով ներկայացնելու մասին, մանավանդ որ դրանցից շատերը առ այսօր չունեն գիտական-քննական հրապարակումներ։ Այստեղ հնարավորություն չունենք ընդարձակ խոսելու հատորյակի այդ կողմի մասին, սակայն հարկ ենք համարում նշել մեկ-երկու օրինակ. Դավթակի «Ողբ»-ի հայտնի անեծքում ասված է «Եւ ծնցին ի նմա որդունք եւ մկունք», որ անիմաստ է։ Քննական բնագրում ընդգծվածի փոխարեն ունենք՝ «Որդունք եւ մունք», որտեղ մուն(ք) նշանակում է մժեղ, տիզ։ Նույն տեղում «կերցին առժամայն զտիրասպան մարմին նորա» տողում ընդգծված բայաձևը հայերեն չէ, պետք է լինի կերիցեն։ Զգալի աղավաղումով են ներկայացված Հովհան Մանդակունու հաջորդ երկտողի բնագիրը և նրա թարգմանությունը. «Թողեցան յերկունս Գանից, Գերիվերոյ քան զբնութիւնս», որ թարգմանված է, «Զրկնվեցին տանջանքներից գանակոծման, և, խախտելով սահմանները բնության տրված համբերության» (144)։ Հեշտ է նկատել, որ բնագիրն ու արդի հայերենը շատ քիչ ընդհանրություն ունեն։ Գրաբարին մի քիչ ծանոթը կնկատեր, որ թողեցան ձևը հայերեն չէ (սպասելի է՝ թողան), ուստի կբացեր Գ. Ավետիքյանի «Բացատրութիւն շարականաց» գիրքը և այնտեղ դրա փոխարեն կտեսներ թալեցան, որ նշանակում է լլկվեցին, չարչարվեցին, տանջվեցին։ Ուրեմն երկտողի իրական իմաստը կլինի ոչ թե Միրիջանյանի սարքածը, այլ՝ տանջվեցին (լլկվեցին) գանակոծման երկունքներում առավել քան մարդկային բնույթը (=մարդկային ուժերից վեր)։

Բնագրային այսպիսի վրիպումներ կան նաև ժողովածուի 75, 90, 136, 144, 154, 166 էջերում։

Կարելի էր առանց չափազանցնելու երկար շարունակել Լ. Միրիջանյանի անհաջող թարգմանությունների թվարկումը, բայց ասվածն էլ բավական է համոզվելու, որ «Հայ քնարերգության» այս առաջին բո-ճոնը կուռ է գնացել, ձախողվել է։ Իհարկե, հատորյակում կան քիչ թե շատ հաջողված թարգմանության օրինակներ էլ, սակայն դրանք մեծ մասամբ պարզ, անպաճույճ երգեր են, որոնք բնագրով էլ մատչելի են ընթերցողին, և այստեղ թարգմանչի ջանքերն առանձնապես չեն ե-րևում։

Այսպիսով՝ գրախոսվող ժողովածուի արժեքը նրա ձախ էջերի՝ մեր միջնադարյան բանաստեղծության բնագրերի հրատարակության մեջ է, որ ինքնին խիստ անհրաժեշտ ու ՝շնորհակալ գործ է։ Ինչ մնում է աջ էջերին, այսինքն բնագրերի արդի հայերեն թարգմանություններին, ապա դրանք, ցավոք, չեն կարող ուրախացնել ոչ մեր հին քնարերգու-թյան սիրահարներին, ոչ էլ մանավանդ հայ բանաստեղծությունը այլ լեզուներով տողացի թարգմանողներին։

Դառնալով Լ. Միրիջանյանի պատասխան հոդվածում նշված առար-կություններին ու արդարացումներին, հարկ է նշել, որ դրանք որքան էլ ճարտարախոս ու ուսուցողական լինեն, անկարող են քողարկել թարգ-մանչի անտեղյակությունը հին հայերենի տարրական օրենքներին։ Գրա-բարի քերականության, «գեղարվեստական թարգմանության» օրինաչա-փությունների ու «նյութի իմացության» մասին պարզունակ դատողու-թյուններով ու ակնհայտ սխալները չըմբռնելու մարտնչող համառու-թյամբ անհնար է փրկել հայ քնարերգության այս ժողովածուի արատա-վոր թարգմանությունները։

Մնում է հուսալ, որ «Հայ քնարերգության» հաջորդ գրքերը զերծ կլինեն այս կարգի աղաղակող թերություններից, և միջնադարի հայ ան-կրկնելի քնարերգությունը ընթերցողին կներկայանա իրեն արժանի բարձրարվեստ թարգմանություններով։

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաս 10, 118, 210
Աբել 155
Աբիխ 27
Աբրահամյան Ա. 17, 21, 22, 23, 26
Ագաթանգեղոս 217
Ադամ 22
Ադոնց Ն. 42, 225
Ազատյան Շ. 63
Ալամխաթուն 196
Ալամխան 196
Ալամշահ 196
Ալամսիթի 196
Ալամտիկին 196
Ալէ (Ալի) 175, 176
Ալիշան Ղ. 23, 24, 25, 39, 44, 76, 82, 84, 98, 103, 123, 145, 162, 177, 186, 181, 193, 195, 198, 212, 215, 225
Ալպոյաճյան Ա. 101
Ականց իշխան 70
Ակինյան Ն. 17, 20, 21, 22, 23, 26
Ահարոն մագիստրոս 28, 29, 32, 33, 35, 37, 44
Աղայան Է. 202
Աղբուղա 13
Աճառյան Հր. 38, 42, 59, 120, 121, 122, 135, 136, 145, 161, 169, 170, 171, 174, 175, 183, 185, 186, 187, 188, 190, 191, 192, 193, 194, 196, 197, 198, 199, 200, 202
Ամիրա 210
Ամիր Քուրդ Արծրունի 70, 81, 82, 84, 86, 189
Այտընյան 178
Անանիա Մոկացի (կաթողիկոս) 210
Անանիա Շիրակացի 61
Անիփա 156, 176
Անտոն 223
Աշոտ Դաեղեցի 190
Աշոտ Ողորմած 122, 173
Առաքել 70
Առաքելյան Բ. 35, 56, 101
Առաքելյան Վ. 120
Ասիլ 116
Ասողիկ 25, 26, 210, 213
Ավագ (կամ Սարգիս, Իվանեի որդի) 75, 91, 99, 100, 101, 107, 111
Ավդալյան Ս. 58, 70, 89, 94, 123, 152, 189, 190
Ավտադուհի 170
Ավդալբեգյան Թ. 57, 58
Ավետիքյան Գ. 237
Արգումանյան Բ. Հ. 63
Արղուն 185
Արղուֆ 101, 104
Արշախտուհի 172
Արմանեցի Հովհ. 105, 106
Արմենուհի 172

Բագրատ կատեպան 25, 26, 27, 29, 31, 32, 33, 37, 38, 41, 42, 43
Բագրատ Վխկացի 29, 30, 36
Բագրատունիներ 11, 14, 17, 22, 39, 45, 121, 122, 210
Բագրատունի (Վեղծ Շապուհ) 143, 201
Բագրատունի Սմբատ 12
Բասմաջյան Կ. 20, 23, 27, 28, 36, 38, 194, 195, 217, 225
Բարթիկյան Հր. 29, 30, 32, 33, 34, 35, 36, 37, 39, 40, 44, 45
Բարխուդարյան Ս. 31, 47, 60, 81, 84,

87, 89, 90, 120, 123, 124, 126, 127, 130, 137, 141, 143, 146, 155, 158, 164, 185, 187, 191, 195, 207, 209, 210, 211, 212, 213, 215, 216, 217
Բարխուդարյանց Մ. 62, 72, 81, 136, 140, 144, 155, 158, 161, 163, 164, 177, 183
Բարսեղ 53
Բարսեղյան Լ. 136
Բենե (գրիչ) 227
Բենեշևիչ Վ. 27, 28, 31, 32, 35, 36, 38
Բեսում (քահանա) 10
Բեսուճի 193
Բերբերյան Հ. 39
Բժշկյանց Մ. 202
Բրոսե Մ. 27, 177, 186, 193
Բուզանդ 217
Բուպակ (իշխան) 212

Գագիկ Ա 25, 26, 39, 186, 213, 224, 226
Գանձակեցի 25, 26, 29, 82, 100, 102, 103, 105, 106, 107, 109, 110, 159, 224, 225, 226
Գեորգի Գ (վրաց թագ.) 78, 81, 82, 86, 189, 190
Գյուլբուդաղյան Ս. 91
Գոնցա խաթուն 98, 100, 105, 106
Գրիգոր 13, 26, 31, 32, 36, 116, 118, 136, 153, 159, 162, 185, 192
Գրիգոր Ականցի 143, 159, 176, 201
Գրիգոր Ատրանեռսեհյան (իշխան) 10, 12
Գրիգոր Լուսավորիչ 52, 57
Գրիգոր Մագիստրոս 122
Գրիգոր Տուտեորդի 11, 122
Գրիգորյան Գ. 54, 204, 206, 207—216
Գևորգյանց Մ. 27, 28

Դադյան Խ. 146
Դասապետ 108
Դավթակ Քերթող 234, 235, 236, 237
Դավթյան Կ. 146, 203
Դավիթ 166, 223
Դավիթ (վրաց թագավոր) 102, 107
Դավիթ (վրաց արքայազն) 12
Դավիթ (Տարիելի որդի) 165
Դապտա խաթուն 194
Դեղիկ 10
Դեմետրե (վրաց թագ.) 160
Դեմիրճյան Դ. 232
Դեմնա 82

Եղիազարյան Հ. 62, 72, 162, 164, 165, 210
Եսայի 124, 125, 170
Եսայի Նչեցի 55, 61, 186
Եվագր 85
Երանուհի 202
Երեմիա մարգարե 124
Երզնկյանց 182
Եվա 237

Զաքարե 10, 13, 75, 103, 118, 189
Զաքարիա Սարկավագ 71, 75, 78, 80, 149, 150
Զաքարյան իշխաններ 13, 17, 39, 69, 71, 72, 75, 76, 78, 84, 100, 103, 104, 106, 122
Զաքարյան Վահրամ 116
Զարուհի 170, 171

Էմին Մ. 145, 149, 173

Թամարա 189
Թեոդորոս 175
Թենի 172
Թովմա Արծրունի 14, 69, 83, 84, 226
Թորամանյան Թ. 113, 114, 115, 116, 117, 122
Թորոսյան Խ. 53

Ժամկոչյան Հ. 176

Իգդիշ խաթուն 104, 108
Իսրայել Գոռաղճեցի 8
Իվանե 71, 75, 77, 78, 80, 81, 83, 84, 85, 86, 89, 103, 118, 189, 190

Լալայան Ե. 123, 180, 181, 182, 191, 192

Խաթուն 184, 210
Խաղբակյան Վասակ 225
Խաղբակյանք 85, 100
Խաչատուր 15, 161
Խաչիկյան Լ. 92
Խաչիկ վարդապետ Դադյան 149, 150, 151, 153
Խոսրովանույշ 12, 122, 171
Խոսրով Տաուշեցի 146, 147, 148, 149, 150
Խորենացի 217, 235
Խորիշ խաթուն 104
Խուդավերդյան Ա. 150
Խութլուբուղա 12, 70, 84, 122, 160, 161, 162, 163

Կաղանկատվացի 51, 53, 61, 119, 120 215
Կամսարական Ներսեհ 220, 224
Կամսարական Սահակ 8
Կատրանիդե թագուհի 9, 16, 20, 25, 47, 186, 221, 226, 227
Կարապետ 108
Կարապետյան Կ. 93, 100
Կարստ Յ. 43, 142, 147, 174—177, 179, 200
Կյուրիկե I թագավոր 220
Կյուրիկյաններ 14
Կոզմաս 228
Կոմիտաս 232, 233, 236
Կոստանդին Դուկաս 32
Կոստանյանց Կ. 133, 145, 166, 168, 178, 179, 188, 203
Կորյուն 38

Հակոբ եպիսկոպոս 120
Հակոբյան Ս. 92
Հակոբյան Վ. 92
Համազասպուհի 170, 171, 172
Հասան 144
Հարությունյան Ի. 101, 104
Հարությունյան Ս. 47
Հարությունյան Վ. 26, 162
Հյուբշման Հ. 31
Հովհաննես (ճարտարապետ) 163
Հովհաննես Ղրիմեցի 132, 133, 183, 188
Հովհաննես (քահանա) 9, 122, 139, 144, 146, 168
Հովհաննիսյան Ա. 101, 161
Հովսեփյան Գ. 47, 84, 85, 100, 101, 104, 105, 107, 108, 133, 137, 143, 162, 168, 185, 194, 197, 211, 212, 217, 225
Հռիփսիմե 236
Հովհաննես Երզնկացի 102, 122, 177
Հրահատ Կամսարական 224
Հուսիկ եպիսկոպոս 114

Ղազար Փարպեցի 217
Ղաֆադարյան Կ. 76, 86, 111, 117, 118, 122, 126, 132, 133, 134, 136, 144, 146, 148, 150, 151, 153, 161, 168, 182, 187, 188, 189, 190, 192, 193, 198, 199, 217

Ճար (ավագ, Ումեկյան տոհմի հիմնադիր) 101, 102
Ճար (կրտսեր, Ումեկի որդի) 103, 104, 108

Մամիկոնյան Վարդան 226
Մանան հազարապետ 225
Մանանդյան Հ. 42, 59, 60
Մանդու խան 97, 100, 101, 109, 110, 111
Մանդակունի Հովհան 8, 237
Մանուչարյան Ա. 19, 20, 22, 23, 26, 216, 217, 218, 220, 221, 222, 223—228
Մառ Ն. 16, 19, 26, 32, 34, 42, 112, 113, 116, 134, 145, 161, 165, 166, 168, 178, 179, 180, 193, 194, 200, 203, 217, 219, 225, 227
Մատթեոս ավետարանիչ 112, 113
Մարգարէ 15
Մարիամ իշխանուհի 14, 214, 237
Մարտիրոս 96
Մաքսուդյանց Մ. 135, 146
Մելիքսեթ-Բեկ 222

Մենեվիշյան 41
Մերչի 172, 179, 193, 194
Միխայել Ասորի 175, 176, 177
Մինախաթուն 208, 211
Միրիջանյան Լ. 229, 230, 231, 232, 233, 235, 236, 237, 238
Մխիթար 10, 11, 27, 32, 183, 190
Մխիթար Գոշ 52, 53, 101
Մխիթար Հերացի 143
Մխիթար Շերասցի 116
Մկրտչյան Է. 230, 233
Մնացականյան Ստ. 125, 126, 127, 128, 129, 130, 224
Մոմիկ 11, 125, 126, 127, 129, 130, 131, 132
Մովսիսյան Ղ. 188
Մուրադյան Պ. 165, 168, 216, 228
Մուրավյով Ս. 225

Յոհանէս 70, 186
Յուսիկ (Հասիկ) 210

Նազիկ 202
Նանա 80, 81, 82, 83
Նաջմադին 182
Նավասարդյան Ա. 32
Ներսես կաթողիկոս 228

Շահան Ջրպետ 173, 174, 177, 179
Շահխաթունյան Հ. 39, 103, 105, 177, 228
Շահնշահ 75, 76
Շոթա Ռուսթավելի 165
Շոթոկա որդի Դավիթ 132, 133, 140
Շուշիկ 153
Շողիկ 202

Որմիզդուխտ 171

Չավուշ Վահրամ 224

Պալյան Խ. 229
Պահլավունի Արուդամր 85
Պահլավունի Գրիգոր 85
Պահլավունի Զաքարե 45
Պահլավունի Վահրամ 9, 12, 25, 45, 46, 48, 49, 51, 53, 54, 57, 58, 59, 60, 61, 222
Պայքան 194
Պատկանյան Ք. 142
Պավղոս (կազմող) 11
Պետրոս Ականատես 10
Պռոշյան (իշխան) 10
Պռոշյանք 85, 100

Ջալալյանց Ս. 27, 75, 86, 103, 105, 123, 133, 137, 140, 141, 144, 158, 165, 166, 168, 177, 180, 181, 182, 184, 186, 190, 192, 203
Ջահուկյան Գ. 169
Ջանփոլադյան Հո. 101, 104, 105, 106, 108
Ջավախիշվիլի Ի. 42, 207
Ջիվանշիր իշխան 172

Ռուսուդան 118

Սադուն Ա 84, 104, 161
Սադուն Բ 70, 84, 159, 160, 161, 162, 163, 165, 168
Սահակ կաթողիկոս (Պարթև) 12, 52, 57, 62, 223
Սահակդուխտ 171, 237
Սահառունի Դավիթ 224
Սահինյան Ա. 220
Սանասար 183
Սանդուխտ 171
Սամուել Անեցի 25, 143, 159, 160
Սամել (Սամուել) կազմող 154, 155, 156, 157
Սաղումյան Ս. 143
Սարգիս (քահանա) 13, 23, 32, 36, 80, 120, 155, 156, 183, 210, 211, 213, 224, 227
Սարգիս (ամիրսպասալար) 74
Սարգիսյան Ն. 27, 39, 44, 144, 145, 154, 187, 190, 195
Սարգսյան Գ. 70, 84, 136, 137, 140, 158, 162, 165, 166, 168, 169, 185 197, 203

Սարգսյան Մ. 150
Սեբեոս 217
Սիթի (անձնանուն) 172, 179, 195, 196
Սիսակուհի 170
Սիրանես (ճարտարապետ) 126, 129, 130, 211
Սմբատ Բ 22, 26
Սմբատ (Նաջմադինի որդի) 182
Սմբատ սպարապետ 143, 176, 177
Սմբատ Տիեզերակալ 25
Սմբատ իշխան (տե՛ս Օրբելյան Սմբատ) 110
Սմբատյանց Մ. 87, 177, 180, 191
Սմբատուհի 170, 171
Սեդրակյան Ա. 113
Սենեքերիմ 180
Սոփիա տիկին 120, 173
Ստեփան գծող 158, 159, 162
Ստեփանէ 175
Սրբուհի 172

Վահրամ (Նաջմադինի որդի) 182
Վախտանգ (Ումեկի որդի) 108
Վանական վարդապետ 100
Վանենի (Աբաս թագ. կինը) 10, 118, 172, 187, 189
Վաչագան (Թագավոր) 51
Վասակ 118
Վարդան վարդապետ 82, 99, 101, 102, 107, 143, 159
Վարդանյան Ա. 40, 41, 60, 171
Վարդանույշ (Վարդուհի) 170
Վարդաշահ 156
Վարդուհի 174
Վեստ Սարգիս 115
Տաշյան Հ. 217

Տաշրել 168
Տաճատուհի 170
Տարիել 165, 166, 168
Տեր-Մինասյան Ե. 45, 47
Տեր-Ղևոնդյան Ա. 22
Տիգրան Հոնենց 9, 43, 196
Տոկարսկի Ն. 47, 128
Տրդատ (քահանա) 117

Ուխտայատուր (վանական) 192
Ումեկյան տոհմ 94, 102, 103, 108, 111
Ումեկ 96, 100, 101—105, 107, 108, 110, 111

Փարչիկ Սարգիս (Փարչկեանց Սարգիս) 111—115, 117—119
Փափազյան Հ. 93

Քանթարանց 210
Քաշալիկ 202
Քարամ (Քամէ, Քամի) 180
Քարիմադին 101, 108
Քերոբ 157

Օրբելի Հ. 20, 23, 25, 26, 27, 31, 34, 35, 36, 40, 43, 44, 47, 50, 103, 113, 116, 137, 179, 190, 191, 194, 195, 196, 199, 217, 219, 224
Օրբելյան Սմբատ 109, 110, 127, 131
Օրբելյան Ստ. 14, 53, 54, 55, 57, 58, 82, 100, 105, 109, 110, 119, 120, 126, 127, 130, 131, 132, 160, 204, 206, 207, 209, 212, 213, 214, 215
Օրբելյան Տարսայիճ 91, 129, 208, 209, 211, 212

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբասաշեն, գյուղ, 14
Աբոյի խաչքար 84
Աղխրբեկովի շրջան 10
Ալաման 8, 172, 173, 180, 218
Ալագյազ, գյուղ, 198
Ալեքսանդրապոլ 27
Ալուչալուի հուշարձան 143
Ակոռի, գյուղ, 211, 218
Աղթամարի տաճար 212
Աղջոց 144
Աղստև 84
Աղվան 51, 53
Աղվանք 10, 51, 110
Ամաղու 91, 131
Ամբերդ 10, 12, 45, 46, 47, 49, 50, 52, 58, 59, 60, 61, 222, 225
Ամբերդաձոր 45
Անթիլիաս 143
Անի 9, 12, 13, 16, 17, 20, 21, 25, 26, 27, 29, 30, 31, 32, 33, 34, 36, 37, 38, 40, 43, 44, 45, 50, 68, 84, 85, 112, 121, 122, 136, 137, 144, 178, 180, 190, 194, 196, 199, 218, 219, 225, 227
Աշավա 103, 106
Աշտարակ 91, 92
Աչաղու 214
Առաքելոց հնավայր (Իջևան) 10, 63, 70, 84, 86, 157, 159, 162, 163
Առաքելոց եկեղեցի (Անի) 13, 121, 197
Առաքելոց եկեղեցի (Սևան) 221, 222
Աստղաձոր (Կամոյի շրջան) 191
Ավան 12, 68, 126, 161, 217, 228
Ավելադաշտ 207
Արագածի եկեղեցի 218
Արագածոտն 49, 50, 59, 68, 144, 218
Արաստամուխ, գյուղ, 14
Արատեսի վանք 209
Արարատյան աշխարհ 144
Արենի 11, 126, 129, 131
Արթիկ 218
Արխաշան (գետակ) 49
Արծվանիստ գյուղ 212
Արջո առիճ 153, 154, 180, 198
Արցախ 31, 72, 81, 136, 141, 144, 145, 158, 161, 163, 183, 194, 200, 203, 220
Արուճ 8, 12, 68, 219
Արևելյան Հայաստան 102, 107
Արևմտյան Հայաստան 218

Բագավան 8
Բագարան 8, 153, 218
Բագնայր 15, 144, 153
Բաղք 63
Բաղտաղեկի եկեղեցի (Անի) 121
Բաշքենդ (Ղարաբաղ) 146
Բաքու 62, 72, 81, 136, 158, 161, 163, 183
Բարատնիք 214
Բարկուշատ, գյուղ, 214
Բարձրաքաշի վանք (Դսեղ) 144, 165
Բերդք 14
Բյուզանդիա 32, 33, 37, 39, 44
Բյուրական 45
Բջնի 218, 222, 223, 224, 225

Գագկաշեն եկեղեցի (Անի) 25
Գայանե եկեղեցի 68
Գառնի 208
Գավառագետ 9
Գարդման 119

Գեղարքունիք (Բայազետ) 87, 89, 131, 180, 191
Գետաշեն, գյուղ, 157
Գետարավայր (Ավարայր) 214
Գլաձոր 55
Գնդեվանք 66, 120
Գնիշիկաձոր 214
Գողեվանք (Գողեվան) 214
Գոմաձոր, գյուղ, 14
Գոշավանք (տե՛ս նաև Նոր Գետիկ) 11, 96, 101, 102, 103, 104, 105, 106, 107, 108, 109
Գտտողվանք 214
Գրուակ գյուղ 214

Դադի վանք 15
Դեբետ, գետ, 10
Դեղձանագետ 214
Դեղձուտի վանք 9, 62, 63, 70, 84, 86, 159
Դիլիջան 94
Դսեղ 44, 187
Դվին 10, 226

Եղեգիս 127
Եղեգնաձորի շրջան 185
Եղեգք 214
Եղվարդ 8, 217
Ենոքավան 140
Երերույք 68
Երիցավանք 63, 218
Երուսաղեմ 10, 31, 47, 101, 104, 133, 160, 168, 175
Երևան 17, 19, 25, 27, 47, 50, 53, 54, 56, 57, 59, 60, 62, 68, 76, 81, 82, 84, 86, 87, 89, 92, 93, 100, 101, 105, 112, 116, 118, 120, 122, 123, 126, 133, 134, 137, 158, 161, 162, 165, 168, 169, 174, 176, 182, 195, 202, 203, 213, 222

Զվա, գյուղ, 14
Զինջիրլու վանք 211
Զորաց եկեղեցի 127
Զովունի 10, 217, 220
Զվարթնոց 66, 68, 228

Էջմիածին 103, 143, 177, 218

Թալին 8, 9, 12, 187, 192, 221, 224
Թալինի Կաթողիկե եկեղեցի 186, 221
Թանատի վանք 67, 68, 209, 210, 212
Թարգմանչաց վանք 68
Թեոդոսիա (Կաֆա) 202
Թերփ (Ազիզբ. շրջ.) 137
Թզենի 211
Թիֆլիս 32, 51, 81, 82, 102, 108, 110, 114, 119, 145, 180, 220
Թիֆլիսի Կաթողիկե 102, 107

Իշխանավանք 224
Իջևան 10, 62, 63, 64, 72, 140, 157, 162, 163, 196

Լաչին Ղարա (հնավայր) 196
Լոռի 144, 145, 200
Լմբատավանք 85

Խաչեն 14
Խաչիկ վանք (Վանանդ) 210
Խծկոնք 9, 15, 114, 115, 117, 119, 122, 153, 154
Խնձորուտ 84, 160, 163

Ծղուկ (գավառ) 63
Ծովիդ (գյուղ) 64

Կահիրե 101
Կայեն (Կայենո) գավառ 71, 81, 82, 86, 103, 104, 144, 159, 200
Կապտավանք (Շամշադին) 184, 185
Կարակորում 109
Կարին 102, 107, 108, 109, 111
Կարմրաքար 64
Կեչառիս 11, 15, 224
Կիլիկիա 143, 176
Կիտանոց (Կթանոց) 209
Կիրանց վանք 63, 70, 84, 159
Կողբ 154, 155, 156, 183
Կողբափոր (գավառ) 155
Կողես, գյուղ, 192

Կոշ 10, 12, 208
Կոտկոյք 214
Կույբիշև 94
Կունեն (կամ Կիրանց ջուր), գետակ, 84 157
Կուրթան, գյուղ, 220
Կուքի վանք 212

Հադրութ 220
Հաղարծին 65, 75, 78, 99, 106, 190
Հաղբատ 9, 15, 22, 62, 76, 118, 122, 144, 168, 182, 187, 188, 198
Համզա 64
Հայաստան 9, 11, 12, 19, 28, 35, 45, 56, 58, 59, 62, 63, 70, 71, 75, 83, 86, 87, 92, 93, 100, 101, 103, 112, 121, 123, 144, 178, 180, 181, 187, 200, 204, 206, 213, 216, 217, 220
Հայոց երկիր 10
Հայկաձոր 225
Հայրավանք 43
Հառիճավանք 76, 153, 154, 156, 191, 198
Հավուց թառ 31, 84, 185
Հերհերի վանք 98, 215
Հոռոմայր 184
Հոռոմոսի վանք 121, 149, 153, 180, 190, 193
Հռիփսիմեի տաճար 219
Հռոմ 20
Հովհաննավանք 144, 146, 147—151, 154, 190—193

Ձագավանք 39, 218
Ձեռատիվանք 213, 214

Ղարաբաղ 146, 202, 203
Ղրիմ 202

Մազրա 10, 220
Մաթոսավանք (Դիլիջան) 173, 187
Մակարավանք 9, 62, 63, 69, 70, 84, 86, 137, 138, 139, 140, 144, 165, 166, 168, 184, 203, 218, 222, 223
Մահկանաբերդ (գավառ) 62, 69, 70, 71, 81, 82, 83, 84, 86, 144, 159, 163, 200
Մաճռակաձոր 209
Մաստարա 218, 227, 228
Մարաց անապատ 218
Մարգակերտի շրջան 146
Մարմարաշեն 9, 25, 45
Մարտիրոս գյուղ 10
Մեծ Մազրա 10
Մեղրի 202, 203
Մինգրելսկ 146
Մշկավանք 136, 195
Մոսկվա 222
Մորո ձորո վանք 62, 63, 64, 65—75, 80—83, 86, 189
Մրեն 8, 39, 121, 173, 180, 224

Նախիջևան 172, 197
Նիգ (գավառ) 49, 50, 52, 60
Նոյեմբերյան 145, 154, 183, 198
Նորավանք (Նորավանքի Ս. Կարապետ եկեղեցի) 91, 92, 123, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 132, 208, 210, 211, 212, 214
Նորատուս 43, 86, 87, 88, 89, 93, 94
Նոր Գետիկ (տե՛ս Գոշավանք) 11, 62, 99, 101, 103, 104, 105—111

Շահապոնք ամրոց 197
Շեկք (գյուղ) 214
Շիկակարք (Շիկարք) 210
Շիրակ 25, 27, 63, 76, 84, 85, 144, 145, 172, 180, 200
Շիրակավան 218
Շխմուրատ վանք 136
Շողագա եկեղեցի 213, 214
Շողուագավանք 218

Պետերբուրգ 26, 145, 166
Պոլիս 93
Պռոշաբերդ 212
Պտղնի 68

Ջուղա 11, 143

Սալա 66
Սամսոնի վանք 84
Սանահնի վանք 9, 10, 15, 111, 112, 115, 117, 118, 122, 132, 136, 144, 188, 190—192
Սիսական 199
Սիսիան 68
Սյունիք 10, 14, 54, 55, 56, 58, 63, 125, 131, 200, 204, 205, 206, 207, 210, 211, 212, 213, 216
Սպիտակավոր վանք 212
Ստեփանավան 220
Սրվեղ 163, 164
Սուրբ Գևորգ (գյուղ) 54
Սուրբ Սահակ (գյուղ) 14
Սևան 14
Սևանա լիճ 220
Սևանա վանք 213

Վահանավանք 214
Վաղարշապատ (տե՛ս էջմիածին) 25, 59, 85, 87, 100, 129, 150, 160, 168, 197
Վաղուհաս 31
Վայոց ձոր 11, 14, 89, 129, 144
Վան 202, 203
Վանեվանի տաճար 214
Վանստան 144
Վախե (գյուղ) 103
Վարագավանք 136
Վարդաբլուր 220
Վարդենիս 10, 143
Վարսեր (գյուղ) 14
Վենետիկ 20, 27, 53, 76, 82, 86, 99, 103, 145, 177, 187, 195, 202
Վերին Աղդան, գյուղ, 196
Վիեննա 41, 171, 177, 188

Տաթևի վանք 54, 120, 127, 206, 207, 214, 215
Տախտ (հանդամաս) 94
Տամալեկ, գյուղ, 207
Տամարք (գյուղատեղ) 162
Տաշիր 166
Տաշքենդ, գյուղ, (Վարդենիս) 180
Տեկոր 8, 12, 217, 218, 219, 220, 221
Տղրկա ծով (գյուղ) 103, 106
Տիգրան Հոնենցի եկեղեցի (Անի) 121
Տփխիս, տե՛ս Թիֆլիս, 32, 75, 86, 140, 158
Տումի գյուղ (Հադրութ) 220

Ցաղացքար 144, 209, 210
Ցամաքաբերդ 14
Ցաքուտ վայր 215
Ցուրաբերդ (Ցուր, Ցուրագետ, Ցուրավանք) 207
Ցուրագետ 214

Ուզունթալա 163
Ուղեաց տափ (գյուղ) 14
Ուռելանց (գյուղ) 103, 106
Ուտիք 220

Փառակունիք (Վառագունի) 210
Փարիզ 146, 173
Փոշահանք, գյուղ, 214, 215
Փոքր եկեղեցի 70
Փրկչի եկեղեցի 120

Քաղքոդաշտ, տե՛ս Վաղարշապատ 49, 50, 52, 59, 61
Քարկոփ 14

Օհանավան 150
Օծուփի վանք 212
Օձուն 140, 217, 227

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ականավոր վիմագրագետն ու լեզվաբանը 5
Հայերեն վիմական արձանագրությունների բովանդակությունը . . . 8
Անիի մայր տաճարի շինարարական արձանագրության տարեթվերը . . 16
«Տանուտրութիւն» տերմինը Անիի XI դարի արձանագրության մեջ . . . 26
Վահրամ Պահլավունու 1026 թ. արձանագրությունն Անբերդում և եկեղեցական պտղին միջնադարյան Հայաստանում 45
Մորո ձորո վանքը 62
Աթաբեկ Իվանեի նորահայտ արձանագրությունը Մորո ձորո վանքում . . 71
Նորատուսի XIII դ. արձանագրության նոր վերծանությունը 86
Նորահայտ վիմական արձանագրություն Ումեկյան տոհմի մասին . . . 94
Ո՞վ է Սանահնի տապանագրում հիշատակված Սարգիս Փարչիկը . . . 111
Նորավանքի գավթի բարավորի արձանագրությունը 123
Վիմագրական սրբագրումներ 132
Ա. Դավիթ Տոթոուկս որդու նվիրագիրը և Ե աճականի կիրառությունը վիմական արձանագրություններում 132
Բ. Խոսրովի տապանագիրը 146
Գ. Խաչիկ վարդապետի նորահայտ տապանագիրը 149
Դ. Ոչ թե Արել, այլ Սամել (Սամուել) կազմող 154
Ե. Առաքելոց վանքի արձանագրության թվականը 157
Զ. Սրվեղի վանքի շինարարական արձանագրությունը 163
Է. Վկայված է ոչ թե Տարիել, այլ՝ Տաշրել 165
Ի հանգող անձնանունների սեռական, տրական հոլովների կազմությունը Ժ—ԺԳ դարերի վիմական արձանագրություններում 169
Գրախոսություններ 204
«Գեղարվեստական թարգմանության» և «նյութի իմացության» պտուղները . 229
Անձնանունների ցանկ 239
Տեղանունների ցանկ 244

ԱՎԱԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԱՐՏԵՄԻ

ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐ

Հրատարակության է ներկայացրել համալսարանի հայոց լեզվի ամբիոնը

Հրատարակչության խմբագիր՝ Ա. Մ. Գաբրիելյան
Նկարիչ՝ Հ. Կ. Մնացականյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան
Տեխնիկական խմբագիր՝ Հ. Ս. Ալվրցյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Վ. Ղազարյան

ԻԲ 663

ՎՖ 05015։ Պատվեր 746։ Տպաքանակ 1000։ Հանձնված է շարվածքի 03.04.1985 թ.։ Ստորագրված է տպագրության 12.02.1986 թ.։ Թուղթ № 1, չափսը 60×84 1/16։ Տառատեսակը՝ «Սովորական»։ Տպագրության եղանակը՝ «Բարձր»։ Հրատարակչական 13,1 մամուլ։ Տպագրական 15,0 մամուլ = 13,95 պայմ. մամուլի։ Գինը՝ 2 ռ. 30 կ.։
Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մռավյան փ. № 1։
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна № 1.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. № 52։
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна № 52.